UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
AA000197418 7
ornia
nal
y

[illegible]

(1) [illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

ԳԷՈՐԳ ՈՒԱՇԻՆԳԹՆ

ԳՈՐԾ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՇՄԻԴԹԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ARMENIAN LIBRARY, NEW BRITAIN, CONN.

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1874

URL E 312 .S 3312 1874

ԳԷՈՐԳ ՈՒԱՇԻՆԳԹՆ

ԳՈՐԾ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՇՄԻԴԹԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ի ԳԵՐՄԱՆԵՐԵՆԷ

ՆՈՒԷՐ ՀԱՅՈՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ Ի ԹԱՐԳՄԱՆՉԷՆ

ARMENIAN LIBRARY, NEW BRITAIN, CONN. [stamp, partly illegible]

ԽՕՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Ֆերդինանդ Շմիդթ մեծ անուն կ'վայելէ Գերմանիոյ մէջ իբրեւ վարժապետ եւ մատենագիր: Նորա շարադրութիւնքը նոր 'ի նորոյ տպուելով սիրալիր ընդունելութիւն կ'ստանան ամբողջ ազգէն եւ գրագէտներէն, որք 'ի մի բերան կ'գովեն հեղինակի հազուագիւտ քանքարը: Արդէն երկար ժամանակ է որ այս ազնուամիտ մարդը գործով, խօսքով եւ գրչով կ'նկրտի լոյս սփռել վարժարանի եւ ազգի մէջ: Նորերս Նորա արդիւնաւէտ գործունէութեան քսանհինգամեակը տօնելիս՝ Գերմանացի հեղինակները արժանի գտան զարդարել Նորա շնորհալի գլուխն արծաթեայ պսակով եւ դասեցին զնա այն մտաւորական հերոսներու կարգը որով կ'պարծի Գերմանիան:

198 [illegible]

Մանուկ սերնդի համար գրչով աշխատող մատենագիրք անթիւ են Գերմանիոյ մէջ, բայց նոցանէ ոչ մին կարող է հաւասարիլ Ք. Շմիդթին, որ իրաւամբ կ'կոչուի Հեղինակ Չնորհօքն Աստուծոյ: Իբրեւ փորձառու մանկավարժ եւ խորագէտ հոգեբան՝ նա գտած է երիտասարդութեան հետ պարզ խօսելու գաղտնիքը, որով միանգամայն կ'հրապուրէ նորա միտքն ու սիրտը: Հանճարեղ մատենագիրը չշողոքորթեր, չքծնիր պատանի ընթերցողներու առջեւ, դատարկ ու ձանձրալի քարոզներ չխարդար նոցա գլխուն, պժգալի շինծու խօսքերով եւ դերասանական սուտ զգացմունքներով զուր չգործեր գրաւել նոցա մտադրութիւնը, այլ կ'խօսի հետերնին իբրեւ հասուն մարդոց հետ եւ այնպէս շօշափելի կ'արտայայտէ իր մտքերը, այնպէս ճիշտ կ'ներկայացընէ պատմութեան դէպքերն եւ մարդկութեան զարդ ու պարծանք հանդիսացող նուիրական հերոսներու կեանքը, որ ամէն հասակի ընթերցող դիւրաւ կ'ըմբռնէ գրքի բովանդակութիւնը եւ կ'վառուի նորա մէջէն դուրս շնչող ջերմութեամբ: Հեղինակը ճարտասանական շարականներ չերգեր ազնուութեան վրայ, այլ օրինակով ցոյց կ'տայ նորա բուն արժէքը. չփառաբաներ աշխատասիրութիւնը, այլ մարդկութեան քաջ նահատակներու վսեմ գործերը յանդիման դնելով՝ կ'ստիպէ սիրել աշխատանքը. փրոցուռոյց սեթեւեթներ չհնչեր 'ի գովեստ հայրենասիրութեան, այլ որ առաւել լաւ է՝ 'ի սէր հայրենեաց գոյք, արիւն եւ կեանք զոհող անմահական մարդոց խօսուն պատկերներով կ'ոգեւորէ զմեզ հետեւիլ նոցա օրինակին: Ալէքսանդր Հումբոլթէն սկսեալ մինչեւ 'ի վերջին ընթերցողն ամէնքը միակերպ ստուգելով Շմիդթի բանքարաւոր գրուածներու ազդեցութիւնը՝ միաբերան կ'վկայեն թէ նորա պէս դաստիարակիչ մանկավարժ չկայ Գերմանիոյ արդի դպրութեան մէջ: Երանի՛ թէ մեր ազգն եւս նոր բանաքննութեամբ արդէն խպառ դատապարտուած եւ այսուհետեւ անպէտք Տելեմաքներու, Աբէլներու եւ Պոմպիլիոսներու տեղ ընթեռնուր Շմիդթի նման լուսափիւռ վարժապետաց սքանչելի գրուածքը: Մեր սեւագլուխ հայկաբանները կ'սիրեն առաւել մտցընել ազգի մէջ իրենց պէս հնամոլ միջնադարեան քուրմերու սքոլասթիքական շարադրութիւնքը, ժեզուիթութեան տիղմով զանգուած մարդկային միտք խաւարեցընող Պօսիւէի ճառերը, քան թէ ծանօթացընել զմեզ հոգի եւ կեանք ազդող նոր գրականութեան հերոսներու հետ, որպիսի են Ռուսսօ Լեսսինգ, Հեռտեր, Գեօթէ, Շիլլեր եւ այլ բազումք, որք ոչ թէ սատանաներ ու դեւեր են, ինչպէս կ'կարծեն վանքերու մէջ երազ տեսնող աբեղայք,՝ այլ համօրէն մարդկութեան ջահեր, քաքունապետք ճշմարտութեան եւ անվեհեր կարապետք դէպի լոյս եւ փրկութիւն: Այս վսեմ հանճարներու հայերէն թարգմանութիւնը մայրենի լեզուն ուսանելու բախտ ունեցող քաջ հայագէտներուն թողլով՝ մեք որ միայն անցողաբար, առանց վարժապետի եւ գողունի կերպով սովորած ենք թոթովել եւ եթ հայերէն՝ առ այժմ կ'առաջարկենք Հայոց երիտասարդներուն Շմիդթի գրքոյկը, եւ շատ կ'խնդրենք շնորհել ներողութիւն մեր տկար գրչի թերութիւններու:

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Ես կ'զարմանամ ձեր առաքինութեան, ձեր անձնուէր հայրենասիրութեան, ձեր անվկանդ քաջութեան և բարուց պարզութեան վրայ, որով դուք կ'գերազանցէք հնութեան ամենահռչակ մարդիկը:

ԿՈՄՍ ՀԵՐՑԲԵՐԳ, Նախարար Մեծին Ֆրեդերիկոսի:

Ուաշինգթն առաջինն էր պատերազմի մէջ, առաջինն էր խաղաղութեան ժամանակ և առաջինը հայրենակիցներու սրտին մէջ:

ՃՕՆ ՈՒԱՐՇԱԼ

«Պատմութեան մէջ մեր մտադրութիւնն ամենէն աւելի գրաւողը ոչ թէ պատերազմներու նկարագիրն է, կ'ըսէ Հեւտեր գերմանացի իմաստասէրը, այլ որպէս ամբողջ ազգաց, նոյնպէս և առանձին մարդոց բարքը, վարքն ու բնաւորութիւնը: Ուրեմն հոգեբանական պատմութեան ազնիւ նպատակը լինելու է՝ այլ և այլ վկայութիւններով և համեմատութիւններով՝ այնպէս լուսաւորել մարդկային բարքն, որ նոքա կենդանի և խօսուն պատկեր ձևացընեն մեր աչքի առջև:»

Փորձենք հետևիլ այդ խօսքերուն:

Այն վսեմ ոգին, որոյ վրայ կատարելագործուելու հետամուտ ընթերցողի միտքը կ'ուզենք արդ ուղղել, լոյս տեսաւ Հիւսիսային Ամերիկայի Վիրգինեան հեռաւոր անտառներու մէջ՝ 22 փետրուարի 1732:

Գէորգի հայրը՝ Աւգուսթին Ուաշինգթն՝ հողատէր էր և ծագմամբ անկլիացի: Նորա պապը Անկլիայէն գաղթած էր Հիւսիսային Ամերիկա, զոր առաջ հնդիկները իրենց սեփականութիւնը կ'համարէին: Վերջը «Ամերիկայի ազատ նահանգներ» կոչուած երկիրը գրեթէ բովանդակ Եւրոպայի չափ մեծցաւ: Երկու հարիւր տարի առաջ այս ամբողջ երկիրը ծածկուած էր անհուն անտառներով, թաւուտ մացառներով և տեղ տեղ ահագին ճահիճներով և [illegible] ասուած խոտաւէտ դաշտերով:

Ռափահնօք գետի արեւելեան կողմը շինուած ընչաւէտ տան մէջ, ուր Գէորգ առջի անգամ նշմարեց արեւի լոյսը, կ'թագաւորէին բարեպաշտութիւն, աշխատասիրութիւն և ազնուութիւն. այս էին այն նախընծայ պարգևները, զոր երկինք շնորհեցին երեխային։

Ջոկ ջոկ կ'ապրէին անգլիացի նոր գաղթականները անտառներու մէջ. հարեւանները միանալով կ'ընէին եկեղեցիներ և վարժարաններ։ Բայց Վիրջինիոյ այն ժամանակուայ դպրոցները տակաւին շատ ստորին աստիճանի մէջ էին և կ'աւանդէին միայն կարդալ, գրել, համրել և հաշուեպահութիւն։ Նորեկ գաղթականներու մեծ մասն աւելի բան չէր պահանջեր մանկտւոյն համար. իսկ հարուստներու որդիքն Անգլիա կ'երթային ուսանելու։ Այսպէս Անգլիա ուղարկուեցաւ և Գէորգի խորթ եղբայրը՝ Լօրենց Ուաշինգթն։ Լօրենց տասնուչորս տարօք աւագ էր Գէորգէն և սա, նորա Անգլիա գնալու ժամանակ՝ տակաւին գրկի մանուկ լինելով՝ չէր կրնար միտքը բերել եղբօր պատկերը։ Երբ Գէորգ ութ տարուայ համբակ էր՝ Լօրենց իբրև գեղեցիկ երիտասարդ վերադարձաւ հայրենիք։ Քաջ կրթուած և լաւ դաստիարակուած կտրիճի գալուստն անբաւ ուրախութիւն պատճառեց գերդաստանի բոլոր անդամներուն և Գէորգ նոյն իսկ առջի վայրկեանէն ջերմ համակրութիւն մի զգաց նորա համար. քսանևվեցամեայ Լօրենց ևս պատասխանեց նորան կենդանի մտերմութեամբ և կարճ միջոցին դորովագութ սիրով սերտ միացաւ նորաբոյս ու խոհեմ մանկան հետ։

Դարձեալ մի որդի Անգլիա ուղարկելը չէր անցներ հօր միտքէն. նա կ'ուզէր որ իր մահէն ետքը Լօրենց լինի տան գլուխը և բաւական կը համարէր, որ գէթ աւագ որդին ճոխ ուսում առած կրթուած մարդ էր։

Այս պատճառով Գէորգ թաղական վարժարան դրուեցաւ։ Ինչ որ ձեռնհաս էր աւանդել այս վարժարանը՝ նա ընդունեց ջերմեռանդ ուսումնասիրութեամբ և այսպէս հիմ դրաւ իր յետագայ ինքնակրթութեանը։ Նորա բնաւորութեան մէկ յատկանիշն այս էր, որ բոլոր դասերն ամենամեծ փութով, խղճի մտօք և մաքրութեամբ կ'պատրաստէր. տառ մի անգամ չէր եղեր նորա գրչի ծայրէն որ անուշադիր թեթևութեամբ գրուած լինէր։ Առ այս ապացոյց են նորա աշակերտութեան յատակ տետրակները, որք պահուած են դեռ մինչև այսօր։ Նոյն իսկ ջանասիրութիւնը կ'երևէր և նորան յանձնուած տնային գործերու մէջ. ինչ բան որ ապսպրէին՝ կ'աշխատէր կատարել ըստ կարելւոյն կատարեալ կերպով — որքան և չնչին լինէր այն բանը։ Թէ ինչ մեծ կարևորութիւն պիտի ստանար այս սովորութիւնը նորա հոգեկան

զարգացման համար՝ տակաւին չէր հասկնար և կ'առաջնորդուէր միայն վաղ զարթած պարտաւորութեան զգացմամբ, որու առջևն էր արդարութիւն գործելու մարդուոց բարի կամքը։ Վերջը միայն ճանաչեց նա աշխատասիրութեան մեծ խորհուրդը, որ է կազդուրել հոգւոյ զօրութիւնքը։ Չկայ բան մի որ կարելի չլինի գործել լաւ թէ վատ. ժողովեցէ՛ք բոլոր ոյժդ և տեսէ՛ք որ գործդ կ'յաջողի քիչ թէ շատ՝ իմացէ՛ք որ այդ գործէն աւելի բան շինած եղաք, զի վստահեցաք ներքին գոյութեանդ վրայ։ Ո՛վ որ վերահասու է այս բանին՝ նորա համար ըստ երևութին դժուար գործն անգամ կ'կորցնէ իր կծող խայթը։

Այսպէս խղճմտաբար կ'վարուէր և բարոյականին վերաբերեալ գործերու մէջ. սիրտը կրքոտ էր, բայց մտախոհութեամբ և կամքի զօրութեամբ գուն կ'դնէր զսպել բուռն զգացմունքը. այդ իմանալով ընկերները վէճերու ժամանակ միշտ նորան կ'դիմէին և կ'հնազանդէին նորա դատաստանին։ Ամենուն յայտնի էր որ նա թէև երբեմն կ'խօսէր գրգռուելով, սակայն և այնպէս խղճով պատրաստ էր խոստովանիլ յանցանքը, զի նորա համար գլխաւոր բանը արդարութիւնն էր և չէ թէ անձը։ Եւ որպէս չհնազանդէին այսպիսի ընկերին։

Վաղ յերևան ելաւ նորա բնաւորութեան և միւս յատկութիւնը. այս էր պատերազմական ոգին, որ ընդունած էր պապերէն։ Նորա պապերը զինուորական քաջութեամբ անուանի մարդիկ եղած էին Անկլիոյ ասպետական կարգի մէջ. նոյն զինուորական աշխոյժը կ'երևէր և Լօրենցի վրայ։

Արևմտեան Հնդկաստանի մէջ Սպանիացիք յելուզակաբար շատ վնաս կ'հասցընէին Անկլիացւոց առևտուրին. նոցա յանդգնութիւնը պատուհասելու համար Անկլիան ծովու գրահաւոր նաւեր կազմել, և որովհետև Անկլիան Վիրգինիոյ գաղթականներու հին հայրենիքն էր՝ նոցա մէջ ևս հնչեց պատերազմի հրաւէրը։ Լօրենց՝ իր հակմանը հետևելով իբրև կամաւոր զինուոր մտաւ բանակ և ընդունեց հարիւրապետի պաշտօն։ Այս դէպքը մի տեսակ վրդովմունք ազդեց Վաշինգթոնի տան մէջ. միայն Դէօրգն էր որ սրտի մօք կ'համակրէր եղբօր զինուորական պատրաստութիւններուն։ Աւազակներու չարութեանց լուրը ստէպ լսած լինելով նա միանգամայն արժանի կ'համարէր զնոսա պատժել, և խորին յարգանօք, գրեթէ հիացմամբ կ'դիտէր եղբօր զէնքերը և այժմէն իսկ երդում կ'տար անձամբ անձին մարտնչել մի օր անմեղ մարդոց հանգիստը վրդովող չարին դէմ։ Այս դէպքի ժամանակ նա կ'լսէր նորէն իր քաջ նախնեաց պատմութիւնը և ինչ զարմանք որ

եղբօր պատկերը՝ յորմէ հետէ սա մեկնեցաւ զինուորական զարդով պճնած՝ միշտ կ՚շողար նորա հոգւոյն առջև, որ նա եղբօր նամակները՝ հօր շրթամբ ընտանեկան շրջանի մէջ կարդացուելէն ետքը՝ խնդրելով կ՚առնէր հօրէն և կրկին ու վերստին կ՚ընթեռնուր, մանաւանդ երբ ռազմական դէպքեր յիշուած լինէին մէ՛ջը։

Այնուհետև Գէորգ գնտակի և այլ սոյն տեսակ խաղերու տեղ՝ զինուորական մարզմունք սիրեց. գունդ գունդ բաժնել դասընկերները, պատերազմի կարգ սահմանել, զէնք որոշել, ճակատ կազմել, զօրահանդէս անել, հրաման տալ — այս էր այժմ նորա զբաղմունքը, և փոքրիկ զօրականներէն ոչ ոք չէր բողոքեր նորա անձնիշխան հրամանատարութեան դէմ։ Դարձեալ ոչ ոք չէր գուշակեր թէ այս զբաղմունքն ևս մասամբ իւք նորա ապագայ կեանքի նախադիծն էր։ Ինչպէս որ առաջ իր փոքրիկ շրջանի մէջ դատաւորի պատիւ, նոյնպէս և այժմ հրամանատարի պաշտօն կ՚վարէր. սակայն և այս զինուորական խաղերու մէջ պարզ կ՚նշմարուէր նորա էութեան բուն յատկանիշը, որ էր ամէն մի գործ կատարել ամենամեծ ճշտութեամբ։ Նա գիտէր զինուորին պէտք եղած յատկութիւնքը և տոկուն եռանդով յառաջ կ՚տանէր մարմնոյն կորովութիւն և ոյժ տուող կրթութիւնքը, որք են՝ վազել, ոստնուլ, լողալ, տեղ ձգել, զօտեմարտիլ, և այլն։ Փոքրիկ վաշտի պետն ու գլուխը՝ կ՚ձգնէր իրաւամբ լինիլ պետ և գլուխ և կ՚ուզէր որ իր ներքին արժէքը լիովին յարմար գայ կրած տիտղոսին։

Քարթաքէնի պաշարումէն ետքը Լօրենց վերադարձաւ դէպի տուն. թող երևակայէ ընթերցողը, թէ ինչ հետաքրքրութեամբ մտիկ կ՚ընէր Գէորգ նորա բերանացի պատմութիւններուն։ Գէորգի զինուորական մարզմանց լուրը լսելով աւագ եղբայրն աւելի ևս համոզուեցաւ իր կանխիկ գուշակութեան մէջ, այսինքն թէ անշուշտ պէտք էր իբրև նաւաստի աշակերտ անկլիական ծառայութեան տալ զԳէորգ. ծնողք ևս հաւանութիւն յայտնեցին այս խորհրդին։ Իսկ ինքն Լօրենց կ՚ուզէր նորէն դառնալ բանակը, բայց չկրցաւ մեկնիլ։ Նա համակրութիւն զգաց Ուիլլիամ Ֆերֆաքս անուն հարուստ կալուածատիրոջ մի դստեր համար և նշանուեցաւ հետը։ Հայրն անչափ ուրախ էր որ այս միաւորութեամբ ազգակցութիւն պիտի ծագէր իր և Ֆերֆաքսի յարգելի ու հարուստ տան մէջ. սակայն չեղաւ արժանի տեսնելու որդւոյ հարսանեաց երանաւէտ օրը, զի յանկարծ հիւանդացաւ և մեկնեցաւ աշխարհէս։

Գէորգ տասնումէկ տարեկան էր, երբ թաղուեցաւ նորա պատուա-

կան հայրը. Հանգուցեալն իր երկու ամուսնութենէն ծագած զաւակներու համար թողուց բաւական նշանաւոր գոյքեր, այնպէս որ նոցա ապրուստը լիովին ապահոված էր։ Լօրենց ընդունեց մի ագարակ Փօթօմէկ գետի եզերքը՝, ուր և բնակեցաւ նոր ամուսնոյն հետ։

Կրտսեր որդւոյ վրայ կտակի մէջ հողաբաժնու որոշուած չէր, այլ նոքա՝ մինչև իւրեանց չափահաս լինելը՝ յանձնուած էին մօր խնամքին, յորմէ յայտնի կ'երևի թէ ինչ վարկ ունէր կինը ննջեցեալ ամուսնոյ առջև։ Ուաշինգթն Իրվինգ պատմաբանը կ'ըսէ այս տիկնոջ մասին, թէ «Պարզ և առողջ մտքով զարդարուած՝ պնդութեամբ, բայց և գթաբար կ'խնամէր իր ընտանիքը և մեծարանքի հետ հաւատարմութիւն ևս կ'ազդէր սրտերուն։» Նա հանգուցեալ մարդու երկրորդ ամուսինն էր և իր սիրելի զաւակն էր անդրանիկ Գէորգը։ Սակայն և այնպէս թէրևս նոյն իսկ պատճառով, պէտք եղած ժամանակ խստիւ կ'վարուէր հետը որ զերծ մնայ չարութենէ, և Աստուած կ'օրհնէր մօր բարի ջանքը։ Այն ժամանակ Վիրգինիոյ կրթուած ղաղթականներու մէջ մեծ համբաւ կ'վայելէին «Սըր Մէթիւ Հիլսի բարոյական և աստուածաբանական շարադրութիւնքը։» Եւ այս գործը Գէորգի մօր սիրելի գիրքն էր, յորմէ նա ոչ թէ միայն իրան համար դաս և խրատ կ'քաղէր, այլև կ'ընթեռնուր զաւակներուն։ Տան բարեկամները ներս մտնելով յաճախ կ'տեսնէին զնա այն մատեանն 'ի ձեռին տղայոց մէջ նստած։ Ցիշեալ բարեկամաց և իր յատուկ որդւոց վկայութեամբ՝ չէ թէ միայն քաջ հմտութիւն ունէր յօդուածներու ընտրութեան մէջ, այլև գիտէր նաև ազդել մատաղ ունկնդիրներուն այն բարոյական վսեմ զգացմունքը, որով ինքը կ'համակուէր Հիլսի և կամ որ և է ուրիշ իմաստուն մարդու գրքի ընթերցանութեան ժամանակ։ Իր սրտի եռանդը կ'թափանցէր տղայոց մէջ, և զի բաց յայտնանէ բոլոր տան կեանքն ու բարքը բարոյականութեան նուրբ ոգով ներշնչուած էր՝ ուստի մանուկներու ընդունած տպաւորութիւնքը չէին ջնջուեր, այլ թէ կ'զօրանային մանաւանդ։ Վերոյիշեալ գրքի օրինակը նոյն իսկ մայրենի աջոյ «Մարիամ Ուաշինգթն» մակագրով մնաց Գէորգի մօտ իբրև մի թանկագին յիշատակ մինչև նորա վերջին շունչը. և նա սովոր կ'վկայէր թէ որդեսէր մօր ողեշունչ ընթերցանութեամբ կենդանութիւն առած այն նուիրական գրքի խրատներն ամենազօրեղ տպաւորութիւն ունեցան նորա ամբողջ կեանքի վրայ։ Այս գիրքը մինչև այժմ դեռ պահուած է Մօն-Ուէրնօնի գրադարանը։

Իր աշակերտական զբաղմունքը Ուաշինգթն կ'շարունակէր անդուլ

աշխատասիրութեամբ. պէտք չէին նորան քաջալերիչ խօսքեր, այլ թերևս զգուշարար խրատներ որ շատ հեռու չմղուի իր չափազանց եռանդէն: Անզուսպ փափաքովնա կ'այրէր ճոխացընելու իր միտքն այլև այլ գիտութիւններովև արուեստներով, և յառաջադիմութեան կենարար ոգին ուժգին կ'բռնէր նորա մէջ:

Գէորգի առաջուայ Հոբբի վարժարանէն փոքր ինչ հեռու կ'բնակէր Ուիլլիամս անուն ուսուցիչը, յորմէ նա շատ բան չէր շահուեր. այս մարդու վարժարանին մէջնա կ'ուսանէր այժմ առևտրական հաշուեպահութիւն: Որքան և չոր լինէր նիւթը՝ սակայն Գէորգ այս ճիւղին ևս ըստ կարելւոյն շուտ տիրելու կամքով դրդուած՝ չափէ դուրս արագ կը մօտենար նպատակին: Ասես թէ նա մի յաղթական հերոս լինէր ուսման և գիտութեան ասպարէզի վրայ. նորա զէնքերն էին՝ խելք, կամք և յիշողութիւն, որք որքան և գործածուէին՝ այնքան աւելի սրութիւն և փայլ կ'առնէին: Անփոյթ և ծոյլ աշակերտներ նա կ'ատէր. այսպիսիներն անարգ կ'երևէին նորա աչքին: Այս միջոցին նա կ'հաւաքէր ամէն տեսակ ընտիր յօդուածներ, որք պիտանի էին կեանքի մէջ, և այս ժողովածոյներէն մին կ'կոչուէր «գրաւոր շարադրութիւնք» ուր նա շարած էր զանազան նկարագիրք, փոխանակագիրք, ընկալագիրք, վկայագիրք, վաւերագիրք, երաշխաւորութեան գիրք, պայմանագիրք, վաճառման, վարձման, կապալի և ընկերակցութեան գրեր և կտակներ — և այս ամէնը խնամով և նշանաւոր խօսքերը մեծ մեծ տառերով գրուած:

Մարմնամարզութեան գալով Գէորգ վերջին տարիները շատ յառաջադիմութիւն կ'անէր. փութով կ'շարունակէր վերը յիշուած մարզմունքը՝ մանաւանդ սկսեալ այն րոպէէն երբ որոշած էին նաւաստի աշակերտ շինել զնա անկլիացւոց ծառայութեան մէջ: Զինուորական մարդուն հարկաւոր յատկութիւնքը ճանաչելով նա առաջուց արդէն կ'զօրացընէր մարմինը և կ'մարզէր անդամները. նորա հայրենի տան մօտերը այսօր դեռ ցոյց կ'տան այն տեղը, ուստի Գէորգ մի քար նետած էր Ռափահնոք լայն գետի միւս ափը: Նա վարժ էր և ձի նստելու և յապշութիւն մերձաւորաց յաճախ կ'ոստնուր ամեհի նժոյգի վրայ և կը վկանդէր զայն քաջութեամբ:

Մինչ այս մինչ այն Լօրենց պատրաստութիւն կ'տեսնէր գլխւրացընելու եղբօր մուտքը նաւատորմի մէջ. Գէորգի համար խնդրած հրաւերագիրն արդէն եկած էր և սա կազմ էր 'ի չու. սակայն մայրը նորէն ծանր կշռելով որդու վիճակը՝ հաստատ որոշեց այնպէս վաղ չթողուլ

մնա օտար աշխարհ։ Մայրական թուլութիւն չէր որ թելադրեց նորան այս վճիռը․ նա այնչափ բաներ լսած էր նաւաստեաց կոպիտ ու վայրագ կենցաղավարութեան վրայ, որ բնաւ պէտք չէ զարմանալ, եթէ վճռողական րոպէին սոսկմամբ յետ քաշուեցաւ առաջին խորհրդէն, որոյ կատարումն խոյսու հեռացնելու էր զորդին բարեգութ մօր խրատիչ ձայնէն և ազգականներու նպաստարար աջէն։ Սիրելի մօր կամքին հնազանդելով՝ Գէորգ առանց դժուարութեան հրաժարեցաւ իր գիտաւորութենէն, և վերջը շատ շնորհակալ էր որ այն միջոցին մայրը լուրջ քննութեան ենթարկած էր իր վճիռը։

Յառաջ քան թէ շարունակենք Գէորգի կենսագրութիւնը՝ յիշենք այս տեղ և նորա մի այլ սովորութիւնը․ նա ունէր մի օրագիր, որոյ մէջ համառօտ կ'արձանագրէր իր մտքերը զանազան խնդիրներու վրայ և այն իմաստալի գաղափարները, զորս գտած էր գրքերու մէջ և կամ կ'լսէր բանիբուն մարդիկներէն։ Կ'հրաւիրենք պատանի ընթերցողները՝ այս բանի մէջ ևս հետևիլ մեր Գէորգին։ Նորա յիշատակարանի մէկ մասը կ'կոչուէր հասարակութեան և ընտանիքի մէջ պահելու կանոններ, և այս կանոններէն մի քանիսը շատ կարևոր ճշմարտութիւնք են և միւսները ոչ այնքան կարևոր, զորս և կ'ուզենք յառաջ բերել այս տեղ։ Այսպիսով նախ աւելի ճիշտ նկարագրած կ'լինինք Գէորգի բնաւորութիւնը և երկրորդ՝ առիթ տուած կ'լինինք որ թերևս մեր պատանի ընթերցողներէն մին կամ միւսը Գէորգի շտեմարանէն քաղուածք անելով՝ խոկոյն գրի առնէ և — յաւելցընենք իբրև բարի խորհուրդ — հիմ դնէ իր առաջին յիշատակարանին։ Ահաւասիկ նորա նկատողութիւնքը․

Երբ մանես մարդոց մէջ՝ այնպէս բռնէ զքեզ որ բնաւ չվիրաւորես մինի կամ միւսի պատիւը։

Մի՛ երգեր ուրիշներու առջև ինքդ քեզ մռմռալով և դղրդոց մի՛ հաներ մատներով կամ ոտքերով։

Մի՛ քնանար երբ ուրիշները կ'խօսին, մի՛ կանգնիր երբ ուրիշները նստած են, մի՛ խօսիր երբ հարկ է լռել և մի՛ երթար յառաջ երբ միւսները կանգ կ'առնուն։

Կանգ առ քեզմէ աւագին հանդիպելիս և ճամբայ տուր նորան՝ մանաւանդ դրան և կամ մի նեղ անցքի մէջ։

Աստիճանաւոր և պաշտօնատար անձանց ամէն տեղ վայել է բարձ ու պատիւ․ բայց եթէ նոքա երիտասարդ են՝ պէտք է որ մեծարանք շնորհենք այն մարդոց որք թէև հասարակային պաշտօն չեն վարեր, սակայն պատուելի են ծագմամբ և ազնիւ բնաւորութեամբ։

Զբաղեալ և գործի տէր մարդոց հետ կարճ կտրիր խօսքդ։

Թէ որ բան չգիտես՝ բժշկի դեր մի՛ խաղար հիւանդին այց անելիս։

Քարոզ մի՛ տար իր բանը քեզմէն լաւ գիտցողին, թէ ոչ արածդ կը լինի յանդգնութիւն։

Թէ որ կ՚ուզես խորհուրդ տալ կամ յանդիմանութիւն անել ընկերիդ՝ նախ լաւ կշռէ — արդեօք հրապարակա՞ւ պիտի անես թէ գաղտնի, իսկո՞յն թէ վերջը և ի՞նչ խօսքերով. յանդիմանելու ժամանակ մի՛ ցոյց տար բարկութեան նշան, այլ հեզութեամբ խօսիր և քաղցրութեամբ։

Ամէն նկատողութիւն՝ երբ և ուր անեն քեզ՝ ընդունի՛ր շնորհակալութեամբ. իսկ եթէ անպարտ կ՚համարես զանձդ՝ դիպող ժամ և յարմար տեղ գտնելուդ պէս՝ յայտնի՛ր զայն կշտամբողիդ։

Մի՛ յանդիմաներ ընկերդ այն բանի մէջ յորում անպարտ չես և ինքդ. զի օրինակն աւելի ազդու է քան թէ քարոզը։

Զգո՛յշ կաց որ մի վիրաւորիչ խօսք և հայհոյանք չսպրդի շրթունքէդ։

Ընկերիդ վնասող շուտափոյթ լուրերուն մի՛ հաւատար։

Պարզուկ հանդերձ հագի՛ր և մի՛ ջանար զարմացընել շորերովդ. ամէն բան թո՛ղ չափով լինի ու հանգիստ։

Թէ որ կ՚ուզես յարգել պատիւդ՝ բարեկամացի՛ր ազնիւ մարդոց հետ. զի լաւ է բոլորովին միայնակ մնալ քան թէ մտնել վատ արանց ընկերութեան մէջ։

Երկու հոգի որ վիճին՝ առանց հրաւէրի մի՛ անցնիր մինի կամ միւսի կողմը և մի՛ լինիր կամակոր. անտարբեր բաներու մէջ միացի՛ր մեծագոյն մասին։

Զբօսանքի մէջ նախանձ և չարութիւն ցոյց մի՛ տար, այլ մեղմ բարութիւն. իսկ եթէ կրքով յուզուիս՝ նայի՛ր որ խելքդ լինի քեզ առաջնորդ։

Մի՛ կշտամբեր այլոց թերութիւնքը, զի այդ վայելէ միայն ծնողներուն, վարժապետներուն, մեծերուն։

Մտածի՛ր յառաջ քան թէ խօսիս, և պա՛րզ խօսիր. բառերը շուտով մի՛ թափեր բերնէդ, այլ որոշ ու մեկի՛ն արտասանիր։

Ուշադրութեամբ ունկն դիր ընկերիդ խօսքին և մի՛ արգիլեր որ միւսներն ևս լսեն նորան. իսկ եթէ նա կասի կամ շփոթու խօսքի մէջ՝ մի՛ օգնիր մինչև որ ինքը չխնդրէ զքեզ. խօսքը մի՛ կտրիր և պատասխանիր երբ որ աւարտէ ասելիքը։

Մի՛ շտապիր պատմելու լսած լուրերդ, եթէ չգիտես որ ստոյգ են.

Խօսելու ժամանակ հանդիստ և զգուշութեամբ խօսիր՝ ով և լինի ունկնդիրդ — ականաւոր անձն թէ փանաքի ոմն։

Երբ մեծաւորդ ուրիշի հետ խօսքի վրայ լինի՝ դու սուս եղիր և մի ծիծաղիր։

Շատախօս մի լինիր, մի խորշիր ասելիքէդ և մի կրկնիր հազար անգամ մի և նոյն բանը։

Ի՛նչ և պատահի սեղանի վրայ՝ մի նեղանար, այլ զսպի՛ր բարկութիւնդ և զուարթ կաց, մանաւանդ երբ հիւրեր լինին տունդ. զի լաւ է ուրախ և չէն սիրտ քան թէ փարթամ հացկերոյթ։

Երկիւղածութեամբ և պատկառանօք խօսիր Աստուծոյ և նորա բնութեան վրայ. հնազանդ կաց ծնողներուդ և պատուի՛ր զնոսա՝ թէև աղքատ լինին։

Արիական թո՛ղ լինին զուարճութիւնքդ, բայց անարատ։

Վառ պահիր սրտիդ մէջ այն երկնային փոքրիկ կայծը որ կ՚ասուի խիղճ։

Բ

ԵՐԿՐԱՉԱՓ

Անգլիական նաւաստի դառնալու մտքէն մօր որոշմամբ հրաժարուելով Գէորգ շարունակեց իր պարապմունքը Ուիլլիամսի վարժարանին մէջ, ուր կ՚փափաքէր հիմնովին ուսանիլ երկրաչափութեան արուեստը։ Այժմ գլխաւորապէս կ՚սովորէր երկրաչափութիւն և ուրուագրութիւն։ Աշակերտութեան վերջին տարին նա չափեց դպրոցին պատկանեալ արտերն ու դաշտերը և սահմանեց ագարակները. այս գործը, որ նորա համար դեռ միայն մարզմունք էր, այնպիսի խնամքով կ՚հոգար որ ասես թէ վերջ 'ի վերջոյ երդմամբ հաշիւ տալու էր ճշտութեան մասին։ Ամէն բան՝ ինչպէս են նկարներ, համարներ, ապացոյցներ՝ ուշի ուշով թղթի կ՚անցընէր և այս թղթերու մէջ չէր տեսնուեր ոչ մի յաւելուած և ոչ մի աւելորդ բիծ, և եթէ մերթ սխալէր՝ այնպէս ճարտար ու յստակ դուրս կ՚ջնջէր զայն որ յետոյ մանրակրկիտ հետազօտութեամբ միայն կարելի կ՚լինէր նշմարել քերուածքը։ Յայտնի բան է որ այս

փութասիրութիւնն և ամէն գործի մէջ ճշտութիւն բանեցնելը անհրաժեշտ պիտոյք և երկրորդ բնութիւն եղած էր նորա համար — այսով կ'ապրէր։ Նուազ չէր նորա խնամքը և կարգապահութեան ու պարզութեան նկատմամբ։ «Ոչինչ բան, կ'ըսէ Իրվինգ, չէր գործեր նա շտապով, վեր 'ի վերոյ և կիսատ, և այսպէս կրթուած սովորութեանը մինչև կեանքին վերջը հաւատարիմ կ'մնար, և որքան պրձնկուած լինէին գործերը և որքան հաշող ու ճնշող հոգսերը վտանգաւոր և տաժանելի պաշտօններու մէջ, զորս ստիպուած էր յաճախ վարելու, միշտ ժամանակ կ'գտնէր աւարտել ամէն բան և լաւ աւարտել. նա գտած էր մեթոտի գաղտնիքն և հրաշք կ'գործէր։»
Թուաբանութենէն զատ նորա ուսումը թերատ էր. թերևս լեզուի հասարակ կանոններն անգամ չէր սորված վարժարանի մէջ. գէթ այսպէս կարելի է եզրափակել նայելով նորա աշակերտական տետրակներուն, ուր ստէպ կ'նշմարուին քերականութեան սխալներ։ Սակայն և այս գործն 'ի կատար հանեց, քանի որ մի անգամ որոշած էր կատարել. և երկայնամիտ աշխատութեամբ, ընտիր գրքերու ընթերցանութեամբ և համեմատութեամբ այն աստիճանն հասաւ, որ կարող էր թէ բերանացի և թէ գրաւոր ոճով մաքուր և ճիշտ արտայայտել իր մտքերը, նաև սքանչելի վսեմութիւն շնորհել լեզուին, որոյ մի քանի օրինակները յետոյ պիտի ցոյց տանք ընթերցողին։ Միայն լեզուագիտութեամբ չէր կրնար 'ի հարկէ հանել այն աստիճանին որ նորա գրուածներէն իբրև գլխաւոր յատկանիշ պարզութիւն, ուղղութիւն և արդարութիւն դուրս փայլէին. այս բաներու նկատմամբ նորա ոճն իր բնութեան հայելին էր։

Գէորգ երջանիկ կ'համարէր զինքը որ ազգակցութեան յօդերով աւելի կ'ստանար մտնել մի քանի կրթուած տներու մէջ. արդէն պատմեցինք որ նորա եղբայրը բարեբաստիկ ամուսնութեամբ նիւթապէս լաւ յարդարուած կեանք կ'վարէր Մօն-Վերնօն կալուածքի վրայ։ Սորամէն մի քանի մղոն հեռու կ'գտնուէր Ուիլլիամ Ֆերֆաքսի ագարակը՝ Բէլվուար։ Այս մարդու կեանքը լի էր պատահարներով. ծննդեամբ անգլիացի, պաշտօնով զինուորական, մի քանի արշաւանքներու մասնակցելէն ետքը՝ անկլիական կառավարութեան ձեռքով կարգուած էր կուսակալ և բարձրագոյն դատաւոր արևելեան Հնդկաստանի կղզիներէն մինի վրայ և այժմ կ'բնակէր Վիրգինիա, ուր արդէն տարիներով դահերէցութեան պաշտօն կ'վարէր արքունի խորհրդարանին մէջ։ Այս փորձառու և զուարթամիտ մարդու տունը, որ աւելցը-

նէնք՝ շատ սիրարժան և բարեկիրթ ուստերք և դստերք ունէր, նոյնպէս բաց էր Գէորգի առջև։ Տարակոյս չկայ որ գլխութեան արժանի ամէն մի բանի համար արթուն աչք և ականջ ունեցող պատանին շատ բան սովորելու էր Բէվլուառի մէջ։

Սակայն Գէորգ նոյն միջոցին իսկ մի աւելի նշանաւոր և աւելի հետաքրքրութիւն շարժող մարդ ճանաչեց Ֆէրֆաքսի տան մէջ — նա էր մի անգլիացի քաջատոհմիկ ազնուական՝ Ուիլլիամ Ֆէրֆաքսին համանուն հօրեղբայրը, որոյ հետ Գէորգ իր եղբօր ամուսնութենէն յետոյ նոյնպէս կապուած էր ազգակցութեամբ։ Այս Ֆէրֆաքսը գրեթէ վաթսնամեայ անձ մ՚էր. հասակով վեց կանգուն, նիհար, ջլուտ և ոսկորուտ, պարզ գորշագոյն աչքերով, սուր կծացրուած դէմքով և արծուաքիթ։ Անգլիոյ մէջ նա թէ սուսերով և թէ գրչով հռչակաւոր անուանի էր։ Յաջողակ ամուսնութեամբ անհուն երկիրներ ստացեր էր Վիրգինիոյ մէջ՝ յատկապէս Ռափահնօք և Փոթօմէկ գետերու մէջ տեղը գտնուած ամբողջ նահանգը, որոյ սահմանները յետոյ Ալլէգանի լեռներուն հասնելով աւելի ևս լայնացան։ Այս ահագին կալուածքի վարչութիւնը Լօրտին հաճութեամբ առ ժամանակ կ՚հոգար Ուիլլիամ Ֆէրֆաքս։ Լօրտը տակաւին նոր եկած էր Վիրգինիա՝ տեսնելու առջի անգամ իր հսկայ, արդարև արքայական հողերը։ Անտառախիտ վայրի աշխարհ, բայց որպէս չքեղ։

Մի քանի խօսք Վիրգինիոյ բնութեան վրայ։ Այս երկիրը, որ մեծութեամբ գրեթէ Ֆրանսիոյ կէսին չափ է, Ալլէգանի լեռներով երեք մաս կ՚բաժանուի, որք են՝ ստորուտ մասն (մեծահամբաւ ժայռի կամուրջով, որոյ բնական կամարի տակ 250 խոր վհի մէջ պարսպաձև ապառաժներու ստորոտով յորդան կ՚տայ Կետրոնեան փրփրադեղ հեղեղը) արևելեան աւազուտ և մասամբ ճահճային մասն և վերջապէս արևմտեան բարեբեր և կոհակնաձև մասը, որ կ՚հասնի Օհիօ գետին։ Երկիրը շատ արգաւանդ է և անչափ դաշտեր և սիգաւէտ արտեր ունի խաշներու համար։ Վայրի որթերով և ոլորուն բոյսերով պատուած թաւամուր անտառներու մէջ կ՚երևին հացիք, ուռիք, կաղնիք, շագանակենիք, բարտիք, կակաչք, թմբիք, կնձնիք, մայրիք, ցախիք, սարոյք մաղնողինիք, նոճիք, կեռասենիք, սալորիք. վայրի թռչուններն ու երէները կ՚վխտան ծառաստաններու մէջ, իսկ գետերը լիքն են ձկնով։

Լօրտ Ֆէրֆաքս երևակայած անգամ չէր այսպիսի ճոխութիւն գտնելու իր կալուածին մէջ. և որպէս հրապուրիչ կ՚թուէին նորան այս կուսական հողի մշակութեան համար պէտք եղած աշխատանքը.

Որպէս ունայն և սին կ՚երևէին մեծ քաղաքներու մատակարարած փարթամ զուարճութիւնքը՝ յանդիման այն պարզուկ ուրախութեան, զոր առատ կ՚վայելէ հինօրեայ անտառներու մէջ վաստակող ժրաջան տանտէրը: Նորա աչքերը չէին կրնար բնաւ յագենալ դաշտերու հրաշալի տեսարանէն: Երևի թէ Շաթօբրիան ևս զմայլած էր նորա նման, երբ կը գրէր հետևեալ խօսքերը. «Որպիսի հմայական խառնուրդ ընկերական կենակցութեան և վայրենական վիճակի: Այս փոքրիկ մայրւոյ ետևէն, որ հիւսուսից խիտ անտառի մի չքնաղ մնացորդն է, կ՚նշմարեմ աւասիկ դեռ նոր սկսուած մշակութեան անդրանիկ դաշտերը. գետնատապալ կաղնեաց արմատներու մօտ վէտ վէտ կ՚շարժին հասկերու ոսկեգոյն ալիքը. արմատախիլ ծառերու տեղը բռնած են լիուլի որայք՝ մի միայն մէկ ամառուայ վաստակոց նախընծայ խայրիք. պարարտ մարգերու վրայ հրկիզուած անտառներէն վեր կ՚սլանան ծխի թաւ թաւ ամպերը. փլատակներու մէջէն յամրաշարժ յառաջ կ՚երթայ մշակի խոփը, երկրաչափներն աստ և անդ սիւներով կ՚որոշեն սահմանները. վայրի թռչունները խոյս կ՚տան բուներէն և գիշատիչ գազաններու որջերը կը դառնան մարդկանն անդորր բնակարան, և տապարի ամէն մի հարուածը հնչմամբ կ՚աւետէ այս դաշտերու վրայ ընդ փոյթ իջնելու երկնից առատ օրհնութիւնը:»

Այսպէս ուրեմն ալևոր և ժիր Լօրտը վճռեց նստիլ իր երկրի վրայ և այլ ևս չվերադառնալ յԱնկլիա: — Եւ այժմ նա կ՚բնակէր քեռորդւոյ ագարակին մէջ՝ Բէլվուար:

Պէտք է ասել որ՝ թէև Լօրտը մեծ սէր ունէր բուսական աշխարհի համար, բայց առաւել աղուէսի որս կ՚սիրէր, և որովհետև Վիրգինիոյ անտառները գրեթէ լիքն էին խորամանկ աղուէսուկի ընկերներով, ուստի Լօրտը աւելի ևս սիրահարուեցաւ իր գետնին. որսի ժամանակ անշուշտ պէտք էր մի ուղեկից. ուր գտնէր Լօրտը այնպիսի մի ձիաւոր, որ գէթ փոքր ինչ հաւասար գար իր պէս քաջ ու դիմադրաւ ասպետին, մանաւանդ այն բլրուտ և թփուտ երկրի վրայ, որ դեռ մարդս ոտք չէր դրած բնաւին:

Ընթերցողիս մտքէն թերևս յուշիկ կ՚անցնի որ մեր Գէորգէն յարմար որսակից կարող չէր գտնել կայտառ ծերունին. և իրաւ՝ աղուէս բռնելու ժամանակը հաւածին պէս՝ Լօրտն ու Գէորգ միասին ձիերով ու շներով ամէն առաւօտ կ՚երթային դաշտերը և հազիւ կ՚պատահէր որ առանց որսի տուն գային:

Իր անհուն գետիններէն Լօրտը մինչև այժմ միայն փոքրագոյն մասը

տեսած էր և մտադիր ևս չէր բնաւ թափառիլ ներսերը՝ ամբողջ կալուածքը զննելու. սակայն կ'ուզէր չափել տալ զայն, որովհետև լսած էր թէ գաղթականներէն ոմանք գալով՝ յանիրաւի գրաւած էին մի քանի տեղեր։ Եւ պէտք էր շուտ սկսիլ չափումը, զի այսպիսով միայն կարելի էր կանոնաւորել կալուածատիրոջ և նորեկներու փոխադարձ յարաբերութիւնքը։

Այժմ Լօրտը կ'ուզէր գտնել մի բանիբուն երկրաչափ, յատկապէս այնպիսի մի մարդ, որ բաց 'ի հմտութիւն ունենալէն՝ լինէր նաև հաւատարիմ և քաջասիրտ։ Երբ լօրտ Ֆէրֆաքս և Լօրենց Ուաշինգթն խորհուրդ կ'տեսնէին այս մասին՝ վերջինս յառաջ գրաւ իր ագարակի ծրագիրները, հաշիւներն ու պատկերները, որք դեռ նոր քաշուած էին Գէօրգի ձեռքով. և Լօրտը այն աստիճանի հաւանեց պատանու աշխատութիւնքը, որ լիակատար վստահութեամբ յանձնեց նորան երկրաչափութեան գործը։ Գէօրգի հաճութեան վրայ նա տարակոյս չունէր. և պատանին լաւ հասկընալով որ ծերունւոյ առաջարկութիւնն իր մանուկ հասակին պատիւ բերող հաւատարմութեան մի նշան էր և արհեստին մէջ մարզուելու պատեհ առիթ՝ իրաւ յօժար էր սրտի մտօք ընդունիլ Լօրտի հրաւէրը։ Աւելցընենք թէ այս գործը, զոր նա արդէն 'ի սէր միայն աշխատութեան պատրաստ էր յանձն առնել, նիւթապէս ևս շատ ձեռնտու էր, զի իւրաքանչիւր օրուայ աշխատանքի համար քառասուն ֆրանք պիտի ստանար Լօրտէն։ Նա գնաց տուն մօր հաւանութիւնը խնդրելու։ Ամէն մի յառաջադէմ պատանի դիւրաւ կարող է ըմբռնել թէ ինչ զգացմունք կ'յուզուէին նորա սրտին մէջ, երբ իրեն վիճակուած պատուոյ և ամենայն մասամբ շահաւէտ յանձնարարութեան լուրը կ'փութար յայտնել կաթոգին ծնողին։

Գ.

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Ուաշինգթնի բարձր և յաղթանդամ հասակին և զգօն բարքին նայելով՝ ոչ ոք չէր կարծեր որ նա դեռ վեշտասանամեայ պատանի էր, և ամէնքը պատկառանօք կ'վարուէին հետը։ Նորա բնաւորութեան էա-

կան ձիրքն էին՝ լրջմտութիւն, ազդութիւն, սիրալիր մտերմութիւն և հեզութիւն։

1748 Թուականին՝ ուղեկից առնելով Ուիլլիամ Ֆերֆաքսի երիտասարդ որդին և մի խափշիկ՝ Ուաշինգթն սկսաւ երկրաչափ ուղևորութիւնը։ Երեքն ևս ձիաւոր էին։ Չափելու երկրին հասնելու համար պէտք էր անցնիլ Կապոյտ լեռներու գեղեցիկ շղթայէն, որ այն ժամանակ Վիրգինիոյ արևմտեան սահմանը կ՚կազմէր։ Ձիւնն ու սառոյցը տակաւին հալած չէին սարերու վրայ՝ մինչդեռ հովիտները դարնան ծաղիկներով կ՚երփնէին գոյնզգոյն. Ճամբան մերթ Թաւուտ էր, մերթ քարուտ և մերթ հալեալ սահանքներով միանգամայն ջուր կոխուած։ Քաջ ձիաւորներն արիութեամբ յաղթեցին այս բոլոր խութերուն և մի ձորի միջով հասան քսանևհինգ անկլիական մղոնի չափ հեռու դրուած Վիրգինիոյ դալարագեղ հովիտը, ուր կ՚հոսէր Հնդիկներէն [illegible] անուանեալ կարկաջուն վտակը։

Գէորգի յիշատակարանը շատ հարուստ է այս երկրի եռանդուն նկարագրութիւններով. բայց յորմէ հետէ ձեռն արկաւ գործին՝ նկարագրութեանց հետքն անգամ չերևիր գրքին մէջ. այն օրէն սկսեալ կ՚զբաղէր միայն պաշտօնին։ Անտառաբնակ գաղթականներ սակաւ կ՚պատահէին ուղևորներուն, որք օթևան չգտնելով կ՚ստիպուէին ծառերու տակ հանգչիլ գիշերները. նոցա մտունդն էր վայրի բադ և այլ Թռչունք, զորս շամփուր զարկած կ՚խորովէին կրակի վրայ։

Մեր ձիաւորները պինդ զրահաւորուած էին զէնքերով, զի հարկ էր զգոյշ լինիլ բնիկ հնդիկներէն, որք հաշտ աչքով չէին նայեր նորեկ գաղթականներու վրայ։ Երկիրը մեր սեփականութիւնն է, կ՚ասէին նոքա, և յափշտակիչ աւազակ կ՚անուանէին զձերմակները։ Երկու կողմէն ևս փոխադարձ ատելութիւն կ՚տիրէր և երկու կողմէն ևս պակաս չէին անողորմ Թշնամութեան օրինակները, և կարելի չէ ուրանալ որ եւրոպացւոց անգթութիւնը առաւել սաստիկ էր։ Սակայն Ուաշինգթնի ժամանակ եւրոպացիք վաղուց արդէն ջան կ՚դնէին տարածել հիւսիսային Ամերիկայի մէջ մշակութեան բարեբեր արգասիքը և եթէ հնդիկները հակամէտ և ընդունակ լինէին սեփականել զայն՝ անշուշտ կարող պիտի լինէին ընկերութիւնք կազմելով հետևիլ եկւորներու զարգացման օրինակին և իրենց համար ևս հիմնել ջոկ ջոկ վարչական նահանգներ այն անհուն դաշտերու վրայ, որք ամենքի բնակութեան համար ևս հերիք էին։

Բայց որովհետեւ նոքա չկամեցան որքան և է մարդավայել կենակցութիւն հաստատել, հետեւաբար ցաւալի կ'ըլլէր եթէ այնպիսի աշխարհին և տարօրինակ բարդաւաճութեամբ զեղուն մի երկիր առ միշտ մնար քաղաքակրթութեան թշնամի ազգին ձեռքը, որ թուով հազիւ թէ կը համնէր մէկ հարիւր հազարի։ Այս ազգը դրեթէ չէր բազմանար, մինչդեռ եւրոպացւոց աճեցողութիւնը չափազանց առատ էր։ Լսենք թէ ինչպէս հնդիկ իշխաններէն մին, որոյ անունն էր Փոքրիկ Կրիայ, թէև այլաբանօրէն, բայց յէակամին շատ ուղիղ կ'արտայայտէ այս տարբերութեան պատճառը։ «Չեմ հասկընար ձեր բանը, ով ճերմակներ, կ'ըսէր նա, հազիւ թէ երկու սերունդք անցան միայն յորմէհետէ ոտք դրիք մեր պեանի վրայ՝ և արդէն աւասիկ մժեղներու պէս ծածկեցիք զայն, մինչդեռ մեք բնիկներս, որք ով գիտէ ինչ ժամանակէ 'ի վեր կանք այս տեղ, դեռ այնպէս նօսրացանուած ենք ինչպէս մեր եղջերուքը, զորս կ'որսանք դաշտերու մէջ։ Այս և ս կայ որ դուք ափիս չափ փոքրիկ հողէն անգամ մեծ մեծ արդիւնք դուրս կ'բերէք և այս սննեկէս թերեւս տաս քան անգամ լայն տեղէն ամբողջ տարուայ հարուստ ապրուստ կ'հանէք. առ այս կ'առնէք քիչ մի դալարուտ երկիր և այն տեղ ձեր կովը բտելով կ'ստանաք կաթն և միս։ Այն ինչ մեք կարմիրներս անհուն սահմաններու կարօտ ենք, զի եղջերուն զոր կ'որսանք և որ հազիւ թէ երկու օրուայ սնունդ կ'տայ մեզ, լայնածաւալ դաշտեր կ'ուզէ օրինաւոր հասակ առնելու համար։ Եւ եթէ որսանք երկու կամ երեք հարիւր եղնիկ՝ ասել է թէ ճարակեցինք կերանք այն բոլոր արօտներն ու թուփերը որով նոքա կ'ապրէին։ Սպիտակ մարդիկը կը տարածուին իբրև իւղ տափի վրայ, իսկ մեք կ'հալինք որպէս գարնան ձիւն, և եթէ շուտով մի ուրիշ ճամբայ չբռնենք՝ իսպառ կորչելու է կարմիրներու սերունդը։» Դժբախտաբար նոքա չբռնեցին այդ ճամբան։

Գէորգ որ մինչև այժմ դեռ հնդիկներ տեսած չէր՝ մի օր հանդիպեցաւ երեսուն ձիաւոր կազմող մի վաշտի, որոյ գլխաւորը դրօշակի տեղ սպանուած թշնամու գագաթին մորթը կ'տանէր առջևէն։ Մեր ուղևորները նեղի մէջ էին. վայրենի մարդիկը կարող էին դիւրաւ յարձակիլ վրանները և թերևս յարձակէին, եթէ մերոնք որ և իցէ երկիւղ յայտնէին։ Բայց նոքա իմանալով որ այս տեսակ հանգամանքներու մէջ ամէն բանէն գլխաւորն էր արիութիւնը՝ պինդ քաշեցին նժոյգներու սանձը և համարձակ ընթացան հնդիկներու հանդէպ։ Հնդիկներուն առաջարկուած ոգևոր ըմպելին այն աստիճանի հաշտ զգայմունք ա-

դէպ սրահրուն, որ այս պարգևի փոխարէն կամեցան պատերազմական մի պար պարել մեր ուղևորներու համար։ Երեկոյ էր. Հնդիկները կրակ վառեցին դաշտի վրայ և բոլորեցան կրակի շուրջը։ Առաջնորդը սկսաւ երգել իրենց վերջին քաջութիւնքը, նախ մեղմաձայնով և շարժ-մունքով և յետոյ արագ արագ։ Զինուորները նստած էին գլխիկոր — ասես թէ կ՚երազէին քնոյ մէջ. երգի վաւվաւուն խօսքերը ազդեցին և յանկարծ մինը վեր թռչելով վայրենի պար մի պարել սկսաւ։ Հետ-զհետէ ամէնքը ոգևորուեցան և զարհուրելի աղաղակով և կատաղի շարժմամբ խարոյկի չորս կողմն ոստոստելով ցոյց տուին թէ ինչ էր պատերազմական պարը։ Թմբուկի տեղը կ՚բռնէր եղնիկի կաշիով պա-տած ջրով լեցուն մի կաթսայ, իսկ միւս երաժշտական գործիքն էր՝ մէջը գնտակներ ունեցող ձիու պոչով զարդարուած շիշաձև մի դդում, զոր կ՚բախէր զինուորներէն մէկը։

Մէկ ամսուայ մէջ Գէորգ աւարտեց երկրաչափութիւնը և դարձաւ Մօն-Վեռնօն՝ հաշիւ տալու լորտ Ֆերֆաքսին, որ շատ գոհ մնաց նորա աշխատանքէն։

Լօրտի յանձնարարութիւնն ուղիղ կատարելով երիտասարդ Ուա-շինգթըն ճարտար երկրաչափի համբաւ ստացաւ, և դեռ տասնևեօթ տարու չկար, երբ Վիրգինիոյ վարչութիւնը պաշտօնական երկրաչափի աստիճան տուաւ նորան և վաւերական հաստատեց որոշած սահմանները։ Այնուհետև ամէն կողմերէն խնդիր կ՚յայտնէին Գէորգին որ գայ չափելու երկիրները, և նա երեք տարի զբաղեցաւ այս գործին։ Թէ որ աստիճանի ճիշտ կ՚վարէր իր պաշտօնը՝ պարզ կ՚երևի այս իրողութենէն որ Վիրգինիոյ բնակիչները դեռ մինչև այսօր տարապայման վարկ կ՚ընծայեն նորա անուամբ դիւանական գրքերու մէջ յիշուած սահման-ներուն։

Երեք տարուայ մեծագոյն մասը Գէորգ անցուց Վիրգինեան ան-տառներու այն գեղեցիկ, բայց և վայրենի միայնութեան մէջ. որպէս կ՚տարբերէր նորա կեանքը մեծ քաղաքներու մէջ ապրող երիտասարդ-ներու թուլամորթ կեանքէն. բնութեան զօրեղ ազդեցութիւնքը կ՚ամ-րացընէին նորա մարմինն ու հոգին. դաշտ ու անտառներու մինակու-թիւնը կ՚դրդէին զնա հետևելու իր ազնիւ զգացմունքներուն։ Գործէ ազատ միջոցները մերթ ընդ մերթ կ՚երթար եղբօր և կամ նորա աներ-ձակի և լօրտ Ֆերֆաքսի տունը և այս լուսաւորեալ շրջանին մէջ մտա-ւորական զարգացում ստանալով կ՚ընտելանար նաև բարեկիրթ հասա-րակութեան վայելուչ ձևերուն, զորս չէին կարող հաղորդել նորան վայրի անտառները։

Բայց ի՞նչ էր գլխաւորապէս այդ երեք տարուայ աշխատութեանց արդիւնքը Ուաշինգթնի համար։ — Քաղաքացւոց հաւատարմութիւնը, յարգանքը և 'ի վերջոյ այնքան դրամաւոր շահ, որ բոլոր իր պարտքը հոգալէն զկնի՝ դեռ աւելորդը կ'պահէր։ Այս ամէնը շօշափելի օգուտներ էին. բայց կար և մի այլ տեսակ օգուտ զոր նա տակաւին չէր տեսներ, որ դեռ սքողուած էր նորա առջև։ Միշտ եղած է և լինելու է, որ եթէ մարդս հաւատարիմ է 'ի փոքուն՝ ոյժ և միջոց կ'ըստանայ մեծ բան ևս կատարելու։ Նա դեռ չէր գուշակեր թէ ի՛նչ կարևոր և վսեմ նշանակութիւն պիտի ստանար իր արդարասէր և փութաջան գործունէութիւնը. և արդարև՝ ո՞վ կարող էր գուշակել թէ Վիրգինիան և միւս քոյր նահանգները ընդ փոյթ սև օրերու հանդիպելով՝ պիտի ստիպուէին սուր 'ի ձեռին պաշտպան կալ ազգային սուրբ իրաւանց, և ինչպէս կարող էր երիտասարդ Ուաշինգթըն մտաբերել որ սար ու ձոր ընկած աշխատելիս՝ նա կ'չափէր և կ'ուսանէր իր ապագայ պատերազմներու ասպարէզը, ուր նորէն պիտի անցնէր յաղթական փառօք։

Դ.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Այն մարդը միայն արժանի է ապրելու որ հանապազ բարւոյն կը նուիրէ իր կեանքը. ով որ այսպէս չանէր՝ յատկապէս չապրիր ընաւ, գէթ մարդու նման չապրիր։ Մարդավայել կեանք վարողը հողի մէջ չթաղեր իր քանքարը, այլ մշակելով կ'արդիւնաւորէ զայն յօգուտ անձին և մարդկան, և այսպիսի գործունէութեամբ միայն պատուոյ կնիք կ'դրոշմէ իր կեանքին։

Թէև Գէորգ Ուաշինգթըն դեռ իննևտասնամեայ երիտասարդ էր, բայց արիական կորովութեամբ և հանճարով գրաւած էր արդէն հայրենակցաց ջերմ յարգանքը, որ և կ'երևի հետագայ դէպքէն։

Թշնամի հնդիկներն ու ֆրանսայիք յարատև ասպատակներով շատ կ'նեղէին Վիրգինիոյ սահմանները. վասն որոյ նահանգի վարչութիւնը սահմանած էր առանձին զօրք կազմել զինակիր քաղաքացիներէն,

շրջանները բաժնել ամբողջ նահանգը և իւրաքանչիւրի վրայ նշանակել ջոկ ջոկ գնդապետներ, որք տարին 150 ֆրանք սթէրլինգ թոշակ առանալով և օգնական զօրապետի անուն վարելով պարտաւոր էին քաջամարտիկ զինուորներ հրահանգել իրենց ձեռքի տակ։

Ուաշինգթն ևս արժանի գտաւ այս պաշտօնին՝ որ ինչպէս գիտենք՝ լիովին կ՚յարմարէր իր ախորժակին։ Սակայն այս կարևոր պարտաւորութիւնն ընդունելով՝ նա քաջ կ՚զգար վրան դրուած պարտքի խորհուրդը և նոյն ժամայն կ՚փութար կրթուիլ նոր ասպարէզին պիտանի հմտութեանց մէջ։ Իր եղբօր և միւս գնդապետներու առաջնորդութեամբ, որք արդէն յատուկ փորձով տեղեակ էին պատերազմին՝ կ՚ուսանէր պատերազմական արուեստը, կ՚վարժէր զէնք վարելու և այսպէս մի նոր հանդէս կ՚պատրաստէր իրեն համար, որոյ վրայ ևս քան զևս հռչակուելու էր նորա համբաւն ու փառքը։

Բայց այս նոր ասպարէզին վրայ դեռ ոտք չդրած՝ հարկ եղաւ նորան վշտագին սպաս մի մատուցանել եղբօրը։ Լօրենց հիւանդ էր և բժիշկները խորհուրդ կ՚տային դարման որոնել արևմտեան Հնդկաստանի մեղմօդոյ մէջ։ Հիւանդը կ՚ուզէր իր հետ ունել զԳէորգ և սա հարկաւ կարող չէր հրաժարուիլ խանդակաթ սիրով սիրուած եղբօր կամքէն. ուստի 1751 թուականի աշնան միասին նստան նաւ և յաջորդ ամառուայ կէսին վերադարձան դէպի տուն — Գէորգ նոր հոգսերով վշտադնած, իսկ եղբայրը դէթ հայրենի հողի վրայ հոգին փչելու փափաքով։ Եւ արդարև՝ տուն գալուն պէս նա հասաւ իր տենչանքին՝ ՚ի դառն սուգ բոլոր բարեկամաց, որք կ՚ճանաչէին նորա ազնիւ սիրտն ու բնաւորութիւնը։ Նա թողաւ մի այրի կին և մի փոքրիկ դուստր. կտակի զօրութեամբ նորա գետիններու մէկ մասը ժառանգեց Գէորգ որ և ինքն էր կտակապահ. Մօնթ-Վեռնօն ագարակը մնաց աղջկան, այն պայմանով՝ որ եթէ սա վախճանէր և կամ ժառանգ չթողուր՝ հասնէր նոյնպէս Գէորգին. իսկ այրի կինը ունենալու էր իրաւունք վայելելու կալուածոց հասոյթը։

Ժառանգութեան հանգամանքները տնօրինելուն պէս՝ Ուաշինգթն իսկոյն մտաւ իր պաշտօնը։ Այդ միջոցին անկլիացի կուսակալը չորս վիճակի բաժնած էր Վիրգինիան, յորոցմէ մին ընդունեց Ուաշինգթն հանդերձ հրամանով՝ որ ինչպէս մեծաւորներու, նոյնպէս և սոսկ զինուորներու մէջ ջան դնէ մշակել զինակիր որերոյն անհրաժեշտ յատկութիւնքը։

Ալլէգանի լեռներէն մինչև Օհիօ գետը ձգուած արգաւանդ երկրի

պատճառով վէճ մի փրթած էր անգլիացւոց և ֆրանսացւոց մէջ։ Առաջիններու կուսակալը՝ Դինդուիդդի՝ Անգլիոյ սեպհականութիւն կը համարէր զայն, իսկ երկրորդներու զօրավարը՝ Ֆրանսիոյ։ Երկու կողմն ևս կ՚ջանային գրաւել վիճելի սահմաններուն մերձակայ և կամ նոցա մէջ խիտ ապրող հնդիկները, որպէս զի օգնեն կռուի մէջ։

Իւրաքանչիւր դաս իրաւունք կ՚յայտնէր գաւառին վրայ, բայց թէ որի՞ իրաւունքը աւելի ծանր էր՝ դիւրին չէր որոշել. միայն թէ ոսոխները հաստատ մտադիր էին տեղի չտալ միմեանց և եթէ հարկ լինի՝ զէնքի թողուլ դատաստանը։

Այս էր ուրեմն Դինդուիդդի կուսակալի զօրք կազմելու հոգատարութեան բուն պատճառը։ Անգլիայէն հրամայուած էր երկու բերդ հաստատել Օհիօի վրայ, բայց մինչդեռ այս հրամանը բերող հրովարտակը ծովի վրայ կ՚նաւէր՝ ֆրանսացիք արդէն բռնեցին վիճելի երկրին մէկ մասը։ Հաշտութեան վերջին փորձ մի փորձելու և թշնամու ոյժն ու դիրքը իմանալու համար՝ կուսակալը որոշեց հրեշտակ առաքել ֆրանսացւոց հրամանատարին։

Նորա կարծիքով ոչ ոք կարող չէր աւելի լաւ միջնորդել այս գործի մէջ, բայց եթէ Գէորգ Ուաշինգթոն։ Դժուար էր սորա պաշտօնը. առջևը հինգ հարիւր վաթսուն անգլիական մղոն հեռաւոր ճամբայ և այս այնպիսի սահմաններու մէջէն, որք կամ խոպան անբնակ էին և կամ բնակեալ կասկածելի հնդիկներով . . . ։ Բանակցութեան բուն խնդիրն ևս դիւրին գործ մի չէր, այս տեղ ևս շրջատես ալխութիւն պէտք էր։ Սակայն Ուաշինգթոն յետ չկեցաւ կուսակալի հրաւէրէն և 1753 թուականին՝ սառնաշունչ նոյեմբեր ամսուայ մէջ՝ իր զինամարզութեան վարժապետէն ջոկ մէկ թարգմանիչ և չորս սահմանաբնակ մարդիկ առնելով՝ ընկաւ ՚ի չու։ Փոքրիկ կարաւանը շատ նեղութիւն ունէր քաշելու ձմեռային հովերէն և բուքերէն, հեղեղներէն և գետերէն, զորս պէտք էր կտրել անցնիլ ձիով կամ լաստով։ Ճամբու նպատակին մօտենալուն պէս նոքա հանդիպեցան անգլիացւոց հետ հաշտ հնդիկներու, որոց գլխաւորը յայտնեց թէ ֆրանսացիք ընաւ չունէին իրաւունք նուաճել երկիրը և թէ նա արդէն ճառով յայտնած է իր միտքը նոցա հրամանատարին։ Այս ճառը թղթի վրայ գրուած չէր ՚ի հարկէ, բայց և այնպէս իր մտքի մէջ պահելով՝ հնդիկը կարող էր բառ առ բառ կրկնել զայն Ուաշինգթոնին, որ և թարգմանչի միջնորդութեամբ արձանագրեց զայն յիշատակարանին մէջ։ «Հայրիկներ — ասեր է հնդիկը ֆրանսացւոց հրամանատարին — գ՚աք էք որ կ՚աւրէք

այս աշխարհի խաղաղութիւնը, զի կ՚գաք տուներ, քաղաքներ կ՚շինէք և կ՚յափշտակէք մեր երկիրը։ Հայրիկներ, երկայն ժամանակէ 'ի վեր մեք Մօն Ռէալի սահմանին վրայ կրակ վառելով՝ խնդրեցինք որ կանգ առնէք այն տեղ, աւելի ներսերը չմտնէք և չկոխէք մեր գետինը. և արդ դարձեալ կ՚աղաչեմ, յետ քաշուեցէք այն սահմանէն։ Զի կ՚յայտնեմ ձեզ, հայրիկներ, որ մե՛րն է այս երկիրը և ոչ թէ ձերը. կ՚աղերսեմ, հայրիկներ, լսեցէք ինձ քաղցրութեամբ, եթէ ոչ — մեզ կը մնայ մտրակով պատուհասել խուովարկուքը։ Եթէ գայիք հաշտ սիրով, որպէս եկան անկլիացիք, ապաքէն ձեզ հետ ևս առևտուր կ՚անէինք ինչպէս որ կ՚անենք նոցա հետ։ Բայց դուք, հայրիկներ, այս տեղ գալով ձեզ համար տուներ կ՚շինէք, երկիրը մեր ձեռքէն կ՚խլէք — չէ, այս բանին այլ ևս չենք համբերել։ Դուք ճերմակ էք, հայրիկներ — ճերմակ են և անկլիացիք, իսկ մենք կ՚ապրինք նոցա և ձեր մէջ տեղը. ուրեմն մեր երկիրը մե՛զ կ՚պատկանի և ձեզմէ և ոչ մէկին։ Զայն շնորհեց մեզ մեծ ոգին, որպէս զի բնակինք վրան. ուստի, հայրիկներ, կը պաղատիմ, յետ գնացէք. այս խնդիրը ես յայտնեցի և մեր եղբայրակից անգղիացիներուն, որովհետև կ՚ուզենք որ երկուքդ ևս հեռու կենաք մեզմէ։ Արդ՝ ձեր առջև ևս դնելով այս աղերսանքը՝ կ՚ուզեմ իմանալ թէ երկուքէդ արդեօք որն աւելի հաշտ է մեզ հետ. նորան կ՚լինինք դաշնակից և նա կ՚լինի ամէն բանով մեզ հաւասար։ Եղբայր անկլիացիքն արդէն լսեցին խօսքերս. եկած եմ նոյնը և ձեզ կրկնելու, զի բնաւ չեմ վախնար վռնտել զձեզ այս տեղէն։»

Այնու ամենայնիւ իշխանը յայտնեց որ շատ հնդիկ տոհմեր բոլորովին անցած էին ֆրանսացւոց կողմը։

Քանի մը օրէ ետքը Ուաշինգթոն նորէն չոգաւ առաջ. վեց շաբաթ տևեց այս տաժանելի ճամբորդութիւնը, մինչև հասաւ ֆրանսացւոց հրամանատարին. որ նստած էր Օհիօ գաւառի հիւսիսային կողմը։ Հրամանատարը սիրով ընկալաւ զնա, բայց առաքելութեան խորհուրդը լսածին պէս՝ միանգամայն հրաժարուեցաւ խօսիլ ընդ վիճով դրուած հարցի վրայ, ասելով թէ չունի իրաւունք ընդունած հրամանին դէմ վարուելու։ Ուաշինգթոնին կ՚մնար ուրեմն առաւել ևս միտ դարձնել իր պատուիրակութեան երկրորդ մասին, այսինքն դիտել թշնամու բանակը և բերդերու կազմութիւնը։

Այս բաներու վրայ ստոյգ տեղեկութիւն հաւաքելով նա դարձաւ դէպի յետ։ Վերադարձը նոյնպէս լի էր ամէն տեսակ տառապանքներով։ Ֆրանսացւոց զինակից հնդիկները շատ անգամ որոգայթ կ՚լարէ-

յին մեր ուղեւորներու դէմ. շաբաթներով նոյն օթեւանը բաց երկինքն էր եւ անկողինը՝ սառ ձիւն: Օր մը քիչ մնաց որ Ուաշինգթոն խեղդուէր ալէկոծ գետի կոհակներու մէջ: «Գետէն անցնելու ուրիշ հնար չկար, կ'գրէ նա, եթէ ոչ լաստի վրայ. միայն մէկ տապարով, որ ունէինք, տաժանելի ձեռնարկինք գործի եւ ամբողջ օրուայ չարչարանքէն յետոյ հազիւ թէ արեւի մար մտնելուն կրցանք աւարտել լաստի շինութիւնը: Անկէ հետեւ դրինք զայն ջրի մէջ, ելանք վրան եւ դրուեցինք եղերքէն: Սակայն դեռ գետի կէսին չհասած՝ այնպէս ուժգին խռուեցանք սառոյցներու մէջ, որ ամէն րոպէ կ'սպասէինք թէ լաստը ահա կ'ջարդուի եւ մեք կ'ընկղմինք: Ձեռքիս երկայն ձողը յատակի մէջ խթելով ջան կ'ընէի բռնել լաստը, որպէս զի սառոյցի կտորները քերուին անցնին քովէն. բայց կոհակներն այնպիսի բռնութեամբ հորդան տուին ձողիս դէմ՝ որ ես թաւալ գլոր ընկայ ջրի մէջ: Յաջողաբար կրցայ ամուր բռնել լաստի գերանը եւ պրծայ վտանգէն: Անկէ հետեւ որքան եւ աշխատեցանք, այլ չեղաւ հանել ոչ այս եւ ոչ այն ափին, մինչ հուսկ յետոյ կղզւոյ մը վրայ դրուելով հազիւ գտանք փրկութիւն. իսկ լաստը թողինք որ յառաջ մղուի ալեաց հետ:» Այսպիսի լլկանքէն վերջը մութ գիշեր ամայի կղզւոյն վրայ եւ ոչ յոյս ազատութեան դէթ առաւօտուն: Բայց պատահեցաւ որ ինչ բնաւ չէին սպասեր. սառոյցները այնպէս կուտակուեցան կղզւոյն մէկ կողմը որ կամուրջի նման բան մը գոյանալով Ուաշինգթոն ընկերներու հետ յաջողակ անցաւ միւս եզերքը:

1754ի կէսին հասաւ հայրենիք եւ միւսն օրն իսկ գնաց համար տալու կուսակալին:

Ե

ՈՒԱՇԻՆԳԹՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Պարզ տեսնելով որ ֆրանսացիք մտադիր էին զինու զօրութեամբ պաշտպանել իրենց սահմանջմունքը՝ կուսակալը որոշեց խելոյն պատերազմ բանալ. յապաղանք պէտք չէին, զի թշնամին կարող էր օգտիլ ժամանակէն: Բայց նախ կոչեց ՚ի մի վայր Վիրգինիոյ երեսփոխանները

և իր նախագիծը յառաջ դնելով յորդորեց որ անմիջապէս ընդունին զայն։ Սակայն պատգամաւորները առջի անգամ շատ համակրութիւն չյայտնեցին այս հրաւէրին։ Նոքա կ՚ըսէին. «Մեր մայր երկրի, Անկլիոյ իրաւունքներն Օհիօի գաւառին վրայ արդարև տարակուսելի են. բայց եթէ Անկլիոյ Թագաւորը կ՚ուզէ անշուշտ հաստատ կալ իր որոշման վրայ՝ լաւ. միայն Ճօրճ ինքը զօրք ուղարկէ Անկլիայէն։» Այնու ամենայնիւ ժողովը վերջապէս յանձնեց տալ տասն հազար սթէրլինգ 'ի նպաստ կամաւոր զինուորաց։

Ուաշինգթըն այնքան խոհեմութիւն ցոյց տուած էր իրեն յանձնուած դժուարին գործերու մէջ՝ որ կուսակալը սրտի մտօք հրաւիրեց զնա ընդունիլ նորակազմ բանակի հրամանատարութիւնը։ Ուաշինգթըն մերժեց այս պատիւը, «զի պատասխանատուութիւնը ծանր կ՚գար իր երիտասարդական անփորձ հասակին։» Այնուհետև կուսակալը դիմեց Ջօնսօն Ֆրայ անկլիացի քաջ հազարապետին, որ և ընդունեց հրամանատարի պաշտօնը, իսկ Ուաշինգթըն դարձաւ երկրորդ զօրավար գլխաւոր տեղակալի կոչմամբ։

Արշաւանքը սկսաւ։ Առաջաւոր պահու զօրապետն էր Ուաշինկթըն, որ միայն երեք վաշտ ունէր. այս երեք վաշտով Օհիօի սահմանին հասնելուն պէս՝ պէտք եղաւ տալ առաջին հարուածը։ Ֆրանսայեցւոց ազատ գնդերէն մին եկած էր պաշարել զնա. Ուաշինկթըն ընկաւ նորա վրայ և միայն մէկ ֆրանսացի կրցաւ խուսափիլ դաշտէն, իսկ միւսները կամ սպանուեցան և կամ գերի ընկան։ Այս կռուի մէջ Ֆրանսացւոց դէմ էին նոյնպէս և մի քանի հնդիկ տոհմեր։ Թէ որպէս յուզուած էր Ուաշինկթընի պատերազմական աշխոյժը՝ կ՚երևի քանի մի օր յետոյ կուսակալին գրած թղթէն. «Ձեր վսեմութիւնը կարող է լիովին վստահ լինիլ որ ես երբէք թոյլ չեմ տար բռնել զիս յանպատրաստից՝ երբ և գայ թշնամին. այս է գլխաւոր խոստմունքս, իսկ առաւել քան զայս գործելու չեմ խնայեր 'ի հարկէ իմ ջանքս։ Եթէ լսէք որ պարտուեցայ, հաւաստի եմ որ նոյն ժամայն կ՚լսէք նաև թէ մեք կատարեցինք մեր պարտքը և մաքառեցանք որչափ ատեն որ յուսոյ մի ստուեր կար։»

Այս միջոցին Ֆրայ յանկարծ մեռաւ և կուսակալը վերստին գրեց Ուաշինկթընին ընդունիլ հրամանատարութիւնը։ Նոր յաջողութեամբ ոգևորուած՝ այս անգամ նա դէմ չդրաւ պատուէրին և մեծ արգելքներու յաղթելով յառաջ մղեց արշաւանքը։ Նորան միացան շատ հնդիկ տոհմեր. այս մարդիկը պատերազմի մէջ անզուգական զինուորներ էին և ճարպիկ դիտակներ։

Բայց օգնութիւն խնդրող վայրենեաց մէջ պակաս չէին և այնպիսի անձինք, որք՝ ինչպէս յետոյ իմացուեցաւ՝ փրանսացւոց լրտեսներ էին։ Զօրքի ճամբան այժմ կ՚անցնէր սարոտ նահանգէ. սակաւաթիւ նժոյգները ուժէ թափուելով այլ ևս բանի պէտք չէին գար և բեռներն ու ռումբերը մարդիկ կ՚ստիպուէին յառաջ տանիլ։ Զօրավարը բանիւ և գործով խրախոյս կ՚տար բանակին և թողնելով որ ձին պաշար տանի՝ յետևոտս կ՚երթար զօրքի առջևէն։

Բազմօրեայ չուէն ետքը զօրքը հասաւ վերջապէս մի բանակատեղ, որ արդէն վաղուց ինչ ինչ պատնէշներ ունէր։ Զինուորները յետին աստիճանի վաստակած էին. շատ օրերէ ՚ի վեր շարունակ կ՚անձրևէր, հացը միանգամայն սպառած էր։ Այս պատճառով Ուաշինգթոն կամե-ցաւ հանգչիլ պատնէշներու մէջ և սպասել պաշարի։ Աւասիկ այս տեղ էր որ ֆրանսացիք մէկէն յարձակուեցան վրան. արևը դեռ չէր ծա-գած, երբ թշնամին մօտակայ անտառէն սկսաւ հուր տեղալ նորա դէմ։ Ուաշինգթոն՝ կռուին ընդունելու պատրաստ՝ իսկոյն դաշտ հանեց զօրքը. բայց ֆրանսացիք կ՚շարունակէին կրակը ապահով անտառի մէ-ջէն։ Վերջը յայտնի եղաւ որ թէև նոքա գերազանց էին թուով, բայց չէին ուզեր թողնիլ պատսպարեալ դիրքը, այլ կ՚ցանկային յանտառ որ-սալ զթշնամին։ Սակայն Ուաշինգթոն այնքան միամիտ չէր որ խա-բուէր. նա նորէն մտաւ պատնէշներու մէջ և վառօդը խնայութեամբ գործածելու հրաման տալով՝ պատուիրեց զօրականին այն ժամանակ միայն հրացան պարպել, երբ կարելի էր անվրէպ դպչիլ նպատակին։ Ֆրանսացիք հնդիկ ազգերու հետ թաւուտ բլրոյ մի վրայ կանգնած՝ ամբողջ օր սաստիկ հուր կ՚տեղային վերէն. անձրևը չէր դադարեր, փոսերը կ՚լցուէին ջրով և թրջուած հրացաններն այլ ևս չէին բաներ։ Վերջապէս երեկոյեան դէմ ֆրանսացիք իմաց տուին թէ կ՚ուզէին բա-նակցիլ։ Ուաշինգթոն կարծելով թէ թշնամու դիտաւորութիւնը իր բանակը լրտեսելն էր՝ մերժեց նոցա խնդիրը։ Այլ փոքր ինչ ժամանա-կէն յետոյ ֆրանսացւոց պատգամաւորները նորէն եկան, ասելով թէ բնաւ չէին ուզեր բանակ մտնել, բայց թէ միայն կ՚խնդրէին որ մէկ մեծաւոր ուղարկուի իրենց մօտ, և պատուով կ՚խոստանային երաշխա-ւոր կալ նորա ապահովութեանը։ Ուաշինգթոն զիջաւ նոցա պայմանին և բանակցութեան հետևանքն այս եղաւ, որ նա զինուորական պատուով թողնելու էր պատնէշները։ Հաստատամիտ քաջութեամբ և տոկուն դիմադրութեամբ նա կրցաւ թաքցնել իր ճշմարիտ վիճակը, որ ար-դարև շատ վատ էր, զի պարէնը դեռ հեռու էր և զօրքի կերակուրն

ու վառօդը միանգամայն հասած։ Եթէ ֆրանսացիք ստոյգ գիտնային նորա նեղ դրութիւնը և խրամատներու թշուառ կացութիւնը, զորս անհնարին էր պաշտպանել, հարկաւ չէին յօժարեր այնպիսի պայման դնել, և Ուաշինգթն՝ քիչ թէ շատ ընդդիմանալէն ետքը՝ թերևս ամբողջ բանակով մահուան ճարակ կ՚դառնար։ Հետևեալ օրը զինուորական պատուով ելաւ պատնէշներէն և ֆրանսացիք ներս մտան։ Ուաշինգթն արաւ ինչ որ միայն կարելի էր անել ներկայ պարագաներու մէջ և կատարեալ շնորհակալութիւն ընդունեց որպէս իր բանակէն, նոյնպէս և քաղաքացիներէն և կուսակալէն։

Ուաշինգթն այժմ ձեռքն արկաւ ոգորելու անիրաւ օրէնքի մի դէմ, որ արդէն վաղուց կ՚զբաղեցնէր նորա միտքը. այս օրէնքի զօրութեամբ քաղաքացի զինուորները վար դասուած էին անգլիացի զինուորներէն, որ յայտնի արհամարհանք էր վիրգինիական քաջ բանակի համար։ Բայց որովհետև նորա պահանջմունքը չընդունուեցան և կուսակալը քանի մի ուրիշ խնդիրներու մէջ ևս հակառակ կարծիք ունէր՝ Ուաշինգթն հրաժեշտ տուաւ իր պաշտօնէն։

Նորա հանգիստը երկար չտևեց։ Մէկ տարիէն ետքը Բրէդդօկ զօրավարի առաջնորդութեամբ երկու լաւ կրթուած անգլիական զօրքեր եկան, և Ուաշինգթն՝ կառավարութեան հրաւէրին տեղի տալով՝ նորէն մտաւ բանակը։ Պաշտօն ընդունելու շարժառիթը այսպէս կ՚մեկնէր ընկերներէն մէկին. «Թող չզարմանան վրաս եթէ յուսամ որ մասամբ իւիք արժանի եմ գովեստի՝ 'ի նկատի առնելով որ այս արշաւանքին մասնակցելուս միակ պատճառը՝ իմ հայրենիքիս ծառայելու գովանի փափաքս է և ոչ թէ պատուասիրութիւնը և կամ շահուց ակնկալութիւնը։ Կ՚յուսամ թէ այս հանգամանքը կրնայ վկայ լինիլ խօսքերուս, որ ես կ՚երթամ իբրև յօժարակամ զինուոր՝ առանց թոշակի և առանց յուսոյ բարձր տեղ մի ստանալու, զի քաջ գիտեմ որ Բրէդդօկ ազատ չէ տալու ինձ պաշտօն մի, զոր ես հաճէի ընդունիլ։»

Բանակը իսկոյն խաղաց դէպի Օհիօի գաւառը։ Այս արշաւանքը թերևս յաջող արդիւնք կ՚ունենար, եթէ անգլիացւոց զօրավարը գէթ փոքր ինչ հակամէտ լինէր բարի խորհուրդ լսելու։ Նա յառաջ մղեց բանակը կատարեալ վստահութեամբ՝ թմբուկներով ու փողով — ասես թէ տօնական հանդէսի կ՚երթար։ Առջևէ դիտակներ ուղարկելը ոչ թէ զգուշութեան, այլ երկչոտութեան նշան կ՚համարէր. հետևաբար շատ բնական էր որ անհաշտ հնդիկները՝ նորա չորս կողմը պտըտելով՝ միշտ հաւաստի լուր կ՚հաղորդէին թշնամւոյն նորա ընթացքի վրայ։

Այսպէս ուրեմն անկլիացիք յունիսի 9ին խրուեցան դարանի մի մէջ, ուր նստած էին ֆրանսացիք և հնդիկները. Նոցա սարսափելի կրակին նոյն ժամայն զոհ եղաւ յառաջապահ գնդի մեծ մասը՝ քսանևվեց գնդապետներով հանդերձ և ուրիշ անթիւ մարդիկ վիրաւորուեցան։ Բրէդդօկ զօրավարը մահուամբ կնքեց իր խիղախութիւնը, և գրեթէ հրաշք մի էր որ Ուաշինգթըն կենդանի մնաց այս ջարդի մէջ։ Քանի որ Բրէդդօկ կենդանի էր՝ Ուաշինգթն նորա հրամանը կատարելով մէկ վտանգաւոր տեղէն դէպի միւսը կ'ճեպէր. իսկ հրամանատարի ընկնելէն ետքը՝ կ'նետուէր նախ և առաջ այն տեղ, ուր առաւել սաստիկ էին պատերազմի արհաւիրքը։ Թշնամիք կ'որոնէին զնա, զի կ'ուզէին սպանել այն ոսոխը որ ձայնով և օրինակով այնպէս ուժգին խրախոյս կ'ազդէր իր զօրքին։ Շատ հնդիկներ երկար ժամանակ շէշտակի հրացան կ'արձակէին նորա դէմ, բայց երբ տեսան որ անվնաս կ'մնայ՝ վերջապէս թողին նետելը, զի համոզուեր էին թէ նա մեծ Ոգւոյ հովանաւորութեան տակ էր։ Հնդիկ իշխաններէն մէկը վերջը ինքն պատմեց այս բանը։ Իսկ Ուաշինգթն կ'գրէր ընկերներէն մինին. «Ամենակարող Աստուած այնպէս պաշտպանեց զիս որ մարդկային ամէն ակնկալութեանց ներհակ՝ ոչ մի վնաս չդիպաւ ինձ. զի չորս գնտակ անցան զգեստէս, երկու նժոյգ սպանուեցան տակս, բայց այնու ամենայնիւ իսպառ անվնաս ելայ վտանգէն, մինչդեռ ընկերներս մահու ճարակ կը դառնային իմ կողքին։» Ուաշինգթնի անվկանդ քաջութեան շնորհիւն էր որ զօրքի դէթ մէկ մասը կրցաւ փրկուիլ։ Ամբողջ երկրի մէջ միայն մի ձայն կ'հնչէր նորա կորովութեան վրայ և քահանաներէն մին այսպէս կ'խօսէր ամպիոնէն. «Այս ճակատամարտի մէջ ախոյեան հանդիսացող քաջերէն պիտի անուանեմ նաև հսկայազօր երիտասարդ մի՝ Ուաշինգթն գնդապետը, համոզուած լինելով որ եթէ երկինք այնպէս հրաշաբար փրկեցին զնա՝ ուրեմն նա դեռ աւելի գերազանց սպաս մատուցանելու է իր հայրենեաց։»

Ուաշինգթն այնուհետև մեկնեցաւ Մօն-Վէրնօն ագարակը, որ եղբօր աղջկայ մահուան պատճառով ժառանգութեամբ իրեն ընկած էր։ Բայց դեռ կ'պահէր գնդապետի կոչումը և ամէն տեսակ միջոցներով կ'աշխատէր բարեկարգել իր իշխանութեան ենթակայ զօրքի կազմութիւնը։ Բրէդդօկի պարտութենէն ետքը քաղաքացիք վրդովուելով վերջապէս հասկցեր էին, որ պէտք չէր մարդ և դրամ խնայել սպառնացող թշնամւոյն դէմ դնելու համար, և միաբերան կ'ցանկային որ Ուաշինգթն լինի գլխաւոր հրամանատարը։ Ընթերցողին արդէն յայտնի է

որ նորա մայրը այն թուլասիրտ կիներէն չէր, որք ամէն մէկ վտանգէ դողդղալով արիութեան նշոյլն անգամ կ'ջնջէն զաւակներու սրտէն. սակայն վերջին ռազմի մէջ որդուն սպառնացող զարհուրանքը այնպէս ուժգին ազդել էին վրան, որ այժմ արտասուօք կ'աղերսէր զնա՝ առ միշտ հրաժեշտ տալ զինուորական պաշտօնին։ Ուաշինգթն դորովալից սրտով կ'սփոփէր զմայրը և առ Աստուած ապաւինելով, որ է տէր կենաց և մահու, կ'յաւելուր. «Եթէ պաշտօն վարելու հրամանը ընդհանուր միաբանութեամբ վրաս դրուի և կառավարութեան կողմէն ընդունելի պայմաններով ինձ առաջարկուի՝ ապաքէն ամօթ կ'լինէր մերժել զայն, և այս հրաժեշտը անտարակոյս քեզ ևս աւելի թախիծ կ'պատճառէր, քան թէ երբ պատուաւոր պաշտօն զգեցեալ 'ի դաշտ դիմէի։» Սակայն և այնպէս հրամանատարութեան նման ծանր մի պաշտօն նա չէր ուզեր ընդունիլ առանց պայմանի. նպատակը և միջոցները քաջ կշռելով՝ նա կ'պահանջէր որ հրամանատարը ձայն ունենայ գնդապետներու ընտրութեան մէջ, որ իր առաջարկած նախագծին յարմար՝ խսլաւ նորոգուի պարէնի հայթհայթման եղանակը և որ վերջապէս որոշեալ ժամանակին լրիւ վճարուի զօրքի թոշակը։ Այս պայմաններն ընդունուեցան և նոցա օգուտը խիստ երևան ելաւ հետևեալ պատերազմին։ Քիչ մի ետքը նա ընդունել տուաւ քաղաքական ժողովոյն մէջ այլ ևս մի օրէնք, որով զինուորական դատարաններուն իրաւունք կ'տրուէր պատժել սրիկաներն ու դասալիք զինուորները, նոյնպէս և այն անպիտանները, որք թուղթ խաղալով, գինեմոլութեամբ և լկտի կենցաղավարութեամբ կ'վնասէին բանակին։ Եւ անյողդողդ Ուաշինգթն չէ թէ միայն սահմանել տուաւ այս օրէնքը, բայց և գործադրեց զայն ամենայն խստութէամբ։

Այժմ նորա գլխաւոր նպատակն էր՝ վռնտել ֆրանսացիքը Օհիօի մէջ դրուած Դիւքէն ամրոցէն, որ և յաջողեցաւ։ Այս յաջողութեամբ միանգամայն վերջ տրուեցաւ նոցա տիրապետութեանը Օհիօ նահանգին վրայ և լրացաւ Ուաշինգթնի ամենադժուար գործերէն մին, որոյ վրայ երկար տարիներով այնքան ճիգ ու փոյթ թափած էր — կ'ուզենք ասել որ թշնամի հնդիկները առ միշտ հաշտուեցան նորա հետ։ Այս փառաւոր արդիւնքը ձեռք բերելէն ետքը Ուաշինգթն հրամանատարութիւնը վար դրաւ և մեկուսեցաւ ընտանեաց մէջ ապրելու։

Գ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՔԸ

Ուաշինգթն քառասուն և եօթ տարեկան էր, երբ գնաց Մօն-Վէրնօն՝ խաղաղ տուն մի հաստատելու փափաքով և յուսով։ Այս տեղ նա բախտ ունեցաւ սրտով ու մտքով իւրեան հաւասար ընկերուհի մի գտնելու՝ զՄարթա Քուսթիս, գեղեցիկ և տակաւին նորատի այրին, որ երկու գողտրիկ զաւակաց, այն է՝ մէկ վեցամեայ ուստեր և մէկ քառամեայ դստեր մայր էր։ Ուաշինգթնի հարստութիւնը, որ նախորդ ժառանգի մահուամբ իւրեան հասած Մօն-Վէրնօնի գիւղովն արդէն բաւականին նշանաւոր եղած էր, առաւել ևս աճեցաւ կնոջ բերած 400,000 ֆրանք օժիտով։ Այս ամուսնութիւնը դժբախտաբար անզաւակ մնաց։ Բայց Ուաշինգթն իւր հարազատ տղայոց պէս կ'սիրէր խորթ որդիքը։ «Յուսամ եմ, կ'գրէր նա սպակէն ետքը ընկերներէն մէկուն, թէ առաւել բախտ գտնելու եմ մեկուսութեանս մէջ, քան զոր երբ և է վայելած էի բազմահոգ մեծ աշխարհում։» Այժմ նա իւր կեանքին նոր ուղղութիւն մի տալու զբաղած էր։ Նա կ'ուզէր նախ և առաջ երկրագործութեան և այգեպանութեան պարապիլ, բայց այնպէս որ արուեստից ու գիտութեանց աղբիւրէն ևս հոգին զովացընելու ժամանակ ունենայ։ Սակայն կ'տեսնենք որ ամուսնութեան օրէն տակաւին քանի մի ամիս չանցած՝ նա դարձեալ կ'մտնէ հասարակային գործունէութեան մէջ և յատկապէս յՈւիլլիամսպուրկ, ուր գաղթականութեանց պատգամաւորքը գումարեալ էին 'ի ժողով։ Նա բնաւ հետամուտ եղած չէր երեսփոխանական պաշտօնի և՝ գաղթականութեանց սովորութեանը հակառակ՝ այս մասին մինչև անգամ միաբանած ևս չէր կանխաւ ընտրողներու հետ. ուստի իւր վայելած անպայման վստահութեամբ էր միայն որ յայս պաշտօն կոչուեցաւ։ Եթէ նա լոկ իւր անձնական վայելքն 'ի նկատի ունենար՝ անշուշտ իւր սիրուն ագարակէն չէր մեկնէր. բայց պարտուց զգացումը, զոր ունի իւրաքանչիւր հայրենասէր, թոյլ չէր տար նորան խտրութիւնք անելու։ «Նա միայն կարող է, կ'ըսէ բանաստեղծը, իւր անձնական հաճոյից հետևիլ, որ

սու սրտով իւր համար ևեթ կ'ապրի աշխարհիս վրայ. բայց ով որ կ'ուզէ օգուտ բերել մարդկան՝ պարտ է որ նեղութեանց ևս յօժարի։»

Ուաշինգթնի գերդաստանը գէթ սովաւ կարող էր մխիթարուիլ, որ պատգամաւորաց ժողովը սովորաբար միայն մի քանի ամիս կ'տևէր տարին։

Երբ նորա ընտրուիլը յայտնի եղաւ ժողովլին՝ իսկոյն որոշեցին առանձին իմն պատուով ողջունել զնա խորհրդարանի մէջ։ Հետևեալ կերպիւ կ'գրէ այս մասին Ուիրթ. «Պարոն Ռոպինսօն ատենաբանին յանձնուած էր յանուն գաղթականութեանց շնորհակալութիւն յայտնել Ուաշինգթն ընդդասպետին այն ազնիւ ծառայութեանց փոխարէն, զոր և մատուցած էր երկրին նորաւարտ պատերազմի մէջ։ Այն ինչ Ուաշինգթն բազմեցաւ աթոռի վրայ՝ Ռոպինսօն խորին պատկառանօք կատարեց իւր պարտաւորութիւնը, սակայն սրտի ուժգին յուզմունքէն և զգացումներու զօրեղ թափէն այն ատեանի ողևորութեան և կրակոտ ճառի մղուեցաւ, որ շատ շփոթմունք պատճառեց երիտասարդ դիւցազնին։ Նա ոտքի ելաւ շնորհակալութիւն ասելու իւրեան վիճակուած պատուոյ համար, բայց պաշտումն աւելի ևս սաստկանալով այնպէս դողի մէջ ընկաւ, որ բառ մի անգամ չկրցաւ արտասանել։ Այս ճգնաժամին ատենախօսը՝ ոգւոյ ներկայութիւն ու յաջողակութիւն մի ցոյց տալով, որոց նոյն իսկ Լուդովիկոս ԺԴ. անգամ կարող էր նախանձիլ իւր փառաց ամենալաւ րոպէին, օգնութեան հասաւ տագնապելոյն և «Նստեցէք, ասաց նորան հանդուցիչ ժպտով, ձեր հեզութիւնը նոյնքան մեծ է, որքան և քաջութիւնը, և սա յոյժ 'ի վեր է այն ամեն գովասանքէն, զոր ես կարող էի բացատրել բառերով։»

Յաճախ կ'լսուի այս նկատողութիւնս, թէ յատկապէս նշանաւոր մարդիկ բազմութեան հետ դէմ առ դէմ խօսելու առաջին փորձին մեծ դժուարութիւնք կրած են։ Ակնածելով այն բազմաթիւ ունկնդիրներէն, զոր նոքա կ'տեսնեն իւրեանց առջև, և իւրեանց յատուկ արժանեաց վրայ փառքի համարում ունենալով նոքա կ'վարանին առջի բերան. մինչդեռ իւրեանց սեպհական հանճարի վրայ մեծ կարծիք ունեցող և լողայ ոգեկան հանգամանքը խիստ վար գնահատող անձինք յանդուգն դիւրութեամբ յառաջ կ'մատչին խօսելու։ Այն խորունկ բնաւորութեանց յատուկ տատամսութիւնը հետզհետէ միայն կ'անհետանայ։ Այսպէս եղաւ և Ուաշինգթնի համար. սակայն պերճ ճարտարախօսութեան նա չհասաւ երբէք և ստոյգն ասելով բնաւ ճառ մի անգամ չխօսեց բառիս բուն նշանակութեամբ։ Այնու ամենայնիւ չա-

փէ դուրս նշանաւոր էր նորա երեսփոխանական գործունէութիւնը։ Ժողովին մատուցանելու առաջարկութիւնքը նա կ'մշակէր նոյն իսկ փութով, զոր սովոր էր ցոյց տալ և բոլոր միւս գործերու մէջ. պարտուց զգացումն յառաջ եկող պահանջմունքը իր գլխաւոր ձգտողութեան հետ միաւորելով անդուլ աշխատասիրօք հանապազ հետամուտ կը լինէր ընդլայնելու իր մտաւորական հորիզոնը։ Եւ որովհետև նորա դատողական զօրութիւնը շատ սուր էր և միշտ խորին մտադրութիւն կ'ընծայէր ատենաբանութեանց՝ ուստի նորա բացատրութիւնքը, որք ըստ մեծի մասին հակիրճ էին, ամեն ժամանակ ծանր չափով կ'ընկնէին կշռի վրայ։ Ոճը պարզ էր, զի երբէք գին չէր տար արտաքին երևոյթին, այլ բուն գործին։ Այս էր պատճառ, որ երբեմն նորա դոյզն այլ իրական գիտողութիւնքը կ'բաւէին իսպառ այլ ընթացք տալու քննութեանց։ Եթէ նա խօսելու ելնէր՝ ամենքեան կ'լռէին։ Պատգամաւորք ստէպ կ'հարցընէին, թէ արդեօք ի՞նչ կ'ասէ Ուաշինգթն այս կամ այն խնդրոյ վրայ։ Նորա գերագոյն առաջնորդը իր գործունէութեան այս ասպարիզի վրայ ևս հայրենեաց օգնելու ջերմ փափաքն էր։ Եւ այս փափաքը յարտաքս կ'փայլէր նորա իսկական բնութեան մէջէն, որ թեթևութեան նշոյլ անգամ չէր բերեր իր վրայ։ Բնաւ չէր յամեր ժամանակին ներկայ դժուարիններուն և երբէք չէր թողներ զնոսա աւարտելէն առաջ։ Այս բաներու մէջ ևս իր պարտուց քաջ գիտակ և միանգամայն ազնիւ մարդոյ օրինակ կ'հանդիսանար ամենքին։ Եւ այնու ամենայնիւ որպէս մանկօրէն զուարթ և ուրախ գիտէր լինել իր տան և կամ մտերիմ ընկերաց շրջանի մէջ։

Յիշատակի արժանի է այս խօսքը, զոր տուաւ Ուաշինգթն իր ազգականներէն մէկին, երբ սա կ'ցանկար պաշտօն ընդունիլ քաղաքային խորհրդարանի մէջ։ «Թէ որ կ'ուզես գրաւել լսողներու ուշադրութիւնը, ասաց նա, միայն այս խորհուրդը կ'տամ քեզ — քի՛չ խօսիր և միայն կարևոր նիւթերու վրայ խօսի՛ր, 'ի բաց առեալ այն պարագան երբ խնդիրը քու ընտրողաց կ'վերաբերի. բայց նախ քան զամենայն՝ լռովին ծանօթացի՛ր բանի հետ։ Երբէք թոյլ մի՛ տար, որ անվայել եռանդով յափշտակուիս, և շատ հաւատ մի՛ ընծայեր յասուկ դատողութեանդ։ Հրամայական եղանակը թէև երբեմն կ'շորթէ մարդոց հաւանութիւնքը, բայց միշտ տհաճութիւն ազդելով նոցա սրտին։»

Տարուայ մեծագոյն մասը Ուաշինգթն ազատ էր հետևիլ իր ներքին բերմանց, որք, ինչպէս արդէն ասացինք, գիւղական կեանքի հետ կապուած էին։ Եւ Մօն-Վերնօն արդարև սքանչելի դիրք մի ունէր։

«Բնակութեան տունը նստած էր վեր գիզայող անտառապատ բլրոյ վրայ և Փօթօմաք գետի ստորին ու վերին ընթացքի հոյակապ տեսարաններու վրայ կ'իշխէր։ Տունն անմիջապէս շրջապատող պարտէզները գրեթէ անկլիական ճաշակով տնկուած էին։ Կալուածքը բաժնուած էր այլ և այլ արտերու, որք պէսպէս մշակութեան սահմանուած էին, և իւրաքանչիւրն իւր յատուկ մշակներն ունէր։ Սակայն երկրի մեծագոյն մասը տակաւին անտառներով ծածկուած էր, խոր հովիտներով ու վտակներով և խորշերով կտրտուած, ուր կ'սիրէր շրջիլ երէն և թագչիլ աղուէսը։ Ամբողջ դարաստանը Փօթօմաքի վրայ՝ Մօն–Վերնօնէն սկսեալ մինչև 'ի Պելվօար — Ուիլլիամ Ֆերֆաքսի աւանը — բազմադիմի դբօսանք կ'մատուցանէր մարդուս։» Այսպէս կ'գրէ Ուաշինգթն Իրվինկ։ Իւր նամակներէն մինի մէջ մեր Ուաշինգթն ինքն կ'խօսի դաստարակի վրայ, ցոյց տալով թէ որ աստիճանի հարեալ էր սրտով իւր Մօն–Վերնօնին։ «Բովանդակ Միացեալ Նահանգներու մէջ, կ'ըսէ նա, չկայ աւելի ախորժելի դիրք ունեցող կալուած մի։ Սա կ'գտնուի բարձրաւանդակ առողջարար երկրի մէջ, ծայրայեղ խորշակի և ցրտի լայնութեան գծէն հաւասարապէս հեռացեալ գօտիի և աշխարհիս ամենաչքնաղ գետերէն մինի վրայ, որ տարուայ իւրաքանչիւր եղանակին լի է ամեն տեսակ ձկներով, որպիսի են ալօզներ, սարեխներ, ծածաններ, թառափներ, և այլն։ Երկրի սահմանները տաս մղոնէն աւելի երկարութեամբ կ'ողողուին գետի ջրերով և հոս են բազմաթիւ ձուկի որսարանք, այնպէս որ մարթ է ասել թէ բոլոր եզերքը միայն մի մեծ ձկնորսարան կ'կազմէ։»

Այն ժամանակները Վիրգինիոյ մէջ իւրաքանչիւր մեծ տնկաստան (plantage) համարեա թէ ջոկ պետութեան կ'նմանէր։ Տանտիրոջ բնակած գլխաւոր տունը կառավարութեան կեդրոնն էր. մերձաւոր շէնքերէն մինի մէջ կ'ապրէր ստրուկներու վերատեսուչը (steward), որ գոգցես պետութեան առաջին պաշտօնեայն էր։ Սորա տան հետ միաւորած կային խոհանոցներ, գործարաններ, գոմեր, ամբարներ, շտեմարաններ։ Խափշիկներու ամբողջ երամ մը կ'աշխատէր բակի և տներու մէջ. առաւել մեծ մասը կ'վաստակէր դաշտերու վրայ։ Սոցա զուարթ խրճիթները փոքրիկ գիւղ մը կ'կազմէին։ Ամեն մին կոկիկ պարտէզ ունէր, դաւիթները լիքն էին ընտանի թռչուններով։ Եւ այս խրճիթներու դիմաց արևի տակ կ'ոստոստէր սև մանկտին։

Այս թեթեւ նկարագրէն ետքը ընթերցողը թող ինքն բարեհաճի նրացընել Մօն—Վէռնօնի պատկերն իւր հոգւոյ մէջ։ Նահանգներու մէջ կային բազում տնկարկներ, որք բոլոր վարչութեան գործերը իսպառ տնտեսուչներուն յանձնելով, որպէս առաջ Մերովեանք կ՚յանձնէին ան հազարապետներուն (majordome), ուրիշ բանի փոյթ չէին տաներ, բայց թէ հասոյթ ստանալու և ըստ կարելւոյն հեշտասէր զուարճութեանց հետեւելու ագահօրէն։ Այսպէս չէին Մօն-Վէռնօնի կարգերը։ Ուաշինգթօն իւր փոքրիկ պետութեան մէջ տէր և հայր էր միանգամայն։ Ամէն օր ձի նստած կ՚երթար տեսնելու արտերը, դաշտերը, ոստարանները, աղօրիքը։ Այս այցելութեանց ժամանակ սովորաբար ոսկեզօծ կոճակներով դեղին ֆրակ կ՚հագնէր։ Սոյն առթիւ ՚ի դէպ կ՚համարինք յառաջ բերել հօս Պ. Նոյմանի խօսքերը, որով այս վայելչակազմ մարդոյ պատկերը կ՚ներկայացընէ մեզ. «Ուաշինգթոնի պատկառելի շարժման մէջ վէսութիւն չկար, կամքը հաստատ էր, բայց առանց կամակորութեան և ամբարտաւանութեան։ Յաղթանդամ մարմինը, որ վեց ոտնէն բարձր էր, ներդաշնակ և գեղեցիկ բարեմասնութեամբ զուգաչափեալ էր. կարելի էր նմանցընել զնա հոյակապ շինուածքի մը, որոյ ջոկ ջոկ մասերու կատարեալ յարմարութիւնն առանձին իմն շուք կ՚ընծայէ ամբողջին։ Եռանդոտ սիրտը պարզ մտքով սանձեալ էր. կորովի արիութիւնն բնաւ յանդգնութեան չէր անցներ և նախատեսութիւնը վեհերոտութեան տեղի չէր տար։ Վստահ դատողութիւնը սուր քննողութեան հետ զօդեալ էր. փութաջան էր, երկասէր։ Որքան զբաղեալ լինէր՝ դարձեալ կ՚պահպանէր իւր բարեհամբոյր ընդելութիւնը և երբէք չէր դժնէր։»

Գերդաստանի հետ եկեղեցի յաճախելիս, կամ Ուիլլիամ Ֆէրֆաքսին և կամ ազգականներուն և ընկերներուն այցելութիւն անելիս՝ Ուաշինգթոն քառալուծ կառք կ՚նստէր և այն ժամանակ խափշիկ ձիավարն ու սպասաւորը փայլուն հանդերձ հագած կ՚լինէին։

Բայց ինչպէս կ՚լինի որ այնու Ուաշինգթոն ևս ստրուկներ պահէր — կ՚հարցընէ անշուշտ ընթերցողը։ Այս հարցմունքէն կ՚խնդրենք որ հետեւեալը ՚ի միտ առնէ։ Ուաշինգթոն ստրկական պետութեան մէջ լոյս տեսաւ։ Որ և է երկրի սովորութիւնքը իւրաքանչիւր բնկի վրայ առանձին իմն կնիք կ՚դնեն։ Եթէ մի օք պատմական անձնաւորութիւն մի քննութեան ենթարկելիս՝ անտես թողնէ ուշի ուշով զննելու նորա ժամանակին տիրապետող սովորութիւնքն ու մտաւորական ուղղութիւնքը, երբէք չկրնար արդար դատաստան հատանել նորա վերայ։ Նախ և

առաջ այն ժամանակը պէտք է ուսումնասիրել և ապա թէ հարցնել՝ թէ որ աստիճանի հաղորդ էր քննելի անձն իւր ժամանակի մտաց և բարուց։

Ստրկութիւնը չար ախտ մի էր պետական կեանքի մէջ, մանաւանդ այն ստրկութիւնը որ յերևան ելաւ քրիստոնէութեան ժամանակ։ Մարդկային շահասիրութեան պէս խորամանկ և հնարագէտ բան չկինիր։ Լուդովիկոս ԺԴ. ամենաքրիստոնեայ թագաւորին օր մը պատմեցին թէ — խափշիկները քրիստոնէութիւն չեն ընդունիր, ուրեմն ստրկացընենք զնոսա և ապա թէ դիւրին կ՚լինի վերածել զնոսա ՚ի քրիստոնէութիւն։ Այլ ևս թէ՝ խափշիկ ազգը իւր գերիները սպաննելու սովորութիւն ունի. ուրեմն եթէ գաղթականութեանց մէջ ստրկութիւն մտցընենք՝ այլ ևս չեն սպաններ գերիները, այլ մեզ կ՚ծախեն։ Այսպիսով մեք կ՚փրկենք նոցա կեանքը և ստրկութիւնը նոցա համար բարերարութիւն կ՚դառնայ։ — Թագաւորն հաւանեցաւ այս խօսքերուն, փորթուկէզւոց հնարած անիրաւութիւնը Ֆրանսացւոց մէջ ևս օրէնքի զօրութիւն ստացաւ և այնուհետև խափշիկներն իբրև ստրուկ յԱմերիկաստանին ընդհանուր սովորութիւն դարձաւ Փորթուկալի, Սպանիոյ, Ֆրանսիոյ և Անկլիոյ գաղթականութեանց համար։ Այս եղանակով յափշտակեալ սևերու թիւը կ՚հասնէր քառասուն միլիոնի։ Հարց մեղքը յետոյ շատ ծանր տուժեցին որդիք և մեք գիտենք, որ վերջին ժամանակներս բազում արեան զոհ պէտք եղաւ խափշիկներէն խլուած մարդկային իրաւունքը նորէն վերականգնելու համար։

Ուաշինգթնի պատմութեանը դառնալով մեր պատասխանի մէջ չվրիպելու համար՝ հարցընենք արդ, թէ ի՞նչ դիրք կ՚բռնէր նա իւր ժամանակին տիրապետող սովորութեանց հանդէպ, որոց մէջ ինքն ևս սնուած էր։ Եւ պատասխանն այս կ՚լինի, որ նա խնամակալ հայր էր իւր ստրուկներուն։ Թէ արդեօք ինչե՞ր գործեց յետոյ այս ստրուկներու համար՝ գրքոյկիս վերջն առիթ կ՚ունենանք պատմելու։ Նա չէր նեղեր զնոսա ծանր աշխատանքով, բայց պարապ նստիլ ևս թոյլ չէր տար. դատարկ անգործութիւնը ատելի էր նորա աչքին։ Ամբողջ բնութիւնը մեծ գործարան մի է. գործելէ դադարեալ գործարանական մարմիններն անհրաժեշտ մահու կ՚ենթարկուին։ Օգտաւէտ աշխատութիւնը մարդկային մարմնոյ և հոգւոյ պահպանողն է, իսկ դատարկութիւնը սկիզբն ոգեկան անկման։ Շահաւէտ զբաղմունքէ թափուր մարդոյ գլուխը վատ խորհրդոց օթևան է. ուստի և շատ ճշմարիտ է այս խօսքս, թէ ծուլութիւնն է մայր չարեաց։ Ով որ մարդոց վրայ իշխա-

նութիւն կ'բանեցընէ՝ թող զնոսա պատշաճաւոր կերպիւ զբաղեցընելու հոգ տանի։ Իւրաքանչիւր ոք դէթ մէկ մարդոյ վրայ իշխանութիւն ունի — ինքն իւր վրայ։ Ուրեմն պիտի զգոյշ լինի, որ այս մարդը դատարկ չմնայ։ Աշխատութեան տեսակներէն գերաղանցը՝ մեր յատուկ անձնաւորութեան վրայ աշխատիլն է, և մեք այն ատեն միայն իրօք կ'աշխատինք մեր անձի վրայ, երբ անդուլ ճգնութեամբ հետզհետէ կատարելութեան բարձր աստիճանին կ'փութանք հասցընել այն գործը, զոր կ'վարենք։ Այս մտքով իւրաքանչիւր մարդոյ հնարին է կատարելութեան դիմելու, ինչ և լինէր նորա գործիքը — թէ ասեղ, թէ արօր և թէ գրիչ։ Որչափ որ մարդս ստիպմամբ միայն աշխատի՝ նա դեռ մարդկային գոյութեան ստորին աստիճանի վրայ կանգնած է և անկման վտանգին ենթակայ։ Սակայն արտաքին ազդեցութիւնքը դեռ կ'պահպանեն զնա. ստիպմունքը տակաւին օգտաւէտ է նորա համար, թէև չկրնար սովաւ իսկոյն ճարտարութեան բարձր աստիճանին հասնելու։

Սակայն այն րոպէէն սկսեալ, երբ մարդս չէ թէ միայն իւր պաշտօնի պարտաւորութիւնը կատարելու, այլ ինքզինքն ևս ոպեպէս զարգացընելու պարզ դիտմամբ կ'ձեռնարկէ գործին, այն րոպէէն սկսեալ նա աւելի բարձր դասու մարդոց շարքը կ'անցնի։ Մարդկային սեռի բոլոր բարերարներն այս վերին դասուն պատկանած են։ Քրտամբ երեսաց վաստակեր են նոքա երջանկանալով այս մտքի մէջ, թէ նոցա աշխատութիւնը հաւասար չափով օգտաւէտ էր թէ իւրեանց և թէ այլոց։ Այս դասը դարձեալ պէսպէս բաժանումներ ունի. բայց նորան պատկանող մարդու առջև արդէն բաց է մարդկային երջանկութեան վերջին սահմանին տանող ճամբան։ Ամեն մարդ կարող է ոտք դնել սոյն ճամբու վրայ, բաւական է որ կատարէ ճշտիւ պաշտօնին պահանջած պարտաւորութիւնքը։ Այո, պարտուց կատարումն է այն կախարդական միջոցը, որով մարդս կ'հասնի իւր բախտին։ — Աշխատանքի ուղիղ գնահատութեան նկատմամբ Ուաշինգթնի և նորա ընկերներու օրինակը, որոց մէջ առաջին տեղը կ'բռնէ ազնիւն Ֆրանկլին, անհետ չմնաց Ամերիկայի մէջ։ Այս մասին խօսելով Լապուլէյ ֆրանսացին կ'ըսէ թէ՝ «Որքան շատ յառաջ երթանք, նոյնքան աւելի վերահասու կ'լինինք, թէ աշխատող մարդն է միայն իրօք ազնիւ մարդը և թէ չաշխատողը՝ որքան և հարուստ լինէր՝ դատապարտելի յանցաւոր է։ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ պարապ մարդը հասարակութեան թշնամի կ'համարուի. մայրերը հեռու կ'պահեն զնա աղջիկներէն և

ամէն մէկ խելացի անձն կ'զլանայ նորա պատիւը, կ'արհամարհէ զայնպիսին։ Ով որ ոչինչ չգործեր՝ վերջապէս վատութիւն կ'գործէ, կ'ըսեն ամերիկացիք, և շատ իրաւամբ։»

Ուաշինգթն իւր ժամանակի մէկ մասը մշակներու աշխատութիւնը կանոնաւորելու կ'նուիրէր՝ մերթ հսկելով նոցա վրայ և մերթ ամէն մէկին իւր զօրութեանը յարմար գործելու տեղն ցոյց տալով։ Գիտենք արդէն, որ նա թէ չափազանց աշխատութենէ և թէ պարապութենէ հաւասար հեռու կ'պահէր զնոսա։ Աշխատութեանց ուղիղ չափը գտնելու համար նա ուշադրութեամբ կ'դիտէր ամէն մի գործի ընթացքը որոշեալ միջոցին, 'ի հաշիւ կ'առնէր սովորաբար յառաջ գալիք արգելքները և ապա թէ չափ կ'դնէր մինին և միւսին։

Սակայն ամենալաւն այս էր, որ նա ստէպ ինքն իւր ձեռքով գործակից կ'լինէր մշակներուն։ Ստրկութենէ յառաջեկած պատուհասներէն մինն ևս տէրերու մէջ արմատացեալ այն անպիտան կարծիքն է, որ իբր թէ գիւղական աշխատութիւնը և կամ ձեռագործութիւնն անարգ բան է։ Ստրուկները տեսնելով որ ինքեանք միայն ստիպուած էին հոգալ այս անարգին գործերը, ասես թէ նզովեալ կ'զգային զիրենք։ Այս կարծիքը հասարակաց էր հին ժամանակին, յետոյ դարձեալ յերեւան ելաւ Ամերիկայի մէջ։ Մեք կ'թողունք որ ամէն մարդ ինքն դատէ, թէ այսօր զինքեանք ազնիւ կոչողներէն արդեօք շատե՞ր կան, որք աւելի ուղիղ հայեացք ունենային այս մասին։

Մօն-Վերնոնի ստրուկները յաճախ կ'տեսնէին զՈւաշինգթն պարտիզի կամ դաշտի մէջ զբաղած։ Անգամ մի նա իւր մշակներու հետ ամբողջ օրերով նոր և աւելի յարմար արօր մը շինելու աշխատեց դարբնոցի մէջ. գործը յաջողեցաւ և խափշիկները տեսան յետոյ, թէ ինչպէս նա խիտ խիտ դալարեօք պատած երկիրը հերկելու կ'ջանար։ Օր մի ևս աղօրիներէն մին ջրի յորձանքէն քանդուելու վրայ էր։ Չնայելով յորդահոս անձրևին՝ նա ճեպեց դէպի գետը և մշակներու հետ միասին փրկեց շինուածքը։

Ուաշինգթն սովորաբար շատ կանուխ կ'զարթնէր և ձմեռուայ ժամանակ արդէն մթուն կ'ելնէր տեղէն։ Բայց իւր սենեակը տաքցընելու համար ուրիշներու քունը չէր կարճեր։ Նա ինքը կ'վառէր կրակարանը և այնուհետև կ'սկսէր կարդալ ու գրել, մինչև որ ընտանեաց նախաճաշը պատրաստ լինէր — սովորաբար ամառը եօթ ժամին, ձմեռը ութին։ Երկու բաժակ թէյ և մի քանի սիմինտրի շոթ — այս էր նորա նախաճաշը։ Երկու ժամին կ'ճաշէր. չնայելով իւր հարստութեանը՝

սեղանը շատ պարզ էր։ Կերակուրի ատեն երկու բաժակ գինի կ՚ըմպէր, իսկ միւս ժամանակ սովորական ըմպելիքն էր պարէջուր կամ մրգօղի։ Երեկոյեան ինն ժամին կ՚երթար ննջելու։

Կայքին վերաբերեալ գործերու համար առանձին հաշուեգիր կ՚պահէր, իսկ նամակներու համար ջոկ ջոկ գրքեր։ Եւ այսպէս կարգ պահպանելով ամեն բանի վրայ լիակատար ու պարզ հայեացք կ՚ունենար միշտ։

Ուաշինգթնի դաշտերու վրայ մշակուած բոյսերէն գլխաւորն էր Ծխախոտ, որ մեծ քանակութեամբ յԱնգլիա կ՚ուղարկուէր։ Այս բոյսի համար առանձին շտեմարաններ շինուած էին Փօթոմաքի վրայ։ Կարծ միջոցին օտարազգի առևտրական տուները այնպէս վստահութիւն ստացան Ուաշինգթնի ազնուութեան և հաւատարմութեան վրայ, որ թապաք դնելու ժամանակ այլ ևս պէտք չէին համարեր նորա նշանով կնքած հակերը զննելու։

Հիւրասիրութիւն ցոյց տալը նորա անհրաժեշտ պիտոյքներէն մէկն էր. նորա յիշատակարանի մէջ նշանակուած հիւրերն այնպիսի մարդիկ էին, որք յետոյ գրեթէ ամենքը հռչակուեցան յԱմերիկա։ Նորա տունը որսասէր հարևաններու հաւաքման տեղին էր՝ մանաւանդ աղուէս բռնելու ժամանակ։ Որսորդութիւնը նորա քաղցր զբօսանքն էր։

Այցելուաց մէջ, յորոց մին էր և ալևորն Ֆերֆաքս, կային պատուական ուսում առած մարդիկ, և սոցա հետ հաղորդակցութիւն ունենալն Ուաշինգթնի համար նոյնչափ կարևոր էր, որչափ և ընտիր գրքերու ընթերցանութիւնը։

Նորա գործունէութիւնը կալուածքի սահմաններէն դուրս ևս կ՚տարածուէր։ Այսպէս, օրինակի համար, օր մի նա համամիտ մարդոց հետ խորհուրդ տեսաւ ճահիճ մի մշակութեան վերածելու, որ երեսուն անգլիական մղոն երկայնութիւն և տաս մղոն լայնութիւն ունէր, և ձի նստած սկսաւ քննել ճահիճը։ Տաժանելի գործ էր այս և շատ վտանգաւոր. տեղ տեղ պէտք կ՚լինէր անցնել նոճեայ, եղևնեայ և այլ տերևախիտ ծառերէ կազմեալ անտառներէն, ուր մամուռը կախ ընկած էր ոստերէն, և այլուրեք պէտք կ՚լինէր շաւիղ բանալ մացառներու, փշերու և պատատուկ բաղեղներու մէջէն, որք գրեթէ անթափանցելի էին։ Նորա ձին յաճախ մինչև փորը կ՚ընկղմէր եղգիւրի մէջ. այնուհետև հարկ կ՚լինէր հետիոտս յառաջ երթալ դողդոջուն կեղևի վրայէն և շրջատեսութիւն անելէն ետքը՝ նոյն իսկ վտանգաւոր ճամբով նորէն յետ գալ դէպի ձին։ Այսպէս նա զանազան կողմերէն ներս

ծաւ մինչև այն ժամանակ մշակութեան անմատչելի սահմաններու մէջ և ապա թէ նոցա վրայ որոշ գաղափար մի ստանալով՝ ձեռն արկամօրը չորցընելու և արօրադրելու գծագրին։ Եւ արդէն բաւական էր, որ Ուաշինգթոն ինքն էր այս գծագրի հեղինակը և որ նա ինքը վստահ էր գործի յաջողութեան վրայ, որպէս զի իսկոյն մի քանի հարուստ մարդիկ ընկերութիւն կազմէին և միջոց տային նորան զայն ՚ի գլուխ հանելու։ Շատ տարիներ չանցան և աւասիկ առաջուայ վայրենի գաւառէն յառաջ եկաւ հոյակապ երկիր մը, որ լի էր բերրի դաշտերով և ճիզաւէտ մարդերով։

Այս գլխուս մէջ նկարագրուած կեանքի եղանակը այն աստիճան գոհունակութիւն կ՚տար պատուական Ուաշինգթոնին, որ ոչինչ բանի այնքան չէր փափաքեր որպէս այս կեանքին, զոր նա կ՚տենչար շարունակել մինչև ՚ի գերեզման։ Բայց այլ էր ճակատագրի վճիռը։ Ինչ որ նա իբրև օրինաց հնազանդ և իւր մայրենի Անկլիային սրտով սիրահար մարդ երազել անգամ չէր կրնար՝ կատարուեցաւ — գաղթականութիւնքը մայրենի երկրի հետ վէճի բռնուեցան, և այս եղաւ պատճառ, որ Ուաշինգթոն յանկարծ դուրս նետուեցաւ իւր տան հանգիստ շրջանէն։

Ե

ՄԻՆՉԵՒ ՅԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Արդ՝ նայինք թէ ի՞նչ էին գաղթականութիւնքը մայր երկրի հետ թշնամացընող պատճառները։ — «Վա՜յ օրինազանցին։» Թշնամութեան առիթ տուող օրինազանցն էր Անկլիոյ կառավարութիւնը։ Անկլիական սահմանադրութեան հիմնական օրինօք երկրի երեսփոխաններու հաճութեամբ միայն կարող էին նոր հարկեր դրուիլ ազգի վրայ։ Բայց կառավարութիւնը մէկէն յանդգնեցաւ առանց Խորհրդարանի հաւանութեանը հարկ դնել գաղթականութեանց վրայ, և ասել թէ ակներև մեղանչեց պետական օրինաց պարզ տրամադրութիւններու դէմ։

Իւրաքանչիւր ազնիւ մարդ կ՚համաձայնի մեզ, թէ ասենք, որ պատմութեան ամենողբալի տեսարաններէն մէկն է այս, երբ օրինաց աւանդապահի սուտ պաշտօն վարող կառավարութիւն մի՝ օրէնքը

պահպանելու տեղ՝ ընդհակառակն ինքը զանոնք խորտակելու կ'աշխատէր։ Այն տեսակ եղկելի սեպարանի պատեր կ'ներկայացնէր և Անկլօ-Ամերիկային վէճը։

Անկլիոյ խորագէտ դիւանագէտներէն ոմանք արդէն առաջուց կը գուշակէին այս անիրաւութեան հետեւանքը, և օրինակի համար՝ լօրտ Քրամտն։ Սա էր յատկապէս, որ ասաց Ֆրանկլինին. «Ձնայելով ձեր գովասանեալ սիրոյն առ Անկլիան, գիտեմ որ դուք Ամերիկացիքդ օր մի զձեզ նորա հետ միաւորող կապերը թոթափելով պիտի վերցնէք անկախութեան դրօշակը։»

Երբ հուսկ յետոյ այս խօսքերը նորէն մարդոց միտքն ընկան՝ կամեցան իմանալ, թէ արդեօք ինչ էր նորա պատճառը, և հետաքրքրութիւնքն ապարդիւն չմնացին։ Մինչդեռ Ամերիկայի գաղթականութիւնքը օրինապահութեան ամենընտիր օրինակ կ'հանդիսանային՝ նոյն ժամանակի անկլիական կառավարութիւնը ապօրինութեան ողբոյ կայան մը կ'ընծայէր. և Քրամտն արդէն կանխաւ կ'տեսնէր, որ կառավարութեան անհիմն պահանջմունքն օր մ'անշուշտ գաղթականութեանց ընդդիմութիւնը յարուցանելու էին։

Քրամտնի այն դիտողութեան դէմ Ֆրանկլին ասած էր թէ, «Ոչինչ բան այնքան հեռու չէ ամերիկացի եղբայրներէս, որքան որ մայրենի երկրէն զատուելու և ջոկ պետութիւն մի կազմելու միտքը» այս և աւելցնելով՝ «Միայն թէ դուք մեր պատուոյն չդպչէիք։» Առ որ լօրտն ևս խորհրդաբար ասած էր. «Իրաւ է, և այս մինն է այն պատճառներէն, որք անշուշտ արագելու են փորձանքը։»

Լօրտ Քրամտնի գուշակութիւնը կատարուեցաւ. Գէորգ Թագաւորի պաշտօնեայքը կամայօրէն հարկ դրին գաղթականութեանց քանի մի ապրանքներու վրայ։ Այս ապօրինութեան դէմ Ամերիկայի ժողովուրդը սովաւ միայն բողոքեց, որ չգնեց Անկլիայէն բերուած և հարկի ենթարկուած ապրանքը։ Հարկի որոշմունքը յետ առնուեցաւ, սակայն ոչ թէ այն պատճառաւ, որ դարձեալ արդարութիւնը վերականգնել կ'ուզէին, այլ զի մտադիր էին այն տեսակ իրի մը վրայ հարկ դնել, յորմէ ամերիկացիք չկրնային հրաժարուիլ։ Կառավարութիւնը կ'ըսէր ինքն իրեն. Պայմանագիրներն այն ժամանակ միայն օրինաւոր նշանակութիւն ունին, երբ դրոշմաւոր թղթի վրայ գրուած կ'լինին. և որովհետև գաղթականութեանց առեւտրական ժողովրդի մէջ անթիւ պայմանագրութիւնք կ'պատահին, ուստի անշուշտ պիտի ստիպուին դրոշմեալ թուղթ գնելու՝ վճարելով այն հարկը, զոր մեք կ'դնենք այս

թղթի վրայ։ Սակայն այս բանի մէջ ևս վրիպեցան նպատակէն. ամերիկացիք բերանացի խոստմամբ և ձեռնտուութեամբ միայն կ՚շատանային գործելու մէջ և անկլիական հարկահանները բնաւ գնորդ չէին գտներ դրոշմագրի համար։

Ասա և անդ յուզուեր էին արդէն սրտերը․ ժողովրդին հասած կոշտ անիրաւութիւնը բռնի ապստամբութեան առիթ կ՚տար, բայց խելացի մարդիկ կ՚աշխատէին օրինաւոր ճամբու վրայ պահել ընդհանուր շարժումը։ Տակաւին այժմ ևս Ուաշինգթն ՚ի բաց կ՚վանէր իրմէն մայրենի երկրէն զատուելու միտքը։ «Իբրև փաստ կարող եմ յայտնել քեզ, կ՚գրէր նա ընկերներէն մէկին, որ անկախութիւնը ոչ գաղթականութեանց կամքին կ՚յարմարի և ոչ շահու։ Սակայն, կ՚յաւելուր նա, կարող ես վստահ լինիլ, որ նոցանէ և ոչ մին յօժարելու է տեսնելու այն թանկագին իրաւանց եղծումը, որք իւրաքանչիւր ազատ պետութեան բախտի էական մասերն են և առանց որոց ոչ ազատութեան ապահովութիւն կայ, ոչ սեպհականութեան և ոչ կեանքի։»

Անկլիոյ խորհրդարանն ևս կոյր էր, որ հաւանութիւն շնորհեց կառավարութեան ձեռքով գաղթականներու դէմ լարեալ բռնութեանը։ Բայց և այնպէս Ամերիկայի բնակիչներու մեծագոյն մասը կ՚ցանկար որ բանը յայսնի գժտութեան չհասնի։ Այս մասին աղօթքներ կ՚անէին եկեղեցեաց մէջ, այս փափաքն արտայայտող հանրագիրք կ՚առաքուէին ՚ի Լօնտօն յանուն թագաւորին և խորհրդարանին։ Եւ Ուաշինգթն կը գրէր նոյն խորհրդարանի անդամներէն մէկին. «Դրոշմագրի օրինաց յետս կոչումը՝ ինչ շարժառիթով և լինէր այդ, միայն ուրախութիւն կարող էր ազդել մեզ. քանզի եթէ խորհրդարանն անդառնալի կերպով որոշած լինի ՚ի գործ դնել այդ կանոնը, կ՚երկնչիմ որ հարստահարութեան հետևանքն թէ մայր երկրի և թէ մեզ համար աւելի չար պիտի լինին, քան զոր կ՚երևակայեն արդիս։ Ուստի ամեն մարդ, որ յետս կոչումի համար ձայնակից գտնուելու յօժարի, իրաւունք պիտի ստանայ իւրաքանչիւր բրիտանական հպատակի շնորհակալութեան, և ես կ՚նուիրեմ ձեզ զիմը բոլորով սրտիւ։»

Արդ՝ դրոշմի հարկն ևս յետ առին, բայց կրկին այն պատճառով, որ բանը յաջողած չէր։ Ամերիկայի դէմ ուղղեալ չար դիտաւորութիւնը տակաւին կենդանի էր։

Քիչ ժամանակէն ետքը Անկլիոյ խորհրդարանն ու կառավարութիւնը հարկ դրին թէյի, թղթի, ապակիի և նկարչութեան ներկերու վրայ։ Այս բանը նորէն վրդովմունք պատճառեց սրտերուն։ Գաղթա-

կանութեանց մէջ կազմուեցան առանձին ընկերութիւնք, որոց անդամները խօսք կու տային բնաւ չգնել և չգործածել Անգլիայէն եկած ապրանքը, մինչև որ անհրաժեշտ հարկաւորութիւն չըլլան։ Կ'յուսային որ Անգլիոյ վաճառականները դէմ սովա կ'ստիպուին հարկերն վերցնել տալու։ Ուաշինգթոն կ'գրէր ընկերներէն մէկին. «Այս րոպէիս, երբ մեր գոռոզ տէրերն ոչ այլ ինչ բանով կ'ուզեն շատանալ, բայց եթէ ամերիկեան ազատութեան կործանմամբ, յոյժ կարևոր կ'թուի ինձ բանի մի ձեռնարկել, որով կրնայինք 'ի բաց վանել հարուածը և պաշտպանել մեր հայրենաւանդ իրաւունքը։ Բայց թէ ինչ — այս է հարցը։ Ներքին համոզմունքս կ'ըսէ ինձ, որ ոչ ոք վայրկեան մի վանդկտելու չէ զէնք առնելու 'ի պահպանութիւն սուրբ իրաւանց. սակայն — կը խնդրեմ նկատել այս — զէնքը մեր վերջին օգնականը թող լինի, վերջին ապաւէնը։ Թերևս ասեն. Արդէն տեսանք թէ ինչ կշիռ ունեցան մեր աղերսանքը դահու և բացատրութիւնքը՝ խորհրդարանի առջև։ Բայց և այնպէս նորէն փորձ մի փորձենք — գուցէ նոյա վաճառականութիւնն ու գործարանները պարգասելով յաջողինք յարգել տալ մեր իրաւունքն ու արտօնութիւնքը։ Հիւսիսային նահանգներէն կարծեմ թէ սկսեր են հետևիլ այս եղանակին. ես լաւ կ'համարիմ նոյա ընտրած միջոցը, որ ապարդիւն չպիտի մնայ, եթէ ամէն տեղ 'ի գործ դնենք և խստիւ պահպանենք զայն։»

Ուաշինգթոնի այս նամակէն պարզ կ'երևի այն ժամանակի ընտիր ամերիկացւոց բռնած դիրքը Անգլիոյ դրժութեան դէմ։ Սակայն Անգլիան՝ մէկ անիրաւութենէն ետքը ուրիշ մը յղանալով՝ աւելի ևս յառաջ գնաց անգամ մի սկսած չարութեան ճամբու վրայ և բարձրագոյն դատաճանութեան միջապարտ քարոզեց նոր հարկն տալու պլայող մարդիկը։ Եւ երբ Ամերիկայի դատարանները չկամեցան հնազանդիլ այս պատուէրին՝ նոր ատեաններ հաստատեց ծովային գլխաւորներէն, որոց հաւատարմութեան վրայ արդէն կանխաւ վստահ էր, և ապա — դարձեալ երկրի օրէնքներուն հակառակ — քաղաքային խորհրդարանները լուծելով նորերը կազմեց։ Վերջապէս այս ևս որոշեց, որ յապաղային բոլոր ծանր յանցանքները ոչ թէ Ամերիկայի, այլ նոյն իսկ Անգլիոյ մէջ դատուելու էին։

Այս բռնի վարմունքն աւելի ևս շարժեց ամերիկացւոց սրտի մէջ յուզեալ դառնութիւնը. ատա և անդ սրտմտութեան տրտունջ կը լսուէր. տեղ տեղ ամերիկայի ամբոխի և անգլիական գլխաւորներու մէջ բանը կռուի կ'հասնէր։ Վերջինքն եպերանօք Եանքի կ'անուանէին

զամերիկացիս, որ Իրոքէզներու լեզուով վեհերոս և վատթար կ'նշանակէ. որոյ փոխարէն ժողովուրդն ևս անկլիացի զինուորներու շառագոյն համազգեստն նշաւակ առնելով խեցգետին և արինուշտդափու կ'անուանէր զնոսա:

Անկլիայէն թէյով եկած նաւերը քանի մի ժամանակ դուրս կ'վարուէին Պոսթոնի նաւահանգստէն. 'ի պատիժ այսորիկ կառավարութիւնը հրամայեց պաշարել նաւահանգիստն անկլիական նաւերով և յայտնեց թէ այսուհետև բնաւ չպիտի հանդուրժի թէյաբեր նաւերու հալածումն տեսնելու: Պոսթոնի բնակիչներու բարկութիւնը միանգամայն բորբոքեցաւ այս հրամանի դէմ և այնուհետև քանի մի ամերիկացիք՝ իբրև հնդիկ ծպտեալ՝ նաւերը մտնելով 342 արկղ թէյ թափեցին ծովի մէջ:

Անկլիացիք իսպառ պաշարեցին նաւահանգիստը. քաղաքը մեծ նեղութեան մէջ ընկաւ, առևտուրը գրեթէ ամենևին չքացաւ:

Այժմ Անկլիոյ կառավարութիւնը առաջարկեց Լոնտոնի խորհրդարանին, որ Մասսաչուզէթի բնակիչներն պատժուին իբրև ապստամբ: Խորհրդարանի մէջ 'ի նպաստ և ընդդէմ ձայներ լսուեցան: Զօրապետներէն մին, որ անժոյժ յասմամբ կ'յանդիմանէր մանաւանդ Պոսթոնցիներու արարքը, կ'յայտնէր թէ իսկոյն պատրաստ է հինգ հետևակ գնդերով բոլոր ամերիկացի ապստամբները աշխարհէս մէկ ծայրէն միւսը վանել: Այլք պաշտպան կ'հանդիսանային ամերիկացւոց, և օրինակի համար Ուիլքէնս կ'ապացուցանէր, թէ Անկլիոյ ընթացքը գաղթականներու դէմ միանգամայն անիրաւ և դատապարտելի է: «Մեր պաշտօնեայքն են, կ'ըսէր նա, որ կ'ուզեն քակել զհիւսիսային Ամերիկան Մեծին Բրիտանիոյ հետ զօդող կապերը և ոչ թէ գաղթականք. վերջինքս այլ ինչ բան չեն կամենար, բայց թէ խաղաղութիւն, ազատութիւն և ապահովութիւն:» Այս ասելով նա կ'աղաչէր զխորհրդարանը աւելի հաշտ միջոց բանեցնել գաղթականներու հետ: «Չեմ երկբայիր, կ'ըսէր նա 'ի վերջոյ, որ դուք կարող կ'լինիք այրել Պոսթոնը և կամ զօրեղ պահակ մը դնել այն տեղ. բայց իմացէք որ այնուհետև ամբողջ գաւառը կ'կորչի ձեզ համար: — Այս վայրկեանէն սկսեալ կ'տեսնեմ արդէն Ամերիկայի անկախութեան ծագումն ու զօրանալը, կ'տեսնեմ թէ ինչպէս իւր ազատութեան վրայ պինդ կալով աշխարհիս ճոխագոյն և հզօրագոյն պետութեանց շարքն կ'անցնի: Կ'ուզէք արդեօք յուսահատութեան հասցնել զնոսա: Ո՛ն ուրեմն: Դուք պիտի գտնէք ձեր առջև ազգ մի, որ բռնակալութեան դէմ

Բորբոքեալ վրէժէն զօրութիւն քաղելով՝ նոյն իսկ արիութեամբ պաշտպանելու է իւր ազատութիւնն ու գոյքը, որպէս երբեմն և մեր փառաւոր նախնիք, երբ սոքա իւրեանց վտանգեալ իրաւունքն պահպանելու կ'ելնէին։»

Այս ազդարարութիւնը չօգտեց․ խորհրդարանի բազմութիւնը կուրացեալ պաշտօնէութեան համամիտ մնաց և բոլոր Մասսաչուզէթ Նա-Նահանգի բնակիչները ապստամբ քարոզուելով պատերազմական օրինաց ենթարկուեցան։

Կռիւն արդէն սկսած էր։

Հազիւ թէ այս որոշումը յայտնի եղաւ Մասսաչուզէթի մէջ՝ նոյնժամայն նահանգներու երեսփոխանքը հաւաքուեցան Սալէմ և այս տեղէն հրաւէր կարդացին Ամերիկայի բոլոր գաղթականութեանց, որպէս զի փութան ընդհանուր ժողով մի կազմելու։ Հրաւէրն ամեն տեղ ընդունուեցաւ, միայն թէ Գէորգայ պատգամաւորներն էին, որ քիչ մի ուշ միացան միւսներուն։ Ընդհանուր ժողովը գումարուեցաւ Փիլատելֆիա 4 սեպտեմբերի, **1774**։

Լուրջ և պատկառելի մարդիկ էին այս ժողովի յիսուն և մէկ անդամները, որոց մէջ ամենէն նշանաւորն էր Ուաշինգթըն։ Քիչ մ'առաջ սա գրած էր ընկերներէն մէկին․ «Ի՞նչ բանի դէմ է արդեօք մեր այս երկար վէճը․ արդեօք իւրաքանչիւր ֆունթ թէյի համար երեք փէնս վճարելու տուրքի՞ն դէմ — ո՛չ․ մի միայն մեր իրաւանց պաշտպանութեան համար է որ կ'վիճինք այսպէս երկար։ Եթէ ես դէթ սակաւ մի հաւատ ունենայի, որ Բրիտանիոյ խորհրդարանը իրօք կարող է առանց մեր հաճութեան հարկ դնել մեր արտօնութեանց և սահմանադրութեան վրայ՝ այն ժամանակ աղաչանքի, այս մի միայն աղաչանքի մէջ կ'որոնէի մեր օգնութեան միակ միջոցը։ Բայց իմ հաստատ համոզմունքս այս է, որ այդ խորհրդարանը բնաւ իրաւունք չունի իւր աջն իմ կրպանիս մէջ դնելու, որպէս և ես ոչ ունիմ իրաւունք զիմը դնելու հարևանիս կրպանի մէջ։»

Ընդհանուր հաւանութեամբ ժողովի նիստն աղօթիւք բացուեցաւ և քարոզիչ քահանայն արդար գործի համար Աստուծոյ հովանաւորութիւնն խնդրելէն առաջ՝ կարդաց Սաղմոսի հետևեալ խօսքերը․

«Դատեա Տէր զայնոսիկ՝ ոյք դատեն զիս․ մարտիր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս։ Առ զզէն և զասպար քո և արի յօգնել ինձ։»

Ժողովն ամեն բանէն առաջ 'ի դիմաց գաղթականութեանց յայտարարութիւն մի գրեց, յորում համառօտ և պարզ կերպիւ նոցա օրինաւոր

իրաւունքը յիշատակուած էին։ Այսուհետեւ որոշեց խափանել Անկլիայէն եկած ապրանքները՝ մինչեւ որ անհիմն պահանջմունքը յետս չառնուին, եւ վերջապէս երեք հատ թուղթ յօրինեց, որք էին՝ հանրագիր մի առ ազգն Անկլիոյ, արձանագիր մի առ ազգն Ամերիկացւոց եւ աղերսագիր մի առ թագաւորն Անկլիոյ։ Նոյն իսկ յետին ճգնաժամին անգամ կ'ուզէին դեռ հաշտ ճամբով չարեաց առաջքն առնուլ։

Հաստատուն եւ լուրջ էին անկլիական ազգին ուղղեալ խօսքերը։ «Ձեզ կ'պատմեն, ասած էր հանրագրի մէջ, իբր թէ մեք ապստամբներ ենք, որ իշխանութեան հնազանդելէ ձանձրանալով անկախութեան կ'դիմենք։ Հաւատացէք, որ միայն զրպարտիչն այդպէս կ'խօսի։ Թո՛յլ տուէք մեզ ձեզ նման ազատ լինիլ՝ եւ ձեզ հետ միութիւն պահպանելը ամենամեծ փառք ու բարեբախտութիւն կ'համարինք։ Մեք միշտ պատրաստ կ'լինինք ամենայն ինչ որ ունինք զոհել յօգուտ պետութեան, ձեր թշնամին՝ իբրեւ մեր թշնամին, ձեր շահերն՝ իբրեւ մեր շահերը դիտել։ Բայց եթէ դուք թոյլ տաք ձեր պաշտօնէից խաղ վարել մարդկային պատուոյ հետ եւ եթէ ոչ արդարութեան ձայնն եւ ոչ օրէնքի պատուէրը, ոչ սահմանադրութեան հիմունքն եւ ոչ մարդկայնութեան զգացմունքը բաւական լինին յետ նահանջել զձեզ արիւնհեղութենէն — այն ժամանակ պարտ կ'համարինք յայտնել ձեզ, թէ մեք յաւիտեան չենք նուաստանար 'ի ծառայութիւն որ եւ է պաշտօնէի կամ ազգի։»

Խուլ էին թէ թագաւորն եւ թէ պաշտօնեայք։ Ի զուր Անկլիոյ պետական մարդիկներէն ամենրեւելին՝ Չաթամ, կ'զգուշացընէր հայրենիքը, 'ի զուր ոգելից խօսքերով կ'փառաբանէր եւ ամերիկացւոց արդար գործը — լսող չկար։ «Եթէ Ձեր վսեմութիւնքը, կ'գոչէր նա, Ամերիկայէն առ մեզ եկած թերթերն ու գրքերը տեսնէիք, եթէ ընդհանուր ժողովի զգօնութիւնը, իմաստութիւնն եւ հաստատամտութիւնն 'ի միտ առնէիք՝ հարկաւ չէիք յապաղէր յարգելու ամերիկացւոց իրաւունքը եւ զայն ձերինի պէս պաշտպանելու։ Ես իմ կողմէս պարտիմ խոստովանիլ, որ հին աշխարհի ամենամեծ պետութեանց մէջ անգամ չեմ ճանաչեր ազգ մի եւ կամ պետութիւն մի, որք այսպիսի դժուար հանգամանքներու մէջ աւելի վսեմութիւն ցոյց տուած լինէին քան թէ Ֆիլատելֆիա գումարուած ընդհանուր ժողովի ամերիկացի պատգամաւորքը։ Խնդութեամբ սրտի կ'տեսնեմ, կ'ըսէր նա ուրիշ անգամ, որ Ամերիկան կ'ընդդիմանայ մեզ։ Զի եթէ երեք միլիօն մեզ հաւասար մարդիկ յօժարէին ազատ կամօք ստրուկ դառնալու՝ նոքա անշուշտ պատուական

գործիք կ'լինէին բռնակալի ձեռքին նոյնպէս և զմեզ դարձնելու 'ի ստրկութիւն:»

Ուաշինգթոն ոչ թէ միայն իւր նախընթաց կեանքով, այլ մանաւանդ և իւր գործունէութեամբ ընդհանուր ժողովի մէջ ազգի տարապայման հաւատարմութիւնը գրաւած էր: Երբ նշանաւոր երեսփոխաններէն մէկը — Պատրիկ Հանրի — տուն վերադառնալիս հարցմունք լսեց, թէ արդեօք ով էր ընդհանուր ժողովոյ անդամներէն ամներևելին՝ պատասխան տուաւ. «Եթէ բանը ճարտարախօսութեան գայ՝ Ռուտլէջը հարաւային Քարօլինայէն ամէնէն գերազանց ճարտասանն է. բայց եթէ հիմնաւոր գիտութիւնք և առողջ դատողութիւն կ'ուզէք՝ տարակոյս չկայ, որ Ուաշինգթոն գնդապետը ամէնէն մեծ մարդն է ժողովի մէջ:»

Ամէն մարդու համար, որ համոզուած էր թէ պատերազմի ժամն արդէն մօտ է, մխիթարութիւն էր այս հանգամանքս, որ Ուաշինգթոն իւր դիւանագիտական քանքարի հետ պատերազմական հանճարն ևս վկայած էր արդէն:

Ը

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

Ի դերև աշխատեցան Անգլիոյ լաւագոյն մարդիկը զկառավարութիւնն ու խորհրդարանը յարդարութիւն և 'ի զգաստութիւն հրաւիրելով: Մասսաչուզէթ նահանգը պատերազմական օրինաց տակ դրուեցաւ և պատուէր եղաւ վերցնելու ամերիկացւոց զինարանները, սկսելով նախ Պոսթոնէն: Սրտմտութեան աղաղակ մի էր որ հնչեց բովանդակ երկրի մէջ: Այլ ևս տարակոյս չկար, որ բռնակալութիւնը միանգամայն ոտնահարել կ'ուզէր զամերիկացիս: Հայրենասէր անձինք կ'հաւաքուէին 'ի մի վայր և կ'երդուէին կեանքերն անգամ զոհ բերել երկրի իրաւանց համար: Պատերազմը սկիզբ առաւ, երբ երկրորդ զինարանն ևս յափշտակեցին 'ի Քօնքորտ: Ուժի գերազանցութիւնն անգլիացւոց կողմն էր, զի նոքա թուով 800 էին, իսկ ամերիկացիք՝ 80: Զինարանը պարպելէն ետև անգլիացիք յետ չոգան դէպի Պոսթոն, բայց աղէ-

տալի պարձաւ այս չուն։ Ամերիկացիք օգնութիւն ստանալով յարձակուեցան նոցա վրայ։ Անկլիացիք զարհուրելի կորուստ կ'կրէին և այն ուժ հարիւրէն թերևս և ոչ մին կարող կ'լինէր Պոսթօն Ձողոպրիլ, եթէ նոցա հրամանատարն 'ի դէպ ժամու 1,000 մարդ 'ի թիկունս չառաքէր նեղեալներուն։

Ամերիկացիք չկրցան փրկել Քօնքօրտի համբարանոցը, սակայն վերջ 'ի վերջոյ ձեռք բերուած յաջողութիւնը մեծ աշխոյժ տուաւ նոցա. զի մարտնչեցան ընտիր ու վարժ գնդի հետ, մինչդեռ ինքեանք՝ լոկ քաղաքացիք ու գիւղացիք՝ վեր 'ի վերոյ զրահաւորուած անմարզ վաշտեր կ'կազմէին տակաւին։ Բայց և այնպէս քաջ որսորդներ էին, գիտէին արագ քարեր ընտրել, թումբեր դնել, պատնէշ կազմել և այն տեղէն թշնամու վրայ հուր տեղալ — պատերազմի եղանակ մի, որ յետոյ բոլոր զօրքերու մէջ մուտք գտաւ։

«Ի սուր, 'ի զէն։» Այս աղաղակն կ'թնդար գիւղէ 'ի գիւղ, շէնէ 'ի շէն, քաղաքէ 'ի քաղաք։ Ով որ սիրտ ունէր պաշտպան կալու հայրենեաց, ով որ արդար ատելութիւն կ'զգար բռնակալութեան դէմ՝ կ'առնէր պատի վրայէն հրացանը և դաշոյնը գօտիին կապելով Բարեաւ մնաս կ'ասէր ընտանեաց։ Այս հասարակ մարդիկը համազգեստի տեղ շապիկ կ'հագնէին շորերու վրայէն, ուստի և շապկամարդ կ'ասուէին. ունևորները սպիտակ կեղծ ծամերով կ'գային։ Անկլիացւոց զինուորները դեռ սակաւ մի առաջ կ'խնդային այս շապկաւոր և ծամաւոր մարդոց վրայ. բայց Քօնքօրտէն 'ի Պոսթօն փախչելու ժամանակ ծաղրն 'ի սուգ դարձաւ։ Ամերիկացիք ամենուստեք կ'արշաւէին դէպի Պոսթօն, որ թշնամու ձեռքն էր։ Քիչ ժամանակէն ետքն արդէն 15,000 ամերիկացիք պաշարած էին զայն ցամաքի կողմէն։ Պաշարողներու առաջին նպատակն էր դիտել զթշնամին և թոյլ չտալ որ երկրի մէջ մտնի։ Դառն էր քաղքի բնակչաց վիճակը, որք թշնամու ձեռքի տակ ճնշուած՝ շարժիլ անգամ չէին կրնար։ Անկլիացւոց հրամանատարն Գէճ, երկնչելով որ նոքա սպասեն առիթ մի գտնելուն պէս գուցէ ապստամբելու էին իւր դէմ՝ խոստացեր էր արձակել զնոսա քաղաքէն, եթէ զէնքերն յետ թողնէին. քաղաքացիք տուին զէնքերը, բայց նա իւր խօսքը կոտրեց և պահեց զնոսա իբրև պատանդ։

Թշնամւոյն 'ի խնդութիւն, ամերիկացւոց 'ի տրտմութիւն՝ օր մի յանկարծ անկլիական նաւեր մտան նաւահանգիստ. սոքա բերին 4,000 զինուոր ընդ վարչութեամբ Հօու զօրապետին, յոխորտամիտ մարդոյ մի, որ նոյնպէս կ'երևակայէր թէ իսկոյն կարող պիտի լինէր

զոյգ զոյգ կապել քշել զամերիկացիս։ Այս մարդուն յանձնուած էր անգլիական զօրաց հրամանատարութիւնն Ամերիկայի մէջ։ Անգլիացւոց Գօնքօրտէն յետս մղուելու չարագոյժ լուրն երևի թէ քիչ մի խախտեր էր նորա վստահութիւնը, որ չյանդգնեցաւ իսկոյն յարձակուիլ մօտակայ ամերիկացւոց վրայ, ինչպէս վայել էր իւր գոռոզ խօսքերուն։ Սորա հակառակ՝ առաջին շարժումն ամերիկացիք արին՝ մէկ գիշերուայ մէջ պատնէշ արկանելով քաղաքի մօտ։ Այս պատնէշներն առնելու համար Հօու բոլոր իւր գնդերը թշնամու դէմ խաղացուց։ Երկու կողմն ևս ամենամեծ արիութեամբ կռուեցան։ Անգլիացիք արդէն երկու անգամ յետ մղուած էին ամերիկացի հրացաններէն և սոքա յաջորդ յարձակումներն ևս յաղթանակով յետ կ'վանէին անշուշտ, եթէ պաշարները չսպառէին։ Այսպէս ուրեմն միայն երրորդ ընդհարումէն ետքը յետ չոգան քաջերը։ Նոքա մեկնեցան կանոնաւոր կարգով. թշնամին ևս այնպէս խոնջեալ էր, որ այլ ևս չկրցաւ հալածել զնոսա։

Յաղթանակն ամերիկացիք տարին. սակայն որպէս քաջ մարտնչեցան ազատութեան նորընտիր զուգադները հմուտ զօրապետներէ վարեալ կիրթ և կազմ գնդերու հետ։ Նոցա կորուստը միայն 453 մարդ էր, անգլիացւոյն՝ 1,054։ «Այսպիսի դժնդակ արեան նախճիր այսպիսի կարճ միջոցին երբէք չէի լսած» գոչեց Հօու։

Այս էր Պունքր Հիլլի ճակատամարտը, որոյ ամերիկացի ախոյեաններն արժանի էին հուսկ յետոյ 'ի փառս նոցա նոյն իսկ տեղի վրայ կանգնեալ կոթողին։ Բոլորեքեան կ'զգային, որ այսպիսի հոգւով վառեալ գնդեր օր մի անշուշտ ձեռք բերելու էին հայրենեաց անկախութիւնը։ «Երկրի ազատութիւնն ապահոված է արդէն» գոչեց Ուաշինգթն շարժեալ սրտիւ՝ պատերազմի լուրն լսելիս։ Պատնէշներն անգլիացւոց ձեռքն անցան, բայց նոքա պաշարումէն դեռ չէին ազատուած։

Թ.

ՈՒԱՇԻՆԳԹՆԻ ՍՊԱՐԱՊԵՏ ԸՆՏՐՈՒԻԼԸ

Մայիսի 10, 1775 ամի գաղթականութեանց ընդհանուր ժողովը

կրկին գումարուեցաւ բոլոր նաՀանգներու Համար պաշտպանութեան Հնար խորՀելու: Այս բանի մէջ ամենէն շատ գործօղն էր Ուաշինկթն, որ և նախագաՀ էր զինուորական պէտքերու զբաղեալ մասնաժողովոյն:

Իրերու վիճակին նայելով անշուշտ Հրամանատար մի ընտրել պէտք էր: Ժողովի անդամներէն շատերն արդէն իբրև պաշտօնակալ ծառայած էին Բրիտանիոյ զօրքին մէջ և 'ի Թիւս նոցա կային ոմանք, որք ազատ չէին Հրամանատար ընտրուելու Թաքուն յոյսէն: Առաջին կռիւներու մէջ ևս՝ անկլիացւոց Հալածման և Պունքր Հիլի արիւնաՀեղ պատերազմի ժամանակ՝ քաջ զօրավարք Հանդէս եկած էին. պակաս չէին և այնպիսիք, որ տենչանօք Հետամուտ կ'լինէին նոյն պաշտօնին. մինչդեռ Ուաշինկթն, ինչպէս սովոր էր անել այն տեսակ Հանգամանքներուն, խպառ կ'խորշէր որ և է մարդու վրայ ներգործելու 'ի նպաստ իւր անձին:

Վերջապէս մայիսի 15 քուէարկութեան ձեռնարկեցին և երբ ձայներն Համրելու եկան՝ յայտնի եղաւ որ Ուաշինկթն միութեամբ ձայնից ընտրուած էր՝ 'ի բաց առեալ միայն իւր քուէն: Նա շնորՀակալութիւն յայտնեց ժողովին այս Հաւատարմութեան Համար, ուխտեց անձնուիրութեամբ ծառայել Հայրենեաց, բայց այս ևս 'ի վերայ բերաւ, որ պաշտօնն իւր ուժէն վեր էր: Եւ ապա ասաց. «ԵԹէ չար բախտն իմ ջանքս 'ի դերև Հանելու լինի՝ կ'խնդրեմ սրաՀիս մէջ բազմեալ ակումբէն 'ի միտ բերել այս իմ անպասրուակ և պարզ խոստովանութիւնս, որ ես Հասուն չեմ Համարիր զիս այն պաշտօնին, որով կ'մեծարէք զիս:» Նա ընդունեց իւր ընտրութիւնն իբրև Նախախնամութեան Հրաւէր մի, որում չՀնազանդիլը մեղք կ'Համարէր, և պատրաստ էր 'ի գործ դնել բոլոր իւր կարողութիւնքն՝ յուսալով որ Աստուած ևս չէր Թողներ զնա առանց իւր օգնութեան. և որովՀետև փառասիրութեամբ չէր դրդուեր և ակներև կ'տեսնէր այն խնդրոյն ծանրութիւնը, որոյ լուծումն իրմէ կ'սպասէին, ուստի պաշտօնն ընդունելով մեծ զոՀ բերած կ'լինէր Հայրենեաց: Այս մարդը, որ ներքին անձկանօք ընտանեկան անդորր կեանքի քաղցրութեանց և պարտէզ ու դաշտի զբաղմանց ետեւ կ'բաղձար՝ յանկարծ կ'պարտաւորէր պարագլուխ կանգնիլ ռազմական շարժման մի, որ, ինչպէս ինքն ևս քաջ գիտէր, նոյն իսկ յաջող դիպուածին անգամ ընդ երկայն ատուրս բաժանելու էր զինքն ընտանիքէն և ծննդեան տեղէն:

Սակայն նորա արիական հոգւոյ մէջ բոլոր միւս զգացմունքներէն բարեպաշտութիւնն ու պարտուց ճանաչումը գերազանցելով տրտմութեան միայն թեթև շունչ մի կ՚լսենք նորա նամակներէն, զորս անմիջապէս իւր ընտրուելէն ետև գրած էր։ «Կարող ես հաւատալ ինձ, կը գրէր նա կաթողին սիրով սիրեցեալ ամուսնոյն, եթէ ամենահանդիսաւոր կերպիւ ասեմ քեզ, որ ես հետամուտ չեղայ այս ընտրութեանը և ամենայն հնարիւք աշխատեցայ խորշիլ նորանէ ոչ թէ միայն 'ի քէն բաժնուելու անյօժարութեանս համար, այլ զի և համոզեալ էի, որ պաշտօնն 'ի վեր է քան զչափ իմ ընդունակութեանց։ Քեզ մօտ մնալով մէկ ամսուայ մէջ առաւել բախտ կարող կ՚լինէի վայելել, քան զոր մարթ է ինձ յուսալ գտնելու այլուրեք։» — «Յոյսս կ՚դնեմ Նախախնամութեան վրայ, որ բարեգութ լինելով առ իս պահեց զիս մինչև ցայսօր, և չեմ տարակուսիր որ աշնան ողջանդամ կ՚վերադառնամ քեզ մօտ։ Արշաւանքի նեղութիւնքը բնաւ վիշտ չպիտի ազդեն ինձ. իմ տխուր զգացմունքս պիտի ծագին միայն այն թախծէն, զոր գիտեմ որ զգալու ես, երբ որ միայնակ մնաս։ Ուստի կ՚աղաչեմ զքեզ՝ գօտեորվի՛ր պնդութեամբ և զուարթ սրտով անցուր ժամանակդ։ Ոչինչ բան այնքան սփոփանք շնորհելու չէ ինձ, որքան որ յատկապէս այդ՝ քո գրչով ինձ հաղորդեալ։» — Մէկ ընկերի մ՚ևս հետևեալն կ՚գրէր. «Հայրենեաց գործը դժուարին և վտանգաւոր պարտաւորութիւն կ՚դնէ վրաս, սակայն յուսով եմ որ զիւր արարածներն իմաստութեամբ խնամող Տեսչութիւնն վերին ինձ ևս զօրութիւն կ՚տայ կատարելու զայն ճշտիւ և յաջողութեամբ։»

Ուաշինկթըն իբրև սպարապետ հինգ հարիւր տոլլար ամսական ստանալու էր. բայց նա մերժեց ամեն տեսակ վարձատրութիւն, ասելով որ հասարակային պաշտօնի մէջ անելիք ծախքերու վրայ յետոյ հաշիւ կ՚ներկայացընէ և թէ հաճին փոխարինել զայն՝ աւելի ոչինչ չպիտի ցանկայ։ Ժողովի ականաւոր անդամներէն մին՝ քաջուսումն Ճոն Ատամս՝ կ՚գրէր ընկերի մը. «Ըստ իս՝ թովչական բան մի կայ Ուաշինկթընի բարուց մէջ. նա մեր երկրի ամենաճոխ տոհմիկներէն մինն է, բայց և այնպէս իւր քաղցրիկ մենութիւնը, իւր ընտանիքն ու ընկերքը կ՚թողնէ, կ՚զոհէ իւր հանգիստը, այս ամենը վտանգի մէջ դնելով 'ի սէր հայրենեաց։» Շնորհատուր հրովարտակին մէջ, զոր մատուցին նորան յունիսի 20ին, նորա հայրենասիրութիւնն ու քաջութիւնն և ամեն հանգամանքներու մէջ վկայած ազնուութիւնն ու հաւատարմութիւնը և վերջապէս նորա մաքուր բարքն գովասանօք յիշուած

էին։ Որովհետեւ նորա 'ի դաշտ չուելու օրն արդէն մերձ էր, ամեն մարդ որ տակաւին չէր տեսած զնա՝ գէթ անգամ մի կ'ուզէր տեսնել զնա աչօքը։ Ուաշինգթոն գնդապետներու խնդրոյն զիջանելով հրամայած էր քանի մի վաշտերէ զօրահանդէս կազմել իւր առջեւ։ Բոլոր աշխարհ կ'զմայլէր նորա տեսքէն։ «Հազիւ կ'պատահի, կ'ըսէ Ուաշինգթոն Իրվինգ, որ ժողովրդի գաղափարը հրամանատարի մը վրայ իւրեան աւելի պատշաճող իսկութիւն մի գտած լինէր։ Ուաշինգթոն այժմ իւր արիական զօրութիւնքը լիովին ծաւալած քառասուն եւ երեք տարեկան մարդ էր՝ անձնեայ եւ թիկնաւէտ տեսլեամբ, ազնիւ ձեւերով, հանդարտ եւ պատկառելի շարժմամբ։ Նորա վայելուչ կորովութեամբ ձի նստիլն տեսնելիս ամենքն կ'զմայլէին զինուորական քաջ պատկերի վրայ եւ ուր որ երեւէր՝ դրուատիք կ'թնդային օդի մէջ։» Ճօն Ատամսի շնորհալի ամուսինն հետեւեալը կ'գրէր սպարապետի մասին. «Ուաշինգթոնի մէջ առհմիկ մարդու եւ հասարակ զօրականի, ակնածելի ծանրութեան եւ հաճոյական բարուց ախորժ խառնուրդ մի կ'երեւի, որոյ նմանն բնաւ չեմ տեսած։ Այս ազնիւ եւ արդարեւ վեհական երեւոյթի ամեն մի գծէն համեստութիւն կ'շողայ։»

Ժ

ՈՒԱՇԻՆԳԹՈՆ ՊՈՍԹՕՆԻ ԱՌՋԵՒ

Այս վճռահասական ժամուն ժողովը նորէն թագաւորին սիրտն ամոքելու փորձ կ'փորձէր մեծարիչ խօսքերով յօրինեալ աղերսագրով մի, ուր կ'ըսէին. «Թոյլտուութիւն կ'հայցենք հաւատարմացընելու զՁեր մեծութիւնը, որ չնայելով արդի երկպառակութեան մէջ ձեր հաւատարիմ գաղթականաց կրեալ վշտերուն, մեր սրտերն տակաւին այնչափ լիքն են ակնածութեամբ առ վեհութիւնն, որում պարտինք մեր ծագումը, որ բնաւ չենք կամիր մեր սիրելի մայր երկրի բարօրութեան եւ պատուոյն հետ անզուգելի վճիռ մի հատանել։» Ուրեմն դարձեալ անգամ մի հաշտութեան միջոց ընտրելու առիթ կ'տրուէր պետութեան. բայց նա մերժեց զայն եւ Լօնտօնի մէջ ուշադրութիւն անգամ չընծայեցին ժողովին։ Այս տեղ կ'մտածէին Հօուի սուսերներով պատասխանել ամերիկացւոց եւ չէին երկբայեր որ անկլիացի հրամանա-

տարն ընդ հուպ աւետելու էր նոցա ապստամբութեան խորտակումը — որպէս կ'անուանէին նոքա այն իրաւացի ընդդիմութիւնը։

Մինչ այս մինչ այն՝ Ուաշինգթն հասաւ Պոսթընի առջև։ Հետևեալ կերպիւ կ'նկարագրէ ամերիկացւոց բանակը նոցա հարիւրապետներէն մին. «Վրանները տարբեր են, որպէս և տէրերն իւրեանց հագուստով, և իւրաքանչիւրն իւր բնակաւորի բարուց և ճաշակի պատկերն կ'ներկայացընէ։ Մի քանիսն այս վրաններէն տախտակէ շինուած են և միւսներն առագաստէ. այլք՝ մասամբ այս և մասամբ այն նիւթէն. են և այնպիսիք որ քարէ, դալարէ, աղիւսէ և ոստերէ կազմած են, են դարձեալ և այնպիսիք որ երկրի մէջ իսկ փորուած են և կամ վերջապէս ձողերէ և պատատուկ բաղեղէ յօրինուած են ճարտարութեամբ։» Ի տրտմութիւն իւր Ուաշինգթն չգտաւ ինչ որ կ'յուսար. ամերիկացւոց զօրքը 20,000 չէր, ինչպէս որ կանխաւ որոշուած էր, այլ 16,000, յորոց դարձեալ միայն 14,000 մարդիկ ընդունակ էին զինուորական ծառայութեան. Նա գտաւ քաջ մարդիկ, բայց ոչ թէ միաձոյլ զօրք, գտաւ մանաւանդ մեծ ու փոքր վաշտեր, որք իրարմէ թէ զէնքով տարբեր էին և թէ վարչութեամբ անկախ։ Ոչ թնդանօթք կային բանակի մէջ և ոչ անհրաժեշտ պատերազմական կազմութիւնք։

Ուաշինգթնի առջևն եղող առաջին խնդիրն էր՝ միահաղոյն զօրք կազմել այս անկարգ բազմութենէն — խնդիր մի, որոյ լուծման չափազանց դժուարութիւնքը նա արդէն կանխաւ կ'տեսնէր։ Ընտիր ընտիր քաջեր էին նորան յանձնուած անտառաբնակ մարդիկը, սակայն ինչ օգուտ, երբ անկախութեան սիրով վառեալ՝ ամեն տեսակ զինուորական կարգերու ոխերիմ թշնամի կ'հանդիսանային։ Սակաւ օրերու, շաբաթներու մէջ լրացնելու բան չէր այն խնդիրը. մինչդեռ քաղաքի մէջ պատուական կազմութեամբ և ամեն պաշարներով լիովին հայթհայթեալ 11,000 համրող սպառազէն զօրք կանգնուած էր։

Այսպէս ուրեմն բանակ մտնելու առջի օրն իսկ լիաբուռն գործ գտաւ Ուաշինգթն. սակայն այս տեղ օգնեց նորան իւր մանկութեան սովորութիւնը, որով ամեն մի բան կանոնաւոր կերպիւ, որոշեալ ժամուն և որոշեալ տեղին սկսելու և իւր բոլոր ջանքը գործի ընթացքին նուիրելով՝ անընդհատ ուշադրութեամբ նորան հետևելու վարժած էր։ Որպիսի աշխատութիւն, ինչ ոյժ, ինչ տոկունութիւն և համբերութիւն պէտք էին նորան բանակի մէջ այն հոգին յարուցանելու համար, առանց որոյ ոչ մի զօրք կարող չէ տևական յաջողութիւն գտնել դաշտի վրայ։

Վերոյիշեալ հանգամանքներու մէջ նորան ոչինչ չէր մնար անել, բայց եթէ հետեւիլ Փաբիոս Յապաղչի պատերազմական օրինակին։ Տարին անցաւ առանց որ և է շարժողութեան այս կամ այն կողմէն։ Դեկտեմբեր ամսին ամերիկացի գնդերու մէկ մասը, որ միայն ներկայ տարւոյս համար զինուորական ծառայութեան պարտաւորած էր, կամեցաւ տուն վերադառնալ. մարդիկ ունէին իրաւունք առ այս — և Ուաշինգթն թողաւ որ գնան։ Պոսթօնին առընթեր բանակի մէջ մնաց միայն 10,000 մարդ, այն ինչ նոյն իսկ միջոցին քաղաքի թշնամին նորէն օժանդակ վաշտեր ընդունած էր Անկլիայէն։

Երկրի հայրենասէր անձինքն գուշակ անգամ չէին այն դժուարութեանց, որոց հետ ստիպեալ էր մաքառիլ Ուաշինթն. շատերը կ՚կարծէին, թէ նորա սպարապետութեան առջի օրն իսկ յաղթութեան աւետիք բերելու էին լրագիրք. բայց աւասիկ տարին անցաւ, և դեռ ոչինչ չէր պատահած։ Ուաշինգթնի երկու նամակները, երկուքն ևս Ռայդ հազարապետին գրած, բաւականին կ՚պարզեն իրերու վիճակը։ «Յոյժ կ՚տարակուսիմ, կ՚ըսէ նա առաջին նամակում, թէ արդեօք ամբողջ պատմութեան մէջ եղած է դէպք մի մերինին հանգոյն, ուր աւասիկ բովանդակ վեց ամիս առանց վառօդի մեր կայանը բրիտանական գնդերու զօրութեան դէմ հաստատուն կ՚պահենք և ուր մեզ պէտք կ՚լինի լուծել բանակն և զայն նորէն վերակազմել նոյն իսկ թշնամու դէմյանդիման։ Թէ ի՞նչ ելք կ՚ունենայ այս բանը — ապագային կ՚իմանանք. իսկ այժմուս ես կ՚ցանկայի որ մեք դէթ մէկ ամսով ծեր լինէի՛նք։» Երկրորդ նամակը գրուած է յաջորդ տարւոյ (1776) փետրուար ամսին։ «Ես ինքս գիտեմ ուրիշներէն լաւ, կ՚ըսէ նա, այն ողորմելի դրութիւնը յորում կ՚գտնուիմ. գիտեմ այն ամենը ինչ որ կը պահանջէն ինձմէ. սակայն գիտեմ նոյնպէս, որ առանց զինուորի, առանց զէնքի, առանց պաշարի — առանց այն ամեն իրերու, որք անշուշտ կարևոր են զօրականին — ոչինչ բան չյառաջանար։ Սակայն ամեն բանէն աւելի զիս տագնապողն այս հանգամանքն է, որ ես չեմ կրնար արդարացընել զիս աշխարհի դիմաց՝ առանց մեր թերութիւնքն յերևան հանելու և մեր գործին վնասելու։ Վասն որոյ հաստատ որոշած եմ իմ պիտոյքս յայտնելու ժամանակ այնչափ ևեթ յայտնել, որչափ որ ստիպուած լինիմ անհրաժեշտ հարկէն։ Իմ վիճակս երբեմն այն աստիճանի տաժանելի կ՚լինի, որ եթէ ես ընդհանուրի շահն աւելի նուազ յարգէի քան թէ իմ յատուկ բաւականութիւնս, վաղուց արդէն թողած կ՚լինէի ամեն բան։ Փոխանակ 20,000 այրընտիր զի-

նուորի՝ այս Թուի կէսէն քիչ մարդիկ ունիմ ձեռքիս տակ, ընդ որս կը հաշուեմ նաև այնպիսեք, որք կամ հիւանդ են, կամ արձակուրդ առած, կամ բանի առաքուած և կամ վերջապէս վատ զրահաւորուած են։ Դրութիւնս այնպէս գէշ է, որ արուեստական միջոցներու դիմել կ'ստիպուիմ՝ զայն գնդապետներէն պահելու համար։» Բայց և այնպէս անխոնջ կ'վաստակէր Ուաշինկթն բանակի նորակազմութեան վրայ չէ Թէ միայն արտաքին գործերու զբաղելով, որպիսի են զէնք, պարէն, և այլն, այլև բանակի ներքին վերաշինութեան վրայ հոգ տանելով։ Նորա գնդերու մէջ ևս կային պարզ և զազիր որեարք, որք միայն դայթակղութիւն էին զօրականին. ուստի Ուաշինկթն հետևեալ օրական պատուէրն արձակեց. «Այս ընդհանուր նեղութեան օրերուն փոխանակ շուայտութեան հետամուտ լինելու՝ ամեն մարդ կարող է բաւականին գործ գտնել 'ի սպաս Աստուծոյ և հայրենեաց։ Առաքինութեան և մարդկութեան գործ է այս, որոյ համար կ'մարտնչինք. մեր սերնդոց ժառանգութիւնը կախուած է մեր ճկունքէն, և այս ժառանգութիւնն կամ ազատութիւն պիտի լինի կամ ստրկութիւն։ Ազնուութեան Թևակոխելու քան զայս զօրաւոր շարժառիթ միթէ կարող է լինել այր մարդոց համար։ Արդ՝ Թող յայտնի լինի գնդերուն, որ իւրաքանչիւր ոք որ յանդգնի յետ մնալ կռուէն, առանց հարկւորապետի պատուէրին տեղի տալ Թշնամուն, Թաքչիլ և կամ դասալիք լինիլ — այս տեսակ անարի վատութեան համար նոյնժամայն սպանուելու է դիտապաստ՝ յօրինակ այլոց. զի վատարիք ստէպ ամենավարժ զօրքերն անգամ կ'շփոթեն իւրեանց խայտառակ վեհերոտութեամբ։»

Այս հրովարտակէն շատերն կ'հետևցընէին, որ Ուաշինգթն վերջապէս 'ի դէպ կ'համարէր հարուած տալու ոսոխին — և իրաւ այսպէս էր։ Նա կ'ուզէր առնել քաղաքին մերձակայ Տորչեսթրի բարձունքը. ուստի Թշնամու մտադրութիւնն Թիւրելու համար հրամայեց մարտի 3 գիշերուայ դէմ ուժգին ռմբակոծել քաղաքը, և մինչդեռ անկլիացիք շփոթման մէջ էին՝ Ուաշինգթնի գնդերը բարձունքն առին և ամրացուցին։ Այնպիսի եռանդով և փութով յառաջ տարին նոքա այս ամրափակութեան գործը, որ Հօու զօրապետն լուսու դէմ բարձանց վրայ նայելիս ապշութիւնը չկրցաւ Թաքցընել և գուչեց հիացմամբ. «Ապստամբները մէկ գիշերուայ մէջ աւելի գործ են տեսեր, քան Թէ ամբողջ ամսուայ մէջ կրնալու էր տեսնել մեր բանակը։» Ուաշինգթն այժմ Թշնամու ամենազայրագին յարձակման դէմ պատրաստ կենալով, զի Տորչեսթրի բարձունքը քաղաքի վրայ կ'իշխէին — կ'կարծէր Թէ

վերստին Պունքր–Հիլլի մարտին պէս բան մի ծագելու էր։ Բայց յաջորդ օրերու անձրեւն ու մրրիկը թոյլ չտուին անկլիացի զօրապետին յարձակման ձեռնարկելու, իսկ ամերիկացիք աւելի եւս պատսպարեցին բլուրները։ Եւ երբ փոթորկի հանգստանալէն ետեւ Հօու նորէն թշնամու կազմութիւնքն 'ի նկատի առաւ՝ այլ եւս անհնարին համարեց յարձակման դիմելու եւ սրտի դառնութեամբ քաղաքն թողնելով՝ նաւ մտաւ զօրաց հետ, իսկ Ուաշինգթըն՝ Պոսթոն։

Այս դէպքի լուրն ամենամեծ ուրախութիւն պատճառեց երկրին։ Ի յիշատակ ազատութեան Պոսթոնի՝ ընդհանուր ժողովը սահմանեց Ուաշինգթընի պատկերով ոսկի դրամ մի քանդակել։ Նա խոնարհ սրտիւ գոհութիւն կ'մատուցանէր Աստուծոյ եւ կ'մխիթարուէր այս մտքով, որ նոր անցքը նոր հիմն աշխոյժ տալու էր հայրենասէր սրտերուն, իսկ իւրեան վիճակուած մեծարանքէն յօժար էր եւ խպառ զերծ մնալ, նա մանաւանդ զի ամենէն լաւ կ'տեսնէր, որ դեռ երկար պիտի տեւէր կատարեալ ազատութեան սանող փշոտ ճամբան։

ԺԱ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ ամերիկացիք պարզ տեսան, որ իւրեանց բոլոր խնդիրներն եւ առաջարկութիւնքը, որով արդարութիւն կ'աղերսէին, 'ի դերեւ ելան, վերջապէս հասեալ համարեցին այն ժամը, յորում պէտք էր յայտ առնել 'ի լուր բովանդակ աշխարհի, թէ նոքա բոլոր պարտաւորութիւններէն առ Անկլիան այսուհետեւ ազատ կ'ճանաչէին զինքեանք եւ ջոկ պետութիւն կ'ցանկան հիմնել իւրեանց համար։

Շատ խորհրդաւոր ժամ էր այն ժամը, երբ 4 յուլիսի 1776 ամի ընդհանուր ժողովի առջեւ գումարուած ժողովրդին աւետեցին թէ Ամերիկայի բոլոր տասն եւ երեք նահանգները միաբան յօժար են անկախութեան եւ հնչեցին զանգակը, որոյ վերնագիրն էր՝ «Ազատութիւն ամբողջ երկրին եւ իւր ամեն բնակչաց։» Այս զանգակի բարբառին արձագանք տուին մերձաւոր զանգակները. սոյա հնչումը կրկնեցին հեռաւորք եւ այսպէս գիւղէ 'ի գիւղ եւ քաղաքէ 'ի քաղաք նոցա ձայնը թնդալով՝ ազդ արաւ նոյն օրուայ նշանաւոր խորհրդին նախածանօթ

ժողովրդեան, որ մայրենի երկրէն բոլորովին և առ միշտ զատուելու ծանր քայլն, առ որ սախուած էին Անգլիոյ բռնակալութեամբ, արդէն առնուած էր։

Ամենայն տեղ ժողովուրդը կ՚փութար տօնական հանդէսներով համակրութիւն յայտնել այս պետական մեծ գործին։ Սաւաննայի բնակիչները 'ի Գէորգայ մեւելահանդէս մի կազմելով քաղաքային խորհրդարանի առջև թաղեցին Գէորգ Գ. Թագաւորի պատկերը։ Մարդիկներէն մին ելաւ օրինաւոր դամբանական ճառ կարդալու գերեզմանի վրայ և ասաց. «Գէորգ Թագաւորն անամօթ կերպիւ ստեց Թագադրութեան երդման և մեր երկրի սահմանադրութիւնն ու մարդկային սուրբ ազատութիւնքը յերկիր տապալեց. վասն որոյ նորա քաղաքական գոյութիւնը գերեզման կ՚դնենք — ապականութեան կ՚մատնենք որ ինչ ապականեալն էր — այս վստահ և անսասան յուսով, որ նա այլ ևս երբէք, ոչ մի ժամանակ և յաւիտեան չպիտի յառնի կրկին իշխելու Ամերիկայի այս ազատ և անկախ նահանգներու վրայ։»

Եւրոպայի բոլոր ազատամիտ մարդիկը համակրութեամբ կ՚նայէին յանկոյս ովկիանու լոյս տեսնող գործին. վեհերոտ անձինք կ՚երկնչէին հարկաւ, որ ամերիկացւոց օրինակը թերևս ամենուրեք մրրիկ յարուցանելու էր պետութեանց դէմ. սակայն միթէ նոքա համբերութեան օրինակ ևս ցոյց չտուին և միթէ նոքա չէին որ անձնուէր հպատակութեամբ միապետական ձևը պահպանելու ջանացին։ Ի՞նչ կը խնդրէին նոքա Թագաւորէն — սուրբ պահել երկրի օրէնքը. օրէնքը ամեն պետական կեանքի, նոյնպէս և ինքնակալութեան հիմնաւոր սիւներն են։ Ով որ չյանկար խպառ ապտակ զարնել ճշմարտութեան երեսին՝ պիտի է խոստովանիլ, թէ Գէորգ Գ. Թագաւորն և նորա պաշտօնեայքն էին որ զգաղթականութիւնքն Անգլիոյ հետ շաղկապող յօդերն կտրեցին և ոչ թէ գաղթականք. զի սոքա այն ժամանակ միայն անկախ պետութիւն հռչակեցին զինքեանք, երբ իւրեանց բոլոր ազնիւ նկատմունքը՝ օրինաց յարգը վերականգնելու՝ 'ի չիք դարձան Անգլիոյ կամակորութեանը զարնուելով, երբ հաշտութեան ասպարիզի վրայ հաստատեալ օրինապահութեան հացի փոխարէն՝ զոր կ՚խնդրէին, բռնակալութեան քար տուին նոցա և նոցա արդար խնդիրներու դէմ կապարով և վառօդով պատասխանեցին։

Անկախութեան յայտարարութիւնը գեղեցկութեան տիպար մի է թէ ըստ ձևի և թէ ըստ բովանդակութեան։ Ամերիկացիք չէ թէ չէին յորդորեր իւրեանց օրինակին հետևելու, այլև խորհուրդ կ՚տան «չփոխել

վաղեմի պետութիւնքը դիւրանցուկ ու թեթև պատճառներով» և ապա թէ պետական կեանքի բուն խորհուրդը յիշելէ ետև՝ բովանդակ աշխարհի դիմաց իւրեանց քայլերն արդարացընելու գուն կ'գործեն։

«Մեծին Բրիտանիոյ այժմեան թագաւորի պատմութիւնը, կ'ըսեն նոքա յայտարարութեան մէջ, անընդհատ անիրաւութեանց և յանդուգն պահանջմանց պատմութիւն մի է, որք ամենքն միասին մեր նահանգներու վրայ բռնակալութեան լուծ դնելու դիտաւորութեամբ կ'գործուէին. և յապացոյց այսմիկ թողներուք մեզ հետևեալ իրողութիւնքն յերևան հանել 'ի գիտութիւն ազնիւ արանց ամբողջ աշխարհի.

«Նա միաբանեցաւ միւսներու հետ՝ մեր սահմանադրութեան օտար և մեր օրէնքներէն չընդունուած դատաստանի ենթարկելու զմեզ և հաւանութիւն տուաւ այն ապօրէն վճիռներուն, որով կ'ուզէին առանց մեր համաձայնութեան հարկ դնել մեր վրայ. զրկել զմեզ երդուեալ դատաստանի օգուտներէն. տարագրել զմեզ յայնկոյս ծովու՝ սուտ սուտ յանցանաց համար դատելու մաքով. վերցընել մեր հարևան նահանգի մէջ ազատ սահմանադրութիւնը՝ անձնիշխան բռնութիւն հաստատելով այն տեղ. բնաջինջ առնել մեր ազատութեան թղթերը, տապալել մեր օրէնքները, հիմն 'ի վեր փոփոխել մեր վարչութեան ատեանները, բառնալ մեր յատուկ օրէնսդրական ժողովները և անձամբ անձին օրէնքներ հնարել մեր գլխուն։

«Զմեզ օրինաց պաշտպանութենէն զրկելով և մեր երկրի դէմ պատերազմ քարոզելով նա հրաժարուեցաւ այս տեղ կառավարելու իշխանութենէն։

«Նա կողոպտեց մեր ծովերը, ամայացուց մեր եզերքը, յաճխուն պարձուց մեր քաղաքները, աւերեց մեր քաղաքացիներու կեանքը։

«Վարձկան գնդեր հաւաքեց նա՝ մահու, թշուառութեան և բռնութեան գործն յաւարտ հանելու։

«Արձակ ծովի վրայ մեր քաղաքացիներն բռնելով ստիպեց զնոսա զէնք վերցընել հայրենեաց դէմ, դահիճ դառնալ եղբարց և կամ մեռնիլ իսկ նոցա ձեռքէն։

«Ներքին աղմուկ յարուց մեր մէջ և մեր վրայ արձակեց վայրագ Հնդիկները, որոց պատերազմական սովորութիւնն է կործանել ամեն բան՝ առանց խտրութեան հասակի, սեռի և կարգի։

«Այս բռնազբօսութեանց ամեն մի քայլին ամենախոնարհ աղերսանօք օգնութիւն խնդրեցինք. բայց մեր յոլովակի պաղատանաց դէմ յոլով անգամ անիրաւութեամբ պատասխանեցին մեզ։

«Իշխան մի, որոյ բնութիւնն ամեն մի գործով իւր բռնակալ լինելն կ՚արտայայտէ, արժանի չէ իշխելու ազատ ազգի մը վրայ։

«Մեր բրիտանացի եղբայրներն ևս անթախանձ չթողուցինք. սակայն նոյա ականջն ևս փակ էր իրանց և արեան ձայնի համար։

«Այս պատճառով մեք կ՚պարտինք 'ի հերձումն տանող հարկին մէջ տեսնել զմեզ և կ՚սովորինք, որպէս այլ մարդիկ — խաղաղութեան մէջ ընկեր, իսկ պատերազմի մէջ թշնամի ճանաչել զնոսա։

«Վասն որոյ մեք, ընդհանուր ժողով գումարեալ պատգամաւորքս Ամերիկայի Միացեալ Նահանգաց, տիեզերաց գերագոյն Դատաւորն մեր խորհրդներու մաքրութեանը վկայ կոչելով որ գաղթականութեանց բարի ժողովրդեան անուամբ և իրաւամբ հանդիսաւոր կերպիւ կ՚ծանուցանենք և կ՚յայտնենք, որ այս միացեալ գաղթականութիւնքն ազատ և անկախ պետութիւնք են և պիտի լինին իրաւամբ. որ սորա Բրիտանիոյ գահուն հպատակելու պարտքէն զերծ են, և թէ վերջապէս սոցա քաղաքական յօդաւորութիւնը Մեծին Բրիտանիոյ տէրութեան հետ ամենևին լուծեալ է և պիտի լինի։ Եւ 'ի հաստատութիւն այս յայտարարութեան՝ անյողդողդ յուսով 'ի նպաստ Աստուածային Նախախնամութեան՝ մեք փոխադարձ երաշխաւորութեամբ 'ի գրաւ կը դնենք միմեանց մեր կեանքը, մեր գոյքը և մեր սրբազան պատիւը։»

Այս ազատութեան յայտարարութիւնն և ժողովոյ ամբողջ վարմունքը հիացումն ազդեցին Եւրոպայի լուսաւորեալ մտքերուն, մինչև անգամ և այնպիսի արանց, որք իշխանութեան գահու վրայ բազմած էին և անաչառ սրտով գործի ընթացքը կ՚գիտէին։ Յիշենք, օրինակի համար, զմեծն Ֆրեդրիկոս, որ իւր «Դիտողութիւնք 'ի վերայ վիճակի քաղաքական մարմնոց Եւրոպայի» անուն գրքի մէջ արդէն պետութեան նպատակի վրայօք բազում մտքեր արտայայտած էր, որք այժմ Ամերիկայի անտառներու մէջ յերևան եկող մտքերուն յար և նման էին լինելն։

ԺԲ

ԾԱՆՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Աստղագրօշը, որոյ վրայ 'ի նշան տասն և երեք Ամերիկայի-Նա-

հանգաց տասն և երեք աստղեր կ'փայլէին, արդէն պարզուած էր։ այժմ պէտք էր կամ յաղթութիւն գրաւել այս դրօշին և կամ պատուով մեռնիլ նորա տակ։

Դժուար բաներ ձեռք բերուած էին, բայց դեռ աւելի դժուարներն կային անելիք։ Անկլիան հաւաքեց բոլոր իւր ոյժն երևակայեալ ապստամբներն սպառսպուռ ջարդելու համար և ուղարկեց Հօու զօրապետին նոր նոր զօրքեր, նաև գերմանացի զինուորներ, որք արծաթի գնով գնուած էին ամերիկացւոց դէմ դահճի պաշտօն վարելու։

Հայրենեաց զաւակներն ծախելու վատթար սովորութիւնը հանդէպ կ'ելնէ մեզ գերմանական փոքրիշխանութեան բողբոջելու միջոցին։ Այսպիսի առևտրի մասնակից էին Հէսսէնի, Պայրօյթ–Անսփաքի, Պրաունշվայգի և Անհալթ Զերբսթի իշխանները. սակայն ամենէն շատ մարդ վաճառողն էր Հէսսէնինը, որոյ համար և ծախուած գերմանացիք Ամերիկայի մէջ ըստ մեծի մասին Հէսսէն կ'կոչուէին։ Ով որ նորա դքսութեան՝ մէջ վտանգէն ազատելու համար փախչէր և դքսի արբանեակներու ձեռքն ընկնէր՝ իսկոյն շղթաներով կ'կապէին զայնպիսին. եթէ ծնողք տրտնջէին՝ նոքա ևս կաշկանդուելով կ'բանտարկուէին։ Անկլիացի գործակալները Քասսելի հրապարակի վրայ Հէսսէնի բնակիչները կ'գնէին, և ամեն մինի գինն էր հարիւր թալէր՝ այսինքն չորս հարիւր ֆրանք։ Մեծն Ֆրիդրիկոս դառնութեամբ կ'նշաւակէր այս բանը. «Թող չմոռնան գէթ անասնի մաքսն ևս պահանջել հայրենեաց հայրերն» կ'ըսէր նա։ «Ոչ ոք, կ'գրէր մեծահամբաւն Զօյմէ,* որ նոյնպէս վաճառուած էր, կարող էր ապահով մնալ հողեծախի (դքսի) ձեռքէն. հրապոյր, նենգութիւն, խաբէութիւն — ամեն բան ձեռքէն կ'գար, ամեն բանի ընդունակ էր։ Ոչ թէ միայն բնիկները, այլ և օտարք ձերբակալ կ'լինէին նորա հրամանով, կ'բանտարկուէին և 'ի վաճառ կ'մղուէին։» Երբ ստակի գնով մատնեալ հպատակները նաւ նստելու կ'երթային՝ Պայրօյթ–Անսփաքի դուքսը լցուած հրացանով Մայն գետի եզերքը կ'կանգնէր և կ'սպառնար յերկիր տապալել այն մարդիկը, որք փորձ փորձէին փախչելու։ Այս կերպով ընդ ամենը **29,000** գերմանացիք վաճառուեցան անկլիացիներուն «'ի սնունդ թնդանօթաց։» — «Մտածող Ճամբորդը, կ'ըսէ անկլիացի լօրտ մի,

*Հայրենեաց ջերմ սիրով եւ ոխերիմ ատելութեամբ առ բռնակալութիւնն ներշնչուած ոտանաւորներու եւ ճամբորդութիւններու անուանի հեղինակ մի, որոյ կեանքի արկածները չափազանց հետաքրքրելի են (**1763–1810**)։

Ծ. Թարգ.

չկրնար առանց յոգւոց հանելու. դիտել Վիլհէլմհեօէլի փառահեղ պարտէզները Քասսելլի քով, որք բնակիչներու զաւակաց արեան գնով տնկուած են :»

Վերն ասինք, թէ Հօու զօրապետն ստիպուած էր իւր գնդերով հանդերձ նաւ նստիլ Պոսթօնի նաւահանգստի մէջ։ Նորա դիտաւորութիւնն էր Ամերիկայի մէկ ուրիշ տեղի մի ոտք դնել. Ուաշինգթոն իսկոյն գուշակեց, որ նա Նիւ-Եօրքն ունէր 'ի նկատի, ուստի իւր զօրքերու երկրորդ հրամանատարն այն տեղ առաքելով ինքն ևս արագչոգաւ ետևէն :

Հօուի նաւատորմիղն այդ միջոցին միւս գլխաւորական նաւերու հետ միացած լինելով թշնամու գնդերու թիւն այժմ ամերիկացիներէն շատ գերազանց էր։ Հօու 'ի ցամաք ելաւ Լօնկ-Իսլանտի վրայ, մերձ առ Նիւ-Եօրք. նա կ'ուզէր նուաճել քաղաքն և անտի դուրս արշաւելով խափանել հարաւային և հիւսիսային ամերիկացւոց միաւորութիւնը։ Աւասիկ այս տեղ բանը ճակատամարտի հասաւ, յորում մանաւանդ Հէսսէնցիք զարմանալի իմն քաջութիւն ցոյց տուին — յանդուգն խիզախմամբ ամերիկացւոց վրայ նետուելով ասես թէ իւրեանց հայրենիքէն յափշտակուելուն համար մեռնիլ կ'տենչային։ Ամերիկացիք պարտուեցան և յաջորդ օրն մինչև անգամ կղզու վրայ պաշարուելու և գերի բռնուելու վտանգի մէջ էին։ Այն ժամանակ Ուաշինգթոն որոշեց գիշերուայ մթին նաւ նստեցնել իւր փոքրիկ բանակը. սակայն մինչդեռ նա երեկոյեան պահուն իւր միտքն գործադրելու վրայ էր և զթշնամին խաբելու համար բանակի կրակները վառ պահելու հրաման կ'տար՝ ոչ ոք չէր մտածեր որ նոյն ժամուն դաւաճանութիւնն որոգայթ կ'լարէր 'ի կորուստ նորա զօրքին։ Անգլիացւոց համակրող կին մի իւր խափշիկ սպասաւորի ձեռքով Ուաշինգթոնի շարժումը կ'ուզէր իմացընել նոցա. սակայն այս սպասաւորը գիշերապահ Հէսսինցւոց ձեռքն ընկաւ։ Ինչ օգուտ որ նա կ'երդուէր թէ շատ կարևոր լուր ունի հաղորդելու Հօու զօրապետին — Հէսսէնցիք ոչ մի բառ չէին հասկընար խելագարի պէս կոտրտուող սևի շրթունքէն, և կարծելով թէ նա լրտես մի էր՝ լաւ համարեցին կապել փակել զնա, և միայն առաւօտեան տարին զօրավարի մօտ։ Սակայն այդ ժամանակ նորա բերած լուրը, որ գիշերուայ դէմ ոսկիի գին ունենալու էր, զօրավարի համար այլ ևս բնաւ գին չունէր, զի Ուաշինգթոնի զօրքն նաւ մտած էր և արդէն թակարդեալ կարծուած թշնամու հետքն անգամ կորած էր։

Արդի հանգամանաց նայելով քան զայս լաւ ոչինչ չէր կրնար անել

Ուաշինգթըն. և շատ խոհեմութեամբ յաւարտ հանեց այս գործը և մինչև 'ի յետին ժամը զինուորներու նաւ մտնելուն վրայ հսկելով գրեթէ երկու օր և երկու գիշեր վայր չիջաւ նժոյգէն։

Այսպէս ուրեմն ամերիկացւոց զօրութեան ամենընտիր մասը փրկուեցաւ. սակայն որպէս նուազ էին սոքա թշնամու առջև։ Շատ հայրենասէր անձինք վշտահար սրտով կ'նայէին ներկայի վրայ, և Ուաշինգթըն ինքնին այնպէս տրտում օրեր ու ժամեր կ'ունենար մերթ ընդ մերթ, որ բարի գործի ծանրութեան տակ ճնշուելու երկիւղ կը տիրէր հոգւոյն։ Սակայն նորա հաստատուն կամքն էր ցվերջին ժամ հաւատարիմ մնալ գործին, թէև այս հաւատարմութեան համար կեանքն անգամ զոհելու պէտք լինէր։

Զինքեանք հայրենեաց ազատութեանը նուիրեալ անձինք առաւել ևս հաւատարիմ կ'լինին նորան յատկապէս նեղութեան ժամին։ Լօնկ-Իսլանտի չարաբաստիկ կռուէն ետքը ամերիկացւոց համար դժուար օրեր ծագեցան, ինչպէս որ պարզ կ'երևի Ուաշինգթընի նամակներէն։ «Մեր վիճակն իրաւ որ բաւականին ողբալի է, կ'գրէր նա ընդհանուր ժողովոյ նախագահին. Լօնկ-Իսլանտի պատահարն ամբողջ զօրքը վհատեցուց, բանակիս ամենաքաջ զինուորքն անգամ՝ պարտութեան փոխարէնը հատուցանելու համար նորէն սիրտ առնելու տեղ՝ յուսահատ են և կ'ուզեն տուն վերադառնալ. արդէն շատերն գնացին, կէս կէս և լիք լիք գնդեր թողին զմեզ, մինչև անգամ ամբողջ դասակներ մեկնեցան։ Ի՛նչ պիտի լինի սորա վերջը մանաւանդ այս անկարգ դրութեան մէջ այնպիսի քաջամարզիկ և սքանչելապէս զինեալ ոսոխի դէմ յանդիման։ Վասն որոյ ես դարձեալ կ'վերադառնամ արդէն յառաջագոյն քանիցս անգամ յայտնած մտքիս, թէ մեր ազատութիւնն վտանգի մէջ պիտի մնայ՝ քանի որ սուղ ժամանակով ընտրուած գուղազներն լինին նորա պահապանքը. մեզ այնպիսի զօրք հարկաւոր է, որ մինչև յաւարտ պատերազմին զէնքի տակ մնար. միայն այս տեսակ զօրքի մէջ կարելի է ներածել կարգ, օրէնք և հնազանդութիւն»։ Երկու օրէն ետև կ'յաւելուր. «Մեր դրութիւնն աւելի ևս վատցաւ. ամբողջ ջոկատներ զատուեցան բուն բանակէն, և ես չեմ տարակուսիր, որ մնացեալքն ևս հետզհետէ նուազելու են։» Սակայն և այնպէս Ուաշինգթըն դեռ այնքան հոգւոյ հանգստութիւն պահպանած էր, որ մինչև անգամ 'ի նպաստ վհատելոց կարեկցութեան խօսքեր կ'գտնէր — նա կ'գրէր. «Զէնքի գործածութեան անսովոր և զինուորական մարզմունքէ զուրկ մարդիկ, որք դեռ նոր դուրս խլուած

էն ընտանեկան հանդիստ շրջանէն, կիրթ և վարժ զինուորներու հանդիպելով՝ դիւրաւ կ՚վհատին և զի բանակի մէջ ընկնելով իրենց սովորականէն միանգամայն տարբեր կեանք կ՚վարեն, ուստի և շատ բնական է որ տուն վերադառնալու անդուսպ փափաք կ՚զգան։» Այնու ամենայնիւ քանի մի օր ետև իր ամենալաւ գասալիներն Հէսսէնցիներէն ՚ի փախուստ վարեալ տեսնելիս՝ Ուաշինգթն վերջապէս կորուց երկայնամիտ համբերութիւնը, սլացաւ փախստականներու վրայ, հանեց հրացաններն և իր իսկ զօրականներու գլխուն կրակ պարպելով գոչեց զայրագին. «Ուրեմն սոցա հետ պաշտպանեմ ես Ամերիկան։» Սպարապետը յուսահատած էր. ասեն թէ մահ կ՚խնդրէր անշարժ մնալով իր տեղի վրայ, մինչդեռ զինուորներն թողած էին զնա և թշնամին միայն յիսուն քայլ հեռու էր։ Նա անշուշտ գերուելու էր, եթէ համհարզը նորա նժոյգի սանձին բռնած չարկանէր ու գրեթէ ստիպմամբ չփրկէր զնա։

Ուաշինգթնի զօրքը շարունակեց յետ նահանջել. ընդհանուր ժողովը կրկին տեղեկութիւն ստացաւ իրերու վիճակին վրայ և ապա թէ հրամայեց նոր զօրաժողով անելու։ Բայց այս հրամանի գործադրութիւնն ժամանակ կ՚ուզէր. իսկոյն առ ձեռն պատրաստ մարդիկ չկային և թէ լինէին ևս՝ դարձեալ դէթ փոքր ինչ մարզել պէտք էր զնոսա. այն ինչ վերջին յաղթութենէն վերստին ոգևորած թշնամին ըստ կարելոյն շուտով մահուան հարուած տալու կ՚մտածէր։ Ուրիշ հանգամանք մի ևս ամերիկացւոց բանակի նեղութիւնքն կ՚յաւելուր։ Միացեալ Նահանգներու մէջ անկլիացւոց կառավարութիւնը սակաւին շատ գաղտնի կուսակիցներ ունէր. այժմ սոքա գլուխներն վերցնելով պատեհ առիթ գտածներուն պէս՝ դուն կ՚գործէին օգնել անկլիական զօրքին, այո, կային նաև այնպիսի նահանգներ, որք մինչև անգամ օժանդակ վաշտեր կ՚առաքէին Հօու զօրապետին։

Ի՞նչ անէր սպարապետն այսպիսի պարագաներու մէջ, եթէ ոչ նորէն Փաբիոսի դերն խաղալ և խորշելով ոսոխէն աւելի դիպող ժամանակի մը թողուլ գործի վախճանը։ Սոյն սրտամ կայութեան հետևանքն էր նոյնպէս, որ թէև ընդհանուր ժողովոյն կուսակից, բայց նոյն ժամանակի պատերազմական իրերուն ոչ հիմնովին տեղեակ անձինք ոմանք — նա մանաւանդ զի հրապարակային պարզ յայտարարութիւնն ևս կարող էր միայն վհատեցնել զհայրենասէրքն և խրախուսել զթշնամին — դժկամակ կ՚լինէին Ուաշինգթնի ընթացքէն. և այս ազնիւ հոգին կ՚ստիպուէր տեսնել, որ փառասէր և գործին անհմուտ մարդիկ իւր ե-

տեւէն միաբանելով՝ հնար կ'նիւթէին զահավիժելու զնա և ուրիշի մը տալու իւր իշխանութիւնն ու պատիւը։ Ի սէր հայրենեաց այս վշտին ևս համբերեց նա և երբէք մտքէ չանցուց թշնամանք հատուցանելու ոսոխներուն, այլ մանաւանդ շարունակեց աւելի մեծ փութով ևս քան զևս վաստակելու ազատութեան գործի վրայ։ Զի բանակամիջի (quartier général) բոլոր գործերը գրեթէ առանց որ և է օգնութեան ինքնին կ'հոգար։ Միայն ընդհանուր ժողովոյ հետ թղթակցիլն արդէն բաւականին ժամանակ կ'պահանջէր. ինչ որ այն տեղ որոշուած լինէր՝ պէտք էր յետոյ յայտնել իւրաքանչիւր նահանգի վարչութեան, և գործելու այս տեսակ ընթացքը տասն և երեք ատեաններէն ամեն մինի հետ նորէն հաղորդակցելու հարկ կ'յարուցանէր։ Ուրեմն կարող ենք երևակայել, թէ ո՛ր աստիճանի բարդուելու էին այս կերպով սպարապետի պարապմունքը և թէ ի՛նչ անձանձրոյթ գործունէութիւն, ի՛նչ տոկունութիւն, ի՛նչ համբերութիւն պէտք էին նորան յառաջադիր նպատակէն չվրիպելու և թէ խուճապումէ և թէ որ և է զանցառութենէ հաւասար ազատ մնալու համար։ Թէ ո՛րչափ ընդարձակ էր նորա թղթակցութիւնը պատերազմի և խաղաղ ժամանակի ատեն՝ պարզ կ'երևի, երբ ասենք, որ յատուկ իւր ձեռքով գրուած նամակներն միայն պատասխաններով հանդերձ առաւել քան երկու հարիւր ստուարահատոր գրքեր կ'կազմեն։ Այս նամականին ամերիկացւոց համար այն մեծ մարդէն մնացեալ թանկագին ժառանգութիւն կ'համարուի այսօր։ «Ով որ կամենայ ուսումնասիրել, կ'ըսէ նորա սիրահարներէն մին, այս հայրենեաց հօր իսկական մեծութիւնը, նորա վսեմ պարզութիւնն և ծանրութիւնը, նորա անյեղլի նպատակներն և հսկայական զօրութիւնը — թո՛ղ քաղէ նորա նամակներու և տեղեկագիրներու բուն աղբիւրէն։»

Այս էին միայն գրասեղանի զբաղմունք. բայց դեռ ո՛րքան հոգսեր կային բաց յայսմանէ. անվերջ էին նորա խորհրդածութիւնքը գործունէութեան բազմադիմի ճիւղերու մասնագէտ անձանց հետ — ամեն տեղ օգնութեան հասնելու պէտք կար։ Երբեմն հրաշք կ'թուէր, որ միայնակ մարդ մի այսքան բան մի և նոյն ժամանակին 'ի գլուխ հանելու կ'զօրէր, որ նա ոչ ապիրատութենէ կ'խռովէր և ոչ իւր տաժանելի վիճակէն կ'վհատէր։ Նիւ-Եօրք թշնամու ձեռքն ընկաւ, նոյնպէս և Ուաշինգթըն անուն բերդը. սպարապետը կ'ստիպուէր աւելի ևս յետ քաշել իւր գնդերը. Լի զօրավարը, որ նորա հետ միանալ կ'ուզէր, գերի բռնուեցաւ։

ԺԳ

ՏԵԼԱՎԱՐԷՆ ԱՆՑՆԻԼԸ
ԹՐԷՆԹՆԻ ԵՒ ՓՐԻՆՔԸՆԹՆԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Իւրաքանչիւր ազգի պատմութեան մէջ կան այնպիսի ժամանակներ, երբ «շատերու սիրտը կ'բացուի» երբ մինչև անդ թաքուն պահուած մտքերն ու զգացմունքները յանկարծ արտաքս կ'ելնեն: Այսպիսի խորհրդաւոր ժամանակի մէջ էր Ամերիկայի մանուկ պետութիւնը: Լսենք թէ ինչ կ'ըսէ այս մասին Թոմաս Բէն (Paine), ամերիկացւոց ազատութեանը գրչով նպաստող հանճարներէն մին: «Արդի ժամանակս մարդկային սրտերը փորձելու ժամանակ մի է, կ'ըսէր նա. այս վճռահատական ժամուս ամառնային զինուորը, շպարեալ հայրենասէրը կ'ուրանայ իւր պարտքն առ հայրենիս: Արդարև ամեն մի տղայ մարդոյ և ամեն մի կնոջ շնորհակալութեան և սիրոյն արժանի է նա, որ այժմ հաստատ կ'մնայ: Զարմանալի բան է, թէ որպէս արագ կ'ծագի սարսափը, որպէս շուտ կ'ծաւալի ամբողջ երկրի մէջ: Իւրաքանչիւր ազգ մերթ ընդ մերթ կ'պաշարուի այսպիսի տագնապիչ սարսափով. բայց սա ևս իւր բարի արդիւնքն ունի: Սարսափը կարճատև է — շուտ կ'անցնի և այնուհետև սրտերն աւելի կ'պնդին, կ'զօրանան: Այս տեսակ արհաւիրքը կեղծաւորութեան և ազնուութեան փորձաքար են: Եւ իրաւ՝ չար ժամանակը և սովոր արդէն բաւականին օգուտ բերաւ ազգին, որ նորա շնորհիւ երկդիմի, խիթալի, տարակուսելի մարդիկը միանգամայն զատուեցան, և առաւել յայտնի եղան ճշմարիտ հայրենասէր անձինքը:

Ի նշան կրկին ամրացեալ հաւատարմութեան դէպի արժանիքն Ուաշինգթնի՝ Ընդհանուր ժողովը վեցամսեայ ժամանակով ինքնակալ հրամանատարի (dictateur) իշխանութիւն տուաւ նորան: Սակայն այս հաւատարմութեան գրի լուրն դեռ չընդունած՝ Ուաշինգթն արդէն որոշած էր ձեռնարկել յանդուգն գործի մը, որոյ յաջողութեամբ ոմանց արիութիւնը բորբոքելու և այլոց փոքրոգութեանը վերջ տալու կ'յուսար:

Դեկտեմբեր ամսի սառնամանիքն արդէն սկսեր էին. օդն այնպէս դառնաշունչ էր, որ անկլիացիք այլ ևս աշխոյժ չէին զգար իսկոյն զթշնամին հալածելով օգուտ քաղելու իւրեանց նոր յաղթանակէն։ Հօու արդէն տեղաւորեր էր իւր գնդերն ձմերոցի մէջ և կ'ուզէր դարնան թուլ ու շիջանող ընդդիմութեան վերջին խորտակումը։ Ինչպէս որ յարձակման ժամանակ միշտ կ'պատահէր, նոյնպէս և այժմ ձմերոցի մէջ դասաւորուելու ժամանակ՝ Հէսսէնցիք ստացան յառաջապահի տեղը։ Ուաշինգթոն թշնամու դրից վրայ տեղեկութիւնք հաւաքելով գիտէր, որ Հէսսէնցիք Տելավարի միւս կողմը նստած էին, և յատկապէս գետեզրէն չորս կամ հինգ մղոն հեռաւորութեամբ — Թրէնթնի մէջ և սորա շուրջը կ'գտնուէին։ Ուաշինգթնի ամբողջ բանակը 7,000 մարդ ունէր միայն. Նա բաժնեց զայն երեք դասի, որք մի և նոյն ժամանակին երեք զանազան տեղերէ Տելավարէն անցնելով՝ թշնամու վրայ յարձակուելու էին։ Այս գործի համար Ծննդեան գիշերն ընտրուած էր։ Գիշերուայ մութն արդէն իջած էր, երբ Ուաշինգթոն անմիջապէս իւր առաջնորդութեան տակ 2,400 մարդ վարելով հասաւ Տելավարին։ Հիւսիսային բուռն հողմը բուք և սարափ կ'տեղար ամերիկացւոց երեսին, գետի վրայ սաստիկ պաղ կ'ընթանար. այս հանգամանքներու մէջ ջրէն անցնիլը չէ թէ միայն դժուարին գործ էր, այլ և չափազանց վտանգաւոր։ Ուաշինգթոն որոշած էր արդէն կէս գիշերին գետի միւս ափն գտնուիլ. բայց անհնարին եղաւ սառի շարժման և ուժգին փոթորկի պատճառով. ուստի գիշերուայ երրորդ պահուն միայն կրցաւ իւր թևի հետ ոտք դնել միւս եզերքի վրայ, ուր նաև 20 հատ թնդանօթ պէտք էր անցնիլ։ Չորրորդ ժամին արդէն ամեն բան կարգի բերուելով՝ հրաման եղաւ խաղալ դէպի Թրէնթն։ Հողմակոծ փոթորկին առաջուայ կատաղութեամբ կ'շաչէր. բայց ո՞ւր կ'դիմէր Ուաշինգթնի խմբակը։ — Իրմէն տասնապատիկ զօրեղ թշնամու դէմ, որ, եթէ նորա մօտենալու լուրն լսած լինէր, արդէն հարկաւ ճակատ կազմած պիտի լինէր զամերիկացիս ընդունելու համար։ Դարձեալ և յայտնի չէր հաւաստեօք, թէ միւս երկու թևերն ևս արդէն կրցե՞ր են անցնիլ գետէն թէ ոչ — յետոյ յայտնի եղաւ, որ նոքա ժամերով ուշացեր էին։ Ութերորդ ժամու դէմ առաջին թևի առաջապահքը հրացաններով ողջունեցան և Հէսսէնցւոց ջոկատը, որ Թրէնթն էր, աղմկեցաւ։ Սոքա դեռ գումարուելու վրայ էին, երբ Ուաշինգթոն քաղաքի առջև հանելով բուռն արկաւ յարձակման։

Հէսսէնցիք ՚ի սկզբանէ մեծ քաջութեամբ կ՚ոգորէին, բայց իրենց զօրավարի սպանուելէն ետեւ զէնքերնին վար դրին և անձնատուր եղան, որով իբրև 1,000 զօրականք և 23 հարիւրապետք ամերիկացւոց ձեռքն գերի ընկան։ Քանի մը հարիւր մարդիկ դասալիք լինելով խոյս տուին վտանգէն, զոր բնաւ չպիտի կրնային անել, եթէ միւս երկու թեւերն ալ քիչ մը վաղ անցնէին յայն կոյս և Ուաշինգթընի սպասուէրին յարմար պահակ դրած լինէին կամուրջներու վրայ։

Զգուշութիւնը կ՚պահանջէր շատանալ առ այժմ ձեռք բերուած յաջողութեամբ։ Թշնամու գլխաւոր բանակը տակաւին մեծ էր և պէտք էր սպասել, որ նա իսկոյն պատրաստուելու էր պարտութեան վրէժն հանելու։ Ուաշինգթըն յետ չոգաւ յայս կոյս Տելավարի։

Այս յանդուգն գործը — Տելավարի անցքն ու Թրէնթնի յաղթանակը — ասես թէ հրաշքով իմն աշխոյժ տուաւ հազարներու։ Ուր որ տարուէին գերեալ Հէսսէնցիք՝ ժողովուրդը խուռն բազմութեամբ նոցա վրայ նայելու կ՚վազէր։ Պատերազմներու մէջ մինչև այժմ նոքա ամերիկացւոց չարագոյն թշնամիքը հանդիսացած էին և ռազմական կենցաղավարութեամբ վայրենացեալ՝ երբեմն բռնութիւնք ևս գործած էին քաղաքներու և գիւղերու մէջ. ուստի իրենց և կամ ընկերներու ոճրագործութեան փոխարէն այժմ զայրագին ժողովրդի վրէժխնդրութեան զոհ դառնալու վտանգին ենթակայ էին։ Ուաշինգթըն ազդարարութիւն մի հրատարակեց, որով կ՚յայտնէր, թէ այս մարդիկն ազատ կամօք չէին եկած յԱմերիկա՝ ազգային իրաւանց դէմ մարտնչելու, այլ թէ եղկելի զոհեր էին անագորոյն բռնակալի մը, որ դրամի տեղ վաճառած էր զնոսա, և թէ ուրեմն առաւել մարդկային կարեկցութեան արժանի էին, քան թէ վրիժու։ Եւ այս խօսքերն ազդեցին։

Այս միջոցին Ուաշինգթըն լսելով, որ անգլիացիք փոխանակ զինքը հալածելու՝ յետ քաշուած էին, որոշեց երկրորդ հարուած մի ևս տալ նոցա, և առաջի անցքէն չորս օր զկնի նորէն անցաւ Տելավարէն։ Հօու զօրապետը 800 մարդ առաքեց նորա դէմ Քօրնվալլիս լորտի վարչութեամբ։ Ուաշինգթըն ամուր ճակատ կազմելով քանիցս անգամ յետ մղեց անգլիացւոց յարձակումը, բայց լորտը ոչ թէ կ՚վհատէր, այլև ուրախ էր, զի և թուով արդէն շատ գերազանց էր ոսոխէն — այս մէկ. երկրորդ՝ դեռ ուրիշ զօրաբաժին մի ևս ստանալու էր շուտով։ Վասն որոյ և չէր տարակուսեր բնաւ, որ — ինչպէս կ՚ըսէր — արդէն նոյն իսկ թակարդի մէջ բռնելու էր զաղուէսը։ Բայց թէ արդեօք Ուաշինգթըն յօժար էր այնքան ժամանակ կանգնած մնալ իր կա-

յանի վրայ, մինչև որ նորին վսեմափայլութիւնը՝ լորտն Քօրնվալիս նորոգ ուժերով բարեհաճէր յարձակուիլ վրան — այս յայտնի չէր լորտին: Բանակի խարոյկներն արդարև լոյսէ լոյս կ'վառուէին նոյն իսկ տեղի վրայ, ուր օր մի առաջ կանգնած էր թշնամին, բայց երբ 'ի ծագիլ առաւօտուն լորտը դիտակն 'ի վեր ամբառնալով յայնկոյս նայեցաւ՝ ապշութեամբ և դառնութեամբ տեսաւ, որ «թակարդը» դատարկ էր. Ուաշինգթն քանի մի մղոն շրջան տալով նորա ետեւն կանգնած էր Փրինքըընթնի մօտ: Այն տեղ նա նախադրաւ յառաջմամբ հորդան տուաւ լորտին 'ի նպաստ արշաւող օժանդակ զօրքի վրայ, որք երեք անկլիական գնդեր էին, և ուժգին ռազմ սկսաւ: Անկլիացիք մոլեգնաբար կ'մարտնչէին — և յաղթութիւնը մերթ այս, մերթ այն կողմը կ'տատանէր երկար ատեն: Ամերիկացւոց վտանգը կ'աւելնար. առաւօտեան դատարկ գտնուած բանակն ու թնդանօթներու որոտն արդէն վաղուց լորտի աչքը բացած պիտի լինէին թշնամու ձեռնարկութեան վրայ, և մինչ Քօրնվալիս, որ նաև պյրուձի ունէր իւր մօտ, կարող չէ՞ր ամերիկացւոց վրայ ընկնիլ քամակէն, մինչդեռ նոքա ոսոխի հետ պատերազմելու վրայ էին: Ուրեմն պէտք էր յաղթել և շուտ յաղթել: Ամերիկացիք Թրէնթնի մօտ չորս օր առաջ գրաւեալ յաղթանակով ոգևորած՝ անասելի կորովութեամբ կ'շահատակէին, սպարապետի օրինակն ևս կ'վառէր զնոսա, զի ուր որ աւելի սաստիկ էր ռազմը — այն տեղ կ'տեսնէին զնա: Սքանչելի էր այն ժամանակ պատերազմական եռանդով բորբոքած նորա յաղթանդամ պատկերը: Սպարապետը յաճախ կ'անհետանար իսպառ վառօդի թուխ ամպերու մէջ իւր կեանքի համար երկիւղ քաշող զինուորներու աչքէն, որք կ'սարսափէին մտածելով, թէ ինչ լինելու էր նոցա գործը, եթէ մահը յափշտակէր զնա իւրեանց միջէն: Կարելի՞ չէր, որ այս դիւցազնական երկունքն արժանաւոր յաջողութեամբ չպսակուէին: Թշնամին դարձաւ ընդ կրունկն՝ դաշտի վրայ 500 սպանեալ և վիրաւորեալ մարդ և յաղթողի ձեռքը 300 գերի թողնելով: Ուաշինգթնի զօրականքը կը ցնծային: Պատերազմակիցներէն մին այս դէպքէն քիչ մի յետոյ կը գրէր. «Որպէս յարուցեա՜լք 'ի մեռելոց կ'զգանք մեք զմեզ. գունդ գունդ գուգաղներ կ'գան առ մեզ — հին զինուորները նորէն բանակ կ'դիմեն:» Միւս զինակից մի հետևեալն կ'գրէր Ուաշինգթնի վրայ. «Զօրքն ուժգին սիրով կ'սիրէ զիւր սպարապետը, սակայն և այնպէս աւելիք մ'ունի նորա դէմ, այսինքն թէ նա շատ սակաւ հոգ կ'տանի իւր յատուկ անձի վրայ — և այս ամեն մի ճակատամարտի մէջ: Իւր

անձնական քաջութիւնն և իւր օրինակով զօրականի սիրտն վառելու փափաքն ամեն բան մոռցընել կ'տան իւրեան։ Ուաշինգթն չուզաւ ձմեռելու Մօրրիսթօունի լեռնոտ շրջակայքը և այն տեղ անմատչելի կայան հաստատելով այն աստիճանի նեղել սկսաւ զթշնամին, որ սա այլ ևս չկրցաւ դիմանալ նորա յարատև արշաւանքներուն և վերջապէս իսպառ մաքրեց մերձաւոր նահանգները։

Եւրոպայի մէջ ևս Ամերիկայի դատը Տելավարի անցքէն առաջ միանգամայն կորսուած կ'համարուէր. իսկ այժմ յայնկոյս և յայսկոյս ովկիանու նոյէն սկսեր էին հաւատալ, որ Ամերիկան չպիտի խոնարհի Անգլիոյ առջև։ Ֆրանսիոյ մէջ եռանդոտ համաձայնութիւն ծագած էր ամերիկացւոց ազգի և նորա դիւցազնական սպարապետի համար. Անգլիոյ մէջ անգամ Ամերիկայի Փաբիոս կ'անուանէին զնա մեծարանօք։

ԺԴ

ԼԱՖԱՅԷԹ — ՔՕՍԹԻՒՇՔՕ — ՇԹՕՅՊԸՆ

Ամերիկայի ազատութեան համար բորբոքած հուրն ոչ մի տեղ այնպիսի հզօր ու պայծառ լուսով չէր վառուած, որպէս Ֆրանսիոյ մէջ։ Վասն ազատութեան մարմնչող ազգի մը նահատակութիւնն առաւել համակրութիւն գտաւ ֆրանսացւոց կողմէն մանաւանդ և այս պատճառով, որ նոքա ևս երկար ժամանակ դառն լլկանք կրած էին Պուրպօններու վատթար վարչութեան ներքև և զի իրենց մէջ ևս լիքն էր այն բարկութիւնը, որ քիչ ժամանակէն յետոյ որոտընդոստ շառաչմամբ արտաքս ժայթքելու էր։

Ոմանք Ամերիկայի անկախութեան պատերազմն և Ֆրանսիոյ յեղափոխութիւնը հաւասար գծի վրայ կ'դասեն. սակայն մեծ անջրպետ կայ այս երկու պատմական դէպքերու մէջ։ Աստ և անդ իրողութեան պատճառն մի էր — իշխանաց բռնակալութիւնը, բայց տարբեր էին ընթացքը, նպատակն ու հետևանքը, ինչպէս որ տարբեր են սա հասարակ գերմանական բնութիւնն ու ռօմանականը։ Ի միտ բերենք դարձեալ մի անգամ, որ ամերիկացիք երկար ժամանակ ջան դրին վերստին օրինաւորութեան հիմանց վրայ ամրապնդելու բռնակալութեան ձեռքով յիմարաբար քակտեալ կապերը և թէ այն ատեն միայն նոր կարգ-

մի հաստատելու ձեւն ալ կին, երբ արդէն ճարերն հատած էր և օրէնքներու դուռն միանգամայն փակուած։ Ազատութեան շաւղի վրայ յառաջ դիմելով՝ նոքա երբէք այն աստիճանի չկուրցան, որ կրօնի շնորհն ուրանային. ընդ հակառակն՝ կրօնն էր որ օծումն կ'տար նոցա գործին, կրօնն էր նոցա պետական վերակազմութեան առաջնորդն ու չափը։ Որպէս այլ էին ֆրանսացիք, ոյք ստրկութեան շղթաներն քայքայելիս՝ կրօնի սեղանն ևս տապալեցին։ Ամերիկան գրաւեց ազատութիւնը տաժանելի աշխատութեան ճամբով և առ Աստուած ուղղեալ մտօք, մինչդեռ Ֆրանսան մոլեգնաբար ինքզինքն յօշոտելով՝ բռնակալութեան ճանկերէն չազատեցաւ երբէք, թէև կ'ջանայ խաբել զինքն և զայլս իւր վիճակին մեծ մեծ մակդիրներ ընծայելով։ Ինչ է այս հակառակ երևոյթներու պատճառը։ — Ամերիկացիք կ'պատկանին գերմանական ցեղի մեծ ընտանիքին, որ նշանաւոր է խորին կրօնական զգացմամբ. այս ցեղի համար պետական օրէնքը նշոյլ են յաւիտենական օրինաց, որոց արտայայտութիւնը կրօնի մէջ կ'ամփոփուի։ Գերմանական ազգերն կ'ջանան միաւորել պետութեան օրէնքները կրօնի պահանջմանց հետ, որպէս զի սորա կենարար լոյսը պետական կեանքի վրայ ևս ազդէ շարունակ։ Այսպէս ուրեմն զերկրայինը ձեռք բերելու համար նոքա սուրբ աղբիւրի կ'դիմեն։ Բայց այսպէս չեն Ռոմանք. սոքա խորին կրօնական եռանդ չունին, և այս ամենէն պարզ ֆրանսական ազգի վրայ կ'նշմարուի։ Ֆրանսացիք շատ քաղաքական նեղութիւնք և տառապանք կրեցին, սակայն և այնպէս չկրցան բնաւ օրինական վիճակի մը հասնելու և թերևս ընդ երկար չպիտի հասնին՝ ցոյց տալով աշխարհի, որ ազգ մի — որքան և շնորհալի լինէր մի քանի ասպարիզներու վրայ, այնու ամենայնիւ անզօր է բարեկարգ վիճակի անքոյթ նաւահանգիստն ժամանելու, մինչև որ ներքին խորասուզմամբ հանապազ գուն չգործէ մաքրելու և սրբելու իւր բարոյական կեանքը։

Այս վերջին դատողութիւնը ֆրանսական ազգի ամբողջութեանը կը վերաբերի, բայց ոչ ոք չուրանար, որ նոցա մէջ ևս պատուական մարդիկ եղած են, այս վերջին դասէն էին այն ֆրանսացիքն, որք Ամերիկայի անտառներու մէջ մղուած ազատութեան պատերազմի համար կ'ոգևորուէին։ Ազնուազոյններէն մէկն էր, օրինակի համար՝ իննևտասնամեայ Հարիւրապետն Լաֆայէթ — գեղեցիկ, հարուստ, երջանիկ ամուսնութեամբ բախտաւոր և Ֆրանսիոյ ամենաճոխ տոհմէ մը սերեալ քաջազն պատանին։ Նորա առջև ամենաշքեղ ապագայ մը կ'փայլէր արքունեաց մէջ. բայց նա պալատի փարթամ կեանքն ատելով,

Ճնշեալ ազգէն առնուած հարկերու չարաչար վատնութեան վրայ զայրանալով և փարիզեցւոց թեթև ու խառնակ վարքէն ևս պժգալով՝ գիտութեամբ կը խորշէր պալատէն և իր շէնքերէն մինչ մէջ նստած՝ ամենավսեմ երջանկութեան օրեր կը վայելէր գեղանի, առաքինի և քաջուսումն ամուսնոյ հետ։ Սակայն ազատութեան սէրն հանգիստ չէր տար սրտին և նա կը տենչար զինակից լինել այն քաջերուն, որք կը նահատակուէին Ամերիկա։ «Ներշնչուած այն հզօր եռանդով, կ'ըսէ Պօթթա, զոր մեծ դէպքերն սովոր են ազդել ազնիւ սրտերու, Լաֆայէթ ամերիկացւոց գործը՝ նոյն ժամանակի գրեթէ բոլոր մարդիկներուն և մանաւանդ ֆրանսայիներու յատուկ ջերմութեամբ՝ իբրև իր սեպհական գործը կը դիտէր։ Պատմական դէպքերուն մասնակցելու փափաքով դրդեալ՝ նա յայտնեց Փարիզ գտնուող ամերիկայի դեսպաններուն նոյա հայրենիքն երթալու դիտաւորութիւնը։ Ի սկզբան սոքա շատ հաւան էին այս բանին. բայց յետոյ երբ Լօնկ-Իսլանտի ողորմ պատահարի լուրն առնելով գրեթէ յուսահատած էին իրերու յաջողելքէն, այնքան ուղղամիտ էին որ կամեցան շրջել զնա երթալու խորհրդէն, յառաջ բերելով թէ արդի վատ դրութեան մէջ ճամբորդութեան համար նաւ մի անգամ կազմելու միջոց չունէին։ Անվեհեր պատանին պատասխանած կ'լինի առ այս, թէ յատկապէս այժմ էր նոցա գործին օգնելու րոպէն, թէ քանի՛ շատ վհատած լինին ազգերն՝ այնքան աւելի խրախոյս տալու էր իր օրինակը և թէ վերջապէս ինքն իր ծախքով պատրաստ էր նաւ մի շինելու, եթէ նոքա չէին մարթեր ճարելու զայն։ Արքունի դուռն — թերևս չուզելով վիրաւորել զԱնկլիան և կամ այս արշաւանքին չհաւանելով՝ արգիլեց մարքիզի չուն, և կ'ըսեն մինչև անգամ, որ կանխաւ նաւեր արձակեց Անթիլեան ովկիանու վրայ, որպէս զի բռնեն զնա։ Այնու ամենայնիւ երիտասարդ կտրիճն հրաժեշտ առաւ իր նորափթիթ ամուսնոյ գրկէն և նաւաստեց։ Նա յաջողութեամբ հասաւ յԱմերիկա և անմիջապէս ընկերացաւ ընդհանուր ժողովոյ նախագահին։ Ամերիկայի վարչութիւնը քիչ մի առաջ շիլ աչքով սկսած էր նայիլ ֆրանսական պաշտօնաւորներու վրայ, զի սոքա անյագուրդ պահանջումներ կ'ընէին աստիճանի և թոշակի մասին։ Լաֆայէթ յայտնեց թէ յօժար էր ծառայել իբրև սոսկ զօրական և անթոշակ։ Նորա երևոյթն, նորա ամբողջ բարքն ու վարքը ժողովի սիրտն գրաւեցին և նա զօրապետի պաշտօն ստացաւ։ Ուաշինգթն գրկախառն սիրով ընդունեց զնա բանակում և այնուհետև այս երկու մարդոց մէջ ծագած մտերիմ բարեկամութեան և սիրոյ կապերը տևեցին մինչև 'ի

մահ։ Լաֆայէթ բազմիցս առիթ գտաւ ցոյց տալու իր քաջութիւնը պատերազմի դաշտին վրայ։

Թադէոս Քօսկիուշքօ անուն հուչակաւոր և ազնիւ լեհացին ևս նուիրեց իր սուրն Ամերիկայի ազատութեան պատերազմին։ Նորա սրտի վսեմութիւնն մանկութեան հասակէն արդէն կ'երևէր. Վարսօվայի զինուորական վարժարանի մէջ բարեջան երկասիրութեամբ բոլոր ընկերներէն գերազանց էր։ Հարիւրապետի աստիճան ընդունելէն ետև ծանօթացաւ Լիթօվայի Յովսէփ Սոսնօվսքի անուն հարուստ և մեծատուն սպարապետի դստեր հետ և կարճ միջոցին անշէջ սիրով սիրեց զնա։ Երկուքն ևս նորահաս, բոցբոջուն, շնորհալի և բարւոյն ու գեղեցկին սիրով վառեալ պատանիք՝ ասես թէ իրարու համար ստեղծուած էին։ Սակայն այլ էին հօր կարծիքը. սա կ'ուզէր ճոխ և տոհմիկ փեսայ գտնել։ Քօսկիուշքօ ծնկերու վրայ ընկած կ'աղաչէր սպարապետին որ օրհնէ իր սէրը. բայց նա խրոխտ բանիւք կ'սաստէր։ Դուստրն ու մայրն ևս նորա ոտքն ընկան, այլ 'ի զուր. հայրը կ'ըսպառնար վանք դնել իր աղջիկը։ Կաթոգին սիրահարներն որոշեցին փախչիլ և փախան իսկ մութ գիշերով. այս բանը մատնեցին սպարապետին և սա իսկոյն սպառազէն ձիաւորք արձակեց փախստականներու ետևէն։ Բանը հասաւ տաք մարտի. Քօսկիուշքօն կարեվէր խոցեալ գետին ընկաւ։ Թալուկէն զարթնելով տեսաւ որ իր արեան մէջ կ'թաւալէր և մի սպիտակ շալ նշմարեց գետնի վրայ, որ տագնապալից ժամուն սիրուհւոյ իրմնէն վայր ընկած էր. նա վերուց այս շալն և այնուհետև բոլոր պատերազմներու մէջ իր հետն կ'տանէր զայն իբրև մի սուրբ նշխար։ Այս դժբախտ դէպքէն ետև Քօսկիուշքօն չուեց յԱմերիկա՝ կամ յաղթելու և կամ մեռնելու ազատութեան մարտի մէջ։ «Առանց որ և է նիւթական միջոցի, կ'ըսէ Մ. Բ. Ժիւլիէն, և առանց որ և է յանձնարարական նամակի նա շիտակ ներկայացաւ Ուաշինգթն սպարապետին։ — Ի՞նչ բանի եկած էք, հարցուց ցնա սպարապետն համառօտ։ — Եկած եմ մարտնչելու Ամերիկայի ազատութեան համար, պատասխանեց նոյնպէս հակիրճ անվեհեր պատանին։ — Ի՞նչ բանի ձեռնհաս էք, հարցուց կրկին առաջինը, և Քօսկիուշքօն իր ընդաբոյս պարզութեամբ ոչ այլ ինչ տուաւ պատասխանի, բայց թէ այս բառերս — Դրէք զիս փորձի՛։ — Դրին, և Ուաշինգթն ստուգեց որ արդարև քաջ մին էր ազնիւ լեհացին։ Հազարապետի աստիճան ընդունելով նա շատ զօրավարներու մօտ համհարզի պաշտօն վարեց։ Երբ անգլիացիք Ֆիլատէլֆիայէն յետ մղուեցան՝ Քօսկիուշքօն կամա-

ւոր զինուորներու գլուխն անցած արիութեան հրաշքներ կ՚գործէր։ Լաֆայէթ, որ զթշնամին հալածող գնդի զօրավարն էր, տաք կռուի երեկոյին կամելով իմանալ թէ ո՛վ էր այն կամաւորներու առաջնորդը՝ պատասխան ընկալաւ թէ «Երիտասարդ լեհացի մը, ազնուական տոհմէ, բայց աղքատ, և անունն է — եթէ չեմ սխալիր — Քօսթիւշքօ։» Նոյն գիշերն կամաւորները բուն բանակէն կէս ժամ հեռու իջևանած էին։ Լաֆայէթ իսկոյն սլացաւ այն տեղ, հրամայեց ցոյց տալ Քօսթիւշքօյի վրանը, ներս մտաւ և տեսաւ անդ զկտրիճը, որ տակաւին իսպառ արիւնոտ ու փոշոտ, գլուխն արմուկներու վրայ յեցեալ, սեղանի մօտ նստած՝ աշխարհագրական քարթէզի մը վրայ կը նայէր ուշադիր։ Այս տեղ նոքա առաջին անգամ զիրար ճանաչեցին և ամենասերտ ընկերութեամբ զուգուեցան առ միշտ։

Ամերիկայի ազատութեան պատերազմի մէջ նշանաւոր դեր կատարողներէն մինն էր և բարոն Շթօյպըն գերմանացին, որ Բրուսիոյ զինուորական բանակէն ելած էր — Եւրոպայի առաջին բանակէն, ինչպէս որ կ՚ըսէր Ուաշինգթըն։ Իբրև զօրավար զինուորները հրահանգելով՝ նա շատ մեծ ծառայութիւն մատոյց Ամերիկայի։ Առանց բառ մի անգլիերէն հասկընալու յանձն առաւ իւրեան առաջարկուած ընդհանուր տեսչի պաշտօնը և կարճ միջոցին այնպէս մարզեց այն ազատ ուրեալն, որ խօսք մի, ակնարկ մի հերիք էր որ անպայման հնազանդէին իւր կամքին։ Պատերազմէն յետոյ վարչութիւնը 16,000 աքր գետին շնորհեց նորան «վասն այն բազմարդիւն ծառայութեան, զոր պատերազմի ժամանակ մատուցած էր Միացեալ Նահանգներուն։» Այլ գերմանացիք ևս Շթօյպընի նման եկած էին բռնութեան լուծի դէմ վարուած ազգի մը ազատութեան սուրբ գործին նպաստելու։ Գաղթեալ գերմանացիք և սոյանէ սերեալ ամերիկացիք ամբողջ գնդեր կը կազմէին, և յատկապէս սոքա էին, որոց վրայ ամենէն շատ յոյս կ՚դնէր Ուաշինգթըն։

ԺԵ

ՄԻՆՉԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ.

Եօթն տարի տևեց Ամերիկայի սրբազան պատերազմը։ Նէ ղութ ճան

օրերն դեռ չէին անցած, օրերն երբ Ամերիկայի ամենալաւ մարդիկն անգամ պատերազմի յաջողելքէն կ՚յուսահատէին: Զինուորական կարգապահութիւնը տակաւին շատ թերի էր, բառոն Շթօյպընի խոհեմ տնօրէնութիւնքն այս մասին չէին կրնար իսկոյն տարածուիլ բովանդակ զօրքի մէջ: Ամբողջ պատերազմական կարգը դեռ լինելութեան մէջ էր. պաշարի և զէնքի հայթհայթումն վատ, ուտելիքն և հագուստը պակասաւոր. այս պատճառով չափազանց տոկունութիւն կը պահանջուէր զօրականէն: Ընդհանուր ժողովը ստիպուած էր թղթադրամ մտցընել երկրի մէջ. բայց անկլիացիք առատ առատ կեղծ ստակ բերելով նորա արժէքն միանգամայն կոտրեցին: Առեւտուրն շիջած էր, զի թշնամին ծովի վրայ զօրեղ լինելով մերթ այս մերթ այն եզերքն կ՚ասպատակէր, ինչ որ գտնէր կ՚յափշտակէր. ժողովրդի մէջ ևս ամեն տեսակ նեղութիւնք ու տառապանք կ՚իշխէին: Եւ դեռ որպիսի չարիք չպիտի գային, եթէ այն Ուաշինգթնի պէս սպարապետ մը չունենար, որոյ օրինակն ամենքի դիմաց կ՚փայլէր, որոյ իմաստուն խօսքերն ամենքի գլուխն ու սիրտը կ՚թափանցէին հանապազ: Զօրականը պատերազմի ժամանակ դիւրամէտ է ամեն բան ինչ որ հաւանէ բռնութեամբ սեպհականելու, և յաճախ կ՚պատահին այնպիսի պատերազմներ, երբ հանդարտ ժողովուրդը թէ ընկերի և թէ ոսոխի ձեռքէն հաւասար կ՚նեղուի: Ընդհանուր ժողովն անգամ մէկ աչքը կ՚փակէր, երբ ամերիկացի գնդերէն մի քանիք հարստահարութեամբ պարէն կ՚ճարէին. սակայն ոչ Ուաշինգթն, զի սա այս բանի մէջ ևս նպատակին յարմար և ուղիղ միջոցներու դիմելով հաւողակէր բանիւք կը յորդորէր զժողովը, որ աւելի փոյթ տարուի պարէնի հոգատարութեան վրայ և յանդիման կ՚առնէր այն չար հետեւանքն որ անշուշտ ծագելու էին, եթէ առօրեայ պիտոյքն բռնութեամբ ճարելու սովորութիւնն արմատանար զօրքի մէջ: «Այս սովորութիւնը, կ՚ըսէր նա, միայն վաղանցուկ դիւրութիւն կ՚տայ ցաւին և շատ վատ հետեւանք կ՚ունենայ վերջը, զի անհաճութիւն, ատելութիւն և երկիւղ կ՚սերմանէ ազգի մէջ և ամենալաւ գնդերն անգամ դէպի զեղծութիւն, յափշտակութիւն, հուզկահարութիւն կ՚դրդէ, որք յետոյ դժուարաւ կ՚զսպուին և ոչ թէ միայն ժողովրդի, այլ և նոյն իսկ բանակի համար մահաբեր կ՚դառնան: Ամենամեծ աղէտք պիտի հասնին մեր վրայ, եթէ անհրաժեշտ հարկն այս տեսակ միջոցներ բանեցընելու ստիպէ զմեզ:» Բայց և այնպէս զրպարտութեան խայթէն ազատ չէր մնար Ուաշինգթն. յիմար մարդիկ նորա արժէքն կ՚ուրանային, իսկ փառասէրք նորա տեղն

անցնիլ կ'ուզէին, որպէս, օրինակի համար՝ Գաթէս զօրավարը: Այլ և այլ գնդերու մէջ սաստիկ ըմբոստութիւնք կ'ծագէին — և սոցա պատճառն էր դառն քաղցը, զօրականի կրած նեղութիւնք: Հեստիշներու դէմ ընդհանուր ժողովը խիստ պատիժներ կ'ուզէր բանեցընել, սակայն Ուաշինգթըն «Ի մտի առէք, կ'ըսէր ժողովին, որ զինուորները քարէ կամ փայտէ կտոր չեն որ կրնան դիմանալ քաղց ու ծարաւի, ցրտի ու բուքի:» Զմեռն անգամ զինուորներն անկօշիկ կ'մնային և երբեմն կը պատահէր որ ձիւնի վրայ թողուած արիւնոտ հետքերէն նոցա ճամբան կ'իմացուէր: Այս վիճակի մէջ սպարապետը սրտառուչ յորդորներով կ'ջանար ամրապնդել բանակի սիրտը և յանուն հայրենեաց կ'համոզէր տոկալ վշտերուն. ապա թէ զօրականի կոչման վսեմութիւնը յանգիման դնելով կ'ըսէր. «Սուրբ է մեր կոչումը, թերութեան ստուերն անգամ կարող է նսեմացընել մեր փառաւոր գործերու փայլը:» Խստութեան տեղ Ուաշինգթըն կ'դիմէր մարդկային սրտի լաւագոյն տարերքին և կ'ուրախանար տեսնելով որ իր հոգատարութիւնքն բարի արդեամբ կ'պսակուէին: Երկաթի խստութիւնն և սորան զուգակից ահարկութիւնը կ'թողուր միայն արտաքոյ կարգի դէպքերու համար և այն ժամանակ արդէն անողոք պնդութեամբ ազատ ընթացք կ'տար պատերազմական օրէնքին, որ ըմբոստներուն գնդակ կ'սպառնար և մասնիչներուն — կախաղան:

Աշնան 1777ին զէնքերու յաջողութիւնը Պրանտուայնի և Ճերմընթաունի կռիւներու մէջ հետհետէ երկու անգամ անգլիացւոց կողմն անցաւ: Պուրգօյնի առաջնորդութեամբ դարձեալ անգլիական զօրք մի գալու վրայ էր Քանատայէն: Սորա դէմ Ուաշինգթըն խաղցուց առանձին գունդ մի, որոյ զօրապետքն էին Գաթէս և Առնօլտ: Թշնամիք ճակատեցան և առաջին նուագին գործն անորոշ մնաց. բայց քիչ մի յետոյ անգլիացւոց զօրավարը ստիպուեցաւ անձնատուր լինիլ Քարթագօյի մօտ, և Ուաշինգթըն հետևեալ լուրն հաղորդեց ընդհանուր ժողովոյն. «Այս բարեբաստիկ օրն 6 զօրավար, 5,000 զինուոր, 5,000 հրացան և 27 ռումբ անցուց մեր ձեռքը՝ թշնամեաց բանակի բոլոր մթերքովն հանդերձ. բաց յայսմանէ արշաւանքի ժամանակ բռնած ենք 2,000 գերի, ընդ որս են բազում աստիճանաւորք:»

Այս յաջողութենէն ետև Փրանսիոյ հետ դաշնակցելու գործը, որոյ վրայ շատ խնամ կ'տարուէր, լրման հասաւ. սակայն դաշն հաստատելու ժամանակ Փրանսիոյ կառավարութիւնը չէ թէ նոր պետութեան համար ունեցած սիրովն կ'առաջնորդուէր, այլ վրէժխնդիր

թշնամութեամբ առ Անկլիան, զոր կ'ուզէր յոգիս ապաստան առնել — տկարացընել որչափ որ կարելի լինէր: Ամերիկացիք արդարև շատ ուրախ էին այս գինակցութեան վրայ, բայց Ֆրանսիոյ չափաւոր օգնութիւնը նոցա ուրախութեանը չհամապատասխանեց և նոքա վերջ 'ի վերջոյ ստուգեցին, որ չէ թէ օտարի թոյլ նպաստին, որ դեռ առանձին նահանգով զինքն վարձատրել կ'ուզէր, այլ իւրեանց յատուկ ճգնութեանը և ուժոյն պարտ էին ապաւինիլ:

Այժմ երկու թշնամեաց հետ գործ ունենալով Անկլիան բոլոր իւր զօրութիւնն 'ի գործ դրաւ: Հօու զօրավարը, որ տարիներէ 'ի վեր այնքան կ'սպարծենար թէ աւասիկ շուտով իսպառ ջարդելու էր զըմբոստները և այնու ամենայնիւ դեռ իւր նպատակին չէր հասած, յետ կոչուեցաւ և նորան յաջորդեց Քլինթն զօրապետը: Անկլիացի գործակալներն այժմ աւելի՛ ևս կ'դրդէին զհնդիկ ցեղերն, որպիսի են Իրոքէզներն ու Քրիքները, մահաբեր ասպատակով խուժելու Ամերիկայի նահանգներու վրայ և մինչև անգամ ինքեանք այս մարդասպան հրոսակներուն առաջնորդ կանգնելով հուր և սուր կ'սփռէին ուր և զօրէին: Երբ անկլիացիք մարդախոշոշ սրիկաներու ձեռքով երկիրն աւերելու ետևէ ընկած՝ հէք կիներու և օրիորդներու վրայ անգամ անլուր վայրագութեան չարիք կ'գործէին — ամերիկացւոց ընդդիմութիւնն ևս քան զևս կ'բորբոքէր. կանայք անգամ հայրենասիրութեամբ կ'վառուէին և նախատինք կ'համարէր այն մարդուն կամ պատանւոյն որ իսկոյն պատրաստ չլինէր ծառայելու հայրենեաց:

Այնուհետև դեռ շատ պատերազմներ եղան, որոց ելքն մերթ այս, մերթ այն կողմն կ'հակէր, և Քօրնվալիս անկլիացի զօրավարը մի քանի մանր յաջողուածներէ յանդգնելով կուրօրէն յառաջ կ'մղուէր և չգիտէր որ պաշարուելու էր Յօրքթօունի մէջ: Ուաշինգթն, որ նաև ֆրանսական գնդի առաջնորդն էր, ճարտար շարժումներով կրցեր էր խաբել թէ զՔօրնվալիս և թէ զՔլինթն հրամանատարն, այնպէս որ վերջինս շատ զարմացաւ, երբ լուր ընդունեց Քօրնվալիսէն, թէ «Ինձ անհնարին է ընդ երկար դիմանալ Յօրքթօունի մէջ. եթէ չէք կրնար փրկել զիս՝ ուրեմն պատրաստ եղէք ամենավատ լուր լսելու իմ մասին:» Ուժգին ճակատամարտէն յետոյ — 19 հոկտեմբերի 1781 — Քօրնվալիս զինաթափ եղաւ. մօտ 8,000 անկլիացիք գերուեցան և 200 ռումբ ամերիկացւոց ձեռքն անցաւ: Գերիներէն ոչ ոք զրկանք չկրեց, թէև յայտնի էր, որ քիչ մի առաջ ամերիկացւոց գերիները չարաչար սպանուած էին անկլիացւոց ձեռքով:

Այժմ ամեն տեղ համոզուեցան որ Ամերիկայի անկախութիւնն որոշուած բան էր։ Լաֆայէթ, որ վերջին ռազմի մէջ սքանչելի արիութեան փառք գրաւած էր, կ'գրէր Մօռէփա կոմսին. «Ողբերգութիւնն աւարտեցաւ. հինգերորդ արարուածն այս բռպէիս լմնցաւ։» Ֆրանկլին ևս այս բերկրառիթ լուրն լսելով գոչեց. «Շնորհակալութիւն 'ի սրտէ այս փառաւոր աւետեաց համար. երկրորդ օձն ևս խեղդեց իւր օրօրանի մէջ պատանին Հերկուլէս։»

Հուսկ յետոյ Անկլիան ևս համոզուեցաւ որ այսուհետև կարելի չէր նուաճել գաղթականները. հին նախարարներուն յաջորդեցին նորերը և 3 սեպտեմբերի 1783ին Անկլիոյ և Ամերիկայի ազատ նահանգներու մէջ հաշտութեան դաշն գրուեցաւ, որով Անկլիան վերջապէս նոյն նահանգներուն անկախութիւնն ընդունելու կ'ստիպուէր։

ԺԶ

ԲԱՆԱԿԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԱՌՆԵԼԸ

Հերոսական ջանութեամբ Ամերիկան գրաւեց իւր ազատութիւնը. այժմ պէտք էր որ ժառանգած բարիքն իմաստօրէն 'ի գործ դնէր։ Ոմ որ պատերազմի ծագման և շարունակութեան ժամանակ ուշի ուշով դիտած էր ամերիկացւոց ազգի որոշ յատկութիւնքը՝ հարկաւ ասելու էր, որ այսպէս բնաւորեալ ազգէ մը նաև խոհեմ ու հաստատուն յառաջադիմութիւն պէտք էր սպասել նոր գրաւած ասպարիզի վրայ։

Ի վերայ այսր ամենայնի խկոյն պատերազմէն ետև մեծ վտանգ մի ելաւ ազատ նահանգներու դիմաց։ Բանակի բուռն կազմողքը այնպիսի մարդիկներ էին, որք արդէն տարիներէ 'ի վեր չգիտէին թէ ինչ ասել է հանգիստ աշխատութիւնը։ Ընդհանուր ժողովն որոշած էր տակաւին քանի մի տարի վարձատրել զնոսա. այնուհետև պէտք էին տուն վերադառնալ և նորէն զբաղիլ ընտանի գործերով։ Նոքա հաւան չէին այս բանին և կ'ուզէին այրիլ Ֆրանսական զինուորներու պէս, որոց վիճակը շատ նախանձելի էր։ Ֆրանսական բանակն ասես թէ խնամածութեան տուն մի էր տոհմիկներու համար, ազնուական երիտասարդներու գրեթէ մեծագոյն մասը հարստանալու և լաւ կեանք վարելու

յուսով բանակ կ'մտնէր: Որպէս կ'խօսէին այս ոսկեփայլ ու զարդարուն մարքիզներն, կոմսերն ու դուքսերն ամերիկացի անշուք պաշտօնաւորաց աչքը. այս վերջինքս իւրեանց պարզ կ երևութով ֆրանսական սոսկ հրացանաւորներու և նշանառուներու հետ անգամ չէին կրնար մրցիլ: Այսպէս ուրեմն ամերիկացի զօրականները ֆրանսացւոց փարթամ կեանքին հետամուտ լինելով կ'մոռնային հասարակաց օգուտը և կարծելով թէ զինուորներու վրայ աւելի փոյթ կ'տարուի, երբ որ երկրի մէջ թագաւոր մի իշխելու լինի — պատերազմի ժամանակ ձեռք բերուած ազատ վարչութիւնն խորտակել կ'ուզէին և միապետական իշխանութիւն հաստատել նորա տեղ: Եթէ այս խորհուրդն ընդհանուր կամքի արտայայտութիւնն լինէր՝ բնաւ բան մի չէր մնար ասելու սորա դէմ: Աւելորդ է վիճաբանել թէ կառավարութեան որ ձևն նախադասելի է — հանրապետականը թէ միապետականը,* զի ժողովրդոց բարօրութիւնը վարչութեան ձևէն չծագիր, այլ օրինաց պահպանութենէն և իւրաքանչիւր մարդոյ անձնուէր ծառայութենէն յօգուտ ամբողջութեան: Բայց վերոյիշեալ խորհուրդը ազգի ընդհանուր փափաքէն չէր ելեր, այլ միայն ջոկ դասու շահասիրական հաշիւներէն: Շատ բնական է որ այս դասը իւր դիտաւորութիւնն իրագործելու համար նշանաւոր մարդոյ մը վրայ պարտ էր ուղղել աչքերն, և ով կարող լինէր այս մարդը, եթէ ոչ Ուաշինգթն: Զօրքի յանկութիւնը սպարապետին յայտնելու համար ընտրուած էր Լիւիս Նիքոլա անուն հռչակաւոր հազարապետը, որ և վարպետ ճարտարութեամբ կատարեց այս պատգամի գրաւոր կերպը: Սահմանադրութիւն մի մէ'կ թագաւորով իւր գլխին կառավարութեան ամենալաւ ձևն է Ամերիկայի համար, կ'գրէր նա, միայն թէ այս նպատակին հասնելու համար Ուաշինգթն յօժարէր համեստ տիտղոս մի ընդունելու:

Ուաշինգթնի տեղ շատերն 'ի հարկէ չէին զօրեր դէմ կենալ այս համբարուի երգին. բաւ էր միայն հաւանութեան նշան մի տալ գլխով — և զօրքն իսկոյն թագաւոր կ'համբաւէր զիւր սպարապետը: Զօրականի բացականչութեամբ յաթոռ ամբառնալով նա կ'ստիպուէր անշուշտ շահիլ զինուորներու սիրտն և աւելի տեղի տալ նոցա ագահութեանը: Եթէ Ուաշինգթն հետևէր այն երգին՝ նորա փառքն առ միշտ կ'արատուէր և 'ի շնորհուկս մէկ դասու ամբողջ ազգն կ'վնասուէր: Պետութեան հիմնական օրէնքներն՝ որպէս համօրէն կամքի

*Այս մտքին Թարգմանիչը կարող չէ համաձայնիլ:

արտայայտութիւն՝ արդէն պատրաստ էին, պատերազմով ձեռք բերուած և ազգի արեամբ կնքուած էին, և այս օրէնքներու մէջ թագաւորի համար խօսք չկար։ Ուրեմն Ուաշինկթընէն պահանջուած բանը պարզ խօսելով ոչ այլ ինչ էր բայց եթէ ծանր պետական յանցանք։ Քիչ մի առաջ Անկլիոյ բռնակալութիւնն էր որ ազգային սահմանադրութիւնը տապալել կ'ուզէր. այժմ կ'խնդրէին որ Ուաշինկթըն ևս նոյն գարշելի վատութիւնն գործէ — Ուաշինկթըն, որ նոյն իսկ բռնակալութեան դէմ այսքան մարտնչելով իր կեանքն անգամ պատրաստ էր զոհել ազգային իրաւանց համար։

Ինչպէս որ վհուկներն ոսկի պսակ մը կ'շողացընէին Մաքպէթի գիմաց, նոյնպէս և Ուաշինկթընի առջև ոսկեճաճանչ արքայական թագ մի կ'ցոլացընէին հիմակ։ Բայց Ուաշինկթըն Մաքպէթ չէր և փառասիրութեան համար տեղ չկար նորա սուրբ ու վսեմ հոգւոյ մէջ։ — Տես թէ ինչ կ'տամ քեզ, միայն թէ մեղանչիր. բախտդ մեծութիւնը հաւասար կ'լինի յանցանքիդ։ — Այսպէս կ'հնչէին սքօղեալ ձևով մարդկային երջանկութեան թշնամու, տարբեր խաբեբայի, ինքնասիրութեան թիւնարկու օձին խօսքերը։ Այս փորձութենէն վայրկեան մի անգամ չդայթաքեցաւ Ուաշինկթըն և հետևեալ գիրն արձակեց հազարապետին.
«Անակնկալ ապշութեամբ և վրդովմամբ ուշի ուշով կարդացի ձեր հաղորդած մտքերը։ Հաւաստի եղէք որ երբէք ամբողջ պատերազմին սիրտս այնչափ չէր վշտացած, որչափ այն րոպէիս, երբ կ'իմանամ թէ այդտեսակ մտքեր կ'շրջին զօրքի մէջ։ Ամենախորին ատելութեամբ կ'նախատեմ և ծայրագոյն խստութեամբ կ'յանդիմանեմ այդ մտքերը։ Առ այժմ կ'ուզեմ որ սրտիս մէջ թաղեալ մնայ ձեր հաղորդածը. սակայն եթէ այս բանի նկատմամբ առաւել ևս յառաջդիմելու լինիք՝ իմացէք որ անհրաժեշտ պիտի լինի 'ի վեր հանել գեղելութիւնը։ Անհնարին է ինձ հասկընալ, թէ արդեօք ինչով քաջալերած էի զձեզ առ այդպիսի խնդիր մը, որ ըստ իս մինչև ցարդ եղած վտանգներէն աւելի վատը կ'սպառնայ մեր հայրենեաց։ Թերևս չեմ սխալիր, եթէ ասեմ, որ ոչ մի մարդ կարող չէիք գտնել որում ձեր դիտաւորութիւնն աւելի դառն դար քան թէ ինձ։ Ընդ սմին զգացմունքներուս դէմ չմեղանչելու համար պարտիմ նաև յաւելուլ, որ ոչ ոք ինձմէն աւելի բարիք չցանկար բանակին։ Բայց կ'ուզեմ սահմանադրական ճամբով հասցնել զնա այս բարեաց և սորա համար բոլոր իմ ոյժս և ազդեցութիւնս 'ի գործ դնելու պատրաստ եմ։ Վասն որոյ կ'աղաչեմ զձեզ — եթէ ունիք սէր առ հայրենիս, եթէ կ'ցանկաք հոգ տանիլ ձեր յատուկ անձի ու յաջորդ

ներնոց վրայ և ինձ ևս պատիւ մը շնորհել — ՚ի բաց վանեցէք սրտերնէդ այդ խորհուրդն և այսուհետև մի հաղորդէք ինձ այդպիսի բաներ՝ ոչ ձեր և ոչ այլոց անուամբ :»

Նոյն մաքուր և սոյն հոգւով ներշնչուած էին և նորա հրաժարական խօսքերը, որով խաղաղութիւն կ՚աւետէր զօրքին: Կ՚յիշէր նոցա փառաւոր քաջութիւնքը զոր գործած էին պատերազմական դաշտերու վրայ, կ՚պատմէր գովասանօք թէ ինչպէս նախ տարբեր մասերէ բաղկացեալ՝ հետզհետէ տեղական նախապաշարմունքն մերկանալով հայրենասէր եղբայրներու միաբան և ներդաշնակ մարմին կազմած էին և վերջապէս յորդոր կ՚տար որ խաղաղութեան մէջ սուրբ պահեն իւրեանց փառաւոր համբաւը: Կ՚խնդրէր յուշածել որ խնայողութիւնը, ուշիմութիւնն ու ջանասիրութիւնը — քաղաքային ու մասնաւոր կեանքի այս առաքինութիւնքը — նոյնպէս յարգի են, որպէս քաջութեան, տոկունութեան և համարձակ արիութեան փայլուն յատկութիւնքը պատերազմի մէջ: «Պաշտօնաւորք և զօրականք, կ՚ըսէր նա, փոյթ տարէք հաշտ եղբայրսիրութեամբ ապրելու քաղաքացւոց հետ և ամեն բան զոհեցէք մեր ազգային սահմանադրութիւնն կանգուն և զօրեղ պահելու համար. եթէ ոչ՝ ազգի պարծանքն ու պատիւը կորած է այժմ և յաւիտեան :»

Հացկերոյթի ժամանակ առանձին իմն հրաժեշտ առնելով պաշտօնաւորներէն՝ նա վերցուց իւր բաժակն և ասաց. «Սիրով և երախտագիտութեամբ հրաժարական ողջոյն կ՚տամ ձեզ՝ մաղթելով ՚ի բոլոր սրտէ որ ձեր գալոց օրերն ևս նոյնպէս երջանիկ ու զուարթ լինէին, որպէս պատուաւոր ու փառաւոր էին ձեր անցեալ օրերը:» Կենաց բաժակն ըմպելէն ետև աւելցուց. «Չեմ կրնար մօտենալ ամեն մէկիդ բարեւ մնաս ասելու. սակայն եթէ հաճիք մատչիլ առ իս և պարզել ինձ աջը — յոյժ շնորհակալ կ՚լինիմ:» Ամենախորին յուզմամբ ոտքի ելաւ Քնօքս զօրապետը, որ սպարապետի քով նստած էր, և տուաւ նորան իւր դողդոջուն աջը: Զգացմունքներու թափէն ընկճուած՝ Ուաշինգթն խօսք մի անգամ չկրցաւ արտասանել և ընկաւ զօրապետի պարանոցի վրայ. այնուհետև մօտեցան և միւս պաշտօնաւորք, և ոչ մի աչք անարտօսր չմնաց այս բարեմնայի ժամանակ:

Ընդհանուր ժողովի մէջ կային ոմանք, որ պատմութեան զգուշաբար դէպքերն յիշելով երկիւղ կ՚կրէին, թէ հաշտութենէն յետոյ Ուաշինգթն թերևս չէր կամենար առանց այլևայլութեան մերկանալ իւր զօրութիւնը: Բայց Ուաշինգթն իւր պաշտօնը հանդիսաւոր նստի մէջ

վար դնելով յոյց տուաւ, որ այն երկիւղն սնոտի էր։ Այս առթիւ խօսած ճառի մէջ նա կ'ըսէր այլովքն հանդերձ. «Իմ տարակոյսներս անձնական կարողութիւններուս մասին կարող էին յետ կասիլ միայն մեր գործի արդարութեան վրայ ունեցած համոզմունքէս և երկնից աջակցութեան վրայ դրած յոյսէս։ Այս պատերազմի փառաւոր վախճանը մեր բոլոր յոյսերն 'ի լրումն հանեց։ Իմ գոհութիւնս առ Նախախնամութիւնն Աստուծոյ և շնորհակալութիւնս առ այն քաղաքացիս, որք սիրով կ'օգնէին ինձ, աւելի ևս կ'աճին, երբ գործի բոլոր դժուարութիւնքն 'ի միտ կ'առնում։» Յետոյ նա կ'ըսէր. «Իմ հասարակային պաշտօնէութեան վերջնականին ժամանելով անհրաժեշտ պարտք կը համարիմ կնքել զայն աղօթքիւք առ Աստուած, որ նա օրհնութիւն շնորհէ մեր թանկագին հայրենեաց և բոլոր այն մարդոց, որք մեր կառավարութեան գործերն հոգալու կոչուած են։ Բանն զոր յանձնած էիք ինձ վերջացաւ. կ'վերադառնամ արդ դէպի տունս՝ աղաչելով պատկառելի ակմբէդ — որ այսքան ժամանակ կ'առաջնորդէիք իմ քայլերս, ընդունիլ հրաժարական ողջոյնս և արձակել զիս այն ամէն պաշտօններէ, որով պատուած էիք զիս մինչև այսօր։»

Այս ասելով Ուաշինգթըն իւր սպարապետութեան գաւազանը նախագահին տուաւ։ Նախագահն պատասխանեց նորա ճառին և ասաց հանդերձ այլովք. «Ազատութեան դրօշակը նոր աշխարհի մէջ պարզելէն և թէ հարստահարողաց և թէ հարստահարելոց վսեմ դաս մի տալէն ետև՝ դուք կ'թողնէք այդ պատերազմի դաշտն և ձեր հայրենակիցներու օրհնութիւնն հետերնիդ կ'տանէք։ Սակայն մի կարծէք որ ձեր առաքինութեանց և արժանեաց փառքը ձեր զինուորական պաշտօնի հետ աւարտելու է. ո՛չ — հեռաւոր սերնդոյ սիրտն անգամ դարէ 'ի դար բորբոքելու է այս փառքէն։ Մեք ևս կ'միաւորենք մեր աղօթքը ձերինին հետ՝ թանկագին հայրենեաց բախտն Բարձրելոյն հովանաւորութեան տակ դնելով և կ'մաղթենք որ մեր քաղաքացիներու հոգիքն ու սրտերը արժանի գտնուին այն օգնութեան, զոր կ'շնորհէ մեզ Աստուած՝ զմեզ երջանիկ ազգ մի շինելու համար։»

Դեռ իւր մեկնելէն առաջ Ուաշինգթըն նամակ մի գրեց Շթօյպըն զօրապետին, որով շնորհակալութիւն կ'յայտնէր թէ նորան և թէ նորա գերմանացի ազգակիցներուն, և 'ի նշան հաւատարիմ սիրոյ կ'խնդրէր հաւաստի լինիլ, որ հանգամանքներու ներածին չափ չպիտի զանց առնէր գործով իսկ վկայելու իւր բարեկամութիւնն առ նա։

Ուաշինգթըն մերժեց իւր թոշակը. միայն թէ արած վճարքը թոյլ

տուաւ փոխարինել և այս առթիւ մանրակրկիտ հաշիւ մը ներկայացուց, յորում ամեն մի ծախք մի առ մի նշանակուած էր։

Այսպէս վերադարձաւ 'ի Մօն-Վէրնօն այն վսեմ, իմաստուն և բարի մարդը՝ իւր կեանքի մնացեալ տարիքը հանգիստ միայնութեան մէջ կնքելու համար։ «Այժմ, կ'գրէր նա Լաֆայէթին, օրուայ աղմկէն և հասարակային գործոց խառնակ շփոթմունքէն հեռու՝ անձնատուր կ'լինիմ այն քաղցր պարապութեանց, որք կ'խորշին թէ փառատենչ զօրականէն և թէ այն նախարարներէն, որ տիւ ու գիշեր իւր երկիրն բախտաւոր շինելու և հարևան պետութիւնքը խորտակելու հոգսերով կ'մաշուի — ասես թէ երկրագունտը հերիք չէր ամեն մարդոց երջանիկ բնակութեան համար։ Վեհապետի ողորմած ժպտէն իւր ճակատագիրն գուշակող դրանիկը չկրնար բնաւ գաղափար կազմել այն բարեբաստութեան վրայ որ վիճակուած է ինձ. ոչ ոքի չեմ նախանձիր և ամենեքին բարիք կ'ցանկամ։ Այս նշանաբանիս հետևելով կ'ուզեմ հեզիկ դէպի վայր իջեցընել կեանքիս գետը՝ մինչև որ հուսկ յետոյ պապերուս հասնիմ և հանգչիմ նոցա մօտ։»

Մօն-Վէրնօնի մէջ իշխող առաքինութիւններէն մինն էր և հիւրասիրութիւնը։ «Բաժակ մի գինի, կտոր մի պաղին միս միշտ կայ քովս, կ'գրէր Ուաշինգթըն Լաֆայէթին. բարով թող գայ առ իս ով որ կարող է գոհ լինել սովաւ, իսկ աւելի սպասողն կ'խաբուի։»

Պետութիւնն ու մասնաւոր անձինք 'ի զուր ջանացին վարձատրութիւն մի ընդունել տալ Ուաշինգթընին։ Այս միջոցին Ուաշինգթընի խորհրդով գետ մի նաւագնաց շինելու համար կազմեալ բաժանորդական ընկերութիւնը վաւերացում ընդունեց ընդհանուր ժողովէն և սոյն առթիւ խորհուրդ տեսնուեցաւ, որ 'ի նշան շնորհակալութեան փոխարէն խնամոց պարգև մի ընծայուի նորան։ Օրէնսդրական ժողովն որոշեց յիսուն հատ հարիւրական սթերլինկ գնոյ արժէթուղթ յանձնել նորա տնօրէնութեանը։ Գործին այնպիսի ընթացք մի տրուած էր, որ եթէ Ուաշինգթըն զայն մերժէր՝ օրէնսդրական ժողովի պատուոյն դէմ մեղանչած պիտի երևէր. ուստի նա յայտնեց, թէ յօժար էր ընդունիլ պարգևը, միայն թէ յօգուտ հասարակային բարօրութեան մտադիր էր գործածել զայն, որ և կատարեց իսկ, զի յետոյ յայտնի եղաւ նորա կտակէն, որ այն գումարը Միացեալ Նահանգներու մէջ համալսարան մի հիմնելու թողած էր։

ԺԸ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ուաշինգթոն արդէն չորս տարի խաղաղ կեանքի զուարճութիւնք կը վայելէր գիւղի մէջ, երբ հայրենիքն դարձեալ կոչեց զնա առանձին իմն օգնութիւն մատուցանելու համօրէն ազգին: Միութեամբ ձայնից նա ընտրուած էր — Նախագահ Միացեալ Նահանգաց: — Ուաշինգթոն բնաւ չէր հաւատար որ ընդունակ էր հոգալու այս բարձրագոյն պաշտօնի պարտաւորութիւնքը: «Ինչ որ յաջողեցաւ ինձ որպէս սպարապետի, կ'ըսէր նա, դեռ կարող չէ երաշխաւոր լինել, որ վարչութեան ասպարիզի վրայ ես ձեռնհաս եմ գործելու ըստ արժանւոյն:» Բայց ազգն ուրիշ կարծիք ունէր: Ուաշինգթոնի անթիւ անհամար յայտարարութիւններէն և հրովարտակներէն, զորս արձակած էր պատերազմի ժամանակ, պարզ կ'երևէր որ նա չէ թէ միայն մեծ զօրավար էր, այլև մեծ պետական մարդ: Եւ յատկապէս այժմ, երբ վերանորոգեալ ազգային սահմանադրութիւնն առաջին փորձին ենթարկուիլ պէտք էր, ամենքն համոզուած էին որ միայն Ուաշինգթոնի ճարտար բազուկն ընդունակ էր պետութեան ղեկն վարելու: Ընկերները համոզիչ խօսքերով կ'յորդորէին զնա դարձեալ անգամ մի զոհել հայրենեաց՝ գիւղական հանգիստը, և նա դանդաղելով կ'յօժարէր: «Այսօր — գրուած է նորա յիշատակարանի մէջ 16 ապրիլի 1789 թուականի ներքև — բարեաւ մնաս ասացի իմ մասնաւոր կեանքիս և տնային բախտիս: Սիրտս այն աստիճանի ճնշեալ է վշտագին թախծով ու հոգսերով, որ բառ մի անգամ չեմ գտներ զայն բացատրելու: Կ'հետևիմ ինձ ուղղեալ հրաւէրին և կ'երթամ Նիւ–Եօրք երկրիս ամենայն ինչ լաւութիւն գործելու փափաքով, բայց չեմ կ'արծեր որ կարենամ 'ի լրումն ածել նորա յոյսերը:»

Նորա ճամբորդութիւնը յաղթութեան հանդէսի կ'նմանէր. առանձին իմն շքով պատուեցին զնա մանաւանդ Թրէնթնի բնակիչները, որք այժմ միաբան խնդութեամբ Տելավարի անցքին երկոտասաներորդ տարեդարձը կ'տօնէին: Կամրջի վրայ խորհրդաւոր վերնագրով յաղթա-

նակի կամարներ շինուած էին և սպիտակ շորերով պճնեալ փոքրիկ աղջիկները ճամբու վրայ ծաղիկ ու փունջ կ'ցանէին, և ազգի ընտրեալն այս ճամբով կ'անցնէր։ Փառաւոր կերպիւ զարդարեալ նաւ մի, որ 'ի նշան տասն և երեք նահանգաց՝ տասն և երեք նաւաստիներէ կ'վարուէր; Նիւ-Եօրքի նաւահանգիստը կ'տանէր զնա։ Ազգի ընդհանուր սէրն ուրախ կ'առնէր զնա, բայց չէր կրնար վանել սրտէն այն տխրութիւնը զոր կ'զգար հանդերձեալ դժուարութիւնքը մտաբերելով, և այս տխրութիւնը յայտնի կ'երևէր նորա վշտահար դէմքէն և բոլոր շարժմունքէն։

Պաշտօնամտի ճառին մէջ նա կ'ըսէր. «Չեմ կրնար յանձն առնել իմ նոր պաշտօնս՝ նախ և առաջ ջերմեռանդ աղօթք չմատուցած առ Տէրն ամենայնի, որ ազգաց ժողովներուն կ'հսկէ և իր նախախնամութեամբ մարդկային հանճարի թերութիւնքը կ'լրացնէ. կ'հայցեմ 'ի նմանէ որ խլեցնէ իր օրհնութիւնը Միացեալ Նահանգներու ժողովրդոց վրայ, որ հովանի լինի, գթաբար մեր նոր կառավարութեանը զոր ազգն ինք իրեն տուած է բարեբաստիկ լինելու յուսով, և վերջապէս լոյս շնորհէ պաշտօնաւոր անձանց մտքերուն, որք այս կառավարութեան գործերն հոգալու կոչուած են։ Այնպիսի աղերս մի ուղղելով բարձրայոյն Էին, առ միակ աղբիւրն բարեաց, վստահ եմ որ դուք ևս բովանդակ ազգի հետ զգացմունքներուս բաժանորդ կ'լինիք։» Ի վերջոյ կ'ըսէր. «Անյեղլի ճշմարտութիւններէն մինն է այս, թէ մարդկային առաքինութիւնն ու բախտը անլուծ յօդերով իրարու հետ կապուած են, թէ մեր երջանկութիւնը մեր պարտքերու մէջ գրուած է և թէ վերջապէս արդար ու մաքուր սկզբունքներով առաջնորդուող քաղաքականութիւնն է որ ազգերու բարօրութիւնը կ'հիմնէ միշտ։ Երկինք երբէք չեն կրնար բախտաւոր շինել ազգ մի որ կարգի և արդարութեան մշտնջենաւոր օրէնքներն առ ոչինչ կ'դնէ. միայն այս առաքինութեանց հետեւելով կարելի է մեզ վառ պահել ազատութեան սուրբ հուրն, զոր մեք ևս կոչուած ենք պաշտպանելու այսօր։» Եւ իր ընկեր Լաֆայէթին կ'գրէր. «Միաբանութիւն, ազնուութիւն, վաստակասիրութիւն և չափաւորութիւն — ահաւասիկ սոքա են այն միջոցները, որով մարթ է մեզ երջանիկ ազգ դառնալ. երջանկութեան այս շաւիղն այնպէս պարզ և շիտակ է, որպէս լուսոյ ճառագայթը։» Այժմ ևս թոշակ չէր ընդունէր և յոյժ ուրախ էր որ առանց վարձու կարող էր սպաս տանիլ իր երկրին։

Սրբազան երկիւղածութեամբ իր պաշտօնի գործերուն ձեռնարկե-

լով՝ այժմ նա ջան կ'գործէր յաղթահարելու առջևն դիզուած անթիւ խոչերն · պատերազմէն 'ի վեր ահագին պարտքեր կ'ծանրանային ազգի վրայ , առևտուրն և արհեստները կենարար ազդեցութեան կ'մնային , երկրի սահմանները հնդիկներու ասպատակով կ'նեղուէին ։

Ֆրանսական յեղափոխութեան որոտընդոստ պայթման հետ նոր իմն դժուարութիւնք 'ի յայտ եկան ։ Ուաշինգթն կ'տեսնէր որ Փարիզի պատահարքը նախընթաց վատ կառավարութեան բնական հետևանքն էին · սակայն և այնպէս՝ չնայելով իր սիրոյն առ ջոկ ջոկ ֆրանսացիս՝ խկոյն համոզուեցաւ որ այս ազգի մեծագոյն մասը տակաւին չունէր իրօք ազատ վիճակի մը հասնելու համար պէտք եղած բարոյական վսեմութիւնը , և նոյն ժամայն մարգարէական սրտով գուշակեց ֆրանսական շարժողութեանց եղկելի վախճանը ։ Ակնարկելով այս ազգի խօլութեանց և արիւնուշտ մրէժխնդրութեան գործերու վրայ , որով մեղապարտ կ'կացուցանէին զինքեանք , նա կ'ըսէր · «Նաւին վտանգ սպառնացող խութ և խոչերը բազում են · նա կարող է ժայռի մը զարնուելով կործանուիլ և այնուհետև այս փոթորկին բռնակալութիւն մի կ'հետևի , որ քան զառաջինն չար պիտի լինի ։» Ֆրանսական յեղափոխութեան մէջ երևցած առողջ գաղափարները Ամերիկայի ազատութեան համար մարտնչող ֆրանսայիներու ձեռքով բերուած էին · բայց այս գաղափարները չկրցան ընդ երկար յաջողութիւն գտնել և ստիպուեցան տեղի տալ այն զարհուրելի տագնապին , որ ազգի գազանային ապականութեանը լիովին համապատասխան էր ։ Ուաշինգթն մինչև 'ի խորս սրտի դղրդեցաւ Լուդովիկ ԺԶ.ին վիճակուած պատահարէն . իր կեանքի մէջ նա երբէք այնպէս շանթահարուած և 'ի կոր ընկճուած չէր , կ'ըսէին նորա մերձաւորքն , ինչպէս որ այն չարաբաստիկ թագաւորի գլխատութեան գոյժն առնելիս ։

Ֆրանսիոյ ծայրայեղութիւնքն Ամերիկայի մէջ ևս արձագանք գտան , այս տեղ ևս Յակոբիններու գաղափարներով ընկերութիւնք կազմուեցան ։ Սոքա էին որ հրատարակեցին «Ուաշինգթնի թաղման հանդէսն» վերնագրով պատկերը , ուր նա կիյոթինի ներքև կանգնեալ նկարուած էր · սոքա չէին ծածկեր բնաւ որ կ'ցանկային ոտնակոխ անել զՈւաշինգթն և տապալել կանգուն վարչութիւնը ։

Թշնամի կուսակցութեանց մոլեգին խռովութեան մէջ Ուաշինգթն նոյնպէս պինդ կանգնած էր , որպէս երբեմն Դելավարի վրայ , երբ կատաղի մրրիկն ու կուտակեալ սառոյցները իր նաւն խորտակելու կ'սպառնային ։ Ֆրանսայի արիւնահեղ եղերան հետևանքներու շնորհիւ

Ամերիկայի ծայրայեղ դասու ազդեցութիւնն եւ հետզհետէ թուլցաւ և վերջապէս բոլորովին շիջաւ ։

Յունին 1793 ժողովուրդն երկրորդ անգամ նախագահ ընտրեց զՈւաշինգթըն ։ Նորա ութամեայ գործունէութիւնն անբաւ բարիք շնորհեց երկրին և օրինակ դարձաւ յաջորդ նախագահներուն , յորոց ամենալաւերն ազգային օրէնքներու գործադրութեան մէջ միշտ հետևած են Ուաշինկթընի վարչութեան եղանակին ։

Երբ երկրորդ քառամեակէն յետոյ Ուաշինգթըն իմացաւ որ երրորդ անգամ ևս մտադիր էին յանձնել իրեան պետութեան գերագոյն պաշտօնը՝ նա հրաւիրեց հայրենակիցները առաւել նոր ձեռքերու մէջ դնել պետութեան ղեկն և յայտնեց հրապարակային գրով ՝ որ չէր ցանկար ընտրուիլ այսուհետև ։ Սոյն առթիւ հրաժեշտ կ՚առնէր ազգէն և հետևեալ ոսկի խօսքերն կ՚ուղղէր առ նա ․ «Կրօնն ու բարոյականութիւնը քաղաքային բարօրութեան անհրաժեշտ սիւներն են , որոց վրայ կը հանգչին իւրաքանչիւր մարդու պարտքերը , մարդկային երջանկութեան հզօր հաստատաններն են , զորս չէ թէ միայն բարեպաշտ հաւատացողք , այլև խոհեմ քաղաքագէտք պարտին յարգել և մեծարել ։ Եթէ նոցա կարևորութիւնը մանրամասն քննել ուղենայինք՝ հատորներ գրելու պէտք կ՚լինէր ։ Ես միայն մեր հարց կ՚առաջարկեմ ․ ուր կ՚մնայ սեփհականութեան , պատուոյ և կեանքի ապահովութիւնը , եթէ հանդչի ՚ի մեզ կրօնական պարտաւորութեան զգացմունքը , որ ճշմարտութիւնը յերևան հանելու միակ միջոցն է դատարաններու մէջ ։ Ոմանք կ՚ըսեն թէ բարոյականութիւնը կարող է և առանց կրօնի սնել ․ սակայն այսպիսի կարծիք յայտնելէ առաջ պէտք էր նախ լաւ մը քննել զայն ։ Որքան և հզօր լինէր բարի դաստիարակութեան ազդեցութիւնը քանի մը անհատներու սրտին վրայ , բայց և այնպէս խելքն ու փորձը չեն զօրեր ապացուցանելու որ ազգ մի կարող էր բարոյական մնալ առանց հաւատքի ։» Յաւարտ բանից նա կ՚ըսէր ․ «Իմ վարչութեանս տարիներու վրայ հոգւոյ աչօք յետս նայելով խիղճն վկայ կը կոչեմ ինձ , որ երբէք գիտութեամբ չեմ սխալած ․ սակայն իմ թերութիւնքս լաւ կ՚ճանաչեմ և կ՚խոստովանիմ որ թերևս մի քանի բաներու մէջ վրիպած եմ ։ Ինչ և լինէին իմ այս վրիպակներս՝ ջերմեռանդ սրտով կ՚աղաչեմ զԱրարիչն , որ նա չափաւորէ և հեռացընէ մեզմէն նոցա չար հետևանքը ։ Ձեզմէ հրաժեշտ առնելիս այս յոյսն ևս իմ հետ կ՚առնում , որ հայրենիքս ներող աչօք կ՚նայի թերութիւններուս վրայ և քառասուն ու հինգ տարուայ ջերմեռանդ ծառայութեանս մէջ արած

սխալմանքս իմ ակարութեանը վերագրելով՝ մոռացութեան կ'տամ զանոնք, մանաւանդ զի և ինքս յաւիտենական խաղաղութեան օթևաններն գնալու եմ ընդ փոյթ։»

Տակաւին երկու և կէս տարի հանգիստ բախտ վայելեց նա իւր կալուածքի մէջ։ 12 դեկտեմբերի 1799 ձիով շրջելիս փոթորիկէ մը բռնուելով մսեցաւ։ Գործ դրուած դարմանները բնաւ չօգտեցին. հիւանդի շնչառութիւնը ծանրացաւ և նա ջինջ հայեացքով և հանգիստ ձայնով ասաց բժշկին. «Հիւանդութեանս սկզբէն 'ի վեր գիտէի որ չպիտի ազատիմ. մահս ծանր լինելու է, բայց չեմ երկնչիր։ Շունչս երկար տևել չկրնար։»

Երեկոյեան ինն ժամին նա անցաւ 'ի հանգիստ յաւիտենական։

Մահուան օրն էր 14 դեկտեմբերի 1799, երբ վաթսունեօթնամեայ հասակի մէջ էր։

Կտակի մէջ Ուաշինգթն ազատութիւն կ'շնորհէր բոլոր ստրուկներուն՝ առանձին յիշատակութիւն անելով ծերերու և հիւանդներու վրայ, և նշանաւոր գումար կ'թողուր մէկ համալսարանի և աղքատ տղայոց դպրոցի մը հիմնարկութեան համար։

ԺԸ

ՕՐՀՆԵԱԼ ԼԻՆԻ ՆՈՐԱ ՅԻՇԱՏԱԿԸ

Դողդոջուն ձայնով յայտնեց Ժօն-Մարշալ պատգամաւորաց ժողովոյն Ուաշինգթնի մահը։ Ունկնդիրներու սրտի յուզմունքն այնպէս ուժգին էր, որ պէտք եղաւ վերջնել նիստը։ Հանգուցելոյ վերջին կամքին համեմատ նորա մարմինն առանց որ և է շքոյ և դամբանական ճառի իւր պարտիզի մէջ թաղեցին։ Ազատ որմնաշէնները (ֆրանք մասօն), որոց կարգի անդամ կանոններուն նա իւր ամբողջ կեանքին հետևած էր անբարբառ լռութեամբ, զամբիւղ մի սպիտակ վարդ ցանեցին գերեզմանի մէջ։

Երեսփոխանաց ժողովոյն գահերէցի աթոռն սևով պատուեցաւ. և անդամները սգոյ զգեստ հագան մինչև նոյն տարւոյ նստերու վերջը։ Վերյիշեալ Ժօն-Մարշալ սրտառուչ ներբողով մի կարդաց 'ի յաւեժական բարեբանութիւն Ուաշինգթնի, և պատգամաւորք միաբան յօ-

ժարութեամբ ընդունեցին նորա առաջարկութիւնը յանձնաժողով մի կազմելու, որպէս զի սա խորհէր թէ ինչ կերպով կարելի էր աւելի լաւ — ծածկել Ուաշինկթընի յիշատակը — յիշատակն այն մարդու, որ առաջինն էր պատերազմի մէջ, առաջինն խաղաղութեան ժամանակ և առաջինը հայրենակիցներու սրտին մէջ։

Ամփոփենք համառօտիւ ինչ որ երևելին Գերվինուս ասած է Ուաշինկթընի վրայ նորա բարուց խորիմաստ և ճարտար նկարագրութեան մէջ։

Ի՞նչ էր Ուաշինկթընի մէջ բնակող այն գաղտնի զօրութեան պատճառը, որով կարող կ'լինէր իշխել մարդոց և հանգամանքներու վրայ։ Պատասխան այս էր, որ գիտէր խոնարհել միւսներու կարծեաց առջև և ըստ պատշաճի յարգել ամեն մարդոյ իրաւունքն ու պահանջմունքը, որ ծանր էր բարուք և հաստատ խորհրդով, որ պարտուց զգացմանը խստիւ կ'հետևէր և որ վերջապէս կ'պաշտէր իւր սրտի մէջ խղճի երկնային կայծը, 'զոր 'ի մանկութենէ արդէն կանոն դրած էր իւր համար։ — Խորին ատելութիւն կ'զգար Ուաշինկթըն խաղի դէմ, զոր կ'անուանէր աղբիւր ամենայն չարեաց, ապականիչ բնաւորութեան և առողջութեան, որդի ժլատութեան, եղբայր անիրաւութեան, հայր կորստեան։ — Ազգային բարօրութիւնն ամեն բանէ վեր դասելով նա կ'ընդունէր պատերազմը միայն որպէս խաղաղութեան հասնելու միջոց. ռազմական յաղթանակներն ինքն ըստ ինքեան դատարկ ունայնք կ'երևէին նորա աչքին, եթէ նոքա ձեռք բերուած անկախութենէ ետև՝ նաև ժողովրդի ազատութեան և առողջ ու բարգաւաճ զարգացման երաշխաւորութիւն չտային։ — Նա կարող էր իրաւամբ ասել որ երբէք բարեկամութեան կամ ազգակցութեան աչառանօք չէր դրդուած պաշտօններ բաժանելու ժամանակ, և մինչև անգամ նոյն իսկ թշնամիք կ'խոստովանէին, որ այս նկատմամբ ոչ մի մարդ նորա չափ արդարութիւն չունէր։ — Ո՛րպէս ախորժելի է տեսնել, որ նա իւր փառաց ամենաբարձր աստիճաններու վրայ անգամ պատերազմի դաշտէն դէպի մշակութեան դաշտը վերադառնալու կարօտ կ'զգար, որ կը տենչար հանգիստ առնուլ իւր այգեաց և թզենեաց ստուերի տակ — իջնել հասարակային կեանքի բարձունքէն դէպի ընտանեկան զբօսանաց շրջանը, խորասուզուիլ ներքին կեանքի քաղցր միայնութեան մէջ, ուրոյ շնորհած վայելքն անյայտ են փառատենչ գլխաւորին և բազմատանջ պետական անձին։ — Քրիստոնէական աշխարհը հազիւ թէ կարող է որ և է գործունեայ մարդու կեանքի մէջ կրօնական բարեպաշտութեան

և խոնարհութեան երկրորդ օրինակ մի ցոյց տալ Ուաշինկթընին հաւասար, որ արդարև սուրբ սրտիւ ջուն կ'գործէր նմանող լինել Փրկչին արդարութեան, մեղմութեան, եղբայրսիրութեան, հեզութեան և հոգւոյ հանդարտութեան մէջ: — Ո՛ր և դարձնէինք աչքերս նորա կեանքն ուշի ուշով զննելիս՝ ամենուրեք նորա բնաւորութեան պարզութիւնը կ'տեսնենք, կ'տեսնենք նորա կեանքի վսեմ ազնուութիւնը, որ զմեզ ևս առ բարին կ'դրդէ: Առաքինութեան վրայ երկրպագողք ափիբերան եղան նորա առջև. նորա կեանքն իւր անշուք պարզութեամբ ամենայն ինչ սուտ փառք ու փայլ նսեմացուց և նորէն տուաւ պատմութեանը հասարակային անձինքն քննելու աւելի բարձր չափ մի, որ բռնակալութեան դարերու մէջ կրեթէ խափառ կորած էր: Նաբոլէոնի մը գործունէութեան անխախիլ ճառագայթներն թէև պահ մի խանգարեցին այս չափը, այլ չկրցան եղծանել զայն առ միշտ: — Այսպէս Գերվինուս:

Շնորհապարտ հայրենիքն այս մեծ, իմաստուն և բարի մարդոյ պատկերն յաջորդ սերնդոց աչքի առջև յաւերժացնելու համար զանազան տեղեր 'ի յիշատակ նորա մարմարեայ արձաններ կանգնեց. նորա պատկերն այս օրս իսկ թէ պալատներու և թէ խուղերու մէջ կ'երևի: Ցոյժ չնչին է, կ'ըսէր ինձ ամերիկացի մը, այն մարդոց թիւն առ մեզ, որք իւրեանց տան մէջ պատուոյ տեղ մի չշնորհէին մեր մեծ բարերարի պատկերին, որ մեզ համար նոյնն եղած է, ինչ որ Լիկուրգն Սպարտացւոց և Սոլոն Աթենացւոց համար: Եթէ նա աւնոր հնութեան մէջ ապրած լինէր և նորա մաքերն ու գործերը նոյնպէս ազգի շահին նուիրուած լինէին, յետնորդք անմահութեան պսակ կ'հիւսէին նորա ճակտին և յաթոռ աստուածութեան կ'ամբառնային, իբրև աստուած մի կ'պաշտէին: — Եթէ Ուաշինկթընի պատկերը կենդանի մնայ Ամերիկացւոց սրտի մէջ, որք նոր ժամանակիս մեծ հայրենասիրի օրինակին հետևելով արդէն բովանդակ աշխարհի հիացման արժանի գործեր շինած են — այս ազգը մինչև ցարդ չերևակայած երջանկութեան պիտի հասնի: Ցանկանք Ամերիկացւոց մեծ ազգին որ նա յօգուտ իւր միշտ Ուաշինկթընի կեանքովն իսկ բացուած ճամբու վրայ գնայ և փափաքինք որ նորա վսեմ օրինակը և միւս ազգերու համար հետևելու օրինակ լինի, մանաւանդ այն մարդոց համար, որք — ինչ կառավարութեան տակ և ինչ կ'ուզէ լինելին՝ իշխան, նախագահ, նախարար, զօրապետ, պատգամաւոր — յատկապէս ժողովրդոց բարօրութեան վրայ հսկելու կոչուած են:

Սակայն մեր ամենաջերմ և սրտագին փափաքներն մանուկ սերնդին կ՚վերաբերին: Ո՜վ մանկունք ազգի, պահպանեցէք ձեր սրտի սրբարանին մէջ այս վսեմ հայրենասիրի պատկերը, ջան դրէք նմանող լինիլ նորա առաքինութեանց և ապա թէ սովորեցէք նորանէն, թէ ինչպէս պէտք է սիրել զազգն և ծառայել հայրենեաց:

ՎԵՐՋ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Գերմաներէն լեզուին փոքր ՚ի շատէ հմուտ ընթերցողք կարող են Ուաշինգթնի վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւն առանալ հետեւեալ գիրքերէն.

V. Drugelin· Ďas Leben Georg Washingtons·	*Դրուգէլին. Գէորգ Ուաշինգթնի կեանքը:*
H. Elsner. Befreiungskampf der nordamerikanischen Freistaaten.	*Էլսնէր. Հիւսիսային Ամերիկայի Նահանգներու ազատութեան պատերազմը:*
G. Gervinus. Geschichte des nêunzehnten Jahrhunderts.	*Գերվինուս. Իննեւտասներորդ դարու պատմութիւնը: Շատ երեւելի գործ: Փառք այն Հային, որ հայերէն թարգմանէ այս տիեզերահռչակ գործը:*
C. Neûmann. Geschichte der Vereingten Staaten.	*Նօյման. Պատմութիւն Միացեալ Նահանգաց: Այս Նոյման, որ արդէն վախճանած է, շատ լաւ հայերէն գիտէր: Ունի գրած նա և Հայոց գրականութեան պատմութիւնը:*
W. Pütz. Erd-und Vôlkerkunde.	*Փից. Երկրի եւ ազգերու գիտութիւնը: Պատուական մանկավարժի պատուական գործը, որ մեծ համբաւ կը վայելէ:*
Fr. V. Raumer. Leben ûnd Briefwechsel G. Washingtons.	*Ռաումէր. Գէորգ Ուաշինգթնի կեանքն ու թղթակցութիւնը:*
Fr. Steger. Allgemeine Weltgeschichte.	*Շթէգէր. Տիեզերական պատմութիւն:*
Y. Venedey. Georg Washington.	*Վէնէդայ. Գէորգ Ուաշինգթն:*
W. Wachsmuth Historische Darstellungen.	*Վաքսմութ. Պատմական պատկերներ:*
G. Zeiss. Lehrbuch der allgemeinen Weltgeschichte.	*Զայս. Դասագիրք Տիեզերական պատմութեան:*

Բաց յայսմանէ Ուաշինգթնի վրայ գրած են հետեւեալ մեծանուն գերմանացի պատմաբանները, որք են՝ Շլօսսէր, Վէպեր, Գուսքէր, Ռօթէք, Գրուբէ, Բէքէր, եւ այլն:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Խօսք թարգմանչին 1

Ա. Մանկութեան օրեր 3

Բ. Երկրաչափ 11

Գ. Երեք տարի անտառներու մէջ 15

Դ. Պատգամաւոր 19

Ե. Ուաշինգթնի առաջին պատերազմները 23

Զ. Խաղաղութեան տարիքը 29

Է. Մինչեւ յընդհանուր ժողովը 38

Ը. Առաջին փորձը 45

Թ. Ուաշինգթնի սպարապետ ընտրուիլը 47

Ժ. Ուաշինգթն Պոսթօնի առջեւ 50

ԺԱ. Ազատութեան յայտարարութիւնը 54

ԺԲ. Ծանր ժամանակներ 57

ԺԳ. Տելաւարէն անցնիլը։ Թրէնթնի եւ Փրինսթընի յաղթանակները 63

ԺԴ. Լաֆայէթ — Քօսթիւշքօ — Շթօյպըն 67

ԺԵ. Մինչեւ հաշտութեան հաստատուիլը 71

ԺԶ. Բանակէն հրաժեշտ առնելը 75

ԺԷ. Վերջին ժամանակը 81

ԺԸ. Օրհնեալ լինի նորա յիշատակը 85

Ծանօթութիւն թարգմանչին 88

ՎՐԻՊԱԿ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
4	6	*կ՚լինէին*	*կ՚չինէին*
8	5	*կ՚բռնէր*	*կ՚բանէր*
13	24	250 *խոր*	250 *ոտք խոր*
»	25	կետրանեան	կետրոնեան
16	13	Ատեղաց	Աստեղաց

Ա. ՄԱՄՈՒԼ

(ՅԱՒԵԼՈՒԱԾ 1882)

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ

ARMENIAN LIBRARY
NEW BRITAIN, CONN.

ՆԵՐԿԱՅԱՑԵԱԼ

ՅԱԶԳԱՅԻՆ Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԱՌԹԻՒ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ

ԶՄԻՒՌՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

—1882—

ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՍ

ARMENIAN LIBRARY
NEW ENGLAND

ԱՆՁԻՆՔ

ԿԱՄՍԱՐ	*Հարուստ վաճառական.*	
ԲԱԳԱՐԱՏ	*Կամսարի երէց որդին.*	
ՋԱՔԱՐԻԿ	»	*փոքր* »
ՀԻՐԻԿ	»	*դուստրը.*
ՌՈՒՍՏՈՄ	»	*խորհրդական և մատակարար.*
ՄՈՒՇԻԿ	»	*սպասաւոր.*
ԱՐԲՈՒՆ	»	*գրագիր և լրաբեր.*
ՀՈՎՆԱԿ	*Գրագէտ.*	
ՍԵԽՈՒՆԻ	*Օրագրապետ.*	
ԳԻՍԱԿ	*Մանկավարժ.*	
ԿԱՐԳՈՍ	*Երբեմն ընկեր Կամսարի։*	

ԱՐԱՐ Ա.

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԲՈՒՆ (*առանձին*)։

ԱՐԲՈՒՆ. (*Թերթերու և տետրներու կապոց մը թևին տակ*) **Ո՜հ**, *շա՜տ տանջանք: Առաւօտէն մինչեւ իրիկուն թղթատունները վազէ, եւ մեր Կամսար պէյին համար օրագիր, լրագիր, յայտագիր, հեռագիր, այցագիր, թելագիր, սիրագիր վճարէ, եւ հեւալով տուն դարձիր: Ա՛լ իլիկս անցաւ այս անհատնում բրբիկներն ու մրգիկներն, որոց մէջ ո՛վ գիտէ ի՞նչ սատանայութիւններ*

կան: Այս մրգիրները չե՞ն որ աշխարհ տակնուվրայ կ'ընեն, կազ, կռիւ ու շփոթ կ'հանեն: Է՜ն աղէկին Աստուած *դելըն* տայ: Ո՜հ, ի՜նչ օրերու հասայ. մեր Խարբուրդը՝ միայն Նարեկ ու Սաղմոս կան, այս տեղ բիւրաւոր սաղմիկներ ու նանրիկներ կան, որ մժղուկներու պէս *վըզ, վըզ* ձայն կ'հանեն, արիւնդ կ'ծծեն եւ ապա կ'մեռնին. իսկ մարդիկ անոնց ետեւէն վազելով կարծեն թէ լոյս կ'տեսնեն . . . : Բայց ո՞ր մէկ թերթին հասնիմ. մեքենայ մը՝ ստէպ անգլուխ գրիչ մը՝ զայն կ'մրոտէ, մեքենայ մը, մամուլը կը տպէ, մեքենայ մը՝ խեղճ Արբունս՝ թղթատունէն կ'առնէ կ'բերէ, որ ուրիշ մեքենայ մը, Նամսար պէյը՝ կարդայ . . . : Գէշ է բանս՝ թէ որ բոպէ մը ուշանամ . . . կկոցի պէս գնա ու եկուր. *Հող* եկայ ես այս պաշտօնէս: Ի՜նչ հանգիստ էի ատեն մը՝ երբ աղա վաճառական էր Նամսար, եւ ես՝ խոհարար. հիմակ այն *դէմոնը* . . . չէ, դիւանի պէյ եղաւ, . . . կարծեմ սխալ կ'ըսեմ . . . դիւանագիր . . . ես ալ՝ օրագիրներու բեռնակիր: Ամեն կողմս մելան ու սուտ կ'հոտի, այբ ու բէնէն *խապար* չեմ, եւ այս թերթերով զիս տեսնողը կարծէ թէ Գրասէրին չափ խելանի եմ: Հապա տնեցիք մէյմէկ Արիստոտէլ են, այս թղթերը կ'ուտեն կ'լափեն, կ'մաշեն, եւ վերջը կ'սկսին խենդի պէս պոռպռալ, այնպէս որ անկողնիս մէջէն կ'լսեմ . . . հուկ . . . օ . . . Հուկօ . . . *Լէոր* . . . Լիդրէ . . . *Ռենէն* . . . Ռընան. Քանդ, Քօնդ . . . *դոդէոլ*, Պուրլ . . . ո՞ր մէկն ըսեմ, միտքս չ'գար . . . : Աշխարհիս ամեն բանը գիտեն մեր աղաները, բայց տան մէջ անցած դարձածները չեն տեսներ . . . կատուներն ու մկերն անգամ լեզու ելան, եւ՝ եթէ ոչ կարդալ, սկսան դէզ դէզ լրագիրներու մէջ պառկիլ եւ ծեծկըռուքի ելնել . . . : Վերը ոտքի ձայն կ'լսեմ. ո՞վ է սա անճարակ Մուշիկն. անշուշտ այն ալ հին, օթեկ օրագիր մը կ'կարդայ, եւ հոգը չէ որ այս սենեակը դեռ չէ աւլած. հող, փոշի, մելան, թղթի ու գրչի կտորներ կ'ուզես՝ չորս դին առեր են . . . : (*Խորէն կ'երեւի Մուշիկ՝ աչքերը շփելով՝ գլուխը թերթի մը վրայ ծռած*) Զըսի՞, ահա կ'գայ թշուառականն:

ՏԵՍԻԼ Բ.

ԱՐԲՈՒՆ և ՄՈՒՇԻԿ:

ՄՈՒՇԻԿ. (*կարդալով՝ թեւին տակ աւել մը, առանց չորս դին նայելու.*) «Նարսի մուկերը յաղթանակը կ'տանին. քաղքէն կ'վռնտեն գաղթող Մալա-«լականները եւ այսպէս ասոնց դէմ ի պաշտօնէ բողոքելու աւիթ չեն տար»: (*գլուխը կ'վերցնէ*) Նեցցե՜ն Նարսի մկերը, ո՜րքան ճարպիկ են. մեր վարժապետներուն գործը կ'կատարեն . . . :

ԱՐԲ. (*մեկուսի*) Նայէ անգամ մը, այս դղումգլուխն ալ մուկերու վրայ կ'երազէ. դէմքը տեսնողը կարծէ թէ քաղաքականութեան խորերն իջած է: (*մօտենալով մեղմիկ*) Դեմինն անցնին անշահ սպասաւորները . . . :

ՄՈՒՇ. Ա՜յ, լեղիս բրթաւ: (*վար կ'իյնան ձեռքէն աւել ու թերթ*)

ԱՐԲ. Ծօ՛ դուն ալ գրող կարդացող եղար. մրսի՛ գլխուդ. հիմակ աւելին կոծումն աչքդ կ'հանեմ, մուկիկ, Մուշիկ. լեզուդ շարժելու տեղ՝ աւելդ շարժէ: Նայէ չորս դին սա աղբերն ու աւլուքը . . . շո՞ւտ, շո՛ւտ . . . Նամսար պէյը ննջարանէն իջնելու վրայ է . . . :

ՄՈՒՇ. Է՛յ, մի՛ պոռար, աղբե՛ր, դեռ ժամանակ կայ. վեր վար՝ ամենքն իրենց բանը գործը նայելու տեղ՝ լրագիր կ'կարդան, եւ կ'վիճաբանին . . . Մեր փոքրիկ Հիրիկ տուտոն Զաքարիկ եղբօրը հետ գրաբարի եւ աշխարհաբարի համար կոկորդնին կ'պատռեն եւ կ'փետտուին. մեր Շուշան տիկինն Թագարատ տղուն հետ ծուկ ուտողին եւ կրակոտին վրայ կ'խօսին. մեր Նամսար պէյը Ռուստոմ խորհրդականին հետ Թուաբանական հաշիւ մը լուծելու կ'աշխատի՝ ծանօթ Թիւ ունենալով 16 եւ 61. մեր Սանդուխտ սպասուհին Եփրեմին հետ՝ չգիտեմ որ Թագուհիին գլխուն ճերմակ մազերը կ'ջանան համբել, որ գուշակեն Թէ բաղդաւոր պիտի ըլլի՞ն Թէ ոչ անբաղդ: Հապա Նիրակոս ախոռապանն ալ Փայլակ ձիուն Մասիսի ճամբան կը սորվեցնէ աշխարհացոյցի մը վրայ, զարին ու ջուրը մոռնալով. մէկ խօսքով՝ ամենքը դուրսն են, տանը մարդ չկայ. ես ինչո՞ւ ետ մնամ, ըո՛ւ ալ . . .

ԱՐԲ. Ծօ՛, կատակը մէկ դի, ա՛ռ, ա՛ռ սա աւելդ . . .

ՄՈՒՇ. Դեռ աւելին կայ, կեցի՛ր. մէկ քանի ալ գիր ու Թուղթ մրոտող պարոններ խոհանոցը նստած, որու մէկ կողմը փլած է, Գիւմիւրճի եւ Կոմիւտօնի մօտերը կ'պտըտին եւ մեծ մեծ խօսքերու հետ՝ հաց ու պանիր ջարդելով՝ կը լափեն, մինչեւ որ Նամսար պէյին տեսութիւնը վայելեն:

ԱՐԲ. Ծօ՛, ինչու ճամբայ չտուիր այդ հացկատակներուն:

ՄՈՒՇ. Է՛յ, արեւը չելած եկան դուռը ծեծք առին. Նամսար պէյը կանչեր է. քիչ քիչ տնեցիք բոլորովին դուրս պիտի ելնեն եւ օտարներըներս պիտի մտնեն տիրանան . . . : Հապա վարը հոտած միս մը կ'սպասէ որ զարնեն, խոհարար չկայ, ալիւրը կ'սպասէ որ շաղեն, շաղող չկայ, բանջարեղէնը կ'սպասէ որ սոըկեն, կերակուրները կ'սպասեն որ եփուին, եփող չկայ. սենեակներն ալ կ'սպասեն որ աւլուին, որո՞ւ փոյԹ. ե՞ս եմ մնացեր պաշտօնասէր, սանն է գլորեր խուփն է գտեր: Աբբօ՛ն աղբէր, կարդանք ու գրենք ամեն բան կարգի կ'մտնէ անշուշտ ինքնիրեն (կ'նստի սեղանին առջև):

ԱՐԲ. Նրո՛ղը տանի քեզ, Մուշիկ: Մի՛չ մը խելք ունիմ, այն ալ պիտի Թռցնեմ: Ն'հաւտա՞ս ըսածիդ, Թէ ոչ քիԹէս կ'բռնես: Եկուր խելօք խօսինք, չէ Թէ դրսի՝ այլ ներսի բաներու վրայ: Ո՞ւր մնացին մեր առջի անսակ ան հանդարտութիւնն ու պարզութիւնը. ամեն մէկն իր գործն, իր պարտքը շէնքով շնորհքով կ'կատարէր ատեն մը, ուրախ զուարԹ կ'ուտէր կ'խմէր ու հանգիստ քուն կ'քնանար: Հիմակ կարծես Թէ ամեն օր ճամբորդ ենք. միշտ ոտքի վրայ, միշտ վերերը կ'ելնենք, վարը նայող չունինք. տան մէջ մնող ելնողն յայտնի չէ. ամեն բան աւերածաւակ, ամեն բան աւուկրողին է: Դէշ, վերջը գէշ է. մեր աչքին երեւելիք կայ:

ՄՈՒՇ. Եկուր աղբէր, սա լրագիրներուն մէջ փնտռենք պատճառը. գրուածը սուտ չըլլիր: Նարեկի Լ, Փունջ, Արշալոյս, Մամուլ, մանաւանդ Մասիս,

որ՝ բարձր ըլլալուն, շատ աւելի հեռուն կ'տեսնէ, բացատրէ մեզի՝ թէ ինչո՞ւ համար Կամսար աղան՝ դիւանագէտ դառնալով՝ անծանօթին առաջին ընկեր է, ծանօթին՝ այս է իր գրատան հաշիւներն ու ընտանեկան գործերն երեսի վրայ թողլով. ինչո՞ւ համար Հիրիկն Ռուստոմին հետ շատ կ'ծռմրկի, ինչո՞ւ համար ժամանակին սեղան չ'դրուիր, ինչո՞ւ համար սենեակները չեն աւլուիր . . . ինչո՞ւ համար . . .

ԱՐԲ· Ծօ՛, ա՛նօրէն, թո՛ղ այդ ինչու պինչդ. լրագիրներն ատանկ բաներ գիտե՞ն մի:

ՄՈՒՇ· Հապա ո՞վ գիտէ, պարոն լրաբեր, քանի որ անոնց երեսէն կ'քաշենք, կ'ըսես, այս ամէն շփոթութիւնները. վէրը տուողը դարմանն ալ գիտէ անշուշտ:

ԱՐԲ· Այդ վէրքն ընողը ներսէն է:

ՄՈՒՇ· Ո՞վ է:

ԱՐԲ· Մուշի՛կ, մօտ եկո՛ւր, բա՛ց երկար ականջներդ. կ'ճանչնա՞ս երկար, բարակ, ոսկրուտ, կոնտ ճակատ, սրաքիթ մարդ մը . . .

ՄՈՒՇ· Ի՞նչպէս չէ. Ռուստո՛մը:

ԱՐԲ· Հա՛, ես այդ Ռուստոմը չեմ հաւնիր. սատանայ մարդ մը կ'երեւի. քանի որ մեր տան սեմը կոխեց, ամէն բան վեր վար դարձաւ:

ՄՈՒՇ· Ծօ՛, աղէկ ըսիր. հիմակ խելքս տեղ բերաւ. ո՞ր ծակէն ընկաւ այդ մարդը, թէեւ մանրուկ ալ չէ:

ԱՐԲ· Հա՛, խոշորկեկ է. բայց արջային արխի պէս կ'սմքի, կ'սպրդի, կը սահի ուր որ ուզես, եւ մեզի պէս հաւերուն արիւնը կ'ծծէ, առանց ցաւ տալու . . . :

ՄՈՒՇ· Իրաւ է. ձայն ծիւն չունի տան մէջ . . .

ԱՐԲ· Ինչու որ երբեմն ալ բազմոտանի ճեպուկի պէս կ'գոցուի, կ'գլորի, կը թմրի, եւ կարծես թէ մեռած սառած է: Կ'առնես մատերուդ մէջ կ'խաղաս, անվնաս, անմեղ կենդանի մը կ'երեւի քեզ՝ ճիշտ այն պահուն որ սեւ սեւ խորհուրդներ կ'դառնան իր սեւ մաշկին տակ:

ՄՈՒՇ· Աղբե՛ր, դու ալ շատ մութ կ'խօսիս:

ԱՐԲ· Երկար խօսելու ատեն չէ, չեմ սիրեր ես այդ մարդը. Կամսար պէյին մտքին, քսակին եւ տունին մէջ կ'տիրէ բացարձակ . . . մինակ մատակարարը չէ, խորհրդականը չէ, այլ եւ . . . եւ . . .

ՄՈՒՇ· Ուրիշ ի՞նչ է . . .

ԱՐԲ· Իր ազատիչն է եղեր. մէկ քանի անգամ կեանքը մեծ վտանգէ ազատեր է եղեր . . . գիտե՞ս ի՞նչ ընենք, Մուշիկ:

ՄՈՒՇ· Ի՞նչ:

ԱՐԲ· Մօտէն դիտենք անոր ընթացքը . . . բայց ձայներ կ'լսեմ. դու արկղդ առ եւ գործի սկսէ . . . ես ալ թերթերը շարեմ . . . :

ՏԵՍԻԼ Գ.

ԵՐԱԶԻՆՔ, ԶԱՔԱՐԻԿ, ՀԻՐԻԿ (տարբեր դռներէ ներս կ՚մտնեն)։

ԶԱՔԱՐԻԿ. (ձեռքն ու գրպանը թերթեր) Այս ի՞նչ հիանալի լուր է, Հիրիկ, կարդամ մտիկ ըրէ. «Ամերիկայի Թրոմպ գիւղին, Քէնկհամ փողոցին «4 թիւ տան՝ ծխանին վրայ՝ այս օրերս Թռչուն մը տեսնուեր է, Թութակի «նման, որ գրաբարի՞ պէս լեզու կ՚խօսի. սակայն անթեւ է. պոչին վրայ մէկ «փոքրիկ աչք ունի, գլուխը փորին վրայ է, կտուցը միշտ բաց, եւ կ՚կարծուի «թէ հովով կ՚ապրի կամ օդային ճճիներով: Ուսկոյն գիտունները իմանալով կը «գումարուին եւ նոյն տան մէջ խորհուրդի կ՚նստին, որ այդ նորանշան թըռ- «չունին ծագումն իմանան: Կ՚կարծեն թէ արեւելեան Թռչուն մ՚է, եւ գիտուն «մը կ՚յանդգնի մինչեւ անգամ ըսելու թէ բնիկ Հայաստանէն է, թէ Պոլսի «մինոլըրուէն անցնելով՝ այն կողմերն ընկած է՝ դարման խնդրելու: Ուստի «ընկերութիւն մը կազմելու կ՚ելնեն որ այդ այլափոխեալ Թռչունին թեւ տան՝ «աչքն ու փորը տեղը բերեն եւ բնական Թռչուն ընեն. մին ելեկտրական լոյս «կ՚առաջարկէ, իբրեւ դարման, ուրիշ մը՝ ելեկտրական հեղուկ. ծերունի գի- «տուն մը, որ Տարվինեան է, կ՚ըսէ թէ բուն դարմանը՝ Թռչունին բնիկ հողն «է, ուսկից ելնելով այդ այլափոխութիւնը կրեր է: Ուստի կ՚որոշուի վանդա- «կի մը մէջ դնել այդ Թռչունն եւ Հայաստան ուղարկել»: (կ՚խօսի) Է՜հ, ի՞նչպէս գտար այս գրուածը, Հիրիկ. իրաւի, չըսեմ յիմար, սա Ամերիկացիք շատ յանդուգն ու այլանդակ կենդանիներ են:

ՀԻՐԻԿ. Դու ես այլանդակին մեծը. գլխէդ կ՚հանես այդ սուտ ու մուտ զրոյցներն, որ գիս ու գրաբարը ծաղրես:

ԶԱՔ. Խաչ հանէ երեսդ, գրուած է ահա. առ կարդա՛:

ԵՐԶ. (մեկուսի) Իրաւ՛որ, այս ամենէ համով սուտն է, այնքան լրագրական սուտերու մէջ: Կ՚երեւի թէ այդ Թռչունն՝ իր բնիկ երկրին պէս, արծիւներու թեւին տակ դարման գտնել յուսալով՝ այդ անճանաչ վիճակին հասեր է:

ԶԱՔ. Չե՞ս առներ, Հիրիկ:

ՀԻՐ. Քեզի ըլլի թերթդ, թեթեւ գլուխ. ես այդպիսի շոշորթաբանութիւններ չեմ կարդար. կ՚երեւի թէ քու նկարագիրդ գտեր ես այդ նորանշան թըռչունին մէջ, անթեւ, օդակուլ կենդանին, որու ըղեղը փորին մէջն է, ո՞վ կըրնայ ըլլի, եթէ ոչ Զաքարիկ եղբայրս:

ԶԱՔ. Շնորհակալ եմ, քուրի՛կ, միայն ես ոչ թութակ մ՚եմ լեզուիդ պէս, եւ ոչ գրաբարի խենդ՝ գլխուդ պէս:

ԵՐԱԶ. (մեկուսի) Երբո՜ւն, մէջը հոս կ՚տաքնայ, վայր կաթն ու խանձէն կ՚պայթի . . . :

ՀԻՐ. Ի՞նչ կ՚մրմռաս, ծօ անպիտան:

ՄՈՒՇ. Ըսել ուզեցի, փոքրիկ սիրուն տիրուհիս, որ նախաճաշիկը պիտի պաղի:

ՀԻՐ. Ջայնդ կտրէ՛, պա՛ղ զաւակ:

ՄՈՒՇ. Գոնէ գրաբար խօսիր, որ ես չհասկնամ, տիրուհիս:

ՀԻՐ. Մուշի՛կ . . . ի՜նչ շուտիկ տղայ է այս. երեսիս կ'զարնէ կերպով մը, որ գրաբարի պաշտպան եմ, բայց կ'խօսիմ աշխարհիկ . . . քեզմէ դա՞ս կ'առնէ արդեօք, Զաքարիկ:

ՁԱՔ. Ես առած չունիմ, որ տամ, քուրիկ. երբեմն քեզի նայելով՝ կապիկի պէս՝ օրագիր կ'կարդամ, մինչեւ որ հայրս ու Պ. Ռուստոմ որոշեն սորվելիքս . . . կարդա՛ սա կտորը . . .

ՀԻՐ. Կտոր կտո՛ր ըլլիս . . . . որ կտրեցիր մտմտուքիս թելը. թո՛ղ որ լմնցնեմ իմ սկսած յօդուածս:

ՁԱՔ. (*մեկուսի*) Ի՜նչ բարեկիրթ քոյր ունիմ. քանի գրող կարդացող կ'ըլլի, այնքան լեզուն կ'մաքրուի . . . :

ՀԻՐ (*կ'կարդայ*) . . . «Այսպէս կ'այլափոխի հայութիւնն. անկարելին կա-«րելի կ'լինի, անկերպարան բաները կ'կերպաւորին. Հայաստանի օդը թռչ-«չուններով, ջրերը ձկներով ու նաւերով, արտերը մշակներով, վանօրայքը «ուսանողներով, ամբարները ցորենով, վաճառատունները ոսկիով պիտի լե-«ցուին, երբ Հայոց երեւակայութիւնն սկսի սաւառնիլ քաղաքական աշխար-«հի ոլորտը, խուզարկել դահլիճներու գաղտնիքը, հետազօտել դաշնագիր ու «պայմանագիր, գիտ, հնարք, եւ պահ մ'ամեն հին չէնք, հին նախապա-«շարմունք, հին եկեղեցի, հին գործիք քանդելով, թեւեր առնու եւ նոր գա-«ղափարներով, նոր գիտերով բեռնաւորուած՝ դառնայ հայրենիք, ծաւալի «լուսով, եւ ի վերջէ Արարատայ սարին վրայ կանգնելով՝ վերականգնէ ինչ «որ փլած է, աւերակ է . . . : Այն ժամանակ՝ պիտի սկսի նաեւ Հայոց Ոս-«կեդարը, սիրտերը միայն սէր պիտի զգան, գլուխները միայն հանճարի եւ «ճշմարտութեան փայլակներ պիտի շողշողան, ձեռները դափնիներ պիտի «հիւսեն, իբրեւ ղալարագեղ ծխածան, եւ հանուր խաղաղութեան եւ օրհնու-«թեան փունջեր պիտի սփռին, բերանները գրաբար օրհներգներ պիտի եր-«գեն, եւ ուղղեն առ Էն եւ առ հեղինակութիւնն երկնառաք որ այս եդեմա-«կան օրերը վերադարձուցին . . . .»: (*կ'խօսի յուզուած*) Տե՛ս, Զաքարիկ, տե՛ս, ի՜նչ սքանչելի եւ ցանկալի պատկեր. կ'տեսնեմ հեռուն այդ օրն, կը ծծեմ այդ օդը. կ'թռիմ եթերի մէջ . . . Ա՜հ, ո՜հ, կ'նմանի՞ այս հեռանկարն քու անհամ եւ անթեւ թռչունիդ . . . գոնէ այսպիսի բաներ կարդա՛ որ խելքդ բացուի:

ՁԱՔ. Այո՛, հովով ապրինք . . . է՜հ, քուրիկ, եթէ ոչ մտքով՝ ընթերցուածով իրարմէ կարծածիդ չափ հեռու չենք: Այնպէս կ'թուի որ այդ հեռանկար պատկերդ իմ այլակերպ թռչունիս մեկնաբանութիւնն է: Հայաստանի զգայարանքն խանգարած, բթացած են, գլուխը փորին եւ պոչն աչքին հետ խառնուեր են: Այդ՝ պիտի բուժի կ'ըսէ ամերիկացի գիտունն՝ երբ իր բնական հողն ու խելքը գտնէ. պիտի բժշկուի կ'ըսէ քու լրագիրդ, երբ երեւա-

կայութիւնը բորբոքի համնի օտար աշխարհ, եւ ապա Արարատայ բարձունքը թռի: Այս է քու եւ իմ մէջ եղած տարբերութիւնը:

ՀԻՐ. Ի՞նչ ապուշ ես, ա՛ղբերիկ, մե՞ղք քեզի:

ՁԱՔ. Քիչ մը լեզուդ քեզի քաշէ, քուրիկ, թէ ոչ . . . միթէ քու կարդացած թերթդ պատգամ, իմս շաղզա՞մ է. երկուքն ալ թղթի կտորներ են, եւ թղթի չափ արժէք ունին չունին:

ՀԻՐ. Իմս հայրենաշունչ, քուկդ դիւաշունչ է:

ՄՈՒՇ. (*մեկուսի*) Հա՛, հա՛, գրաբար կ՚խօսի. ասոր վերջը հայհոյանք, ծեծ է. նայինք:

ՁԱՔ. Գրո՛ղը տանի չ—նչն ալ մ—նչն ալ:

ՀԻՐ. (*մեկուսի*) Նայէ՛ սա հաստ գլուխը բան մը կ՚հասկնա՞յ. եկուր այսպիսի անբանի հետ վիճաբանէ: Պա՛րոնիկ, գիտե՞ս միթէ, որ իմ ընկերուհիներս են սովորաբար մեծ մեծ հանճարներ: Ես կ՚կարդամ միշտ Սէկսիյնէ, Ժօրժ Սան, Ժիրարտէն, Սղայէլ . . .

ՁԱՔ. Սաղայէ՛լ, դո՛ւ ես, բերանս մի՛ բանար, հիմակ ամեն բան դուրս կ՚թափեմ, քուրիկ, ետքը կ՚զղջաս։

ՀԻՐ. Բերանդ ետեւդ դառնայ, ա՛նպիտան, ի՞նչ ունիս ըսել. դու մարդ ըլլելիք չունիս. այսօր ալ քուռակ մ՚ես վաղն ալ։

ՁԱՔ. Եթէ ես քուռակ եմ, դու ալ քուռիկ ես։

ՀԻՐ. Հա՛, հէ՛, հի՛ . . . ի՞նչ ապուշ։

ՁԱՔ. Հի՛, հի՛, հէ՛ . . . ի՞նչ նու, նուշ։

ՀԻՐ. Ծօ՛ սո՞ւս, հիմակ սուրս կ՚հանեմ (*դրեհ մը կ՚առնու ձեռքը*)։

ՁԱՔ. Վա՛յ, վա՛յ, փետուրէ սուր. — Որո՞ւ սիրտը պիտի մխես, քուրիկ. միթէ իմ ձեռքերս բանջա՞ր կ՚հաւքեն. արդէն բաւական սուր է լեզուդ եւ երեսդ։ Տատ մի՛ բարկացներ զիս, հիմակ այդ լեզուդ կ՚կտրեմ։

ՀԻՐ. Ի՞նչ ըսիր, մազիս թելին անգամ չես կրնար դպչիլ. քու աչքերդ կը փորեմ հիմա (*կ՚մօտի ձեռքը վերցուցած*). իմ սուրս ու թուրս գրիչս է, գիտե՞ս, խենդուկ պարոնիկ. թէ որ ուզեմ, արարատ աշխարհ կ՚վկայէ, քեզ խայտառակ կ՚ընեմ. բայց ի՞նչ կ՚հասկնաս դու գրչիս զօրութենէն։ Եթէ կոյրը լուսէն եւ խուլը դաշնակէն բան մը կ՚իմանայ, դու ալ կրնաս իմանալ իմ բարձր խելքս եւ ճանչել գրչիս յարգը։ Նայէ՛ սա լակոտին, մարդ եղեր է եւ ինձի հետ վիճաբանիլ կ՚ուզէ. կորիր գնա՛, դու գնա՛ եւ մառանը խառնէ՛, շաքար գողցիր ու կե՛ր . . . գնա՛ . . . ։

ՁԱՔ. Է՛յ չափը կ՚անցընես . . . հիմակ մազերդ կ՚փետտեմ . . . ։

ՀԻՐ. Բերանդ չորնայ . . . ։

ՁԱՔ. Ըսե՞մ, ըսե՞մ . . ։ դու ալ գիշերներն . . .

ՄՈՒՇ. (*առ Երբուն*) Աղբե՛ր, գործը գէշնալու վրայ է. առջեւն առնենք. (*Հիրեկին*) Նազի՛կ տիրուհիս, վարը խահվէն ու կաթը սառեցան. հրամեցէք, սեղանը պատրաստ է . . .

ՀԻՐ. (*առ Մուշեկ*) Գետինն անցնի կաթն ալ, կաթնաբերն ալ . . . կորի՛ր . . . ա՛նօրէն։

ԶԱՔ. Ըսի՛մ, թուրիկ, գիշերները դու չե՞ս գողնար . . . պա՛ . . . պա՛ . . .

ՀԻՐ. Պա՛ . . . պանմէ՛, ծօ՛։

ԶԱՔ. Պա՛ . . . պա՛ . . . ձեռքս պաչ ըրէ որ չըսեմ . . .

ՀԻՐ. Պա՛չ ընեմ . . . մէյէր մեռնիմ . . .

ԶԱՔ. Լաւ ուրեմն . . . պա . . . պա . . . ըսի, կ՚ըսեմ կոր . . . (*ձեռքը կ՚երկնցընէ*) դու չե՞ս գիշերները պաչիկ գողցողը . . .։

ՀԻՐ. Կայծակներու զաս, ա՛նամօթ . . .։

ԶԱՔ. . . . մամային երեսներէն, որ *քեսթրը* գողնաս եւ *ֆօլտէրէն* . . . արդեօք սուր գրիչդ *ֆօլտէրէն* մէջ կ՚թաթխես եւ *քեսթրային* մելա՞նդ կ՚չորցընես . . . ըսէ՛ . . . հասկցո՛ւր ինծի . . .։

ՀԻՐ. Երեսիդ ջուրն ուտես, թեթեւսօլիկ։

ԶԱՔ. Պատասխա՛ն տուր. նախատինքը պատասխան չէ։

ՀԻՐ. Գնա՛ առջեւէս, շշորդ։

ԶԱՔ. Որո՞ւ շշորդ կ՚ըսես, հի՛մա (*ձեռքը կ՚երկնցընէ*) բերանդ կ՚պատռեմ . . .։

ՀԻՐ. (*կ՚պոռայ*) Է՛, է՛յ, հասէ՛ք . . . պիտի խղդէ զիս . . . մա՛մա, պա՛պա . . .

ԶԱՔ. Նայէ՛, նայէ ի՛նչ վլվլուկ կ՚հանէ (*ետ ետ կ՚քաշուի*) լական տաւտուն։ Ես քեզի ետքէն կ՚հասկցնեմ։

ՀԻՐ. (*Հայլիին առջեւ մազերը կ՚շտկէ*) Կեցի՛ր, դու անպիտան, պապային ըսեմ պիտի. այն *Հօրէնք* կ՚գայ (*դուրս կ՚ելնէ լալով, ետեւէն կ՚վազէ Զաքաբէկ սպառնալի ձեռօք. դուրսն աղաղակներ*)։

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԲՈՒՆ Ւ ՄՈՒՇԻԿ։

ՄՈՒՇ. Այս ի՞նչ բարեկենդան է. եկուր մենք ալ պարենք, Արբուն. (*Արբունին մէջքը կ՚բռնէ*) օ՜ն, ընդ առաջ . . . մէկ ետեւ . . . մէկ առաջ,

ԱՐԲ. Թո՛ղ, ծօ՛, յիմա՞ր ես, ո՞վ պիտի գրէ Կամսար պէյին նամակներն, աշխարհիս ամեն դիւաններու հետ թղթակցութիւն ունի . . .։

ՄՈՒՇ. Ես ալ աւելովս կ՚պարեմ. (*կ՚պարէ*)։

ԱՐԲ. Տօ՛, մարդ կ՚գայ. Պ. Բազարեան է. իրաւ, այս մա՛րդ է . . . մինակ ասոր գլուխը տեղն է։

ՄՈՒՇ. Տրջան մ՚ալ ընեմ, լա՛, լա՛, լա՛ . . .

ՏԵՍԻԼ Ե.

ՍՈՒՍԱՆՆԱ Լ ԲԱԳԱՐԱՏ:

ԲԱԳԱՐԱՏ. (*ծանր ծանր և տխուր ներս կ'մտնէ՝ այն միջոցին որ Մուշեկ չփոխած անկիւն մը կ'քաշուի՝ աւելը վեր բռնած*) Այս ի՞նչ խայտառակութիւն, ի՞նչ վայնասուն է . . .

ՄՈՒՇ. Տէր Բագարատ, հազա՛ր ապրիս. ձեզ տեսնելով՝ ուրախութենէս սկսայ ցատկրտել. ձեզմէ զատ մարդ չկայ տունը. թէ որ դուն ալ չըլլէիր, շատոնց կծիկը դրած էի . . .

ԲԱԳ. (*քմծիծաղով*) Ամսականդ ա՛ռ, հանգիստնստի՛ր կամ օրագիր կարդա՛. ամենքնիդ ալ դիւանագէտ եղեր էք:

ՄՈՒՇ. Ես դիւանակուտ չեմ. ես *հարամ փարայ* չեմ սիրեր:

ԲԱԳ. Քիչ մ'առաջ ո՞վ կ'լար կ'ողբար այս տեղ, Աբրո՛ն:

ԱՐԲ. Զաքարիկ եւ Հիրիկ անուշ անուշ կ'խօսէին եւ կ'կարդային, երբ իրենց մէջ անթեւ թռչնի եւ թութակի կռիւ մ'ելաւ, այնպէս որ սկսան զիրար փետտել . . .

ԲԱԳ. (*տրտում*) Ի՛նչ անշնորհ քոյր եւ եղբայր: Այսպէս իրարու հետ՝ ամեն օր, շուն ու կատու են. մին իմաստակ աղջիկ, թէեւ դեռ մելան կ'լզէ, միւսն անտաշ եւ գուռզ չարաճճիկ: Քոյրս գրագէտի հովեր կ'առնէ, եղբայրս *Վէվէյի*: Իրաւի՝ սա լրագիրներն տան մէջ պատիժներ դարձած են, եւ միշտ կռուի եւ գժտութեան պատճառ: Քրոջս ու եղբօրս այս վէճն որ՝ եթէ վրայ չհասնէի, ծեծով պիտի վերջանար, ամեն օր կ'կրկնուի, քանի որ օրագիրներն ու լրագիրները կ'խառնուին: Տարագիրներն ալ ուրիշ բան չեն ըներ: Մին խնդրոյն պոչէն կ'բռնէ, միւսը՝ գլխէն, եւ կ'սկսին քաշել, այնպէս որ, բուն խնդիրն, թէեւ երբեմն խնդիր ըսուելու տեղ չունի, մէջ կ'խաղայ, եւ կ'մնայ ոսկորն, զոր կ'կրծեն ու կ'կրծեն մրմռալով եւ իրարու ակռայ կ'ցուցնեն: Ոմանք իրենց մօրուքն, այլք իրենց գլուխը վրայ կ'տան. իսկ ընթերցողներն մօրուք փետտողներուն կողմն են, վասն զի աւելի խնդալ կը սիրեն քան թէ բան սորվիլ: Այս՝ հրապարակի վրայ կրնայ տարուիլ, բայց երեւակայէ անգամ մը երբ բանակռուին ընտանիքի մէջ կ'մտնէ: Ո՛չ հանգիստ կայ, ոչ խաղաղութիւն. կարծեաց տարբերութեան հետ, անընտրող մտաց մէջ, կ'սկսին հակառակութիւն, դառնութիւն, սիրտխաղ: Գոնէ տան գլուխը հաստատ սկզբունք եւ բնաւորութիւն ունենար. է՛հ, չէ՛. ամեն մէկն իր սիրական կամ պատահական գաղափարն ունի, որ այլ եւ այլ օրագիրներու արձագանքն է: Մին հիւսիս, միւսը հարաւ, այս արեւմուտք կ'նաւարկէ խելքին առագաստը բացած՝ եւ՝ փոթորկի հանդիպելով՝ ի զուր Արեւելը կ'փընտռէ: Նկ՛այիս որ այս լրագիրը Գերմանիոյ շեփորը կ'փչէ, այն՝ Անգլիոյ սրինգը, միւսը Ֆրանսայի թմբուկը կ'զարնէ, ուրիշ մը Ռուսիոյ *դաւուլը*,

իսկ Հայաստանի հովուական տիկը փչող չկայ: Այսպէս հրապարակի բաբելոնը տունը կ'փոխադրուի, մանաւանդ երբ Թէլ մը զայն բաժնելով տիրապետելու կ'դաւադրէ:

ԱՐԲ. (ծեկուսի) Ի՞նչպէս հասկցեր եմ, հա՛, Մուշիկ:

ԲԱԳ. Նոյն միջոցին մի՛ հարցներ թէ ի՛նչպէս կ'կատարուին տնային գործեր. հայրն ի՞նչ, մայրն ի՞նչ կ'գործեն, ոչ ոք գիտէ . . . խորհրդաւոր ամպի մը մէջ են, վարի ողբն ու կոծը չեն լսեր: Ծիծկեր մանկիկը կ'ողբայ, կաթ կ'ուզէ, տուող չկայ. տղան բոպիկ՝ հովին ու անձրեւին տակ շրջելով կը սրսփայ, հագցնող չկայ. տան վարժապետն ու երէցը կ'երթան կ'գան ստակ կ'ուզեն, վճարող չկայ. արտ եւ ագարակ անմշակ կ'մնան, հերկող չկայ. աղտեղութիւնն ու աղբերը կ'շրջապատեն մեզ, մաքրող չկայ:

ՄՈՒՇ. (ծեկուսի) Այս ալ մեզի քար է, հէ՛յ:

ԲԱԳ. Ահա այս է համառօտ՝ մեր տան նկարագիրն: Լրագիր ու քաղաքական խնդիրներ՝ այս օրիս բերին մեզի: Սակայն այս շփոթութեան մէջ՝ մին կ'երազէ նոր աշխարհ, ուրիշ մը կ'երգէ նոր ծիածան, այս Արարատայ սարին վրայ Հայոց տապանը կ'փնտռէ, այն Արտաւազդայ շղթաներն պընդացնող կռանններն. ուրիշ մը Եփրատ ու Տիգրիսը Միջերկրականի եւ Սեւ ծովու հետ կ'միացնէ, իսկ հայրս Կամսար աղան կամ Պեյըրի՝ ի՞նչ փառասիրութիւն ունի դեռ լաւ չգիտեմ: Աւասիկ նորէն սեղանին վրայ շարուած են երկպառակութեան խնձորներն: Տուն չէ այս, այլ լրագրարան, վիճարան: Որքան գլուխ՝ այնքան խորհուրդ: Ձեռքէս գայ՝ բոլորն ալ կ'այրեմ: Վա՜յ այն ընտանիքին որու առաջնորդներն այս տեսակ օրագիրներ են: Ուրիշ տեղ օրագիրները կ'ներշնչուին ընտանեաց նիւթական եւ մտային պիտոյքէն, կեանքէն, այս տեղ սնափառութենէ, շահամոլութենէ, որոց հետեւանքն է ճշմարտութիւնը ծածկել, անկանոն կիրք, սովորութիւն՝ զգուել եւ մարդիկը խաբել: Օրինակը մեր տունն է. Կամսար հայրս նշաւակ եղած է լրագիրներու ներբողին: Անշուշտ իր խորհրդական Ռուստոմն է անոնց գրչին թելերը շարժողը, որ իր նպատակը պիտի ունենայ: Խե՜ղճ հայրս, վաճառական էր, քիչ շատ արթուն, հողատէր էր, բաւական ճարպիկ, հիմա դարձած է քաղաքագէտ, բայց այս իր գործը չէ: Ի՞նչ միտք ունի՝ պիտի ջանամ հասկընալ, իր աչքը բանալ եւ մեր տնական վիճակը նկարագրել: Ահա՛ կ'գայ:

ՏԵՍԻԼ Ջ.

ՍԹԱՋԻՆՔ ԵՒ ԿԱՄՍԱՐ:

ԿԱՄՍԱՐ. Բագրա՛տ, դուն հո՞ս. կ'երեւի թէ դու ալ սկսար օրագիրները խառնել . . . նոր բան մը կա՞յ, իմ վրայ ակնարկ մը կա՞յ . . . է՛յ, չե՞ս խօսիր. երեսդ ինչո՞ւ կախեր ես:

ԲԱԳ. Հա՛յր իմ, դժգոհ եմ . . . համարձակ խօսի՞մ, ես այդ բռնած ճամբադ չեմ հաւնիր:

ԿԱՄ. Չե՛ս հաւնիր. ի՛նչ դժուարահաւան պատանի ես, զիտեմ. սակայն ամէն մարդ, օտարներն անգամ, կ'հաւնին իմ մեծ զաղափարս, լրագիրները կ'փառաւորեն զայն, նոյն իսկ Ռուստոմ, որ պարապ մարդ չէ, երկինք կը հանէ . . .

ԲԱԳ. Որպէս զի վերջը քեզ դժոխքը զլորէ . . .

ԿԱՄ. Ի՞նչ ըսել կ'ուզես, Պարո՛ն Բագարատ:

ԲԱԳ. Սա ըսել կ'ուզեմ, որ Ռուստոմ, բարեկամի դէմքով, օձ մ'է, որ բոլոր կեանքդ պիտի թունաւորէ:

ԿԱՄ. Խա՛չ հանէ երեսդ. յիմա՞ր ես, տղա՛յ: Լռութիւն, չլսէ այդ խօսքդ, շատ պիտի վիրաւորուի: Ռուստոմ պատուաւոր մարդ է. իմ խորհրդականս եւ մատակարարս է, մեր շահուն եւ պատւոյն ջերմ պաշտպանն է: Իր խորհուրդները մեծ, լուսամիտ մարդու խորհուրդներ են, որոցմէ կ'օգտիմ:

ԲԱԳ. Աչքդ բա՛ց, հա՛յր, աչքդ բա՛ց, ես այսչափ կ'ըսեմ: Քեզ կ'խաբեն, եւ մոխրի վրայ պիտի նստեցնեն:

ԿԱՄ. Իմ աչքերս բաւական բաց են, եւ քու աչքերէդ աւելի հեռու կը տեսնեն՝ Կ'տեսնեն Կամսարականաց ազգատոհմն՝ որ՝ աշխարհի եւ Պատմութեան մէջ՝ նոր լոյսով եւ փառքով պիտի փայլին, եթէ Ռուստոմի ծրագիրն ի գործ դնեմ:

ԲԱԳ. Դարձեա՛լ ծրագիր. արդէն այդ նոր նոր ծրագիրները Ազգին տունը պիտի քանդեն՝ առանց շինելու: Աչքերդ սուր են, հա՛յր, բայց չեն տեսներ, որ քանի Ռուստոմին հետ այդչափ սերտիւ կ'տեսնուիս, գործերդ ծուռ կ'երթան, հողերդ կ'ծախուին, զանձդ կ'կողոպտուի, տունդ աւերակ կ'դառնայ, որու վրայ օրագիրները բուերու պէս պիտի երգեն: Զաքարիկ տղադ անուս եւ անկիրթ կ'մնայ, աղջիկդ օրէ օր վրայ կ'դնէ, իմաստակութեան կողմէ . . . ո՞ր մէկն ըսեմ. չէ թէ օրագիրներն, որ Ռուստոմի վարձկան թըմբուկներն են, այլ միթէ խիղճդ կ'վկայէ՞ թէ քու հայրական պարտքերդ կ'կատարես: Համեստ եւ պատուակիր վաճառական էիր, հոգասէր եւ գթած հայր, խոհեմ եւ բանիբուն հայրենասէր, իսկ հիմա փառամոլ, բաղդախնդիր մարդ մը դարձեր ես, եւ այնպէս կարծես թէ Կամսարականաց զերդաստանը փառաց պսակը պիտի ընդունի. եւ որո՞ւ ձեռօք, անձի մը, զրեթէ օտարի մը ձեռօք որ առջեւդ որոգայթ կ'լարէ, անոր վրայ վարդեր սփռելով:

ԿԱՄ. Ո՛րչափ յոռետես ես. զէշ օրդ է այսօր: Կ'երեւի թէ երէկ զիշեր տխուր երազներ տեսար: Մի՛ վախնար, Բագարատ, չհատնիր զանձս, եւ մեռնելէս ետք՝ բաժինդ կ'ստանաս . . .

ԲԱԳ. Այդպէս ծու՞ռ կ'մեկնես ըսածս, հա՛յր: Ո՛րքան անիրաւ ես: Ես ունեցածիդ աչք չունիմ բնաւ. միայն կ'խնդրեմ որ՝ իբրեւ տան զլուխ՝ կարգի կանոնի դնես տունդ . . .

ԿԱՄ. Է՛հ, առաջ պէտք է որ Ռուստոմի ծրագիրը գործադրեմ, վերջն՝ ամէն բան կարգի կ'մտնէ:

ԲԱԳ. Ի՞նչ ծրագիր է այդ:

ԿԱՄ. Այդ զաղտնիք է: Ու այժմ երկու խօսք միայն կրնամ ըսել, որ

հանդարտի կասկածոտ միտքդ։ Տրազրին նպատակն է՝ գտնել մեքենայ մը՝ որ Լէման լիճը Արշարունեաց գաւառը, Կամսարականնեաց այս բնիկ հողը՝ փոխադրէ, որպէս զի այդ հողն արգասաւորի ու ծաղկի, եւ ես՝ իբրեւ հին ժառանգորդ այդ երկրին, երթամ ընտանեօք բնակիմ . . .

ՄՈՒՇ. (մեկուսի) Զըսի՞ որ մեր Կամսար աղային խելքին եկեր է . . . .

ԿԱՄ. Վսեմ չե՞ս գտներ այս գաղափարս, Բագարատ, եւ միթէ աւոր մօտ գծում եւ աննշան բաներ չե՞ն երեւիր տնային մանր մունր գործեր եւ պատահական կռիւներ։ Երբ միանգամ Լէման հայ լիճ դառնայ, մեր երջանկութեան դուռը կ'բացուի։ Ուստի սիրտդ բիչ մը լայն բռնէ, եւ ամեն բանի վրայ մի՛ մրմռար։ Գիտեմ, բիչ մը մելամաղձիկ ես. եթէ հոս կ'ձանձրանաս, քեզ Եւրոպա ղրկեմ.

ԲԱԳ. Գլխէդ ճամբել կ'ուզես զիս, հա՛յր։ Բայց ե՞ս, թէ ոչ դու երազ կը տեսնես։ Պիտի մնամ որ տեսնեմ այդ հրաշալի մեքենան. ո՞վ պիտի գտնէ զայն . . .

ԿԱՄ. Ուստո՛մ . . . բիչ մը ցած խօսէ, չլսեն բովիններդ . . .

ԲԱԳ. Արդէն շատերը կ'խօսին այդ այլանդակ խորհրդի վրայ . . . մեր Արշակ Բ-ին մեքենան, այսինքն սուրը չլինի այն, որ Կամսարականաց ցեղին հետ՝ իրենց ժառանգական հողն ալ ջնջեց զրաւեց։ Այդ մեքենան շատ սուղի պիտի նստի քեզ, հա՛յր, աչքդ բա՛ց. ծուղակ մը կ'նշմարեմ անոր մէջ։

ԿԱՄ. (մեկուսի) Ինչ պնդագլուխ մարդ։ (առ Բագարատ) Ուստոմ անկեղծութեան եւ արդարութեան տիպար մ'է . . . եւ քեզի բան մ'ըսե՞մ, Բագարատ, հաստատ միտքս դրած եմ նպատակիս հասնիլ կամ մեռնիլ։ Ետ չեմ դառնար. շիտակ պիտի քալեմ եւ առջեւս ելած քարը պիտի ոտքիս տակը ճզմեմ. զգոյշ եղի՛ր . . .

ԲԱԳ. Տա՛տ աղէկ. ես իմ պարտքս կատարեցի. զիտեմ ես աչքիդ փուշ մ'եմ . . . ուստի կ'քաշուիմ։ (կ'մեկնի)

ՏԵՍԻԼ Է.

ԿԱՄՍԱՐ, ԱՐԲՈՒՆ և ՄՈՒՇԻԿ։

ԿԱՄ. Հեռացիր գնա՛, որո՞ւ փոյթ. ետքէն պիտի մտենաս քովս. ապաշնո՛րհ որդի։ (առ Արբուն և Մուշիկ) Դուք ալ, ա՛նպիտաններ, ինչո՞ւ կեցեր էք. լրտեսութի՞ւն կ'ընէք. չըլլի որ մեքենային վրայ խօսք մ'ըսէք դուրսը...

ՄՈՒՇ. Տէ՛ր իմ, ես կ'աւլէի, երբ կ'խօսէիր, չլսեցի, վկայ՝ այս աւելս։

ԿԱՄ. Կորի՛ր, աւլելու պէտք չկայ . . .

ՄՈՒՇ. Ո՛հ, ի՛նչ կեֆ. Կամսարականաց երկիրն աւել չկա՞յ, տէր իմ։

ԿԱՄ. Լեզո՛ւդ բրթի . . . հոս աւլելու պէտք չկայ, ըսի, ճամբորդ ենք։

ՄՈՒՇ. Հա՛, մոռցայ, տունէն կ'կրուինք, տէր իմ. շատ աղէկ կ'ընէք, հոս նստելու տեղ չկայ . . . լրագիրներն ու լրագրապետները բռներ են ամեն կողմը. (ցատկռտելով) ա՛լ աւել չկայ . . .

ԿԱՄ. Հապա դուն ի՞նչ ըրիր, Արբո՛ւն. նամակները պատրա՛ստ են. բեր որ ստորագրեմ:

ԱՐԲ. Ձեր հրահանգին կ՚սպասեմ, որ գրեմ:

ԿԱՄ. Հրահանգը գնա Ռուստոմէն ա՛ռ, եւ շուտ շուտ գրէ:

ԱՐԲ. Շա՛տ լաւ: (*կ՚պատրաստուի դուրս ելնել*)

ՄՈՒՇ. (*առ Արբուն*) Երթամ աւելիս կոթը կտրեմ, դուն ալ գրչիդ բիթը կտրէ: (*կ՚ելնեն*)

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԿԱՄՍԱՐ:

ԿԱՄ. Ո՛ւֆ, գլխացաւը գնաց (*լրագիրները՝ սեղանին վրայէն՝ կ՚առնէ կը բանայ ու կ՚դոցէ*)։ Է՛հ, ճշմարիտը, աղուոր առուտուր է լրագրութիւն։ Ոսկի կ՚առնեն, գովեստ, հով, մուխ կ՚տան մեզի. Ո՞վ անունս կ՚յիշէր լրագրի մէջ՝ երբ վաճառական էի. հիմակ որ քաղաքական ասպարէզը մտայ՝ ինչ որ ընեմ կ՚գրեն։ Հազար ապսպրէ, պարապ է։ Կամսար պէյն այս ըրաւ, այն ըրաւ, Կամսար պէյն հաւկիթ կերաւ, Կամսար պէյն բիթը խնչեց, Կամսար պէյն հող կլլեց, Կամսար պէյն փորը ցաւելուն՝ չգիտեմ ո՛ւր գնաց . . . որ օդ փոխէ . . . Է՛հ, ա՛լ քաշելիքս չմնաց. ինչպէս շարժիմ չգիտեմ։ Կ՚վախնամ մինչեւ անգամ կնկանս երեսը նայելու . . . համբան ալ տեսակ մը գերութիւն է . . . մեծ մարդ ըլլելն ալ տանջանք է . . . ինչ ընենք . . . (*ժամացոյցը կ՚նայի*) Բայց Ռուստոմ ուշացաւ, առտու կանուխ գնաց. կարե՛որ լուր մ՚ունէր ինծ հաղորդելու . . . երթամ . . . անշուշտ լրագրապետներն ալ վարը կ՚սպասեն որ շարժումներս նկարագրեն . . . ես ալ փայտի պէս, այսպէս պիտի քալեմ, եւ անոնց երեսը չպիտի նայիմ . . . բայց վարը ի՞նչ աղմուկ կայ . . .

ՏԵՍԻԼ Թ.

ԿԱՄՍԱՐ Ւ ՄՈՒՇԻԿ:

ՄՈՒՇ. Տէ՛ր իմ, Զաքարիկ եւ Հիրիկ իրարու աչք կ՚հանեն:

ԿԱՄ. Ինչո՞ւ . . . ինչո՞ւ . . .

ՄՈՒՇ. Հապէշիստանի Թագաւորին աղջկան աչքերուն համար . . .

ԿԱՄ. Ի՞նչ ըսել կ՚ուզես, ա՛նպիտան:

ՄՈՒՇ. Հա՛, Հիրիկ կ՚ըսէ թէ՝ Հապէշիստանի Թագաւորին աղջիկը սեւ աչքեր ունի. Զաքարիկ կ՚պնդէ թէ կարմիր են . . .

ԿԱՄ. Ծօ՛ խե՞նդ ես. կարմիր աչքեր կա՞ն։ (*մեկուսի*) Ի՞նչ շուտիկ տղայ է Զաքարիկ։

ՄՈՒՇ. (*մեկուսի*) Կարծեմ մեծ խնդիր է այս, որմէ պիտի լուծուի մեր բաղդը։

ԿԱՄ. Ծօ՛ ի՞նչ կ'մրմռաս։ Գնա ըսէ՛ որ կանաչ ձի եւ հաշտեցուր։

ՄՈՒՇ. Երթամ, տէր իմ. բայց ուրիշ բան մ'ալ ըսեմ . . . խոհանոցին կից սենեակն ալ՝ գրագէտներ նստած՝ օղի պարպելով՝ կ'վիճաբանին թէ Ափրիկէի եւ Ամերիկայի կապիկներն ի՞նչ ցեղական տարբերութիւն ունին, եւ թէ կարելի չէ՞ արդեօք՝ Հայաստանի մէջ, ուր արջերը շատնալու սկսած են, այդ կենդանին փոխադրել,

ԿԱՄ. (*մեկուսի*) Ցիմարնե՛րն, ինչո՞ւ հեռուները կ'փնտռեն այդ կենդանին։ (*առ Մուշիկ*) Գնա անոնց ըսէ՛ որ կամաց խօսին, եւ այդ հոգն ինծի թողուն։

ՄՈՒՇ. Դեռ ըսելիքս չհատաւ, տէր իմ։

ԿԱՄ. Սիրտդ փորդ հատնի, անզգա՛մ. գնա՛ . . . գործ ունիմ . . .

ՄՈՒՇ. Շա՛տ աղէկ . . . բայց Ռուստոմին կողմէ . . . (*մեկնիլ կ'ձեւացնէ*)

ԿԱՄ. Կեցի՛ր, խօսէ՛, ի՞նչ կայ Ռուստոմին կողմէ . . . (*մեկուսի*) կարծեմ, ուրախալի լո՞ւրն է . . . (*առ Մուշիկ, որ միշտ երթալու վրայ է*) Ծօ՛, կեցի՛ր . . .

ՄՈՒՇ. Տէ՛ր իմ, սիրտս փորս կ'հատնի, պիտի երթամ, չեմ կրնար կենալ . . .

ԿԱՄ. Կնայիս սա անզգամին . . . խօսէ՛ եւ ապա գնա՛ . . .

ՄՈՒՇ. Չեմ կրնար, անէծքդ բռնեց . . . (*դէպ ի դուռը կ'երթայ*)

ԿԱՄ. (*ետեւէն վազելով*) Խօսէ՛, հիմակ կ'խղդեմ քեզի. ի՞նչ կայ, Ռուստոմ ըսիր . . .

ՄՈՒՇ. Ռուստոմ, այո՛, Ռուստոմ . . . . բայց փորս կ'ցաւի . . . . չեմ կրնար . . . ա՛հ, ա՛հ . . .

ԿԱՄ. Ահ ու մահի ղոլին գաս, անօրէն, խօսէ՛, եւ ինչ որ պիտի ընես նէ ըրէ՛ . . . Երեսիդ ջուրն ուտես։

ՄՈՒՇ. Երեսդ վարդի ջուր, տէր իմ. պէտք է գիտնաս որ պիտի չխօսիմ, այլ այս տոմսակը պիտի տամ քեզի Ռուստոմին կողմէ . . .

ԿԱՄ. (*տոմսակը կ'յափշտակէ և կ'կարդայ արտորնօք*)

«Մեծանուն կոմսը,

«Ժամէ մը համբերէ գտնուելու Թրանսպորտային գերազանութեան, ուր ցեղէ կ'ըսպասէ և Մոլորալէ ընտանիք։ «ՌՈՒՍՏՈՄ»։

(*կ'խօսի*) Ո՛հ, գերազնիւ շարեկամ, հետզհետէ կ'կատարուին փափաքներս, քու շնորհիւդ. է՛հ, ես ալ բան մը պիտի լինիմ քաղաքական աշխարհի մէջ, մանաւանդ՝ երբ հրաշալի մեքենան ալ քիչ ժամանակէն հատնի . . . : Լրագիրները վերստին պիտի գոռան, դափնիներ պիտի բոլորեն գլուխս . . .

ՄՈՒՇ. (*մեկուսի*) Գլու՛խ, այս մարդը չունի որ . . . իրաւ որ չունի . . .

ԿԱՄ. Շո՛ւտ, Մուշիկ, պատրաստէ՛ համազգեստս. դի՛ր վրան միւսնշաններս, քաշել տուր սեւ ձիս, ետեւէն ալ կառքս թո՛ղ գայ . . . շո՛ւտ, շո՛ւտ. կենացս ամենէ գեղեցիկ մէկ վայրկեանն է այս. միայն նախանձոտները չեն քաշեր . . . շո՛ւտ, ինչո՞ւ կեցեր ես . . . ուրիշ ըսելիք ունի՞ս . . .

ՄՈՒՇ. Հա՛, տէր իմ, թէ որ հրաման տաս:

ԿԱՄ· Բաքի՞ է. խօսէ՛ . . . շո՛ւտ . . . ատեն չկայ․ պէտք է որ երթամ ուր կ'կոչէ զիս պալատին, դեսպանատունը . . .

ՄՈՒՇ· Լա՛ւ. բայց տանը կնիկն ալ կ'հարցնէ թէ այսօր ի՞նչ եփելու է:

ԿԱՄ· Բո՛ւհ, ի՞նչ զահիկլ խնդիր: Ես կուշտ եմ, թող ուզածն եփէ ուտէ:

ՄՈՒՇ· Տէ՛ր իմ, մի՛ բարկանար. խոհարարն ալ ըսաւ ականջիս, որ ո՛չ ածուխ կայ, ո՛չ արդար եղ, ո՛չ բրինձ, ոչ . . .

ԿԱՄ· Ո՛չ ըլլիս, անհրես . . .

ՄՈՒՇ· Ո՛չ պանիր, ո՛չ հաւկիթ . . . ոչ . . .

ԿԱՄ· Դօ՛ տե՞ղն է հիմակ. կամաց խօսէ՛ . . . թող խոհարարն ամեն բան ճարէ . . . շուտ գնա՛, հրամանս կատարէ . . . ծի՛ս, ծի՛ս . . .

ՄՈՒՇ· Ո՛չ շաքար . . . ոչ աղ . . . եղածն առեր տարեր ին մուկերն ու կատուները՝ սպասաւորներուն հետ խօսքը մէկ ընելով, ուստի յանցաւորն ո՞վ է չգիտցուիր . . .

ԿԱՄ· Դօ՛ պիտի կտրե՞ս ծայնդ. (*ժամացոյցը կ'նայի*) ժամը կ'անցնի. ուշ պիտի մնամ, այս ի՞նչ Մուշիկ է, շուտիկ է սպասաւորս . . . է՛հ, է՛հ, հէ՛, հէ՛ . . . պիտի ճաթիմ . . .

ՄՈՒՇ· Ի՛ն պէտրականը մոռցայ, տէր, այդ ալ ըսեմ ու երթամ . . . . խոհանոցին փուռն ալ փլեր է, այնպէս որ կերակուր եփելու տեղ չկայ . . .

ԿԱՄ· Աւելի՛ աղէկ . . . (*մեկուսի*) ի՞նչ ստորին, անբան մարդիկ են ասոնք, Աստուա՛ծ. հողէն վեր չեն ելներ, մինակ իրենց փորին հոգն ունին: (*առ Մուշիկ*) Դօ՛ այդպիսի խօսքեր ականջս կ'աղտոտեն: Թող խոհարարը բովլի սենեակն եփէ ինչ որ գտնէ . . . արդէն ճամբորդ ենք . . .

ՄՈՒՇ· Ո՞ւր կ'երթանք կոր, տէր:

ԿԱՄ· Դօ՛ չգիտե՞ս, Կամսարականաց աշխարհը, Երասխածոր, երբ հոն փոխադրուի Լէման . . .

ՄՈՒՇ· Լէման ի՞նչ կենդանի է. աղէկ միտքս ընկաւ. տունը լեմոն ալ չկայ . . .

ԿԱՄ· Դօ՛ կոփի՛ր, ապո՛ւշ, դու ի՞նչ կ'իմանաս աշխարհագրութենէ . . . գնա՛ մատակարարին ըսէ որ պէտք եղածը ճարէ . . .

ՄՈՒՇ· Ռուստոմի՞ն. է՛հ, ժամանակ չունի. եղածովն անցուցէք կ'ըսէ, տէր իմ, եւ տանը սով կ'ծգէ: Արդեօք Լէման երթալու համար փորերը պարա՞պ պէտք է ըլլին:

ԿԱՄ· Հայա՛ . . . ծօ՛ աւելի թեթեւ կ'քալես. Աւետեաց երկիրը տեսնել ուզողը՝ պէտք է որ մանանայ ուտէ:

ՄՈՒՇ· Մանանայ ալ չկայ, տէր իմ. թէեւ անապատ դարձած է տունը:

ԿԱՄ· (*մեկուսի*) Նայէ՛ սա անզգամն ի՞նչպէս կ'քաշքշէ խօսքը որ ուշանամ . . . անշուշտ Բազարատին դրդմամբն է: Պիտի վռնտեմ այս թշուառականը: (*առ Մուշիկ*) Դօ՛ դեռ հո՞ս ես . . .

ՄՈՒՇ· Խօսք մ'ալ, տէր իմ, եւ ահա կ'երթամ . . .

ԿԱՄ· Է՛յ, է՛յ . . . հի՛մակ . . . հա՛ . . .

ՄՈՒՇ· (*մեկնելով*) Դիծմայրը բիչ մը պտուղ կ'ուզէ . . .

ԿԱՄ· Թող հոգը ուտէ . . . տե՛ս, տե՛ս . . . շուտ բեր զգեստներս . . .

ՏԵՍԱՐԻԼ Ժ.

ԿԱՄՍԱՐ Ու ԿԱԴՄՈՍ։

ԿԱԴՄՈՍ. Բարեւ, իմ հին ընկեր, Կամսար աղաս։

ԿԱՄ. (*մեկուսի*) Ո՜ւֆ, այս գլխացաւն ալ ո՞ւսկից ելաւ։ (*առ Կադմոս*) Բա-րե՛ւ . . . ի՞նչ կայ։

ԿԱԴ. Առողջութիւն։

ԿԱՄ. Ես առողջ չեմ։

ԿԱԴ. Ասո՞ր համար շուկայ չես իջնար. քեզ տեսած չունիմ։

ԿԱՄ. Շուկան գործ չունիմ։

ԿԱԴ. Բժիշկն ի՞նչ կ'ըսէ։

ԿԱՄ. Աստուած քեզ գլխացաւէ պահպանէ, կ'ըսէ, Կադմոս աղա։

ԿԱԴ. Գլխի ցա՞ւ ունիս։ Ուրեմն ինչո՞ւ վարը կ'պոռան կ'կանչեն. ես կարծէի թէ հանդէս կայ տունդ։

ԿԱՄ. ՔԷՀԷԱ չեմ ուզեր. ես եմ տանս տէրը։

ԿԱԴ. (*գրպանէն թուղթ մը հանելով*) Անշուշտ, այս ստորագրութեան ալ տէրն ես։

ԿԱՄ. Հա՛, տէրն եմ, տէրն եմ. (*կ'կարդայ, մինչդեռ ծայրէն բռնած է Կադմոս*) «Այս մուրհակս բերողին կամ հրամանին պարտիմ վճարել հինգ հա-զար ոսկի»։ Բայց, Կադմո՛ս աղա, այդ կլորիկ դեղին ոսկիները լուբիա կամ ՆՕՀՈՒՏ չեն որ տոպրակի մը մէջ տունս պահեմ։

ԿԱԴ. Ուրեմն ե՞րբ եւ ո՞ւր գամ։

ԿԱՄ. Բի՛չ օրէն, Երասխաձոր . . .

ԿԱԴ. (*մեկուսի*) Ի՞նչ կ'երգէ. խնձո՞ր . . . խելացնո՞ր է այս մարդը։

ԿԱՄ. Է՛, երբոր մեքենան գայ։

ԿԱԴ. (*մեկուսի*) Վախնամ ուղեղի հիւանդութիւն ունի։ (*առ Կամսար*) Ի՞նչ լեզու կ'խօսիս, բարեկամ. խնձոր, մեքենայ, ի՞նչ գործ ունին իմ առնելիքիս հետ:

ԿԱՄ. (*մեկուսի*) Ի՞նչ կարճամիտ մարդ. իր պաշտածը ստակն է, քարն է։ Ուրիշ մտմտուք չունի . . . (*առ Կադմոս*) Երանի՛ քեզ, միամիտ մարդ. աշխարհ փլի, հոգդ չէ. բաւական է որ ոսկիդ ծոցիկդ ըլլի. չունիս փառա-սիրութեան որդն որ սիրտ կ'կրծէ, չունիս հայրենասիրութեան եռանդն որ նոր հորիզոններ կ'բանայ աչքին, չունիս (*Կադմոս ապուշ ապուշ կ'նայի*) այն խանդն ու մանդն որ թեւեր կ'տայ . . .

ԿԱԴ. (*մեկուսի*) Երա՛ւ, խենդ ու մենդ կ'խօսի . . . ի՞նչ բան է այս . . . կ'զաւանցէ . . . գլուխն հիւանդ է. գէշ ժամանակ ընտրեցի գալու . . . մարդ ալ չկայ . . . (*Մուշիկ հեռուէն պոռալով*)

ՏԵՍԱՐԱՆ ԺԸ.

ԿԱՄՍԱՐ, ԿԱԴՄՈՍ Ւ ՄՈՒՇԻԿ։

ՄՈՒՇ. Կամսա՛ր պէյ, պատրաստ են զգեստներդ ու սեւ ձին . . . շո՛ւտ շո՛ւտ . . .

ԿԱԴ. Պէ՛յ, պէ՛յ . . . մեր Կամսար աղան, պէ՛յ . . .

ԿԱՄ. Երթաս բարեաւ, Կադմոս աղա. գործ ունիմ . . .

ԿԱԴ. Է՛ իմս գործ չէ՞. տասն հազար ոսկին որ մեր ընկերութենէ ինծ ընկած օրինաւոր բաժինս է, գործ չէ՞:

ԿԱՄ. Զնչին բան, իմ մեծ ձեռնարկիս մօտ. (*պոռալով*) Թո՛ղ, Թո՛ղ գայ մեքենան եւ հետդ կ'խօսիմ . . .

ԿԱԴ. Իրաւ որ հիմակ ես ալ պիտի խենդենամ . . . կամ պիտի պոռամ:

ՄՈՒՇ. Եթէ պոռալով կրնաս վճարուիլ, ազատ ես ամենէ բարձր ձայնդ հանել: Բայց Կամսար պէյն, կ'ըլլտես եա՛, մէկ ձայնի, մէկ հաստատ գաղափարի համար ականջ ու միտք ունի, ուրիշ բան մտիկ չըներ. ուխտ ըրած է գործ չտեսնել, մինչեւ անգամ ձեռքը բերանը չտանիլ, Թող Թէ արկղին, մինչեւ որ իր խորհուրդն, իր մեքենան, որ Երասխաձորը Լէման պիտի դարձընէ, մարմին չառնէ . . . Նայէ՛ ինչպէս խորունկ կ'մտածէ . . .

ԿԱԴ. (*մեկուսի*) Տէ՛ր Աստուած, այս տեղ միայն լեռն, խենթը ու տանձ կ'խօսին . . . վերջին փորձ մ'ընեմ: (*առ Կամսար*) Կամսա՛ր աղա, ո՞ւր ես. կուտերս պիտի տա՞ս:

ԿԱՄ. Երբ Աշխարհունեաց երկրին մէջ իմ մեքենաս հաստատեմ, պիտի անմահանամ. պիտի լարուին ամեն տոհմային ոյժեր . . .

ԿԱԴ. (*մեկուսի*) Հէ՛յ վախ, պիտի մեռնիմ . . . . գացին կուտերս . . . : Կամսա՛ր աղա, խելքդ գլուխդ ժողվէ՛, ես լօ, լօ, լօ, չեմ հասկնար . . . կուտե՛րս . . .

ԿԱՄ. Է՛յ, պատրա՞ստ են, Մուշիկ . . .

ԿԱԴ. Համբէ՛, ուրեմն . . .

ԿԱՄ. Զգեստներս, ձիս, կառքը . . .

ՄՈՒՇ. Հա՛, տէր իմ, պատրաստ են:

ԿԱՄ. Օ՛ն, երԹանք. մնաք բարեւ, հանգիստդ նայէ, Կադմո՛ս աղա . . . Բայց նորէն ձայներ կան, նորէն գլխացա՞ւ պիտի ունենամ. ո՞վ կ'գայ, Մուշի՛կ, շո՛ւտ, ելնենք . . . : (*Հիրիկ վազելով և լալով հօրը դիրկը կ'իյնայ*)

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԱՌԱՋԻՆՔ, ՀՐԻԿ և ԶԱՔԱՐԻԿ։

ՀԻՐ. (*Փէշը լալով*) Հա՛յրիկ, դու կտրէ մեր դատը . . . . ես պիտի մեռնիմ . . .

ԿԱՄ. Հիմա ատենը չէ, աղջիկս. դեսպանատունը կ՚սպասեն ինծ. ետքը, ետքը. հիմակ գացէք: (*կ՚քալէ*)

ԶԱՔ. Ձե՛ս հարցներ, հա՛յրիկ, թէ ի՞նչ է այս խենդուկին դատը:

ՀԻՐ. Դո՛ւն ես խենդուկ. ա՛լ քաշելիքս չմնաց այս Զաքարիկին ձեռքէն: Ես պիտի մեռնիմ . . . չթողուր որ բանաստեղծ ըլլիմ . . .

ԿԱԴ. (*Մեկուսի*) Այս ալ նօր տեսարան է:

ՀԻՐ. Չթողուր, որ Պայրն կարդամ, կ՚ուզէ որ շապիկին կոճակը կարեմ, եւ գիրք գրիչ մէկդի թողում . . .: Է՜հ, պիտի մեռնիմ թէ որ . . . չբորբոքիմ, չգրեմ, եւ Սաֆօ մը, Գօրին մը չըլլիմ . . .

ԿԱՄ. Ծօ՛ տղայ, քեզի ի՞նչ. թող որ քոյրդ վառի, բորբոքի, ատէշ ըլլի, խուրէն ըլլի . . .

ԶԱՔ. Հա՛յրիկ, իրաւո՞ւնք է, որ շապիկս ուրիշ աղջիկ մը կարէ, եւ ինք նստի ոտանաւորներ կմկմայ ու մրոտէ. Լամարթին, Պայրն, Հիւկօ եւ ուրիշ չգիտեմ ինչ բէնզօններ երազէ . . .

ՀԻՐ. Նայէ՛, հայրիկ, ի՞նչ աղուոր է սա ոտանաւորս, եւ դու ըսէ՛ ճշմարիտը . . . համճար մը չե՞մ, աչքերս չե՞ն փայլիր կրակով . . . գլխէս մուխ չե՞լներ . . .

ԿԱՄ. Ո՜ւֆ, այս ալ նոր փորձանք . . .

ՀԻՐ. (*կ՚կարդայ*)

> «Կլորիկ, կլորիկ, ո՜ խնձոր,
> «Իմ երկրիս Երասխի Ձոր.
> «Ի՛նչպէս [Թարմ] ես ու տկլոր
> «Եւ կուշտ պահես դու մէկ փոր»։

ԶԱՔ. Ի՛նչ անհամ ալուր. ոտք մը պակաս է. աւելցո՛ւր «Եւ ես եմ մէկ յիմար բոր»:

ՀԻՐ. Պակասը դո՛ւն ես, տգէ՛տ: (*Մեկուսի*) Կարդալ չգիտէ դեռ, եւ իմ վսեմ ոտանաւորս կ՚խծբծէ . . .

ԿԱՄ. Իրաւ, դու կարող չես դատել, դեռ ուսմունք չունիս:

ԶԱՔ. Ուրեմն ե՞րբ դասատու պիտի բռնես ինծի համար:

ԿԱՄ. Ծօ՛ դեռ ժամանակ ունիս:

ԶԱՔ. Հա՛յր, պեխերս կ՚բուսնին, նայէ՛ . . .

ԿԱՄ. Լա՛ւ, երբ դեսպանատունէն դառնամ այդ բանը կարգի կ՚դնեմ

Ռուստոմին հետ: Հիմակ գացէք: (դուրս ելնելու վրայ է) Է՛հ, ո՛ւֆ, ո՛ւֆ. . . . մէյ մը օձիքս ազատէի՜ . . .

ՀԻՐ. Ոտանաւորս ինչպէս գտար, հա՛յրիկ, աղուոր չէ՞, պիտի հրատարակեմ . . .

ԿԱՄ. (միշտ դուրս նայելով) Սքանչելի՜:

ՋԱՔ. (փեշէն քաշելով) Դատատուն ե՞րբ պիտի բռնես, հա՛յրիկ:

ԿԱԴ. Ի՞նչ կուտ պիտի վճարես, Կամսա՛ր աղա:

ՄՈՒՇ. Խնձորի կուտ . . .

ԿԱՄ. Է՛հ, է՛հ, թողէ՛ք . . . թողէ՛ք . . . գործ ունիմ . . . (ետեւէն կ'վազեն և վարագոյրը կ'իջնէ։)

ԱՐԱՐ Բ.

ՏԵՍԻԼ Ա.

ՌՈՒՍՏՈՄ՝ առանձին։

ՌՈՒՍՏՈՄ. (վեր վար քալելով՝ ճակատը կ'շփէ) . . . Հա՛, աշխարհս սատրանջ մ'է. քարերն են միամիտները, զոր ճարպիկները աղիս անդին կը շարժեն՝ նպատակի մը համար . . . : Ես ալ նպատակ ունիմ. այս տան տիրել, եւ տիրանալ միամտի մը, Կամսարին հարստութեանը . . . իր խորհըրդականն ու գանձապահը ըլլելէն ձանձրացայ, կ'ուզեմ թէ՛ իր անձին եւ թէ գանձին տէրը ըլլիլ . . . : Անշուշտ վտանգաւոր խաղ է այս . . . բայց պիտի յաջողիմ՝ քանի որ Կամսարի տկար կողմը գիտեմ . . . : Վայրենիները բոժոժներ, ուլունք եւ ժժմունք կ'առնեն եւ փոխարէն ոսկի, արծաթ ու մարգարիտ կ'տան. ճիշդ՝ նոյնպէս կան մարդիկ որ փայլուն խաղալիկներ ձեռք ձգելու համար՝ վրայ կ'տան հանգիստ, պատիւ, հարստութիւն . . . : Պարոն Կամսար առաւ՝ իմ ձեռօք՝ այսօր խաղալիկ մը, շքանշան մը՝ որու համար հոգի կ'տար . . . երջանիկ է . . . հիմակ բոլորովին իմ ճանկիս տակն է . . . : Թէ՛ն բռնելով՝ ուզած տեղս պիտի տանիմ զինք . . . յետին ծայր տգէտ այլ փառամոլ՝ իմ խօսքով՝ ձգեց շուկայ, մթերանոց, վարկ, մտաւ մոգական աշխարհ մը, զոր ոմանք քաղաքական կ'անուանեն . . . : Է՛ ինչո՞ւ . . . որպէս զի փայլի, փառաւորուի, ձեռք ձգէ հին հայրենական հող մը, Երասխաձորը, ինչ կերպով, մեքենայի մը միջոցաւ . . . : Միամիտ մարդն հաւտաց որ այդ մեքենան Միդասի շօշափելիքն է, թէ անով իր ժառանգութեան պիտի տիրանայ, գերդաստանին ապագան պիտի յարդարէ, աշխարհիս պատմութեան մէջ անջինջ անուն պիտի թողու . . . : Ուստի ինձի թողուց բոլոր իր

շուկայի եւ տան գործերն, ինք նաւարկելով՝ Լէման լճին մէջ՝ առագաստալիր . . . ո՞ւր երթալու, Երասխաձոր . . . մտածին աշխարհ մը: Իմ յատակագիծս պարզ է . . խառնակել ամեն բան, ատելութիւն, խռովութիւն ձգել տան մէջ, ներսէն առնել բերդն, միշտ վստահութիւն ազդելով, եւ իմ բաղդս շինել . . .: Արդէն՝ գրեթէ ամեն լրագիրներն, որ պատրաստ են սկզբունք եւ խիղճ ծախել՝ ոսկիի համար, վաստկած եմ: Արքոն եւ Մուշիկ ինծ աջակից են. Զարարիկ պէտք է մնայ միշտ տգէտ, Հիրիկ՝ իմաստակ . . . . տունը դառնայ Բաբելոն եւ ես ամենուն տէր եւ իշխան . . . միայն Բագարատէն քիչ մը վախ ունիմ . . . անզուսպ եւ կասկածոտ կենդանի մ'է. ծուռ աչքով կ'նայի ինծ . . . բայց անոր սիրտն ու բերանն ալ պիտի պրկեմ . . . (դուրս կ'նայի) Բայց ինչո՞ւ կ'ուշանայ Կադմոս. այդ մարդուն պահանջքը պիտի վճարեմ եւ . . . ահա՛ կ'երեւի . . .:

ՏԵՍԻԼ Բ.

ՌՈՒՍՏՈՄ Ւ ԿԱԴՄՈՍ։

ԿԱԴ. Բարեւ, Պարոն Ռուստոմ. խեր ըլլի. զիս ուզեր ես:

ՌՈՒՍ. Այո՛:

ԿԱԴ. Ինչո՞ւ համար:

ՌՈՒՍ. Կ'ուզէի իմանալ թէ կուտերդ առի՞ր Պ. Կամսարէն:

ԿԱԴ. Այո՛, խնծորի կուտ, հով:

ՌՈՒՍ. Յոյս ունի՞ս առնելու:

ԿԱԴ. Զգիտեմ:

ՌՈՒՍ. Մոռցիր այդ գումարը առ այժմ. Կամսար աղան պիտի վճարէ քեզ, երբոր Երասխաձոր հասնի . . .

ԿԱԴ. Աստուծմէ ի վեր՝ այդ անունը խլցուց ականջս. ի՞նչ է. դո՞ւ ալ Լէման կամ լեմոն պիտի քամես առնելիքիս վրայ:

ՌՈՒՍ. Լէմանը ոսկեհանք մ'է:

ԿԱԴ. Իրա՞ւ. բայց ես չեմ կրնար սպասել:

ՌՈՒՍ. Ուրեմն մուրհակդ ինծի դարձո՛ւր:

ԿԱԴ. Պիտի վճարե՞ս. ո՛հ, Աստուած կեանք տայ. բայց տոկոսն ալ մէկտեղ:

ՌՈՒՍ. Չէ՛, եւ ոչ իսկ ամբողջ գումարն. այլ երրորդ մասը՝ որ կ'ընէ 1666 ոսկի եւ 666 հազարորդ . . .

ԿԱԴ. Քաջ թուաբան ես, Պարոն Ռուստոմ, այլ ոչ ուղիղ վճարող. այդ կ'դպչի Կամսար աղային պատուոյն, որու պաշտպանն ես, կ'ըսեն:

ՌՈՒՍ. Է՛հ, պարտքն իմս չէ . . . ուրեմն սպասէ . . . յաւիտեան . . . . Կամսար կրնայ ջնջել մուրհակդ, եթէ դատ բանաս . . .

ԿԱԴ. Ի՞նչպէս . . .

ՌՈՒՍ. Այո՛, ազդեցութիւն ունի, քեզ կ'ճզմէ . . .

ԿԱԴ· Հապա՛ ոսկեճամբը:

ՌՈՒՍ· Այդ կրնայ գտնուիլ, մեր մեռնելէ ետք . ՛. ՛. դու կանխիկը նայէ . . . եւ Կամսար աղան վճարելու վիճակի մէջ չէ:

ԿԱԴ· Արդեօք խելքի՞ն եկած է . . . դրամ շատ ունի . . .

ՌՈՒՍ· Այդպիսի բան մը. ընդունէ այս պայմանս. միայն հազար եւս կ'աւելցնեմ, եթէ ուրիշ մէկ պայմանս ընդունիս:

ԿԱԴ· Ի՞նչ է:

ՌՈՒՍ· Դու հաւատարիմ մարդ մը կ'երեւիս. արծաթն աւելի կ'սիրես քան թէ սեւ հողը. եկո՛ւր իմ գաղտնի գործակատարս եղիր:

ԿԱԴ· Ի՞նչ պիտի ընեմ . . .

ՌՈՒՍ· Ինչ որ ըսեմ . . .

ԿԱԴ· Այդ ծանր գերութիւն մ'է:

ՌՈՒՍ· Հազար ոսկին ալ բաւական ծանր է:

ԿԱԴ· Հապա թէ որ ըսես թէ՝ գնա լինծ բե՛ր . . . բե՛ր . . . ի՞նչ ըսեմ . . բսածներդ . . . բերե՞մ պիտի . . . : Այդ ի՞նչ սակարկութիւն է: Ես կապուած, դու ազատ. այդ իմ բանիս չգար:

ՌՈՒՍ· Արդար մարդն՝ արդար բան կ'պահանջէ . . .

ԿԱԴ· Սատանան գործ չունի, երբեմն անիրաւ բան ալ պահանջել կ'տայ . . . քիչ է տուած գումարդ . . .

ՌՈՒՍ· Թո՛ղ հազար հինգ հարիւր ըլլի . . .

ԿԱԴ· Պարո՛ն Ռուստոմ, խօսքն հով է. ես պայմանը գրաւոր եւ դրամները կանխիկ կ'ուզեմ:

ՌՈՒՍ· Տա՛ս լաւ. ա՛ռ սա թուղթը, (*կ'գրէ*) «Պիտի վճարեմ գրաբերիս 3166 ոսկի 666 հազարորդ»: Դու ալ գրէ . . . (*կարդալու կ'նստի սեղանին առջեւ*) «Պատրաստ եմ կատարել ինչ որ Պ. Ռուստոմ հրամայէ ինծ . . .» — Ստորագրէ՛ . . .

ԿԱԴ· Ձեռքս կ'դողայ. վզէս ոսկի օղակ մը կ'անցընեմ . . . :

ՌՈՒՍ· Ստորագրէ՛ . . . երկաթէն լաւ է:

ԿԱԴ· Ա՛ռ, (*կ'ստորագրէ*) բաղդս կամ մահս կնքեցի: Մնաս բարեւ, Պ. Ռուստոմ . . .

ՌՈՒՍ· Կեցի՛ր, առաջին հրամանս կատարէ՛:

ԿԱԴ· (*դողալով*) Ի՞նչ է:

ՌՈՒՍ· Ժամէ մ'եկուր գրատուն եւ կլորիկ 3166 ոսկի եւ 666 հազարորդը գրպանէ . . . ապա անկողինդ, այս տունը՝ Կամսար աղային տունը՝ փոխադրէ. գրասեղանի մ'առջեւ նստիր եւ ինչ որ պատահի, գրէ, օրագրէ . . . մանաւորապէս Պ. Բազարատին վրայ ըլլի աչքդ . . . :

ԿԱԴ· (*մեկուսի*) Այս ի՞նչ դիւրին պաշտօն . . . Ուրի՞շ . . .

ՌՈՒՍ· Ուրիշ բան չկայ առ այժմ . . . գնա՛ . . . (*կարդալու կ'մեկնի*):

ՏԵՍԻԼ Դ.

ՌՈՒՍՏՈՄ և ԿԱՄՍԱՐ։

ԿԱՄ. Հո՞ս էր այդ Նազմոս աղան. ո՜րչափ փառքը կ'երեւի աչքիս. չեմ կրնար տանիլ զինք, թէեւ երբեմն ընկերս էր։ Ի՞նչ բան ունէր այս տեղ, Պարոն Ռուստոմ։

ՌՈՒՍ. Գործն անուշ տեղը կապեցի։

ԿԱՄ. Ստակ տուիր։

ՌՈՒՍ. Միթէ արկղը ստակ կա՞յ. գիտէք որ մեր բոլոր դրամագլուխը դուրսերը կ'պտըտի։

ԿԱՄ. Ի՞նչպէս լմնցուցիր։

ՌՈՒՍ. Շատ աժան կերպով։ Տունդ պիտի նստի, ուտէ խմէ եւ փուլ մը չպիտի պահանջէ։ Եղածովն ան ալ կ'ըլլի կ'երթայ։

ԿԱՄ. Այդ գէշ չէ։ Բայց թողունք այդ անպիտանն, որ գտածն ուտէ, եւ ուրիշ կարեւոր գործերու վրայ խօսինք։

ՌՈՒՍ. Խօսինք։

ԿԱՄ. Դու դեսպանատունէն շուտ դարձար, Պ. Ռուստոմ։ Երբ քովէս հեռանաս, կարծեմ թէ մէկ կողմս կ'պակսի. ի՜նչ շնորհալի ընդունելութիւն եւ շքանշան։

ՌՈՒՍ. Սքանչելի՜։

ԿԱՄ. Բայց մեր միւս խորհո՞ւրդն։

ՌՈՒՍ. Ո՞րն.

ԿԱՄ. Լէման լիճն Երասխաձոր փոխադրելու խորհուրդը։

ՌՈՒՍ. Ամեն բան իր կարգին պիտի գայ։

ԿԱՄ. Բայց կ'ուշանայ։

ՌՈՒՍ. Բայց շքանշանն անոր յառաջաբանն է։ Պէտք է որ հին ժառանգութեանդ եւ ազնուականութեանդ թղթերն հանես. եթէ չունիս, կ'շինուին...

ԿԱՄ. Ի՞նչպէս։

ՌՈՒՍ. Քաղաքականութեամբ։

ԿԱՄ. Հապա մեքենան պիտի պատրաստէ կ'ըսէիր . . .

ՌՈՒՍ. Զարմանալի մարդ ես. կամաւ անմիտ կ'ձեւանաս . . . միթէ քաղաքականութիւնն ալ մեքենայ մը չէ՞, քիմիական գործի մը չէ՞, որ զանազան տարասեռ նիւթեր կ'լուծէ, կ'բաղադրէ, կ'պարզէ . . .

ԿԱՄ. Խնդրեմ, աւելի պարզ խօսէ՛ . . .

ՌՈՒՍ. . . . Ապա կ'գտէ, կ'քամէ, կ'արտահանէ, կ'ներմուծէ . . .

ԿԱՄ. Այդպէս, հիմակ կ'հասկնամ։

ՌՈՒՍ. (*մեկուսի*) Իրա՜ւ որ սրամիտ մարդ է . . . (*առ Կամսար*) Այնպէս որ յանկարծ նիւթին յատկանիշն երեւան կ'ելնէ . . . մին կ'հալի, միւսը կը ցնդի . . . եւ . . .

ԿԱՄ. Հիմակ աւելի լաւ կ'հասկնամ . . .

ՌՈՒՍ. . . . Եւ բնութեան այս ընդհանուր այլափոխութեան ժամանակ, բոլոր հաստատուն մարմիններն կ'լուծուին, հնդուկները կ'ծաւալին, հոսանուտները կ'շոգիանան, եւ Օրէն Գէլ կ'ելնես կ'տեսնես որ ջուրը ցամաք, լեռը դաշտ եղեր է, Լէման լիճը Երասխաձոր փոխադրուեր, եւ Կամսարականներն անհետ լինելէն ետեւ՝ վերստին դարձեր, Աւրշարունեաց երկրին տիրացեր են . . . :

ԿԱՄ. (մեկուսի) Ի՜նչ պայծառ կ'խօսի Պ. Ռուստոմ . . . (առ Ռուստամ) Միայն սեւ կէտ մը կ'տեսնեմ հորիզոնին վրայ:

ՌՈՒՍ. Ո՞ր է նայիմ:

ԿԱՄ. Օրէն Գէլ խօսքը:

ՌՈՒՍ. Կամսա՛ր աղա, պա՜հ, կատա՞կ կ'ընես: Օրին մէկը՝ խօսքի ձեւ է, որ կ'նշանակէ, այսօր, վաղը, ամսէ մը . . .

ԿԱՄ. Նոյնպէս՝ դատաստանին օրը:

ՌՈՒՍ. (մեկուսի) Երեւցածին չափ դդումգլուխ չէ մեր Կամսարը:

ԿԱՄ. Ինչո՞ւ, Պարոն Ռուստոմ, երեսդ կ'դարձնես անդին:

ՌՈՒՍ. Որ նայիմ թէ մեզմէ աղէկներն ի՛նչ կ'ըսեն:

ԿԱՄ. Փէրիներու կ'հաւտա՞ս:

ՌՈՒՍ. Հապա կ'ուզես, որ մարգարէ ըլլիմ եւ Օրէն Գէլ գուշակեմ:

ԿԱՄ. Գիտես, բարեկամ, որ բնութեամբ կասկածոտ եւ անհամբեր եմ. երբոր ճամբայ ելնեմ, կ'ուզեմ որ ճամբաս գիտնամ եւ շիտակ նպատակիս հասնիմ:

ՌՈՒՍ. Ի՛նչ շիտակ մարդ ես, Կամսա՛ր աղա. կ'երեւի թէ իմ վրայ կը կասկածիս: Եւ սակայն կրած չքանչանդ, փայլեալ համարումդ, լրագիրներէ ընդունած գովեստներդ, մեծ համբաւդ աշխարհիս վրայ, բաւական ապացոյցներ են որ ես քու շահերուդ աւելի հոգ կ'տանիմ քան թէ իմիններուս: Զե՞ս կարող քիչ մ'եւս համբերել, որ տեսնես մեծ օրը: Լա՛ւ, եթէ գոհ չես, ահա ես կ'քաշուիմ, կ'հրաժարիմ պաշտօնէս:

ԿԱՄ. Զէ՛, այդ չեմ ըսեր, բարեկամ. ես քեզմէ երկրէն երկինք գոհ եմ, միայն այս տեղ գործերս քիչ մը ծուռ կ'երթան. քիչ մը կարգ կանոն դնենք տան մէջ, մինչեւ որ Երասխաձորը բռնենք:

ՌՈՒՍ. Է՛ ի՛նչ կայ անկանոն տան մէջ:

ԿԱՄ. Ի՛նչ գիտնամ. կ'ըսեն թէ ամեն բան վեր ի վայր է. զաւակներս իբարու միս կ'ուտեն. Հիրիկ ոտանաւորներ կ'շինէ, Զաքարիկ՝ խաղալիկներով օրերը կ'անցընէ, կինս դրացիներուն միսը կ'ծամէ եւ տունը նստած չունի, սպասաւորներս անգամ մէյմէկ պատուհասներ դարձեր են, ո՛չ շէնքով շնորհքով կերակուր կ'եփի, ո՛չ աղտոտ լաթերը կ'լուացուին, ոչ տունը կը մաքրուի: Գործերս ալ խառնաշփոթ վիճակի մէջ են. Կաղմոս աղան խաղք խայտառակ ըրաւ զիս քիչ մ'առաջ՝ չնչին գումարի մը համար, եւ պարտատէրերս շարունակ դուռս կ'զարնեն . . . տունս կ'թալլեն . . . :

ՌՈՒՍ. Է՜հ, Կամսար աղա, այդպէս կ'ամբաստանե՞ս մատակարարու-

թիւնս. ես ա՛լ բան գործ չունիմ հոս, շուտով կ՚հրաժարիմ . . . գիտեմ սակայն թէ՝ ո՞վ կ՚թափէ այդ թոյնը սրտիդ մէջ . . .

ԿԱՄ. Է՜հ, հրաժարականի խօսք մի՛ ըներ. միթէ խորհրդականս չե՞ս. անհուն է վստահութիւնս վրադ. միայն՝ մինչեւ օրէն Դէլ գալը՝ բան մ՚ընենք։

ՌՈԻՍ. Աւելի ճարպիկ խորհրդական մը գտի՛ր . . . ի՞նչ են այդ տնական մասնաւոր գործերն՝ աւելի բարձր, վսեմ ձեռնարկի մը մօտ։ Երբոր այս յաջողի, միւսներն ինքնին կ՚կարգադրին։ Պարա՜պ բան. միշտ հին, ստորին ճամբան քալել կ՚սիրեն անոնք՝ որ միշտ վար կ՚նային . . . չէ՛, չէ՛, կ՚սխալէր դեսպանը, երբ այսօր կ՚ըսէր . . .

ԿԱՄ. Ի՞նչ կ՚ըսէր . . .

ՌՈԻՍ. Թէ բարձր մարդ ես, թէ մասնաւոր շահեր ընդհանուրին կ՚զոհես։

ԿԱՄ. Իրա՞ւ, ա՞յնպէս ըսաւ. ես չլսեցի . . . ո՜հ, թող գիտնայ վսեմափայլ դեսպանը որ չէ թէ միայն անձնական շահ, այլ բոլոր կեանքս գիտեմ զոհել՝ լաւ, արդար դատի մը համար . . . ի՞նչ կարծես դու, Պարոն Ռուստոմ . . .։

ՌՈԻՍ. Կարծեցի թէ կէս ճամբան պիտի կենաս . . .։

ԿԱՄ. Ցնո՜րք . . . ։

ՌՈԻՍ. Ահա հիմակ նորէն մաքդ եղար, եւ գիտցած եղիր որ, եթէ նորէն թուլնաս, պիտի մեկնիմ . . . ։

ԿԱՄ. Իրա՞ւ, այդպէս ըսա՞ւ վսեմափայլն. ո՜հ, ի՜նչ գերազնիւ մարդ։ Հրատարակել տո՛ւր այդ . . .

ՌՈԻՍ. Հապա՛, հապա՛, վաղը պիտի կարդաս խոշոր տառերով գրուած՝ թէ մեծ, մեծ մարդ ես . . .

ԿԱՄ. Լռութի՜ւն. մարդ կ՚գայ. մեր գաղտնիքը դուրս չելնէ։

ՏԵՍԻԼ Դ.

ՌՈՒԱՔԻՆՔ Ւ ԱՐԲՈՒՆ։

ԱՐԲ. Տէ՛ր իմ, շատ խելօք եւ գիտուն մարդիկ՝ առաւօտէն ի վեր՝ վարն ինչ որ գտան կերան, եւ դեռ ձեր հրամանին կ՚սպասեն որ ներկայանան։

ՌՈԻՍ. Ես կ՚երթամ, գործ ունիմ կարեւոր, դու ընդունէ, Կամսա՛ր աղա։ Միայն կարճ կապէ, երես տալիք մարդ չեն այդ գիտուններն . . . . մանաւանդ ամեն բան մի՛ ըսեր, թոյլբերան են։ (*կ՚մեկնի*)

ԿԱՄ. Արբո՛ւն, գնա հրամցո՛ւր այդ պարոններն. նայինք ի՞նչ ունին ըսելու։ (*Արբուն դուրս կ՚ելնէ։*)

ՏԵՍԻԼ Ե.

ԿԱՄՍԱՐ

ԿԱՄ. Պահ մը Բազարատ որդիս միտքս պղտորեց . . . Ռուստոմ աշխարհիս ամենէ անկեղծ մարդն է . . . ա՛լ տարակոյս չունիմ . . . եթէ հեռանայ՝ ապազաս գէշ է, պէտք է որ ցմահ քովս պահեմ, իբրեւ իմ լուսատու փարոսս . . . Ահա՛ եկան . . .

ՏԵՍԻԼ Զ.

ԿԱՄՍԱՐ, ԱՐԲՈՒՆ, ՀՈՎՆԱԿ, ՍԵԽՈՒՆԻ Ե ԳԻՍԱԿ։

ԱՐԲ. (Հիւրերուն) Հրամեցէ՛ք, պարոններ, հրամեցէ՛ք . . .

ՍԵԽ. (մինչեւ գետին ծռելով) Վսեմափա՛յլ տէր . . . (ճակատը կ՚շփէ եւ աթոռի մը վրայ կ՚ելնէ) այսօր հանդիսաւոր օր մ՚է մեզի համար . . .

ԱՐԲ. (մեկուսի) Վասն զի փորերնին լեցուցին վարը . . .

ՍԵԽ. (շարունակելով) Կ՚գամ իմ ընկերներուս կողմէ ողջունել եւ շնորհաւորել ձեզ այն շքեղ շքանշանին եւ վերնատուր շնորհին համար, որու այնքան մեծ իրաւունք ստացած էք ձեր անքաւ ծառայութեանց եւ անսահման արժանեաց համար: (Հովնակին դառնալով) Ի՞նչպէս է . . . (առ Կամսար) Իրաւունք, այո՛, իրաւունք, որ ընդգրկելով պարտքը, իբրեւ աստղ առաւօտեան՝ ադամանդի պէս՝ կ՚փայլի ձեր վեհ ճակտին վրայ. ճակա՛տ անբիծ, ճակա՛տ բեղմնաւոր, ուր կ՚բնակին արդարութիւն եւ ճշմարտութիւն . . . (չորս դին նայելով գլուխ կը քոնէ։)

ՀՈՎ. (առ Սեւունի կամացուկ) Աւելի՛ ազդու:

ԱՐԲ. (մեկուսի) Թշուառականը գոց սորված է եւ մեզի կ՚ծախէ. ինչ կատակերգութիւն է այս:

ՍԵԽ. Արդարութիւն եւ ճշմարտութիւն, երկու հմայական բառեր, որոց զոհ տալով ձեր հոգին ու կեանքն, անմա՛ն տէր, կենդանութիւն տուիք մեզի:

ԱՐԲ. (մեկուսի) Ըսել կ՚ուզէ որ զինով են . . .

ՍԵԽ. Տուի՛ք . . . դո՛ւք անզուգական մարդ . . . հրեշտակ . . . բերովբէ . . . սերովբէ . . . դո՛ւք . . .

ԿԱՄ. (գլուխ քոնելով) Ո՛հ, ո՛հ, շատ ազնիւ էք . . . ո՛հ, շնորհակալ եմ, ես իմ պարտքս կը կատարեմ, իմ կեանքս ազգիս նուիրած եմ . . .

ՀՈՎ. Անզի՛ն նուէր . . .

ՍԵԽ. (առ Հովնակ) Կեցի՛ր, դեռ չմնցուցի. պարբերութիւն մ՚ալ կայ . . .

ՀՈՎ. Է՛հ, շուտ ըրէ, ես ալ պիտի ատենախօսեմ . . .

ՍԵՒ· Մեր պայմանն ի՞նչ էր . . .

ՀՈՎ· (*Սեւունին վար կ'նետէ աթոռէն և ինք կ'ելնէ*) Նուէ՛ր նուիրական, որով պիտի նուիրուին քեզ ամեն հոգի, ամեն սիրտ, ամեն բերան, ամեն շուրթ, ամեն աչք, եւ պիտի օրհնեն փողերով եւ սրնգներով այն անզուգական բարերարն՝ որ Հայոց անունը համբաւոյն կոնակը հեծցուց, որ անկերպարան Հայութեան դէմք շնորհեց եւ . . . եւ . . . . . եւ (*առ Սեւունի*) Թելը կորսնցուցի խօսքիս . . . դու շարունակէ, կ'աղաչեմ . . .

ԳԻՍ· Է՛հ, մի՛ զարմանաք, ո՛ տէր, յուզմունք եւ երախտագիտութիւն կը շփոթեն մեր լեզուն, մեր գաղափարներն, եւ . . .

ԱՐԲ· (*Մեկուսի*) Զըսեր գինին, անպիտանը . . .

ԿԱՄ· Եւ ես ձեզի շնորհապարտ եմ, որ այդպէս կ'լուսաւորէք հասարակաց կարծիքն իր շահերուն վրայ եւ . . .

ՍԵՒ· Ինչ սքանչելի ատենաբանութիւն . . .

ՀՈՎ· Օրհնածիր բերանն համբուրելս կ'գայ:

ԳԻՍ· (*Մեկուսի*) Նայինք ծայրը բան մը կա՞յ . . .

ԱՐԲ· (*Մեկուսի*) Կարծեմ թէ՝ բոլոր այս ճարճատմունքը մէկ քանի ղրուշի համար է:

ՍԵՒ· Օրագրիս մէջ գրելու համար հրաման մ'ունի՞ք, տէր իմ:

ԿԱՄ· Զէ՛, շնորհակալ եմ. մի՛ շատ գրէք իմ վրայ, ես գովեստ չեմ սիրեր . . .

ՀՈՎ· (*Մեկուսի*) Խուլականջ կ'ըլլի . . .

ԳԻՍ· (*Մեկուսի*) Կարծեմ բան մը չպիտի բրթի . . .

ՍԵՒ· Գոնէ մեզի մի քանի տեղեկութիւններ տուէք ձեր վսեմ ձեռնարկին վրայ . . .

ԿԱՄ· Գաղտնիք մ'է. բայց ձեզի կ'յայտնեմ. մեքենային կ'սպասեմ, որ մօտ օրերս գալով դիւրին պիտի լինի Լէման լիճը Երասխածոր փոխադրել: Զէք կրնար երեւակայել թէ ո՛րքան կ'տանջուիմ, գիշեր ցորեկ կ'տքնիմ, լեզու, ստակ, հնարք չեմ խնայեր որ խորհուրդս ի գործ դնեմ . . .

ՀՈՎ· Կեցցէ՛ Կամսար աղան . . .

ԳԻՍ· Ապրի՛ մեծ մարդը . . .

ՍԵՒ· Ի՞նչ առատ նիւթ գրելու . . . միայն բան մը կ'պակսի . . .

ԿԱՄ· Ի՞նչ:

ՍԵՒ· Թուղթ ու մելան . . .

ԱՐԲ· (*Մեկուսի*) Այսալ կարծէ թէ մելան երբ ունենայ, խելք ալ կ'ունենայ. մրսի՛ գլխուն . . . մելանին տակն ես ոսկի կ'տեսնեմ . . .

ՀՈՎ· Ի՞նչ հրաշալի գործիք:

ԿԱՄ· Տա՛տ, շա՛տ. իմ գիտս է. եթէ Պ. Ռուստոմ հոս ըլլէր, աւելի մանր պիտի նկարագրէր ձեզի այս մեքենան:

ՍԵՒ· Փոյթ չէ. մէկ քանի խօսքով կ'հասկնանք. այնքան անմիտ չենք:

ԿԱՄ· Լա՛ւ. մեքենան հովէն կ'շարժի, այնքան արագ՝ որ կարծես թէ անշարժ է. կրակի եւ ածուխի պէտք չունի, վասն զի իմ հոգւոյս հուրն ու շունչը

կ'բանին. կրկնակ անիւներ ունի որ իրարու հակառակ կ'շարժին եւ սաստիկ կ'սուլեն, այնպէս որ տաս մղոն հեռուէն կ'լսուի . . . կարծեմ հասկցաք . . .

ՀՌՎ. Ի՞նչ ըսել է:

ԳԻՍ. (Ինքնիրեն) Արողլին երթամ, եթէ բան մը հասկցայ . . . (առ Կամսար) Տէ՛ր իմ, շատ խորհրդաւոր էք: Ես ուրիշ տեսակէտով կը դատեմ խնդիրը:

ԿԱՄ. Ի՞նչ խնդիր . . .

ԳԻՍ. Հո՛վնակ, փոխաբերական իմաստ ունի այդ մեքենան . . .

ՀՌՎ. Ես բնաւ համամիտ չըմ քեզի . . .

ՍԵՒ. Շատ կ'սխալիս, Պ. Գիսակ, Կամսար աղան ո՛չ մանկավարժ է քեզի պէս, եւ ոչ բանաստեղծ՝ Հովնակին պէս . . . . այս դրական մարդ է, Լիդրէի աշակերտն է . . . իր մեքենան ինքնածին շարժում չունի, արտաքսից ու վանից զօրութեամբ կ'գլորի . . .

ՀՌՎ. Ձեմ ընդունիր այդ եզրակացութիւնը. ես կարող եմ համոզել քեզ՝ որ մեքենան գրիչ՝ եւ գրիչը մեքենայ է, այնպէս որ՝ ինքնամուղ եւ ինքնաշարժ՝ մերթ խաւարի եւ մերթ լոյսի մէջ կ'թաւալի . . . հակընդդէմ գաղափարներու անհուն հակակշռութեան մէջ . . .

ԿԱՄ. Արբո՛ն, ասոնք ի՞նչ կ'խօսին:

ԱՐԲ. Զինական լեզուով կ'բացատրեն մեքենադ, տէր իմ:

ԿԱՄ. Իրա՞, զարմա՛նք, չգիտէի որ մինչեւ Զինաստան լսուած է գիտս:

ԳԻՍ. Թող Կամսար աղան վճռէ մեր դատը: Ես կ'պնդեմ որ մեքենան դրամ է. ձկան պէս կ'սահի կ'գլորի մարդուս ձեռքէն եւ ծովը կ'թափի . . .

ՍԵՒ. Շատ ապուշ ես, բարեկամ: Զունեցողին ձեռքէն ի՞նչ կ'թափի . . .

ԳԻՍ. Լեզուդ քեզի քաշէ՛, անբա՛ն . . .

ՍԵՒ. Չէ՛, չէ՛, սխալ է. ո՛րքան ծուռ կ'տրամաբանէք. Կամսար աղան կ'ակնարկէ հոգեշունչ, թեւաւոր մեքենայ մը՝. եւ ի՞նչ կրնայ ըլլալ այն, եթէ ոչ այն հրեշտակն որ թեւերն իր տան վրայ տարածած է . . .

ՀՌՎ. Ի՞նչ ըսիր, անկոթ մարգարէ: Առջի խօսքդ վերջինին հետ կ'յարմարի՞. մէկ վայրկենի մէջ երեք անգամ կարծիք փոխեցիր . . .

ՍԵՒ. Վասն զի ես շարժում կ'սիրեմ, շարժում, որ յառաջդիմութիւն ըսել է, եւ ձեզի պէս խլուրդներ չեմ . . .

ԱՐԲ. (Ինքնիրեն) Նայեցէք, ի՛նչ անքաղաքավար են մեր ուսումնականները: Է՛ ասոնք Ազգին ջահերը պիտի ըլլին . . .

ԿԱՄ. Է՛յ, լռութի՜ւն . . .

ՍԵՒ. Մեր դատը կտրէ՛, զո՛ւ կտրէ մեր դատը, Կամսար աղա. խօսէ՛ ո՛վ իրաւունք ունի . . .

ԿԱՄ. Գիսա՛կ:

ԳԻՍ. Այսինքն դրամն. ուրե՞մն. ուրեմն անկոթը դու ես, եւ իմ կարծիքս ճիշդ է, թէեւ զրպանս պարապ . . .

ԿԱՄ. Արբո՛ն, այս մարդերուն մէկմէկ հինգնոց տուր, թո՛ղ Ազգին համար աշխատին . . . (Արբոն անոնց մէկուն հնգական ղրուշ կ'տայ:)

ՍԵՒ. Աստուած կեանք տայ, Կամսար աղա . . .

ՀՈՎ. (*մեկուսի*) Վերջապէս մեքենան մեզ բերաւ մեր ուզած տեղը:

ՍԵԻ. Ուրիշ տալիք . . . հրաման ունի՞ք, Կամսար աղա. հոգ մի՛ ընէք, մեր կեանքը կ'մաշի, մեր աչքին լոյսը կ'թափի Ազգին համար . . .

ԿԱՄ. Կեցի՛ք, յարմար առիթ մ'է ձեզի խորհուրդ մը հարցնելու . . . ահա կ'գայ մեր չարաճճին, Զաքարիկ:

ՏԵՍԻԼ Է.

ԱՌԱՋԻՆՔ և ԶԱՔԱՐԻԿ:

ԶԱՔ. Հա՛յրիկ, մաման հիւանդ պառկած է եւ Հիրիկին աչքերը շատ կարդացէն կ'ցաւին. բժիշկ կ'ուզեն:

ԿԱՄ. Հիմակ թո՛ղ այդ. ինչու քիչ մը չեն համբերեր. երբ Երասխաձոր երթանք՝ կ'բժշկուին . . . Ա՛լ ատենն է, որ դուն քիչ մը կրթուիս մարդ ըլլիս . . .

ԶԱՔ. Ես ալ պիտի չզա՞մ ձեր հետը, Երասխաձոր. հոն շուտ մը կ'կըրթուիմ . . .

ԿԱՄ. Առ այժմ քիչ մը բան սորվիլ պէտք է, ո՛րդեակ: Ահա հոս ներկայ են Ազգին ամենէ անուանի գիտուններն. մին Հայոց Հիւկօն է, միւսը Պօրլըն է, այս ալ Քրէօպէլն է . . . Հիմակ ըսէք, պա՛րոններ, ի՞նչ ուսում յարմար կ'տեսնէք տղուս համար: Նստեցէք . . . (*կ'նստին*)

ՍԵԻ. (*ոտք կ'ելնէ*) Պա՛րոններ, կենսական է այս խնդիրը, զոր կ'առաջարկէ մեզ Կամսար աղան. իր գերդաստանին շառաւիղը դաստիարակել այնպէս որ հօրն արժանի զաւակ եւ ազգութեան մոմն ու ճրագն ըլլի: Ես փորձով գիտեմ, որ լրագրութիւնն ուսումնապերճ Զաքարիկ պէյին յարմարագոյն ուսանելի գիտութիւնն է: Ճշմարտութիւնը քարոզել, առանց դրամի, լոյս, միութիւն, սէր սփռել. ի՞նչ վսեմ պաշտօն . . . Ուստի կ'առաջարկեմ որ լրագրապետ ըլլի եւ մամուլ մը գնելով իմ քովս աշակերտէ . . .

ԱՐԲ. (*մեկուսի*) Որ անօթութենէ բերանն հոտի եւ սատեր ծախելով մուրացկանութեամբ ապրի . . .

ՀՈՎ. Արդարեւ ծանրակշիռ խնդիր. մարդ շինել, կոշտ ժայռէ մ'արձան շինել, եւ անոր հոգի մը փչել, Կամսարականաց փառաց պսակ մը յերիւրել . . . երփն երփն գոյներով . . . ո՜հ, սքանչելի՛ գործ . . . անթառամ պսակ:

ԶԱՔ. Հա՛յրիկ, ի՞նչ կ'ըսեն . . . դեռ փոքր եմ, կ'ուզեն պսակ դնել գըլուխս . . .

ԱՐԲ. Մտիկ ըրէ, Զաքարիկ, ասոնք մեր գլխէն վեր բաներ են: Նայինք ի՞նչ տեսակ կապիկ պիտի ընեն քեզ . . .

ՀՈՎ. (*որ նոյն պահուն շարունակ երկինք կ'նայի որ ներշնչուի*) Ուստի՝ կ'առաջարկեմ որ Զաքարիկ, որ [illegible], Պեգասոսն հեծնայ եւ Ողիմպոս ելնէ . . .

ԶԱՔ. Աղւո՛ր բան, այս ալ կ'ուզէ որ [illegible] բռնեմ, թէեւ հրացան բռնել չգիտեմ:

ԳԻՍ· Պա՛րոններ, հովի խօսքեր են այդ ամենն. ես իբրեւ Փրէօպէլի աշակերտ՝ դարտակ բառեր չեմ սիրեր. միթէ ձեզի՞ ընկեր է խօսիլ երկնային արուեստի մը, մանկավարժական գիտութեան եւ կրթութեան վրայ, դուք որ տակաւին անոր այբ ու բէնը չգիտէք:

ՁԱՔ· Ես այբ ու բէնը սորված եմ, պարոն:

ԳԻՍ· Անհատական իմ համոզումս. պէտք է նախ քննել այդ մանկան հոգեբանական հանգամանքը, կշռել մարմինը, չափել գլխուն գանկը, զննել դիտակով ուղեղը, անոր ցեղական եւ ընտանեկան յարակցութիւնները նշանակել, գրի առնել անոր ժառանգական կամ եկամուտ յօժարութիւնները, հօրն ու մօրը ձեւն ու կտրուածքը զննել, նոյնպէս պէտք է աչքէ անցընել աշխարհիս ամեն կրթական ծրագիրներն, եւ վերջը նստիլ նոր ծրագիր մը շինել, եւ անոր վրայ քալել . . .

ԿԱՄ· Ի՛նչ. հիմակ պէտք է որ տղաս, գլխ, կլնս չափես չափչփե՞ն . . . այդ ի՛նչ երկար եւ վտանգաւոր գործ . . .

ԱՐԲ· Ծուազատկին կ'լմննայ եւ գործադրութիւնը թոռներուդ կ'մնայ, Նամսար աղա . . .

ԳԻՍ· Նօշիկէն վեր մ'ե՛լլար . . . բայց ծրագիրս յաւիտենական գործ կ'ըլլի, եւ աշխարհիս ամեն Զաքարիկներուն կ'ծառայէ:

ԱՐԲ· (Ժեկուսի) Ի՛նչ ամբարտաւան մարդ . . .

ՍԵԻ· Քեզի բան մ'ըսե՞մ, այդ ծրագիրդ Է-պօքէ մ'է . . .

ԿԱՄ· (Ժեկուսի) Վախնամ տղիս Բօֆ խաղալ պիտի սորվեցնեն . . ̀.

ՍԵԻ· Հա՛, հա՛, Նամսար աղա. մինչեւ որ ծրագիրը շինուի՝ թո՛ղ տղան Բօֆ խաղայ. մինչեւ այն ատեն մօրուքն ալ կ'բուսնի, եւ մօրուքին թելերը սանտրելու եւ համրելու կերպին վրայ ալ Պ. Գիսակ նոր ծրագիր մը պիտի շինէ . . .

ՀՈՎ· Իմ կարծեօք՝ ծրագրին գործնական կողմը Պ. Գիսակին զրպանելիք գումարն է . . .

ԳԻՍ· Կ'բողոքեմ քեզի դէմ եւ կ'հաստատեմ տրամաբանօրէն որ աւանակ մ'ես:

ՀՈՎ· Ես ալ կ'պնդեմ՝ որ նախ խելքիդ վիճակին վրայ ծրագիր մը շինես եւ առաջ լեզուդ կրթես:

ԳԻՍ· Կ'բողոքեմ . . . կ'արհամարհեմ ձեր ամենուն կարծիքն . . . իմ գըլուխս տեղն է . . .

ՀՈՎ· Միայն մէջի ըղեղը շարժեր է . . .

ԿԱՄ· (Ժեկուսի) Ասոնք նորէն կռուի պիտի բռնուին. ի՛նչ տեսակ կենդանիներ են, Տէր Աստուած. չեն կրնար երկու խօսք ըսել առանց քթրելու:

ԳԻՍ· Ձեր ամենուն խելքին պտուղն եմ չափեր, անբա՛ն մարգարէներ . .

ՀՈՎ· Նորի՛ր, գիտուններուն թափթփուքը . . . փախուկը . . .

ԿԱՄ· Է՛յ, նորէն համբ հոտը փախուցիր . . . կա՛մ կտրուկ ճամբայ մը գտէք տղուս կրթութեան համար, կամ կորսուեցէք գացէք . . .

ԳԻՍ· Կ'բողոքեմ . . . . դու իրաւունք չունիս զիս վռնտելու: Զաքարիկ՝ բստ օրինի՝ իմն է, իմ նիւթս է, զոր պէտք է ձեւեմ . . . :

ԿԱՄ. (*մեկուսի*) Իրաւցնէ փախուկ է այս մարդը. զակիս ալ տէրը կ'ուզէ ըլլիլ . . . (*առ Գիսակ*) Ես Հօդ եկայ ձեր տալիք կրթութենէ . . .

ԳԻՍ. Գիտութիւնը քեզ կ'դատապարտէ . . . . պատասխանատուութիւնդ մեծ է . . .

ԿԱՄ. Ա՛ղբար, չեմ ուզեր . . . թո՛ղ տղաս տգէտ մնայ . . .

ԳԻՍ. Անկարելի՛ բան . . .

ՀՈՎ. Ցիմա՛ր է . . »

ԿԱՄ. (*մեկուսի*) Ի՞նչ ընեմ տղաս . . .

ՍԵԻ. Ցիմարանոցը ղրկելու է . . . : (*Նոյն միջոցին դուրսը աղմուկ և ողբի ձայներ :*)

ԱՐԲ. Ի՜նչ աղաղակներ են . . .

ՏԵՍԻԼ Ը.

ԱՌԱՔԻՆՔ և ՄՈՒՇԻԿ:

ՄՈՒՇ. (*հեւալով ներս կ'մտնէ*) Ա՜խ, ա՜խ, ա՜խ, տէ՛ր իմ Կամսար, Տիկինը հոգեվարք է . . . հասէ՛ք . . . բժի՛շկ . . . ձե՛զ տեսնել կ'ուզէ . . . . շո՛ւտ . . .

ԿԱՄ. Վա՛յ գլխուս . . . երթա՛նք . . . . (*Ամենքը վա՜խ, վա՜խ, պոռալով դուրս կ'ելնեն և վարագոյրը կ'գոցուի*):

ԱՐԱՐ Գ.

ՏԵՍԻԼ Ա.

ԲԱԳԱՐԱՏ *առանձին*:

ԲԱԳ. Միրական, խե՜ղճ մայր . . . սեւ հողն է . . . Ե ի՞նչպէս այն բաջաւողջ, կայտառ կինը մէկ երկու շաբաթուան մէջ հալեցաւ . . . եւ վերջապէս գերեզման իջաւ . . . Ա՛հ, բնական չէր այդ մահը . . . ահռելի՜ կասկած մը . . . այո՛, բայց ի՞նչ ընեմ, որո՞ւ բացուիմ: Զորս կողմը բռնած են խենդերը, նենգաւորներն ու հացկատակները: Ասոնք բաւական չէին, հիմակ ունինք նոր հիւր մ'ալ, որ կ'բնակի հոս, որպէս թէ պապին տունը ըլլէր . . . Այդ Կաղմոս անուն մարդը Ռուստոմին լրաեսն է, որ տան մէջ անցած դար-

ծածը կ'դիտէ եւ անոր կ'հաղորդէ . . . Ի՜նչ չարագոյժ դէմք .՛. . միթէ այն, այն չէ՞ . . . բայց միթէ կարելի՜ է այնքան չարասրտութիւն . . . Ափսո՜ս, ծանս կարճ է, երբ Ռուստոմ ինքնիշխան կ'տիրէ ամենուն վրայ . . . հայրս անոր արժագանքն է . . . ողորմելին կարծէ թէ անոր ձեռօք Կամսարականաց գերդաստանը պիտի վերականգնէ, մինչդեռ իրօք իր հօրը կ'փորէ անգէտս: Ի՜նչ կուրութիւն. սեւ, սեւ է մեր բաղդը: Հայրս իր պատիժը պիտի կրէ, այլ ուշ պիտի սթափի: Արդէն առաջին զոհը, մայրս՝ գնաց: Պէտք է, պէտք է յետին ճիգ մը, փորձ մ'ընել եւ ցոյց տալ հօրս այն վիհն որու եզրը կեցած է . . . Բայց ի՞նչպէս . . . նա չհամոզուիր. հաստատուն ապացոյցներ կ'ուզէ: Թերեւս Արբունին ձեռօք գտնեմ այդ փաստերը. նա զաղտնի ինծի հետ է. պիտի օգնէ ինծ: Ահա կ'երեւի:

ՏԵՍԻԼ Բ.

ԲԱԳԱՐԱՏ Ե. ԱՐԲՈՒՆ:

ԲԱԳ. Ի՞նչ լուր:

ԱՐԲ. Աղէտալի՜ . . . կասկածդ կ'հաստատուի . . . . : Անօրէն մարդը՝ վատասիրտ Կոզմաս բժշկին ձեռօք . . .

ԲԱԳ. Խօսէ՛, ի՞նչ . . .

ԱՐԲ. Մայրդ թունաւորած է:

ԲԱԳ. Սոսկալի՜ ոճիր . . . Ի՞նչպէս իմացար:

ԱՐԲ. Կաղմոսին բերնէն առի:

ԲԱԳ. Պատճա՞ռ:

ԱՐԲ. Ցայտնի է . . . այս վերջին ժամանակներս՝ մօրդ անտանելի դարձած էր Ռուստոմ, որու դաւերը կ'հասկնար եւ հօրդ կ'զանգատէր: Ռուստոմ տեսաւ արգելքն եւ զայն պարզապէս մէջ տեղէն վերցուց, թոյնի միջոցաւ . . . : Աչքդ չո՛րս բաց, Բագարա՛տ, կարգը քուկդ է:

ԲԱԳ. Հապա Կոզմաս ո՞ւր է:

ԱՐԲ. Ռուստոմի հրամանաւ քաղքէն . . . ելած է:

ԲԱԳ. (*կատաղօրէն*) Պիտի սպաննեմ ես այդ գազանը: Հայրս եւ ոչ բժիշկ մը ղրկեց մօրս, անշուշտ Ռուստոմին դրդմամբ:

ԱՐԲ. Վտանգաւո՜ր միջոց . . . եւ կամաց խօսէ՛ . . . այս տեղ պատերն անգամ ականջ ունին . . . եւ զլուխդ լաւ պահպանէ:

ԲԱԳ. Մուշեղ ո՞ր կողմն է:

ԱՐԲ. Մեր կողմը:

ԲԱԳ. Հապա Հիրի՞կ:

ԱՐԲ. Վաղը կ'կարգուի՝ Ռուստոմի հրամանաւ՝ թեթեւսոլիկ օտարի մը հետ, որ իր արքանեակն է:

ԲԱԳ. Հապա Զաքարի՞կ:

ԱՐԲ․ Այն՛ալ՝չգիտեմ ո՛ր համալսարանը պիտի ղրկուի, ուր անշուշտ շուտով պիտի մոռնայ ընտանիք, հայրենիք եւ Ռուստոմի գործիքը պիտի դառնայ:

ԲԱԳ․ Ուրեմն՝ ուրիշ ճար չկայ․ պէտք է նախ տունէն վռնտել այդ անօրէն մարդն եւ ապա դատի կոչել:

ԱՐԲ․ Արդէն տան տէրն ինքն է . . . . ինչպէս նաեւ հօրդ ու մօրդ բոլոր կալուածոց . . .

ԲԱԳ․ Կ'գուշակէի . . . : Ի՞նչպէս իմացար:

ԱՐԲ․ Միշտ Կադմոսէն:

ԲԱԳ․ Արդեօք կարելի չէ՞ շահիլ Կադմոսը:

ԱՐԲ․ Հա՛, ստակի զօրութեամբ: Կրտես մ'աւելի շատ վճարողին կողմը կ'անցնի:

ԲԱԳ․ Եւ սակայն մենք ․․․ մ'անգամ չունինք:

ԱՐԲ․ Ուրիշ միջոց մը կայ. եկուր գողնանք կալուածագրերը, որ՝ ըստ երեւոյթին՝ Կադմոսին քովն են:

ԲԱԳ․ Բայց ի՞նչ պիտի ապացուցանեն այդ թղթերը՝ եթէ ոչ Ռուստոմի իրաւունքը՝ հօրս բոլոր գոյիցը վրայ:

ԱՐԲ․ Իրաւ է. բայց գոնէ կէտ մը կ'շահինք եւ մնացածը կ'ազատենք եթէ այն թղթերով հայրդ համոզես եւ անօրէնին դիմակը վար առնես:

ԲԱԳ․ Է՛ ներելի՞ է գողութիւնը, Պարոն Արբուն, թէեւ գողօնը լոկ թուղթ լինի . . .

ԱՐԲ․ Ի՞նչ խղճահար ես, Բա'գարատ. կեանք, պատիւ, կալուածք այն անզգամին ձեռքը խաղալիկներ եղած են եւ նպատակին համնելու միջոցներ, եւ դո՛ւ ինձ նստեր բարոյական կ'կարդաս:

ԲԱԳ․ Լա՛ւ ուրեմն, գործենք:

ԱՐԲ․ Բայց առանց ձայնի, վասն՛զի Ռուստոմ ունի վարժու բռնած հազար աչք՝ որ ժամուկներու պէս կ'դիտեն եւ իրենց ցանցին մէջ կ'բռնեն, եւ հարիւր բերան ու գրիչ, որ տգիտաբար կամ ստակի համար իր սեւ խորհուրդները կ'պարտկեն եւ մինչեւ անգամ կ'ներբողեն . . . : Ռուստոմ չտեսնէ մեզ միատեղ . . . . բաժնուինք: Տարունակ կասկած ունի թէ՝ ճանճերն անգամ իրեն դէմ կ'դաւադրեն, եւ ճանճի նման թշնամիներն անգամ կ'հալածէ: Ուստի՝ զգուշութի՛ւն . . . ։

ԲԱԳ․ Իր երկայն շուքը հեռուէն կ'տեսնեմ . . . գնա՛, հեռացի՛ր . . . ։

ԱՐԲ․ Դու ալ կակուղ եւ հանդարտ խօսէ՛, ոխդ պահէ՛ . . . թէ ոչ ամենբան կ'աւրես։ (կ'ելնէ)

ՏԵՍԻԼ Գ.

ԲԱԳԱՐԱՏ և ՌՈՒՍՏՈՄ:

ՌՈՒՍ. Անտեսանելի՛ պատանի, ո՛ւր ես. ինչո՞ւ համար միշտ մութը կը փնտռես եւ չես տեսներ այն արեւն որ Կամսարականաց զերդաստանին վրայ կ'ծագի՝ իմ շնորհիւս . . .

ԲԱԳ. Ցինծու արեւ, տաքութիւն չունի, քանի որ մեր տունը սառնարան դարձած է:

ՌՈՒՍ. Ձեր բնիկ տունը Երաշխաւոր է, եւ հօրդ ազգատոհմին հոգին, անունն ու յիշատակն անոր վրայ կ'փայլին . . .

ԲԱԳ. Հապա մօ՞րս . . .

ՌՈՒՍ. Նա՝ երկինքն աւելի պայծառ եւ միշտավառ արեւ մը փնտռեց . . . Բայց . . . ինչո՞ւ երեսդ կախ է, պա՛րոն. միթէ զոհ չե՞ս իմ ծառայութենէս, միթէ կարծես թէ հայրդ այնքան փայլ ու փառք պիտի ստանա՞ր աշխարհիս մէջ, այնքան շքանշաններ պիտի ընդունէ՞ր, եթէ ես չաշխատէի:

ԲԱԳ. Ես առ ոչինչ կ'գրեմ այդ արտաքին պարծանքն, երբ ներքուստ արիւն, մահ, սուգ եւ աւերակ կ'տեսնեմ:

ՌՈՒՍ. Ուրեմն՝ կ'թողում ձեզ կոյր ճակատագրին եւ իսկոյն կ'երթամ հօրդ իմ հրաժարականս տալու խորհրդականութեան եւ մատակարարութեան պաշտօնէս: (Մեկուսի) Ի՜նչ ապերախտ եւ կարճամիտ պատանի, որ ապագայ երջանկութիւնը ներկային ստորին եւ գձուձ շահերուն կ'ուզէ զոհել . . .

ԲԱԳ. Կ'լսեմ բացագանչութիւնդ . . . : Ի՜նչ. միթէ սիրական մօր մ'անբնական մահը փոխարինելի՞ զոհ մ'է. միթէ . . .

ՌՈՒՍ. Անբնակա՛ն . . . . ի՞նչ ըսել կ'ուզես, պա՛րոն . . . . բառերդ կշռէ՛ . . .

ԲԱԳ. Արդէն ըսածս կ'իմանաս, եւ ըսելիքս կ'գուշակես . . .

ՌՈՒՍ. Ես գուշակ չեմ, այլ շիտակ մարդ մը, որ իր պարտքը կ'կատարէ:

ԲԱԳ. Կ'երեւի թէ հօրս պէս միամիտները խաբել՝ քեզի պարտք կ'համարիս . . .

ՌՈՒՍ. Խաբե՛լ . . . է՛հ, կ'նախատես զիս, պա՛րոն . . .

ԲԱԳ. Այդ բաւական չէ, այլ եւ կ'ատեմ քեզ, որ մեր տան կործանման կ'աշխատիս քու շահուդ համար:

ՌՈՒՍ. Անփո՛րձ պատանի, աւելի հանդարտ խօսէ՛ . . . դու դեռ չգիտես թէ ես ո՛վ եմ:

ԲԱԳ. Գայլ մը՝ ոչխարի զգեստով . . .

ՌՈՒՍ. Այսպէս անմեղները կ'հալածուին միշտ եւ բարերարները կ'զրպարտուին . . . Լա՛ւ, ես կ'մեկնիմ . . . անմիջապէս, քանի որ իմ բարե-

կամութիւնս, իմ անձնուիրութիւնս ձեր շահերուն համար այդպէս կ'մեկնես . . . . իմ վարձքս առի . . .

ԲԱԳ. Բայց նախ դարձուր ինձ մայրս, եղբայրս, քոյրս, հօրս գոյքն եւ ապա զնա'⁝. . .

ՌՈՒՍ. (փրփրալով) Է՜հ, չափը կ'անցընես, պարոն, եւ ծանրապէս կ'ամբաստանես զիս . . .

ԲԱԳ. (ձեռքը սուրին տանելով) Է՛, պատրաստ եմ քեզ ի մենամարտ հրաւիրելու . . .

ՌՈՒՍ. Վա՜հ, խելքդ գլուխդ չէ. հաւի հետ մենամարտիլ անպատիւ գործ կ'սեպեմ . . . Պարո՛ն Բագարատ, քիչ մ'ալ մեծցիր, սուր շարժել սորվէ եւ ապա քովս եկուր . . . : (կ'ձեկնի)

ՏԵՍԻԼ Դ.

ԲԱԳԱՐԱՏ։

ԲԱԳ. Ի՛նչ վատ . . . վասն զի յանցաւոր է. ի՛նչպէս կծիկը կ'դնէ . . . Գիտեմ պիտի 'զանգատի հօրս, բայց ամեն բան աչքս առած եմ . . . կա'մ պիտի մեռնիմ, կա'մ այս մարդը պիտի սպաննեմ . . .

ՏԵՍԻԼ Ե.

ԲԱԳԱՐԱՏ Ւ ԱՐԲՈՒՆ։

ԱՐԲ. Ի՞նչ ապուր կերար, Բա'գարատ:

ԲԱԳ. Ի՞նչ պիտի ընէի . . . Ռուստոմին ցոյց տուի սուրս . . . կա'մ ես անոր գլուխը պիտի ուտեմ, կա'մ նա իմս . . . . Ա՛լ հաշտութիւն չկայ մեր մէջ:

ԱՐԲ. Գիտէի որ անհամբեր ես. շիտակ հօրդ գնաց եւ իր հրաժարականը տուաւ. բայց հայրդ մերժեց եւ աղաչեց որ մինչեւ մեքենային գալը շարունակէ իր պաշտօնը:

ԲԱԳ. Իրաւի շատ կոյր է հայրս: Աղաչելու պէտք չունէր, Ռուստոմ այս օր ալ հոս է վաղն ալ։

ԱՐԲ. Հոգ չէ թէ որ մեկնի։ Այս տեղ՝ զրպանս՝ ունիմ ոչ միայն կալուածագրերն, այլ եւ ուրիշ աւելի ծանր բան մը . . .

ԲԱԳ. Ի՞նչ բան։

ԱՐԲ. Մօրդ ինքնագիր մէկ տոմսակը, որով կ'յայտնէ թէ՝ ծանր թոյնի եւ Ռուստոմի վրէժխնդրութեան զոհ կ'երթայ։ Այս տոմսակը Ռուստոմին մահավճիռն է։

ԲԱԳ. Նայէ ի՞նչպէս ուշ կանուխ արդարութիւնը տեղը կ'գայ . . . Բայց, Ա՛րբուն, ի՞նչպէս գտար այդ տոմսակը։

ԱՐԲ· Դիպուածով մը ։ Ն'երեւի թէ մայրդ մահուան անկողնին մէջ գրած եւ տան մէջ վստահելի մարդ չգտնելով, այս տոմսակն իր սնարին մէջ կարած է։ Սպասուհիի մը ձեռք անցնելով այդ տոմսակը՝ բարեբաղդաբար ինծ ցուցուց։ Ձնչին բան է ըսի, եւ առի գրպանս դրի։

ԲԱԳ· Տո՛ւր, կ'աղաչեմ, թղթերն եւ այդ տոմսակը․ շուտով երթամ հօրս ցուցնեմ, որ վերջապէս հասկնայ թէ Ռուստոմ ի՛նչ տեսակ հրէշ մ'է։

ԱՐԲ· Հիմակ ժամանակը չէ․ Ռուստոմը հօրդ քովը տեսայ . . . Ասկից զատ՝ եթէ շիտակ տանիս ցոյց տաս, չպիտի հաւտայ . . . թշնամութիւն պիտի կարծէ։

ԲԱԳ· Ուրեմն ի՞նչ կերպով ընենք . . .

ԱՐԲ· Պէտք է տարբեր կերպարանքով ներկայիս . . . որպէս թէ զաղտնիք մ'ունիս ըսելու Երասխածորի վրայ . . . . Բայց երկուքին ձայնն ալ կը լսեմ, այս տեղ չգան․ ելի՛ր, դու դուրս ելիր, ես կ'մնամ։ (*Բագարատ դուրս կ'ելնէ։*)

ՏԵՍԻԼ Զ·

ԿԱՄՍԱՐ, ՌՈՒՍՏՈՄ ԵՒ ԱՐԲՈՒՆ։

ԿԱՄ· (*Ռուստոմի քղանցքէն քաշելով*) Չէ՛, չէ՛, աշխարհ մէկ կողմ զայ, չպիտի թողում որ հրաժարիս։ Նստի՛ր, այս սենեկին մէջ պիտի փակեմ քեզ. առանց քեզի ես ոչինչ եմ . . . Ինչո՞ւ բանի տեղ կ'դնես անմիտ պատանիի մ'ըսածները, բաւական է որ ես քեզի հետ ըլլիմ։ Դու միշտ իմ խորհրդականս եւ մատակարարս պիտի մնաս եւ ես քեզի լիուլի պիտի վարձատրեմ, միայն սա մեքենան շուտով հասնէր . . .

ՌՈՒՍ· Չէ՛, ալ դիմանալիքս չմնաց․ բարիք ընել եւ փոխարէն չարիք ընդունիլ, ի՛նչ անտանելի բան, Կամսար աղա։ Ես իմ շունչս, իմ խելքս, իմ բոլոր ազդեցութիւնս, իմ կեանքս անգամ սպառեմ քու զերդաստանիդ համար, քու նիւթական եւ բարոյական շահերուդ համար, եւ կալուածներդ օրէ օր ոսկի դարձնեմ . . . եւ . . .

ԱՐԲ· (*Մեկուսի*) Որպէս զի շուտով գրպանէ . . . ։

ՌՈՒՍ· . . . Կամսարականաց իրաւունքն Երասխածորին վրայ հաստատելու ջանա՛մ, կուրծքդ շքանշաններով զարդարել տամ, ազգատոհմիդ երջանկութեան համար գիշեր ցորեկ տքնիմ, եւ ապա . . . ապա Բագարատ տղուդ կողմէ այնքան ծանր խօսքեր, զրպարտութիւններ լսե՛մ . . . չէ՛, չէ՛, ես ահա կ'հրաժարիմ, կ'երթամ . . . (*աթոռէն ելնելու պէս շարժում կ'ընէ*)

ԱՐԲ· (*Մեկուսի*) Սուտ է. զամուած է այդ փափուկ աթոռին վրայ. ելնելիք չունի։

ԿԱՄ· Աստուծու սիրուն, մի՛ հրաժարիր, նստի՛ր . . . մեղք մի՛ սեպեր տղուս խօսքերը . . . տանս տեղս մոխրի վրայ պիտի նստեցնես եթէ հրաժարիս . . . բոլոր մեր ըրած ծախքերը այն մեքենային համար ծովը նետած պիտի ըլլնք . . .

ՌՈՒՍ. Չէ՛, ալ հաստատ որոշած եմ, չպիտի նստիմ . . .

ԿԱՄ. Ո՜հ, ինչ ծիներ կ'բերէ այդ Բազարատ տղաս իմ գլխուս . . . . Պարոն Ռուստոմ, եթէ կ'ուզես իբրեւ զաւակ չեմ ճանչնար այն տղաս եւ ժառանգութենէ կ'զրկեմ . . .

ԱՐԲ. (*մեկուսի*) Ի՜նչ ժառանգութիւն մնաց որ:

ՌՈՒՍ. Չէ՛, չէ՛, ես այնչափ քարսիրտ չեմ. հայր մը զաւկէն զատելու պաշտօն չունիմ, այլ միութիւն հաստատել . . . . Արդէն կ'մօտենայ ժամն՝ երբ մեքենան զալով՝ պիտի քանի եւ Լէման լիճն հայ լիճ պիտի դառնայ...

ԿԱՄ. Ո՜հ, բերա՛նդ պագնեմ, ի՜նչ աղուոր լուր . . .

ՌՈՒՍ. Բայց ես կ'մեկնիմ ահա . . . աւա՜ղ . . . ամեն բան անկատար պիտի մնայ: (*մեկնիլ կ'ձեւացնէ*)

ԿԱՄ. (*օձիքէն բռնելով*) Ո՜հ, մի՛, մի՛ մեկնիր, հոգիդ սիրես, Աստուածդ սիրես . . . պիտի սպասնես զիս եւ ապազաս: (*առ Արբուն*) Արբո՛ւն, շո՛ւտ օգնէ, ինծ որ Պ. Ռուստոմն աթոռէն չիջնէ: (*Արբուն կ'մօտի, և փոխանակ վար քաշելու, կ'հրէ Ռուստոմն որ աթոռէն ելնէ:*)

ԱՐԲ. (*մեկուսի*) Պարա՜պ բան. նա աւելի կ'տեղաւորուի փափուկ աթոռին վրայ. ի՜նչ ծիծաղաշարժ խաղ՞է այս:

ՏԵՍԻԼ Է.

ԿԱՄՍԱՐ, ՌՈՒՍՏՈՄ, ԱՐԲՈՒՆ Ւ ՄՈՒՇԻԿ:

ՄՈՒՇ. Տէ՛ր, տէր իմ . . . ո՜հ, վազելէն շունչս հատաւ . . .

ԿԱՄ. Խօսէ՛, անպիտան, ժամանակ զտար հեւալու, մինչդեռ իմ սիրտս կ'հեւայ . . . նորէն ի՞նչ կայ . . .

ՄՈՒՇ. Շո՛ւտ, տէր իմ, շո՛ւտ, վա՛ր իջէք . . . մեծ, մեծ մարդիկ եկան այցելութեան . . . կարմիր, դեղին, կանաչ, կապոյտ ժապաւէններ ունին իրենց կուրծքին վրայ, ոսկի թրթի բարձիկներ իրենց ուսերուն վրայ, երկայն սուրեր իրենց մէջքը . . . Կամառ, ռամառ, շրան, շրօն, ֆրան, ֆրօն կ'խօսին . . . կարծեմ ձեզի կ'ուզեն տեսնել . . . շատ խոշոր, փայլուն մարդիկ են...

ՌՈՒՍ. Հասկցա՛յ. Սարդման կոմսը, Պարպամ դուքսն եւ Կալբրամ հազարապետն են . . .

ԿԱՄ. Ի՞նչ կ'ըսես, Պարոն Ռուստոմ, իրա՜ւ . . . մեծ մարդիկ են . . . այս այցելութիւնն ալ միթէ քու շնորհդ չէ՞. ի՜նչ պարծանք . . . ուրախութենէս տեղս . . . չեմ կրնար կենալ: (*առ Մուշիկ*) Ծօ՛ներս, մեծ սրահը հրամցուցի՞ր այդ իշխանազունները:

ՄՈՒՇ. Հապա՛, աթոռներ ալ տուի որ նստին. թէեւ մէկ քանին կոտրած են, տէր իմ, երբ Երասխածոր երթանք, այն ատեն պիտի նորոգուին, ըսիք:

ՌՈՒՍ. Իրաւ. Երասխածորի ճամբան կ'մօտենայ, Կամսար աղա. աղուոր լուրեր պիտի ընդունիս, գնա՛. միայն առնցի՛ր զիս: Երթաս բարեաւ:

ԱՐԲ. (*մեկուսի*) Հրաժարողը տան տէրը կ'ճամբէ, ինք կ'մնայ:

ԿԱՄ. Բայց պէտք է որ հանգիստ սրտով երթամ: Վեր վար դռները գոցեցէք: Արքո՛ն, դուն դո՛ւրս ելիր եւ սա սենեկին դուռը պահպանէ. դուն ալ, Մո՛ւշիկ, սա միւս դուռը կեցի՛ր, եւ մի՛ թողուք որ Պ. Ռուստոմ մեկնի, կ'իմանա՞ք:

ԱՐՔ. և ՄՈՒՇ. (*փասին*) Անհո՛գ եղիր, Կամսար աղա. Պ. Ռուստոմը չմեկնիր . . . իր տունն է: (*Դուրս կ'ելնեն և դռներուն քով կ'կենան։*)

ՏԵՍԻԼ Է.

ՌՈՒՍՏՈՄ *առանձին*։

ՌՈՒՍ. Ցաղթանակը տարի, թո՛ղ Պ. Բազարատ ճաթի: Հապա նոր հիւրերն՝ որ իմ դրդմամբս եկած են, բոլորովին պիտի գրաւեն Կամսարի սիրտը . . . Եւ ո՛վ կ'մեկնի այս տեղէն, խե՞ւ եմ: Դեռ ամեն բան չլմնցուցի: Իրաւ, Զաքարիկ ու Հիրիկ իմ ափիս մէջն են, թէեւ շաղակրատ Տիկին Կամսար արդէն Աստուծոյ ծոցն է, Աստուած ողորմի հոգուն, բայց կ'մնայ սա ըմբոստ Բազարատն, որու գլուխը պիտի ուտեմ անշուշտ. կ'մնան Պ. Կամսարի զանազան արտերն ու ագարակներն, որ քիչ օրէն իմ վրաս պիտի դառնան, վերջապէս գործս յաջող է: Քանի մ'օր եւս եւ Կամսար աղան թող ձեռքերը գլխուն զարնէ . . . (*գլուխ մը կ'երևի դռնէն*) Ո՞վ է այն . . .

ՏԵՍԻԼ Թ.

ՌՈՒՍՏՈՄ և ԿԱԴՄՈՍ։

ՌՈՒՍ. Դո՞ւն ես, Կադմոս, խեր ըլլի, ի՞նչ կայ:

ԿԱԴ. Ի՞նչ պիտի ըլլի. գրասեղանիս մէջէն կալուածագրերդ գողցեր են...

ՌՈՒՍ. Գողցե՛ր են. ի՛նչ կ'ըսես, անօրէն, ո՞վ կրնայ գողնալ . . .

ԿԱԴ. Իրաւ որ ես ալ չգիտեմ . . .

ՌՈՒՍ. Ուրեմն դո՛ւն ես գողը . . .

ԿԱԴ. Ես լրտես եմ, բայց ժամանակէ մ'ի վեր, ուրիշներն ալ մեզ կ'լրտեսեն, այս բանն մեր պայմանին մէջ չկար . . . ուստի հիմակ ազատ եմ...

ՌՈՒՍ. Թղթերս երեւան հանէ, թէ ոչ աչքերդ կ'հանեմ:

ԿԱԴ. Ես անմեղ եմ . . . . միայն անցեալ օր գինին քիչ մ'եւելկեկ փախեր էր, այնպէս որ գրասեղանիս մօտ սկսայ մրափել. երբ աչքս բացի, տեսայ որ գրասեղանս բաց էր, եւ մէջէն թղթերը թռեր են . . .

ՌՈՒՍ. Ծո՛ խելքդ թռուցի՞ր. ո՞վ առաւ ուրեմն. թող գրասեղանիդ վրայ պառկէիր . . .

ԿԱԴ. Ի՛նչ ծանր եւ սրտմաշուք պաշտօն է իմս . . . չէ՛, չէ՛, ես պիտի փախչիմ . . . սրտիս վրայ լեռ մը կայ որ կ'ճզմէ զիս . . .

ՌՈՒՍ. Այն կլորիկ ոսկիները տուր ինծ եւ այնպէս կորիր, անմի՛տ մարդ:

ԿԱԴ. Անոնք հալեցան գացին. հիմակ ես կ'հալիմ. մանաւանդ որ գիշերները ինծ կ'երեւի խեղճ Կամսար խաթունն եւ վրաս կրակ կ'թափէ . . . հիւանդ եմ. թող որ երթամ . . .

ՌՈՒՍ. Ապո՛ւշ, գոնէ ըսէ՛, որո՞ւ վրայ կասկած ունիս . . .

ԿԱԴ. Բազարատին վրայ . . . քանի երեսը նայիմ, սիրտս փորս կ'խաղայ . . .

ՌՈՒՍ. Շատ կարելի է որ նա ուրիշին ձեռօք կալուածագրերը գողցած է. ինք շատ առաքինի կենդանի մ'է, եւ այդպիսի գործ մը չըներ: (կ'մտածէ)

ԿԱԴ. Կ'աղաչեմ, հրաման տուր որ երթամ, հիւանդ եմ . . .

ՌՈՒՍ. Կ'հաւտամ, գնա՛ դեղ առ . . .

ԿԱԴ. Կոզմասի դեղէն չեմ ուզեր . . . գիտես . . .

ՌՈՒՍ. Գնա՛, գնա՛ վարը նստիր. երբ հրամայեմ այն ժամանակ պիտի մեկնիս: (Կադմոս դողալով դուրս կ'ելնէ:)

ՏԵՍԻԼ Թ.

ՌՈՒՍՏՈՄ առանձին:

ՌՈՒՍ. (վեր վար կ'քալէ արտորնօք) Յաղթութիւնս կատարեալ չէ. բան մը կ'դառնայ. կարծեմ թէ Կադմոս զիս կ'մատնէ . . . Ինչ այլանդակ մարդ. իր ստուերէն անգամ կ'վախնայ. կ'տանջէ զինք խիղճն, որ, ըստ իս, պարզապէս անգոյ ուրուական մ'է, միայն տղոց ահարկու: Ողորմելի՛ մարդ . . . կ'երեւի թէ Բազարատ ակռաները կ'սրէ ինծի դէմ, բայց ես պիտի խորտակեմ այդ ակռաները . . . Դարձեալ ձայն կ'լսեմ . . . չեն թողուր որ մարդս երկու բոպէ հանդարտ խորհի եւ ընելիքն որոշէ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՌՈՒՍՏՈՄ, ԱՐԲՈՒՆ, ՄՈՒՇԻԿ:

ՌՈՒՍ. Ի՞նչ կ'ուզէք:

ԱՐԲ. Քանի մը մարդիկ՝ որ կ'ըսեն թէ՝ գրիչ, լուսին, արեւ եւ աշխարհ շարժել գիտեն, կ'փափաքին ձեզ տեսնել, տէր իմ:

ՌՈՒՍ. Անուն չունի՞ն:

ԱՐԲ. Ունին. Սեւունի, Հովնակ, Գիսակ:

ՌՈՒՍ. Հա՛, մեր գիտցած հացկատակներն են. թող հրամեն:

ՄՈՒՇ. Պարո՛ն Ռուստոմ, դռները պահպանե՞նք. պիտի հրաժարի՞ք, թէ ոչ երթանք. պիտի փախչի՞ք . . .

ՌՈՒՍ. Ձեր պաշտօնը կատարեցէք: Պատուաւոր մարդն իր խօսքին գերին է:

ԱՐԲ․ (առ Մուշիկ) Ըսել կ'ուզէ, Մուշիկ աղբեր, որ կրնանք դռները կըռնակի վրայ բանալ, եւ մեր գործին երթալ . . . : (կ'ելնեն)

ՏԵՍԻԼ ԺԲ․

ՌՈՒՍՏՈՄ, ՍԵՒՈՒՆԻ, ՀՈՎՆԱԿ, ԳԻՍԱԿ․

ՌՈՒՍ․ Բարի՛ եկաք, ստա՞կ կ'ուզէք . . .

ՍԵՒ․ Ո՜հ, ի՜նչ խօսք է այդ․ չգիտէք, տէր իմ, որ Ազգին համար սիրտ, հոգի կ'թափենք, անօթի, ծարաւ։

ՌՈՒՍ․ Այսինքն, շատ մեկան կ'թափէք . . . Ուրեմն ի՞նչ է ձեր այցելութեան նպատակը, շո՛ւտ ըսէք . . . ։

ՍԵՒ․ Նախ՝ աւագ պարտ կ'համարինք ողջունել ձեր հանճարն՝ որ նախախնամութեան պաշտօն կ'վարէ եւ հայութեան վրայ հսկելով՝ իր լոյսը կ'ծաւալէ Երասխաձորի վրայ։ Ուստի հայ մամլոյն կողմէ եկած ենք աղաչելու ձեզ, որ այդ վսեմ պաշտօնէն չհրաժարիք․

ՌՈՒՍ․ (մեկուսի) Ցիմար չե՞ն։ (առ Սեւունի) Անկարելի՛ բան . . .

ՀՈՎ․ Արդեօք կարելի՞ է գոնէ պատճառն իմանալ . . .

ՌՈՒՍ․ Ամպերն, որ այդ լոյսը կ'ծածկեն . . .

ԳԻՍ․ Է՜հ, կ'վանենք այդ ամպերը . . . ։

ՌՈՒՍ․ Է՛ ինի՞ք զօրութիւն։

ՍԵՒ․ Իմ գրիչս արդէն ռումբ մ'է, որ կ'խորտակէ․ Հովնակին իմացականութիւնը սլաք մ'է, որ կ'ծակէ․ Գիսակին հոգին վառարան մ'է, որ կ'հըրդեհէ․ այս ամեն ոյժերը ձեր հրամանին տակն են, տէր իմ։

ՌՈՒՍ․ (մեկուսի) Ի՞նչպէս շողորոքթելու ատեն, գիտեն նաեւ ինքզինքնին շողոքորթել այս փոքր մարդիկ . . . ։ (առ Սեւունի) Դու ամենէ ճարտասանը կ'երեւիս . . . քեզի կ'ուղղեմ իմ շնորհակալիքս։ Ուրեմն ուղղեցէ՛ք ձեր այդ զէնքերը թշնամիին դէմ . . . եւ այդ ձեր գործակցութեամբ թերեւս շարունակեմ պաշտօնս։

ՀՈՎ․ Պայման չենք ընդունիր․ ո՞ր է թշնամին․ բաւական է որ նշմար մը ընէք։

ՌՈՒՍ․ Ի՞նչ ըսեմ․ աներեւոյթ էակ մ'է, հոգի մը, ամպ մ՝որ կ'ջանայ խորտակել այն մեքենան, որով պիտի շինուի Նամսարականաց տոհմային շէնքը։

ԳԻՍ․ Ուրեմն, բարեկամներ, խօսինք, գրենք, գոչենք այդ աներեւոյթին դէմ . . . ։

ՍԵՒ․ Մեր պայմանն ազգասիրական է, գիտէք, տէր իմ . . . որ . . .

ՌՈՒՍ․ Անշուշտ գիտեմ . . . (Տրար մ'ոսկի գրպանէն կ'հանէ) Առէք . . ։

ՀՈՎ․ Ի՜նչ սրամիտ մարդ . . . ։

ԳԻՍ․ Ի՜նչ վեհանձն մարդ . . . ։

ՍԵՒ․ Ի՜նչ առատասիրտ հոգի . . . ։

ՌՈՒՍ· Հերի՛ք է՚. ՚. գացէք եւ ձեր պարտքը կատարեցէք . . . անձնուի-րաբար։

ՍԵՒ ԳԻՍ. և ՀՈՎ.՚ (միասին) Անձնուիրութիւնը մեր նշանաբանն է, տէր իմ, եւ մեր Թերթերում էջերը պիտի սեւնան ձեր վսեմ յառկութեասց փայլով: (կ'ելնեն)

ՏԵՍԻԼ Ժ Գ.

ՌՈՒՍՏՈՄ, ԿԱՄՍԱՐ։

ԿԱՄ· Փա՛ռք, որ հոս ես, Պարոն Ռուստոմ. սիրտս դողի մէջ էր. կար-ծէի Թէ հրաժարականդ գրած գացած ես . . . սեւ սուգերու մէջ պիտի մըտ-նէի . . . :

ՌՈՒՍ· Տատոնց գացած էի՝ եԹէ այդ անզգամ պահակներդ, Արբուն եւ Մուշիկ, բայց մ'առնելուս՝ կենացս չսպառնային, մանաւանդ սա հայ մամ-լոյն ներկայացուցիչներն օծիքէս չբռնէին . . . :

ՄՈՒՇ· (դրան քով քնանալ ձևացնելով Արբունին հետ, գլուխը կ'վերցնէ և կ'ըսէ աչքերը շփելով) Սո՛ւտ է:

ՌՈՒՍ· Իսկ դու ի՞նչ ըրիր, Կամսա՛ր աղա:

ԿԱՄ· Արդէն գիտես· գործերը կարգին են. յոյս շատ կայ որ ամսէ մը ճամբայ ենենք դէպ ի Երասխաձոր: Այցելու կոմսերն ու դքսերը մեծ մեծ խոստումներ ըրին եւ ըսին որ քու հրահանգներուդ հետեւիմ միշտ: Ես ալ այս գիտնալով չէի Թողուր, որ պաշտօնէդ հրաժարիս:

ՌՈՒՍ· Բայց ես գէշ լուրեր առի . . . : Մեր մերձնային դէմ կ'գործեն . . . կարծեմ, մեր յառակագիծը պիտի աւրուի . . . :

ԿԱՄ· Ի՞նչ կ'ըսես, Պարոն Ռուստոմ . . . ո՞վ պիտի աւրէ . . .

ՌՈՒՍ· Այդպիսի ձայն մ'ականջիս հասաւ. պէտք է որ երԹամ ստուգեմ: Դուք ալ ջանացէք շահիլ Բազարատը: Ես ոխակալ մարդ չեմ: Այդ միա-միտ պատանիին կ'ներեմ. այսպիսի բարակ բաներու խելքը չհասնիր . . . . իսկ՝ եԹէ միշտ անզգաստ մնայ, քիչ մ'օդափոխուԹեան համար դուրս ղրկէ . . . : Դարձեալ դու գիտես, հայրն ես. մնաս բարեւ . . . :

ԿԱՄ· Ես գիտեմ ինչ պիտի ընեմ, Պարոն Ռուստոմ, եԹէ չհնազանդի . . . : Հապա դու շուտով պիտի դառնա՞ս . . . չըլլի՛ որ հրաժարիս . . . :

ՌՈՒՍ· Աստուած գիտէ . . . : (կ'ելնէ)

—

ՏԵՍԻԼ ԺԴ.

ԿԱՄՍԱՐ մինակը։

ԿԱՄ. Ինչ անխոհեմ տղայ է սա Բագարատս. ո՜րքան վշտացուցեր է մեր Գ. Ռուստոմին սիրտն . . . : Է՜, շատ կ'սիրեմ այդ Թշուառականն՝ իր բոլոր պակասութիւններուն չնայելով . . . Ռուստոմն ալ բարի մարդ է . . . եւ ո՜րչափ ներողամիտ . . . բայց ի՜նչպէս համոզեմ այն պինդ գլուխը . . . չհասկնար թէ ի՜նչ մեծ շահ եւ ապագայ պիտի ունենայ, երբ միանգամ յաջողիմ . . . իմ անբաւ հարստութեամբս Երասխամօրը դրախտ պիտի դարձնեմ . . . Մե՜ղք որ կինս այս փառքին չհասաւ . . . Աստուած ողորմի հոգուն . . . : Ո՞վ կայ դուրսը, եկէ՛ք . . . Նայիմ պիտի կարենա՞մ դարձնել իր գլուխը . . . եկէ՛ք . . . ո՞վ կայ դուրսը . . .

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԿԱՄՍԱՐ, ԶԱՔԱՐԻԿ Եւ ՀԻՐԻԿ վերջերով։

ՀԻՐ. Ո՞ւր էիր, հա՛յր. քեզի կ'փնտռեմ երկու ժամ է:

ԿԱՄ. Ի՞նչ կայ, ա՛ղջիկ . . .

ՀԻՐ. Ա՛լ աղջիկդ չեմ . . . . օրհնութիւնդ տուր ինձ . . . . վաղը պիտի կարգուիմ:

ԿԱՄ. Պիտի կարգուի՞ս, աղջիկ. այդչափ շո՞ւտ. դեռ մօրդ սուգն ունիս . . . խե՞նդ ես:

ՀԻՐ. Դիտուն եւ ազատամիտ աղջիկի համար՝ ո՛չ սուգ կայ եւ ո՛չ ժամանակ: Աղօնք նախապաշարմունք են . . . :

ԿԱՄ. Է՛յ, չե՞ս ամչնար, ա՛ղջիկ:

ՀԻՐ. Ամօթն ի՞նչ է . . . ես ազատ ծնայ, ազատ պիտի . . . կարգուիմ . . . եւ ուզածս պիտի առնեմ . . . :

ԿԱՄ. (*մեկուսի ժպտելով*) Մեր աղջիկը քիչ մը համարձակ մեծցաւ . . . բանահիւս է . . . ի՞նչ ընես, քաշելու է: (*առ Հիրիկ*) Գոնէ քիչ մը համբերէիր, որ հարմնիքն Երասխամօր ընէինք . . . :

ՀԻՐ. Վո՛յ, խելքիդ մեռնիմ, հա՛յրիկ, մինչեւ որ այդ խմճորն հասունանայ, իմ մազերս պիտի ճերմկին . . . : Ի՛նչ. պառաւնամ նէ պիտի կարգուիմ . . . :

ԶԱՔ. Հա՛յրիկ, չէի՞ ըսեր քեզի. կ'տեսնե՞ս, հասկցած ջրդիկդ չէ:

ՀԻՐ. Նօրէ՞ն սկսար, մուկի՛ ծագուկ . . . :

ԶԱՔ· Հապա ատեն մը կ՚ըսէիր, դու, կա՛տուիկ, որ մարապետ պիտի ըլլա, որ գիրքերուդ հետ պիտի կարգուիս, քու նշանածներդ են Լամարդին, Պայրն, Հիւկօ . . . հիմակ ա՛յսչափ նշանած կ՚զոհես մէկ հատիկի համար. եւ ի՞նչ նշանած. մէկ աչքը կոյր է, պեխին կէսը մուկը կերեր է, ականջին մէկ կտորը՝ կատուն. կրտած հաւի մը կ՚նմանի. այս բաւական չէ, օտարական մ՚է, եւ հայերէն չգիտէ . . . խերը տեսնես:

ՀԻՐ· (ոտքերը գետինը զարնելով) Հի՛մակ կու լամ, հայրիկ. սա խեւին խօսք պիտի հասկցնե՞ս. հիմակ երեսները պիտի ճանկռտեմ . . .

ԿԱՄ· Բայց, ա՛ղջիկս . . . . այդ այլանդակ նշանածն ո՞վ ընտրեց քեզի համար . . . :

ՀԻՐ· Բարեկամդ Պ. Ռուստոմ . . . :

ԿԱՄ· Օ՛հ, այն ատեն իրաւունք ունիս: (առ Զաքարիկ) Ծօ՛ դուն ուրիշին գործին ի՞նչ կ՚խառնուիս:

ԶԱՔ· Իրաւ է, որ ես ալ իմ գործս ունիմ. ինծի ալ օրհնութիւնդ տուր, հա՛յրիկ:

ԿԱՄ· Ծօ՛ դո՞ւ ալ կ՚կարգուիս:

ԶԱՔ· Ես համալսարան պիտի երթամ որ այբ բէն սորվիմ . . . :

ԿԱՄ· Ծօ՛ այս տեղ չե՞ս կրնար բան սորվիլ:

ԶԱՔ· Հապա քու գիտուններդ ինծի յարմար բան մը չգտան, մէկ երկու ժամ կռուելէն ետեւ: Այս տեղ մնալով բեռնակի՞ր պիտի ըլլամ . . .

ՀԻՐ· Հիմակ ի՞չ ես որ . . . պա՛րոնիկ . . .

ԶԱՔ· Լեզուդ քեզի քաշէ . . .

ԿԱՄ· Է՛յ, լո՛ւռ . . . ծօ՛ ո՞վ ըսաւ որ . . . համալսարանն երթաս:

ԶԱՔ· Պ. Ռուստոմ:

ԿԱՄ· Է՛ այն ատեն խնդիրը կ՚փոխուի . . . գոնէ սպասէիր որ Երասխածոր երթալէն ետեւ ուսումդ սկսէիր:

ԶԱՔ· Ի՞նչ. իմ Թոռներո՞ւս հետ . . .

ԿԱՄ· Ուրեմն կ՚օրհնեմ ձեզ, գացէ՛ք . . . բայց Բազարատ ո՞ւր է . . . Աբբո՛ն, Մուշի՛կ, եկէք . . . : Դուք գացէք . . . Աստուած հետերնիդ:

(Դուրս կ՚ելնեն։)

ՏԵՍԻԼ ԺԶ·

ԿԱՄՍԱՐ, ԱՐԲՈՒՆ Ա ՄՈՒՇԻԿ։

ԱՐԲ· Ա ՄՈՒՇ· (զատ դռները մտնելով) Մե՞զ կ՚կանչէք, տէ՛ր իմ:

ԿԱՄ· Ո՞ւր էք, ա՛նպիտաններ:

ՄՈՒՇ· Դռները կ՚պահպանէինք, տէ՛ր իմ:

ԿԱՄ· Ծօ՛, որո՞ւ դէմ:

ԱՐԲ· Ձեզի դէմ, տէ՛ր իմ:

ԿԱՄ· Ինծի՛ դէմ. եւ ինչո՞ւ:

ՄՈՒՇ. Որպէս զի չփախչիք, եւ ժամանակէն առաջ Երասխաձոր չերթաք:

ԿԱՄ. Ծօ՛ ո՞վ տուաւ ձեզի այդ հրամանը:

ԱՐԲ. Պ. Ռուստոմ . . . Ուստի քիչ մ՚առաջ՝ ներսէն դուրս կ՚պահպանէինք դռներն, հիմակ դրսէն ներս կ՚պահպանենք, որ ո՛չ մարդ մտնէ եւ ո՛չ ելնէ:

ԿԱՄ. Աստուած ձեզի շնորհ տայ: Խե՞նդ էք. սխալ հասկցած էք Պ. Ռուստոմին պատուէրը:

ՄՈՒՇ. Է՛ այս տեղ ո՞ր խօսքն՝ բայն, նպատակն շիտակ են, տէր իմ . . .

ԿԱՄ. Վախնամ, որ Բազարատն ալ եկած եւ դռները գոց գտնելով՝ գացած է:

ԱՐԲ. Շատ հաւանական է որ Պ. Ռուստոմ մասնաւոր դիտմամբ պատուիրեց որ դռները գոց պահենք եւ չբանանք:

ԿԱՄ. Ի՛նչ այլանդակ բաներ կ՚ըսէք: Արդեօք լուր մ՚առի՞ք Բազարատի վրայ:

ՄՈՒՇ. Երբ դրան երկաթը շինել տալու համար քիչ մը դուրս ելայ, շատ անախորժ ձայներ ականջիս զարկին, տէ՛ր իմ:

ԿԱՄ. Ի՛նչ լուրեր, պատմէ՛:

ՄՈՒՇ. Ըսին թէ մէկ քանի ձիաւորներ զինեալ յանկարծ Պ. Բազարատը յափշտակելով՝ հեռու տեղ մը տարեր բանտարկեր են, բայց որդիդ յաջողեր է խոյս տալ . . . մինակ չգիտցուիր թէ ո՛ւր է . . .

ԿԱՄ. Է՛ ո՞վ կ՚յանդգնի որդիս բանտարկել. ի՞նչ յանցանք գործած է . . .

ՄՈՒՇ. Կարելի է . . . լի է . . . լի է . . . Պ. Ռուստոմը:

ԿԱՄ. Անկարելի՛, անկարելի բան: Իրաւ միասին կռիւ մ՚ունեցան . . . բայց Պ. Ռուստոմ ոխակալ մարդ չէ, թէեւ զօրաւոր մարդ է . . .

ԱՐԲ. Ո՞վ գիտէ . . .

ԿԱՄ. Ո՛հ, իմ յո՛յսս, իմ զաւա՛կս . . . Արդեօք յուսահատութենէ զըլխուն ձի՞ն մը բերաւ . . . չեմ կարծեր: Հապա որո՞ւ հետ պիտի երթամ Երասխաձոր . . . Տ՛ւտ, շ՛ւտ երթանք զինք փնտռենք . . . :

(Ամենքը դուրս կ՚ելնեն։)

ՏԵՍԻԼ ԺԻ.

ՌՈՒՍՏՈՄ — մինակ եւ վերջը։

ՌՈՒՍ. Ա՛խ, ժամանակին իմացայ պատրաստուած որոգայթը . . . այնքան խնամքով ու ճարպկութեամբ շինած շէնքս, բաղդս, մէկ վայրկենի մէջ պիտի փլէր, եթէ արթուն չըլլէի . . . բայց Բազարատ պարապ զլուխ չէ . . . միշտ վախ ունէի իրմէ . . . եւ իրօք՝ բոլոր գաղտնի թղթերս եւ մանաւանդ մօրս կնքնագիր մէկ տոմսակը գտնելով՝ ինչպէս որ իմացայ, իմ կործանմանս

դատավճիռն իր ձեռքն ունէր . . . Ի՞նչ ըսեմ ես այն տխմար Կադմոսին . . . Իսկոյն իմ որոգայթս լարեցի. բռնեցի զինք իմ մէկ քանի գաղտնի գործակալներուս ձեռօք. արդէն մութ բանտն էր, եւ ձեռքը գտնուած թղթերը բռնի պիտի առնէին, բայց կ՚իմանամ որ բանտէն փախեր է եւ քաղքին մէջ մուրացկանի հագուստով կ՚պտըտի . . . ո՞ւր, չգիտեմ . . . Ի՜նչ մտատանջութիւն . . . կ՚կատղիմ, ձեռքէս սահեցաւ որսը . . . բայց դեռ յոյս ունիմ. իմ զէնքս պատրաստ է . . . այս անգամ վերստին լրագիրները զայն կ՚սրեն զըրչով . . . անտարակոյս այդ մուրացկանը պիտի գայ գտնէ իր հայրն եւ ամէն բան պիտի յայտնէ . . . այս է իր միակ փափաքը . . . Այն ժամանակ . . . (*ականջ կ՚դնէ*) Լռութի՜ւն, Ռուստո՛մ . . . ոտքի ձայն կ՚լսեմ . . . ո՞վ է այն . . . ո՞վ . . . :

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՌՈՒՍՏՈՄ և ԿԱՄՍԱՐ:

ԿԱՄ. (*արտօրնօք*) Ա՜խ, ո՞ւր ես, բա՛րեկամ, քեզ փնտռելէն հոգիս բերանս եկաւ . . . Ի՞նչ լուր, կ՚աղաչեմ, Բագարատին վրայ. ես սեւ սեւ լուրեր կ՚առնեմ, ստո՞յգ են . . . : (*աչքերը կ՚լեցուին և կ՚սրբէ*)

ՌՈՒՍ. Ի՞նչ ցաւս պահեմ . . . ես ալ չկրցայ արտասուքս բռնել, երբ սա լրագրին մէջ կարդացի թէ . . . ա՜հ, սիրտս չդիմանար, Թշուա՛ռ հայր. դու եթէ կարող ես, կարդա՛ սա տողերը (*լրագիրն անոր կ՚տայ՝ իբր աչքերուն արտասուքը սրբելով*):

ԿԱՄ. (*կ՚կարդայ*) «Ստոյգ աղբիւրէ կ՚իմանանք. որ Վսեմապատիւ եւ գե-«րահամբաւ Կամսար պէյին երէց որդին. Ազնուաշուք Պ. Բագարատ, ծով-«եզրը պտըտելու միջոցին դաւաճան մը վրան կ՚յարձակի եւ զինք կարեվէր «վիրաւորելով՝ մարմինը ծովը կ՚նետէ . . .»: Ա՜խ, որդեակ իմ . . . (*կ՚ինայ լրագիրն, և ձեռքովն երեսը կ՚ծածկէ*) Չեմ կարող շարունակել. հոգիս կը հատնի, Պ. Ռուստոմ . . .

ՌՈՒՍ. Թշուա՜ռ հայր . . . գոնէ բաջութեամբ ծախեր է իր կեանքը . . . որդիդ, Կամսար աղա, դիւցազնի արիւն ունէր . . .

ԿԱՄ. Ի՜նչ ըրեր է . . .

ՌՈՒՍ. Շարունակէ՛ . . . (*լրագիրը կ՚տայ*):

ԿԱՄ. (*կ՚շարունակէ ընթերցումը*) — . . . «Կամսարականաց քաջազն տոհ-«մին արժանի թոռն՝ Բագարատ, թէեւ վիրաւոր, իսկոյն ծովէն դուրս կ՚ցատ-«կէ, կ՚բռնէ մարդասպանը եւ ոստիկանութեան յանձնելէն ետեւ՝ վերստին «ծովը կ՚նետուի՝ ըսելով. — «Այս վէրքս մահաբեր է. իմ ճակատագիրս է՝ «ծովուն յատակը լուալ մարմինս եւ ձուկերուն փորն իմ գերեզմանս ընել . . .»: «— Ի՜նչ վսեմ խօսք . . . Չերթ ասուլ, որ ընդ հորիզոնն սլանայ՝ ընկաւ «նա անհունութեան ծոցն: Մեր ստացած վերջին տեղեկութեանց նայելով՝ «մարդասպանն ոստիկանութեան բանտէն խոյս տուեր է, եւ այժմ ծպտեալ կը

«պտըտի քաղքին մէջ»: — (*կ'խօսի*) **Ո՜հ**, ինչպէս սիրտս կտոր կտոր կ'ըլլի ... վերջին օրերն ի՜նչպէս գէշ կ'վարուէի խեղճ **Բագարատիս** հետ .... այս բանս աւելի կ'տանջէ սիրտս ... ա՛լ ի՞նչ ընեմ ես **Երասխաձորն** ...: **Բայց** ուրիշ կերպ լսած էի ես իր վրայ .... ըսին որ՝ որդիս բռնի բանտը դրեր են ...:

ՌՈՒՍ· **Լրագիրները** սուտ չեն խօսիր. վերջին լուրն աւելի հաւանական կ'երեւի, **Կամսար** աղա: **Կ'երեւի** նաեւ որ որդիդ զուրսը թշնամի ունէր ... **Մեր** նուիրական պարտքն է գտնել մարդասպանը ... եւ տարակոյս չունիմ որ պիտի գտնենք ...: **Այսօրուընէ** սուրդ մի՛ հաներ մէջքէդ ... պէտք պիտի ըլլի ... անօրէնին արիւնը պիտի ծծեմ, որ անմեղ մը, **Կամսարա**կանաց յառաջաւու եւ հոտաւէտ մէկ ծաղիկն անգթաբար հնձեց ...

ԿԱՄ· **Ա՛հ**, **Պ. Ռուստոմ**, հոգի, շանչ չմնաց վրաս. չեմ յուսար որ այսուհետեւ երկար ապրիմ ... **Ուստի՝** դու, դո՛ւ պիտի լուծես վրէժս ...

ՌՈՒՍ· **Հոգ** մի՛ ըներ ... վրէժխնդրութեան ժամը կ'մօտի ... **Ինչպէս** իմացայ, այն անզգամ մարդասպանն՝ քու կենացդ դէմ ալ կ'դաւաճանէ ...

ՏԵՍԻԼ ԺԹ·

ԿԱՄՍԱՐ, ՌՈՒՍՏՈՄ, *Մուրացկան մը դրան մէջ*։

ԿԱՄ· **Ո՞վ** է այն ...

ՄՈՒՐԱՑ· **Խեղճ** մուրացկան մ'որ կարեւոր լուրեր ունի հաղորդել քեզի, քու որդւոյդ վրայ:

ՌՈՒՍ· **Կասկածելի** է ա՛յդ մարդն. (*կ'պոռայ*) **Արբո՛ւն**, **Մուշի՛կ**, **Կադմո՛ս**, եկէ՛ք ...:

ՏԵՍԻԼ Ի·

ԾՌԱՋԻՆՔ, ԱՐԲՈՒՆ, ՄՈՒՇԻԿ, ԿԱԴՄՈՍ։

ՌՈՒՍ· **Դո՛ւրս** հանեցէք սա մարդը ...

ՄՈՒՐԱՑ· **Ես** խօսք մ'ունիմ միայն, թոյլ տուր, դու անօրէն ... (*զգեստին տակէն դաշոյն մը հանելու վրայ է*)։

ՌՈՒՍ· **Ա՛հ**, **Կամսար** աղա, այս է զաւակդ սպաննողը. այս է ... ըսի ... քու արեանդ ալ ծարաւի գազանը ...

ԿԱՄ· (*սուրն յանկարծ քաշելով վրան կ'յարձակի որ զարնէ*) **Ո՛** անօրէն, որդւոյս արիւնը վրէժ կ'գոչէ .... ա՛ռ փոխարէնն .... (*ըսելով քայլ մը կ'առնէ, երբ մուրացկանը շուտ մը հագուստը վար կ'ձգէ, և ձեռքը սամակ մը բռնած ցոյց տալով՝ նոյն ինքն Բագարատ երեւան կ'ելնէ*)։

ԹԱԳ․ Մա՛յր իմ, ահա՛ այս տոմսակը վրէժ կ՚պահանջէ . . . . (*պահ մը՝ Թուստոմ քար կտրած, Կամսար՝ բոլորովին շուարած և աչքը՝ Թուստոմի վրայ զայրոյթով սեւռած, Բազարատ՝ հօրը ոտքն ընկած, և միւս բոլոր դերասաններն՝ հիացման մէջ՝ անշարժ կեցած*)։

ԿԱՄ․ Ելի՛ր, ո՛տք ելիր, որդեակ. (*որդին կ՚գրկէ մէկ ձեռքով և միւսովը տոմսակն առած կ՚կարդայ*) — «Թուստոմ իմ տունս փլեց, զաւակներս իզմէ բաժնեց, խեղճ ամուսինս խաբեց՝ գեղեցիկ մը հրապոյրով, եւ հիմակ իմ կեանքս Թունաւորեց . . . ես կ՚մեռնիմ . . . Պարո՛ն Կամսար, պահպանէ՛ զլուխդ, պահպանէ՛ Բազարատս . . . օձ մը կայ տան մէջ . . . :

«Քու հոգեւոր ընկերդ
«ՇՈՒՇԱՆ»

(*առ Թուստոմ*) Է՛յ, հրէ՛շ . . . ի՛նչ անդունդ բերիր ձգեցիր զիս. հիմակ կը բացուին աչքերս . . . . կ՚տեսնեմ լոյսը, այս զաւկիս շնորհիւ, որու սիրտը մազ մնաց պիտի ծակէի այս սրովս . . . . : Ներար կնոջս զլուխը, աւերակ դարձուցիր տունս, զաւակներս իզմէ առիր, եւ կ՚ուզէիր որ այս Բազարատս ալ ձեռօքս մորթեմ . . : Է՛հ, լցա՛ւ անօրէնութեանդ չափն . . . ա՛ռ վարձքդ (*Թուստոմին վրայ կ՚վազէ և՝ սուրն առնելով՝ անոր կուրծքը կ՚մխէ*) Այսպէս պիտի սատակին իմ տանս Թշնամիներն . . . :

ԱՄԵՆՔԸ․ (*միաբերան*) Ընկա՛ւ անօրէնն . . . . . . :

(*Վարագոյրը կ՚իջնէ։*)

Մ․ Մ․

ՎԵՐՋ

Պ Է Պ Օ

ԿՕՄԵԴԻԱ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիզի քաղաքային Թատրոնում՝ 1871 Թուի Ապրիլի 30-ին։

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ARMENIAN LIBRARY,
ԱԶԳ.
NEW BRITAIN, CONN.
ՆԻՒ ԲՐԻԹԸՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ԹԻՖԼԻԶ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի.
Միքայէլեան փողոց, № 81.
1901

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Января 1901 г.

ՄԵԾԱՐԳՈՅ

ՊԱՐՈՆ ԳԷՈՐԳ ՉՄՃԿԵԱՆԻՆ

ՆՈՒԷՐ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՍԻՐԵԼԻ ԳԷՈՐԳ.

Դու վաղուց խնդրում էիր ինձ՝ «մէկ բան գրել Թատրոնի համար մեր Թիֆլիզի պաժարմիմնրի կեանքից»։

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նիւթի առարկայ, թէեւ քո պատուէրը երբէք մտքիցս չէր հեռանում։

Բայց պատահմունքը վճռեց գործը։

Մէկ օր Թատրոնում ներկայացնում էին հանգուցեալ Փուղինեանցի Մօլիէրից փոխադրած «ՎՈՒՐ ՏՐԱՔՎԻՍ, ՊԻՏԻ ՊՍԱԿՎԻՍ» կատակերգութիւնը, որի մէջ դու կատարում էիր Շամիրի դերը։

Քո հագուստը, դէմքը, շարժուածքը, խաղը, ձայնը այն դերի մէջ, յանկարծ մտքումս ծագեցրին հարց թէ՝ ի՞նչպէս կը վարուէր Շամիրի նման մարդն այնպիսի դէպքում, երբ մեր հարստահարողներից մէկը փող պարտ լինէր նրան եւ չկամենար ճանաչել իր պարտքը։

Պէպօի հիմը զցուեց, մնացածն ինքն ըստ ինքեան եկաւ. նամանաւանդ այնպիսի մէկ դիպուած, որ այն ժամանակներում ես անձամբ փորձել էի (մէկ հարուստ ինձ տուած խօսքն

ուրացել էր), արդէն նախապատրաստել էր իմ գլխում Պէպօի հակառակորդի պատկերը։

Կազմելով հետզհետէ երեւակայութեանս մէջ պիէսի կազմը եւ նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցայ, որ այն դասի մէջ, որի զանազան ներկայացուցիչներին այստեղ արհամարհանքով անուանում՝ են *պաժարնի, լօթի, կինտօ,* կան մարդիկ, որոնք իրանց քաջութեամբ, մեծահոգութեամբ եւ վեհանձնութեամբ կարող են օրինակ լինել շատ եւ շատ բարձր դասին պատկանող մարդկանց։ Այս պատճառով Շամիրի բնաւորութիւնը պիէսումս մարմնացաւ Կակուլու մէջ. իսկ նրանից բարձր տիպը՝ միեւնոյն դասի, ես իմ կարողութեան չափ աշխատեցի ցոյց տալ Պէպօի մէջ։

Երբ ես մօտաւորապէս պատմեցի քեզ Պէպօի բովանդակութեան գլխաւոր միտքը, այն օրից սկսած՝ դու էլ ձեռք չվեր առար ինձանից. ստուերի պէս հետեւում էիր ինձ՝ աշխատելով շուտով եւ շուտով հանել իմ գլխից քո սիրեկան Պէպօին եւ գրչի տալ իմ խօսքերը։

Եւ ահա 1870 Թուի սկզբում, դու, ըստ սո-

վորականին, վեր առար թուղթ ու գրիչ, եւ ես սկսեցի թելադրել քեզ Պէպօն, որը թէեւ շուտով ընդմիջուեց, բայց յիշեալ թուի յուլիս ամսին միեւնոյն ձեւով շարունակուեց եւ վերջացաւ Կրծանիսում։

Թերթելով այժմ Պէպօի սկզբնական օրինակը, ես գտնում եմ, որ համարեա ամբողջ պիէսը քո ձեռքով է գրուած, բացի մի քանի տեսիլներից, ուր քո բացակայութեան ժամանակ օգնել են ինձ Պ. Զաքարիա Բաքանասեանցը եւ մեր թատրոնի տաղանդաւոր աշխատակից Պ. Յովհաննէս Ամերիկեանը։

Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ անձանց, նամանաւանդ Պ. Ամերիկեանին, որ ուրիշ շատ անգամ եւս օգնել է ինձ իմ թատրոնական ասպարիզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն ու անձնանուիրութիւնը, որ դու կրել ես՝ թէ՛ ներկայ հեղինակութեանս եւ թէ այլ գրուածներիս մեծ մասի մէջ։ Բայց առայժմ խօսքս միայն Պէպօի մասին է։

Քանի՜ եւ քանի անգամ գործդ թողած ամառային շոգ պապանաքին, ոտով եկել ես եւ գնացել Կրծանիս. քանի՜ եւ քանի անգամ

հետը խորհրդակցել եմ, օգուտներ քաղել քո խորհուրդներից եւ ծանծրացրել քեզ իմ ծանր ու բարակ մասլահաթներով. քանի՜ եւ քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձեւացնելով քեզ մէկ գրող մեքենայ, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժուածքների ազատութիւնն եմ վայելել. քանի՜ եւ քանի անգամ երբեմն արագութեամբ թերթեր ես լցրել իմ խօսքերով եւ ստէպ-ստէպ համութիւնդ ցոյց տալով, ոյժ ես տուել ինձ շարունակելու, երբեմն էլ յօնքերդ տօթելով՝ կամ տասն անգամ կրկնել ես միեւնոյն վերջին խօսքերս կամ լուռ ու մունջ մնացել, առանց մէկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չդնել մտքիս ընթացքին։ Ո՞վ իմանայ՝ ի՜նչ մտքեր են ծագել քո մէջ այն ժամանակ, ի՜նչ մտքեր ես կլանել, ի՜նչ մտքեր զոհել, երբ ես, ուղեղս փորելով, աշխատելիս եմ եղել իմ միտքն ընդարձակել, իմ միտքը գեղեցկացնել։ Մի՛ով բանիւ՝ քո կամքը ենթարկել ես իմ կամքին, քո սովորութիւններն իմ սովորութիւններին, քո ժամանակն իմ ժամանակին, քո աշխատանքն իմ

աշխատանքին. եւ այս բոլորը, բոլորը միայն նրա համար, որ Պէպօն շուտով լոյս տեսնի, դու քո սիրեկան Թատրոնի համար մէկ նոր պիէս ճարես։

Մտաբերելով անցեալը, մտաբերելով այն ժամերը, երբ Պէպօն գրվում էր, երբ մեր մըտերիմ խօսակցութեան մէջ Պէպօից մենք անդադար անցնում էինք դէպի նրա եղբայրակիցները, նրանցից դէպի ժողովուրդը, ժողովրդից—ազգը, ես խոստովանում եմ որ այն ժամերը միշտ կը մնան իմ կեանքիս ամենաերջանիկ ժամեր։

Յիշո՞ւմ ես, սիրելի Գէորգ, այն առաւօտները, երբ արեգակը, գլուխը դուրս բերելով հեռու հորիզոնում, մէկ առանձին լոյս էր թափում ծառերի տերեւների ու դիմացի սարի վրայ, մինչդեռ հազարաւոր թռչունների կանուխ երգը, շատ անգամ խօսքս բերանիս կիսակտուր թողնելով, տանում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ։ Յիշո՞ւմ ես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հաւաքվում էր իմ ընտանիքում, այն հանաքները, ծիծաղը, ուրախութիւնը, Նազօրի երեւակայական «սա-

րի օմքնիրը», Նօվանէի ճիանուրը, խեղճ Նավանգուլի բայաթիները, ծկնորս Լօփիանի պարը, քո արհեստալի բարբարոսական եղանակով՝ «*ինձ ու իմ սիրեկան նարին*», Ամերիկեանի երգերը, նրան ընծայած սարսափելի փունջը, եւ այլն եւ այլն... Բոլորն ունէր իր գեղեցկութիւնը, իր հիացքը, մինչեւ անգամ այն անտանելի սեւ միջատների անթիւ զօրքը, որ մոմի առաջ հաւաքուելով մեր գլխին, մանաւանդ քո գլխին, շատ անգամ առիթ էին լինում Պէպօի թերթերը ցիր ու ցան անելու։

Յիշո՞ւմ ես դու Թէլէթի այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք կիւրակի առաւօտները ժամը չորսից սկսած, ներկայացնելով իրանցից մէկ գեղեցիկ զունաւոր ժապաւէն, անցնում էին մեր բնակարանի առաջից եւ բարձրաձայն պատմում միմեանց իրանց վշտերը։ Քանի՜ իսկական Շուշան եւ Կէկէլ, քանի՜ յատուկ Պէպօ եւ Կակուլի ենք տեսել նրանց թւում։ Ես երբէք չեմ մոռանալ այն խօսքերը, որ մէկ կին, նայելով մեր պատշգամբին, ասաց իր ընկերուհուն. «Է՛ստի մտիկ, սրանք բաղումն էլ դիւաններով ին, ’ես կի տանս մէ կոտրած սկա-

մի էլ չունիմ», եւ այս դառը խօսքերը նա կըն-քեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի ուրա-խութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինի։ Քանի՜ այսպիսի դատողութիւններ են արտա-յայտել նրանք, քանի՜ մտքեր են զարթեցրել նրանց զանգատները։ Ճշմարիտն ասած, տես-նելով այդ մարդկանց, լսելով եւ համակրելով դրանց, հարկաւոր էր ինձանից շատ եւ շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանա-ւոր գոյներով նկարել դրանց։ Բայց երբ մարդ ապրելով ժողովրդի մէջ, նրա ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ տըրտ-մում, եւ այս զգացմունքները նա կարողանում է փոքր ի շատէ պատկերացնել, այդ էլ, ար-դարեւ, մեծ բաւականութիւն է։

Ինչ եւ իցէ, ժամանակը հասաւ. Պէպօն ներ-կայացրիք թատրոնում առաջին անգամ 1871 թուի Ապրիլի 30-ին։ Պէպօի դերը դու ինքդ կատարեցիր եւ կատարում ես ցարդ՝ բեմի վը-րայ։ Դու տուիր նրան շունչ եւ կենդանութիւն, քո խաղը գերազանցեց գրուածքից. իսկ Պ. Ամերիկեանը, որ ներկայացնում էր Պէպօի հակառակորդի պատկերը, եւ միւս մասնակցող

անծինք իրանց հանճարաւոր խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալու հարստահարուած Պէպօի համակրական ոգին։

Այն ծափահարութիւնը, այն ընդունելութիւնը, որ առաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից թատրոնում, ես արդէն բաժանել եմ քեզ եւ քո ընկերների հետ։ Այժմ թոյլ տուր ինձ, սիրելի Գէորգ, խնդրել քեզ՝ ընդունել եւ այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ քո չափազանց աշխատութեան եւ հարկ՝ քո անսահման սիրոյն դէպի մեր թատրոնը։

Քո Գաբրիէլ Սունդուկեանց։

ԹԻՖԼԻԶ

6 Նոյեմբերի 1876 Թ.

Պ Է Պ Օ

ԿՈՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թիֆլիզի Թատրոն, 30 Ապրիլի 1871 Թ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՈՒԹԻՆ, *հարուստ վաճառական* . Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ †
ԷՓԷՄԻԱՑ, *Արութինի երկրորդ կինը* . Տ. ԱՆԱԻՍ
ՊԷՊՕ, *ձկնորս*. . . . . Պ. ՉՄՇԿԵԱՆ
ՃՈՒՃԱՆ, *Պէպօի մայրը, այրի կին* . Տ. ԱՐԱՄԵԱՆՑ †
ԿԷԿԷԼ, *Պէպօի քոյրը* . . . . . Օր. ԹԱԳՈՒՀԻ †
ԳԻՔՕ, *Պէպօի ազգական* . . . . Պ. ՄԻՐԱՂԵԱՆՑ †
ԿԱԿՈՒԼԻ, *Պէպօի բարեկամ* . . . Պ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ
ԳԻԳՕԼԻ, *Արութինի դուքնի աշկերտ* . Պ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ †
ՍԱՄՍՕՆ, *Արութինի տանու ծառան* . Պ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ†

Երկու այլ ծառայ Արութինի տանը։

Առաջին եւ երրորդ արարուածները կատարվում են Պէպօի տանը, իսկ երկրորդը՝ Արութինի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1870-ին։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կազմուածքով. երեսը կարմիր, լիքը և ածելած։ Սև ներկած կարճ մազեր, հաստ յօնքեր և խուզած բեխեր։ Եւրոպական հագուստ. սպիտակ շապիկ, գունաւոր՝ փողպատ, ժիլէտ և պանտալօն։ Սև սերթուկ և գլխարկ-ցիլինդր։ Ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայով։ Գործ է ածում գունաւոր մետաքսեայ թաշկինակ, փոքրիկ դեղին սաթէ համրիչ և ծոցի մէջ պօրտմօնէ։ Շարժուածքը, ման գալն ու խօսուածքը ծանր։ Ըստ երևոյթին պատուաւոր անձն։

ԷՓԷՄԻԱՅ. 30 տարեկան, գեղեցիկ և վայելչակազմ կին չէկ մազերով։ Եւրոպական մօդայի ամենաշքեղ բաց-կապոյտ հագուստ, վրացնակ գլխով (չիքիլայ, ոսկեկար ճակատի աղլուխ և այլն)։ Զարդարուած է ոսկէ ժամացոյցով, երկար շղթայով և զանազան ակնեղէններով։ Պարանոցին ունի կարմիր բանտ։ Խօսակցութիւնը, շարժուածքը և ման գալը արագ ու կրակոտ։ Շատ է քրքրվում։

ՊԷՊՕ. 35 տարեկան, թուխ և գեղեցիկ դէմքով, բարձր հասակով, ամուր կազմուածքով և լայն կրծքով։ Սև կարճ մազեր, ճակատի վրայ բերած. բարակ

յոնքեր և բեխեր. երեսն ածելած։ Ունի երկու ձեռք Թիֆլիզի բուն յօթու հագուստ՝ մինը հասարակ, միւսը զարդի։ Առաջինն է՝ չթէ կամ սպիտակ շապիկ, մուգ-կապոյտ դօշլուղ, սև ղայթանով բոլորած. սև նաշուրի արխալուխ։ Լէզգու սև շալից չօխայ առանց զարդարանքի. միևնոյն շալից լայն շալուար, ծայրերի ներսի կողմը զանգեալի մէջ շարշուբաղով ամրացրած. սև ղափաղաւոր լափչիքներ, արծաթէ նեղ քամար, կարմիր մորթէ երկար գդակ, ծայրը փոքր ինչ ներս ծալած. կարմիր բամբակէ թաշկինակ։ Զարդի հագուստն է՝ մետաքսեայ կարմիր դօշլուղ և սև արխալուխ, երկուսն էլ բարակ ոսկեթելով բոլորած։ Դաւայինի դեղին չօխայ, սև լայն չափարիշով զարդարած. նոյն կտորից լայն շալուար, ծայրերը վերոյիշեալ ձևով ամրացրած. սպիտակ ղափաղաւոր լափչիքներ կանանչ ղայթաններով. Բուխարու սև գդակ, ծայրը կտրած. մետաքսեայ Իմերէթու գօտիկ, կապոյտ բամբակէ թաշկինակ։ Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազդու, շարժուածքն ու խօսակցութեան ձևերը բուն ժողովրդական։

ՇՈՒՇԱՆ. այրի կին 50 տարեկան, միջին հասակով և հաճելի դէմքով։ Վրաց հասարակ հագուստ, մէ տակ (ցածր կապած) գլուխ (ճակատի սև աղլուխ, սպիտակ հաստ լաչաք, սև փաթաթելու)։ Սև հասարակ տերնոյից կամ ալպակայից դէրիայ, կուրծքը ծածկած։ Հասարակ սև շալ։ Տանից դուրս գնալու ժամանակ գործ է ածում սպիտակ ղաթիբայ։

ԿԷԿԷԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ, գրաւիչ դէմքով, սև երկար մազերով։ Վրացնակ հա-

սարակ հագուստ (ճակատի ազլուխ, չիքիլայ, չթէ գէրիայ և այլն)։ Ձայնը քաղցր, շարժուածքը համեստ։

ԳԻՔՕ. 65 տարեկան, միջին հասակով, փոքր ինչ մէջքը ծռած։ Սպիտակ մազեր և բեխեր, երեսն ածե-լած։ Վրաց հագուստ՝ սպիտակ շապիկ, կուրծքը սև ղայթանով բոլորած, սպիտակ ղալամքարէ կամ մուգ-կապոյտ նաշուրի արխալուխ, սև մահուդէ կարայ և լայն շալուար։ Խարազի սև լափչիքներ ցածր կրնկնե-րով, Բուխարու սև գդակ, ծայրը ներս ծալած. հա-սարակ շալէ կամ կապոյտ ղանաւուզէ գօտիկ։ Գործ է ածում ձեռնափայտ, քթախոտ և կապոյտ չթէ թաշկինակ։ Ման գալը, շարժուածքն ու խօսակցու-թիւնը չափից դուրս դանդաղ։

ԿԱԿՈԽԼԻ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածր Պէպօից։ Երեսը կարմիր և գեղեցիկ. սև մա-ղեր, ճակատի վրայ բերած. բարակ յօնքեր, բարակ բեխեր և նօսր կարճ մօրուք։ Թիֆլիզի բուն պա-ժառնու կամ կինտօյի չքեղ հագուստ՝ մաւի մորթէ մեծ գդակ. Բագուի ձևի, կարմիր մետաքսեայ շապիկ և դօշլուղ. կապոյտ կամ սև ղանաւուզէ արխալուխ։ Քօբաշու սև շալից կարճ և շաքերով չօխայ. միևնոյն շալից լայն շալուար, ծայրերը զանգեալում կամ պա-ճիճում բոլորովին ամրացրած։ Դօշլուղը, արխալուխը և չօխան ամենաչքեղ ձևով զարդարուած են կլապի-տոնէ լայն բաֆթաներով։ Լէզգու երկար ճտերաւոր չուստիներ, բարակ ոսկեթելով բոլորած. արծաթէ լայն քամար, Բաղդադի թաշկինակ։ Ձայնը, շար-ժուածքն ու խօսակցութեան ձևերը կոշտ։

ԳԻԳՕԼԻ. 25 տարեկան։ Վրաց հասարակ հա-

գուստ՝ սպիտակ չիթէ արխալուխ, կրծքի կոճակները մէջ գցած, սև մահուդից կաբայ. Նոյն մահուդից կամ սպիտակ պարուսինից շալուար. արծաթէ նեղ քամար. ձեռքին գլխարկ-փուրաշկայ։

ՍԱՄՍՕՆ. 18 *տարեկան. սև երկար մազեր, եւրոպական ձևով սանդրած։ Եւրոպական սպիտակ շապիկ, հասարակ չիթէ արխալուխ, կրծքի կոճակները բաց, նեղ քամար և գունաւոր նեղ շալուար։ Յետոյ Չերքէզի չքեղ հագուստ՝ սօսանի ատլասէ արխալուխ, բոլոր կոճակները մէջ գցած. սպիտակ մահուդէ չերքէզկայ արծաթէ մասրաներով. Նոյն մահուդից նեղ շալուար, ծայրերը կարմիր մահուդով։ Բոլոր հագուստը զարդարուած է կլապիտոնէ բաֆթաներով։ Եւրոպական՛ փայլուն կօշիկներ, արծաթէ շքեղ քամար, արծաթապատ դաշոյնով։ Վառօդամանի կլապիտոնէ լայն բաֆթայ։ Բոլոր ժամանակ առանց գլխարկի։*

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅ՝ ֆրակով, սպիտակ ձեռնոցներով և առանց գլխարկի։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է հին ձևի աղքատիկ սենեակ թարեքնե-րով, դօլաբներով, լուսամուտով և երեք դռնով՝ աջ, ձախ և մէջ տեղը։ Ձախ) կողմը դրած է գորգով ծածկած տախտ նահալիով և մութաքայով, իսկ աջ կողմը՝ հասարակ սեղան։ Սենեակի այս անկիւնում մի թոկ կայ կապած։ Դօլաբնե-րում և թարեքների վրայ դարսած են հինօրեայ պղնձէ, կաւէ ու փայտէ ամաններ։ Մի քանի հասարակ աթոռներ լրացնում են սենեակի զարդը։ Կէսօր է։*

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՇՈՒՇԱՆ, *տախտի վրայ նստած, գուլպայ է գործում,* ԿԷԿԷԼ, *սեղանի մօտ աթոռի վրայ նստած, շտապով կար է անում։*

ՇՈՒՇԱՆ

Չես իմանո՞ւմ, քա՛։

ԿԷԿԷԼ

Ա՛յ, էս էլ պրծնիմ, դէդի։

ՇՈՒՇԱՆ

Թո՛ղ, մէ քիչ դնջացի, ճժում պրծի։

---

*) *Աջ, ձախ՝ բոլոր գրուածում պէտք է ընդունել հան-դիսականների դիրքից նայելով։*

ԿԵԿԵԼ

Չի ըլի դէդի, է՜, յօրէս տէրը գու քայ։

ՇՈՒՇԱՆ

Նրա աճկն էլ կարիմ. խիստ շատ է տալի՞։

ԿԵԿԵԼ

Բանն էլ էտ է, է՜, դէդի. ինչրու Նրա գալը դիփ հազիր վուր չըլի, էլ թամամ գինը չի տա։ Խօ գիդիս ի՛նչ անաստուծն է։

ՇՈՒՇԱՆ

Ախար աճկիտ լուսը խօ չիս կանա հանի. սաղ գիշիր, հէնց բռնէ, չիս քնի ու ջեր) վուրդի էր ծէքը, վուր էլի բանի նստեցար։*

ԿԵԿԵԼ

Ի՞նչ անինք, դէդի, խղճի հացը էժան չէ ճարվում։

ՇՈՒՇԱՆ

Հէ՛րիք արա, հէ՛րիք, վուրթի։ Ջանդամը միր գըլուխը, վունցոր ըլի կու ապրինք։

ԿԵԿԵԼ

Էս սահաթիս, դէդի ջան, ա՛յ. Աստուծ գիդենայ, քիչ է մնացի։

ՇՈՒՇԱՆ

Սաղ գիշիր ջում-ջումի բերիք ինձ՝ դուն մէ կուռը, քու ախպուր փիքրը մէկէլը։ (Լռութիւն։) *Նա էլ ի՛նչ էլաւ. իմքին բան չըլի էկի գլուխը։*

ԿԵԿԵԼ, *վախեցած։*

Ի՞նչս ասում, դէդի. գանա էս անց էլ չէ մնացի դուսը գիշիրո՞վ։

---

*) Ջեր—դեռ. ջէր—անգամ։

ԺՈՒԺԱՆ

Էս օր խիստ ուշացաւ, Կէկէլ. առանց էն առուտնիրը տուն է էկի ու հիմի յօրէս կէսօրի վուխտն է։

ԿԷԿԷԼ

Ի՞նչ հաջաթ, դէդի ջան, էգէրա փողոցումը բան լուս ննգաւ։

ԺՈՒԺԱՆ, *ոգոց հանելով։*

Աստուծ անէ էտէնց ըլի, վուրթի. սիրտս գնում ու գալիս է... Ո՛վ գիդէ ջուրը մինձացաւ, ո՛վ գիդէ իմքնի էդնէն ննգաւ ու ինքն էլ հիդը գնաց։

ԿԷԿԷԼ

Է՜, ինչի՞ր իս ասում, դէդի։

ԺՈՒԺԱՆ

Նրա գլխին էլ վուր մէ բան գայ, ջուրն ածելու կու դառնանք։

ԿԷԿԷԼ

Աստուծ գիդենայ, անմիղ իս նիղանում, դէդի ջան. էրեխայ խօ չէ, սիրտս էլ անմիղ շուռ ու մուռ իս բերում։

ԺՈՒԺԱՆ

Էսէնց էլ ապրիլ կուլի՞... Հախմիան Տէ՛րն անէ քու դադաստանը, Ա՛րութին։

Դրսից ոտի ձայն է լսվում։

ԿԷԿԷԼ, *ուրախ։*

Ա՛յ, դէդի, յօրէն։

ԺՈՒԺԱՆ, *ականջ դնելով։*

Նա է՞։ (*Գլուխը շարժում է։*) Չէ՞։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած եւ ձեռքին փայտ:

Բարի լոյս ձիզ:

ՃՈՒՃԱՆ, *տխուր:*

Աստձու բարին, Գիքօ... Համեցէք:

ԿԷԿԷԼ, *վեր կենալով, Գիքօին գլուխ է տալիս, յետոյ առանձին:*

Անկս քիզ էր մնում:

Նստում է իր գործին:

ԳԻՔՕ, *նստելով աթոռի վրայ Շուշանի մօտ:*

Վո՞ւնց իք, ի՞նչ բարին հարցնինք:

ՃՈՒՃԱՆ

Փառք Աստձու, կանք:

ԳԻՔՕ

Է՜, փառք Աստձու: Էս ո՞ւր է Պէպօն. ջեր չէ տուն էկի՞:

ՃՈՒՃԱՆ, *վախեցած:*

Հը՞մ, իմքին խաբար կա՞յ:

ԳԻՔՕ

Հա՛, բան ունիմ ասելու:

ՃՈՒՃԱՆ, *ծնգանը խփելով:*

Վո՜յ, քոռանամ 'ես,*) ի՞նչ խաբար է:

---

*) Ե տառը մակակէտով նշանակած ('ե) պէտք է արտա-

ԳԻՔՕ, ուղղուելով։

Ինչ խաբա՛ր...

ՇՈՒՇԱՆ

Հա՛։

ԳԻՔՕ

Լաւ խաբար չէ, Շուշան։

ՇՈՒՇԱՆ, աւելի վախեցած։

Ի՞նչ է, խի՞խավիլ է։

Կէկէլը, կարը թողնելով, վախեցած նայում է։

ԳԻՔՕ, զարմացած։

Ո՞վ է խիխավի, ի՞նչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ

Պէպօն. բաս չէ խիխավի՞։

ԳԻՔՕ, երեսը խաչակնքելով։

Տէ՜ր օղորմած Աստուձ. էտ 'ես չիմ իմանում, ինչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ

Ախար իրիգուն կէս գիշիրին դամբը վիկալաւ, գնաց ու ջեր չէ տուն էկի։

ԳԻՔՕ

Վա՜, օխնած հոքի, վախեցայ. նա ի՞նչ խիխավելու ահ ունէ։ Էն ի՞նչ Քուռը պիտի ըլի, վուր նրան ախտէ։

ՇՈՒՇԱՆ

Բաս ի՞նչ խաբար էիր ասում։

սանել խսկ և խսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի վանկը՝ բառի մէջում կամ վերջում, ձայնաւորից յետոյ. օրինակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, Եսա յի, և այլն։

ԳԻՔՕ

Ինչ խաբա՞ր...

ՇՈՒՇԱՆ

Հա՛, մէ չո՛ւստ ասա, թէ Աստուծ կու սիրիս։

ԳԻՔՕ

Մո՛ւլափ, է՛. մէ քիչ համփիրութին ունեցի, հէր օխնած։ Աստուծ շատ բանիր է գրի մարթու ճակտին՝ վախտ կայ ուրախութին, վախտ կայ տխրութին։

Գրպանից հանում է քթախոտի տուփը։

ԿԷԿԷԼ, *առանձին։*

Ինչկլի կօսէ, իմն ինծ կու հասնի։

ՇՈՒՇԱՆ

Միզ համա խօ զարթնի տխրութինը Աստուծ ուրիշ բա՛ն չէ տվի։

ԳԻՔՕ

Ի՞նչ անիս, Շուշա՛ն, Աստծու ձեռին է ուրախութինն էլ, (*Յօրանջում է։*) տխրութինն էլ... (*Կրկին յօրանջում է եւ քթախոտ քաշում։*) Հը՜մ... էէ՜, փունցոր Աստուծ գուզէ, էնէնց կուլի մարթու բանը։

ՇՈՒՇԱՆ

Նրա կամքն ըլի, ի՛նչ անինք։

ԳԻՔՕ

Է՛տէնց է, էտէնց, Շուշան... Ախար, էսօր առուտեհան լաւ բան չիմացայ. էլ չդնջացայ, ինչրու չըգնացի ու ձիր փեսի հիդ դէմուդէմը չխօսեցայ։ (*Կէկէլին։*) Շատ հարց ու բարով արաւ քիզ, ա՛յ, Կէկէլ։ (*Կէկէլը թեթեւ գլուխ է տալիս, առանձին աչքերը սրբում է եւ կարը շարունակում։*) Խիստ իմ կարօտի, կօսէ... (*Քթախոտ քաշելով։*) Հը՜մ... էէ՜։

ՇՈՒՇԱՆ

Հալեցիր ու մաշեցիր խոմ, Գիքօ. մէ սամ ու պրծի, էլի։

ԳԻՔՕ

Է՛ս սհաթիս, էս սհաթիս, Շուշան... (Քթախոտ քաշելով։) Հը՜մ... հը՜մ... փօխա՜կ... Աստուձ, վուր մարթուն ստիղծիլ է, համփիրութիննն էլ հիդն է տվի։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աճկն էլ։

ԳԻՔՕ, կրկին քթախոտ քաշելով։

Հը՜մ... էն էի սաում, վուր, (Կամենալով փռշտալ։) վուր, վուր, վուր (Փռշտում է։) ըա հը՜ա։ (Կրկին կամենալով փռշտալ։) Ըա՛ ըա՛ ըա՛... (Փռշտում է։) ըա հը՜ա։ Օ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, ինչ բուռնութի է՜. խէր էկաւ, ա՛յ։

ՇՈՒՇԱՆ

Առուխչ ըլիս։

ԳԻՔՕ

Վուրթիքդ (Կամենալով փռշտալ։) ա ա ա ապրին, (Փռշտում է։) ըա, հը՜ա...

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ա՛յ, չօռ ու ցաւ, թէ խօսիս։

ԳԻՔՕ

Էս խէր ու կէս... (Կամենալով փռշտալ։) Էս էլ, էլ, (Կրկին փռշտում է։) ըա հը՜ա... Էս էլ ջուխտ խէր... Կուլի վիրջը խէր ըլի։

ՇՈՒՇԱՆ

Քունը վունց խէրն իմացայ ջեր ու վունց չառը։

ԳԻՔՕ

Խէրն էլ ու չառն էլ Աստձու ձեռին է, Շուշան։

(*Քթախոտի տուփը գրպանը դնելով։*) Օ՛հ, *խիստ մեծ բուռնութի է էլի անիծածը։ Հազրէնը մէ ջէր չի պատահի, վուր բուռնութու վրայ փռշտամ. ամա էրևում է իմ սովոր բուռնութին չին տվի... 'Ղալբացաւ* *) *աշխարքը, Ձուշան, ի՞նչ անիս։* (*Տուփը կրկին հանելով գրպանից եւ բաց անելով։*) *Իմքին խօ չկայ մէշը խառը։* (*Տնղդելով։*) *Չէ՞, վունչիչ չէ էրևում։ Աքա՛, Ձուշան, քու աճկը կուլի ուփրօ լաւ ըլի կարում։*

ՁՈՒՁԱՆ, *առանձին։*

Քու աճկի պլպլիկն էլ կարիմ։

ԿԷԿԷԼ, *առանձին։*

Պատիժ է՞։

ԳԻՔՕ

Մէ՛ տիս, է՞, թէ Աստուած կու սիրիս։

ՁՈՒՁԱՆ, *առանձին։*

'Ղազաբ է՞... (*Առնելով տուփը եւ տնղդելով։*) *Լաւ բուռնութի է էրևում. ամա, մէ ասա՛, թէ Սախղծողը կու սիրիս, ի՞նչ խաբար իս բերի...* (*Տուփը Գիքօի մօտ դնելով։*) *Հոքէնիրուս խօ հանեցիր։*

ԳԻՔՕ

Տօ՛, ի՞նչ խիստ իս ՝շտապում։ Մուլափ տանք, էգէբա Պէպօն էլ վրայ հասնի, նրա բանն ուփրօ է։

Քիթը շարունակ սրբում է Թաշկինակով։

ԿԷԿԷԼ, *առանձին։*

Ճաշն էլ էստի է ուզում անուշ անի. մինք խօ խիստ շատ ունինք ուտելու, մնացիլ էր սա։

---

*) *Ղ տառը մակակէտով նշանակած ('ղ) պէտք է արտասանել որպէս Պարսից կամ Թուրքաց* ق *կամ Վրացոց* ყ*։*

ՇՈՒՇԱՆ, *առանձին։*

Բարիքան ննգնի քնթումդ։ (*Գիրքօին։*) Ախար մէ խօսկ էլ է մայինց ասա։

ԳԻՔՕ

Գիդիս ի՞նչ է, Շուշան. (*Ձայնը ցածրացնելով։*) մէ ախչկատ դուս ըրգէ ախար, է՞։

ՇՈՒՇԱՆ, *ցածր։*

Նա իր բանին է, ի՞նչ կու իմանայ, ցա՛ծր ասա։

ԳԻՔՕ

Վուր իմանայ լաւ չէ, Շուշան, է՞. չիս գիդի թէ Խիկարն ինչիր է ասում էստու վրայ։

ՇՈՒՇԱՆ

Խիկարն ո՞վ է, քա՛. նա էլ խառն է էստումը՞։

ԳԻՔՕ, *ծիծաղելով։*

Հը՜, հը՜, հը՜, հը՜... (*Ծիծաղը դառնում է հազ։*) Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...

ՇՈՒՇԱՆ, *առանձին։*

Ա՜յ, Աստծու կրակ, թէ ասիս ու պըծնիս։

ԳԻՔՕ, *հազը շարունակելով։*

Խիկարը, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, փիլիսոփայ... հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ... (ՊԷՊՕՆ, *կուլիսի ետեւից երգում է՝*

«Շարա՜բը Շամ շուղա ասթ,
Շուբհի նադարադ,») *)

ԿԷԿԷԼ, *առաջ վազելով եւ ուրախ։*

Ա՛յ, Պէպօն։

---

*) Պարսկերէն է։ — Գինին Դամասկոսի է եղել,
Կասկածանք չկայ,

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, *երգը շարունակելով, ներս է մտնում միջի դռնից՝ գլխարկով, հասարակ սեւ հագուստով, թեւքերը յետ ծալած, դամբը (ուռկան) ուսին եւ առջեւը գօտկից կապած կարմիր թաշկինակում կենդանի ձկներ։*

«Արա՛ղի քիշմիշ ասթ,
Բարդար փիալա,
Գեալ այլաշ»։ *)

ԿԷԿԷԼ

Աճկէներուս խօ ջուր կարեցիր, Պէպօ։

ՃՈՒՃԱՆ

Ինչի՞ գիդիս, տօ՛, կեհաս ու կու կորչիս։

ՊԷՊՕ, *ուրախ։*

Վա՛յ, էսէնց վուր չանիմ, Աստուձ մանանայ խօ չէ դէվէր ղրգում միզ համա։ Օ՜, Գիքօ, լաւ վուխտն իս էկի։ Մէ մուրծէք ուտեցնիմ քիզ էս սհաթիս, վուր քէփդ գայ. ամա թէ քնթէտ բուռնութի իս կաթեցրի վրէն, էլ մէ թիքայ չիմ տուր տա, հա՛... (*Հանելով մի մեծ ձուկ։*) Աբա՛... (*Ձկան պոչով Գիքօյի թշերին խփելով։*) Օ՛, չէնի կի ճիրի մէ... Մէ թամաշա արա, է՜։

---

*) *Պարսկերէն է։—Հիւթը քիշմիշի է,*
Վեր առ, փիալա,
Թուրքերէն է։—Ե՛կ նստիր։

ԳԻՔՕ

Ջանէս, չանէս, տօ:

Կէկէլը ծիծաղում է։

ՇՈՒՇԱՆ, ժպտալով։

Մէ մուլափ, տօ, բա՛ դըրս հանաք է. բան էր խօսում:

ՊԷՊՕ, Թաշկինակը հաւաքելով եւ ծիծաղելով։

Բա՛ն էր խօսում. ատաս խօսկը խօսկին կարկտի պէս վրայ տայ։ (Գիքօի ձախ կուռը բռնելով եւ ամուր շարժելով։) Վո՛ւնց խս, վո՛ւնց, Գիքօ։

ԳԻՔՕ

Կուռս, կուռս, տօ, էրկաթ է՜ մաշէտ։

ՊԷՊՕ, ծիծաղելով։

Բաս չէ ու քի պէս փափա կույի։ (Թաշկինակը ծկներով գօտկից հանելով, Կէկէլին։) Աբա՛, Կէկէլ, էս տա՛ր մէ էնդի ջո՛ւրն ածա ու մէ կրակ էլ չա՛ղ արա... (Ցածր ձայնով։) Փէտ խօ ո՛ւնինք։

ԿԷԿԷԼ, ուրախ եւ ցածր։

Մէ էրկու վառելու էլի կայ։ (Առնում է կապոցը։) Մոըթոտիմ է՜լ։

ՊԷՊՕ

Չէ՜, չէ՜, չէ՜, չէ՜, Կակուլին աղանչաք արաւ, վուր նրան մուլափ տանք. խիստ է սիրում ձգան մոըթի-լը։ (Տնղելով ձուկը Կէկէլի ձեռքին, Թաշկինակի մէջ։) Մէ մտիկ էս բէձաթին՝ վուրդի է կուչ էկի, է՜... Տա՛ր, տա՛ր, 'ես սրանից հոքուն մեռնիմ։ Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում, ո՛վ արժանի կօնէր միզ։ (Իր ծո-ցին խփելով եւ Կէկէլին ցածր։) Փուղ էլ ունիմ, Կէկէլ, ա՛յ. մի՛ վախենա, հինգ մանէթի ծախեցի։

ԿԷԿԷԼ

Էնդուր էլ ուշացա՛ր։

ՊԷՊՕ

Վա՛... բա՛ս... Մէ էս գիշեր էլ գնամ. Աստուծ աճկը քաղցրացրել է ինձ վրայ։

ԿԷԿԷԼ

Ա՛խ, Պէպօ ջան, եարաբ քա՛նի չարչրվիս միզ համա։

Դուրս է գնում ձախ դռնից, տանելով հետը կարը եւ Թաշկինակով ծուկը։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, *առանց* ԿԷԿԷԼԻ

ՊԷՊՕ

Ուրիշ, Գիքօ, ասա՛, է՜. փո՞ւղը լաւ է թէ ջանը։

ԳԻՔՕ

Էրկուսը մէտի լաւ է, Պէպան, թէ Աստուծ կու տայ։

ՊԷՊՕ

Տօ, էս՛ղադա տարի է ապրում իս աշխրքումն ու չիս գիդի, վուր փուղը Աստուծ չէ բաժնո՞ւմ։ Թո՛ղ Աստուծ մենակ ջան տայ մարթու, փուղ է ու փուղ։ (Դամբը բաց անելով։) Փուղով իմ առի է՞ս... (Իր կըրծքին խփելով։) Ա՛յ, սաղ ըլի։ (Կռացած, դամբը տնդղելով։) Օ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, ի՞նչ դամբ է. էն՛ղադա գցեցի, էլի սաղ սալամաթ է մնացի։ Պետրէ-Մօրէվի պէս տիղ չի ըլի. փռում էի թէ չէ, ըըմ-ըը՜մ, դուս էին գալի լօթիքը խլպլտալի։ Խալխը վուր խիլք ունենայ, էսանց էլ բան ու գործ չի ունենայ։ Էն վուր գցում իս...

ու ինչրու դուս քաշիլը, սիրտդ ըլնգ-ըլնգ, կօսիս թէ մահ ու կինքդ պիտի բաժնիլն։ Թէ մութ գիշիր էլ է, հէնց գլըխնաս սասղիրը հիդդ մասլահաթ ըլին անում, ու թէ լուս է խօմ, կօսիս լուսնիակը գլխիտ փարլնի պէս կանգնած է լօթ՝ին... Էշխումն էլ վուր տուն իս գնում ու վուտնիրտ էլ թաց է ըլում, ու մէ բաշ փռում իս... Օ՛հ, չէնի կի ճիլի մէ... (Գցում է դամբը Գիքօի գլխին, Գիքօն մնում է մէջը։) Օ՛հ, օ՛հ, օ՛հ, Գիքօ, ի՛նչ ձուգն իս. ա՛րդի պըլինձ պիտի քիզ։

Ծիծաղում է։

ՃՈՒՃԱՆ, *ծիծաղելով*։

Տօ, ըմ դըրօս էտունք է։

ԳԻՔՕ, *ազատուելով*։

Տօ, վախեցայ, է՛յ. էս ի՛նչ հանգի հանաք է։

ՊԷՊՕ, *դամբը ճուաքելով*։

Բաս դլիփ մէ գլուխ խօմ չիմ լաց ըլի։ Սիրտս վուր դարդլին տուր տամ, լուլի պէս կու տրաքի։

ԳԻՔՕ

Չէ՛, մայինց, մէ քիչ անդնջում իս։

ՊԷՊՕ, *դամբը Թօկի վրայ փռելով*։

Բաս չէ ու քի պէս հում-հում խաշլամա կուլիմ. բուռնութին քնթէմէս ծըծլալի դէվէր ըլի գալի ու ինչրու մէ բան ասիմ, ուխտի լօխմի պէս խօսկիրը բերնումս ծամում ըլիմ... (Ծիծաղում է։) Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԳԻՔՕ

Հէ՛յ պիդլի, Պէպան։

ՃՈՒՃԱՆ

Տօ, ըմ դըրօս էտունք է, մէ անգամ դի ախար, է՛.

սիրտս շուռ էկաւ... Ինչոր փիս խաբար է իմացի միր փեսի դէխը:

ՊԷՊՕ, վախենալով:

Ի՞նչ փիս խաբար:

ԳԻՔՕ

Մէ նստի, Պէպան, հէնց ապրիս:

ՊԷՊՕ

Էսէնց էլ լաւ իմ, սա՛մ:

ԳԻՔՕ

Չէ՛, վուր նստիս, ուփրօ լաւ կուլի:

ՊԷՊՕ, նեղանալով:

Տէր օղորմած Աստուած: (Մօտ է քաշում մէկ աթոռ եւ նստում է Գիքօի ձախ կողմը:) Հը՜, էս էլ նստեցայ:

ԳԻՔՕ

Մուլափ, է՛. տաքնալով բան չի դառնա ախար: Պիտի փիքը անինք, թէ վո՞ւնց օտկինք բանին: (Որոնում է քթախոտի տուփը:) Ի՞նչ էլաւ, տօ՛, էստի էր:

ՊԷՊՕ, գտնելով եւ տալով նրան:

Հը՜, բռնէ. ինչրու չքաշիս, խօ չիս կանա խօսի:

ԳԻՔՕ, վերցնելով քթախոտ:

Ա՛յ, ախպէր, էսօր առուտեհան մէ փիս հուտ իմացայ... (Քաշում է քթախոտը:) Ը՜մ... Միթամ ձիր փեսի համա ուրիշ ախչիկ ին լուս գցի:

ՁՈՒՁԱՆ

Վո՜յ, քոռանամ 'ես:

ՊԷՊՕ, վախեցած եւ ձայնը երկարացնելով:

Է՜յ...

ԳԻՔՕ

Բա՛ս, միթամ խիստ լաւ ախչիկ է, կօսէ, ու փուղ

ու բաժինքն էլ ձիր խոստացածի վրայ ուփրօ շատ։ (Կրկին քաշում է։) Ը՞մ...

ՊԷՊՕ, բարկացած։

Ը՞մ, ը՞մ, տօ, քաշէ ու պրծի, էլի։ (Տուփը դատարկում է Գիքօի ձեռքի մէջ եւ մօտեցնում նրա քթին։) Հը՛, կշտացի՞։

ԳԻՔՕ

Վա՜, վա՜, բուռնութիւն։ Ի՞նչ գիժ մօղլին իս, տօ՜։

Բթախոտը կրկին տուփն է ածում։

ՊԷՊՕ

Արխըյս գիդենայ, Գիքօ, էլ սաղ չիս պրծնի, թէ դիփ մէտի էս սհաթիս չիս յիդ ասի։

ԳԻՔՕ

Տօ, ախար վուր դաթար չիս տալի՜։

ԶՈՒԶԱՆ

Դուն ուփըօ շշկլեցրիր, քա՜։

ՊԷՊՕ

Դէ, չուստ։

ԳԻՔՕ

Հա՛, էն էի ասում... Ի՞նչ էի ասում, մոէս ննդաւ...

ՊԷՊՕ, կիսաձայն, առանձին։

Ա՛յ, զահրումար։

ԳԻՔՕ, շարունակելով։

Հա՛, վուր առուտեհան, էն հանգի բան իմացայ։

ՊԷՊՕ

Ը՛հ, քու մարթ ասողին ինչ ասիմ. տօ, էտ խօմ ասիր, իժո՞ւմ։

ԳԻՔՕ

Ա՛յ, իժում... Գնացի դէմուդէմը ձիր փեսի մօտ,

տեսայ տանը չէր. էն'ղանց գնացի դուքանը, տեսնիմ էն ալդի'ղաշտի Նաթէլը հիդը քշփչում է։ Էն սհաթին ճկտկիս կծեցի. (ծկոյթը բերանն է դնում։) ասի բանը բանի նման է։ Մէ քիչ մնացի. էն սատանի կնիկը վուր քաշվեցաւ, մօդ գնամ մէ լաւ ծանդր ու բարակ հիդը խօսիմ էս միր պարնի հիդ։

ՊԷՊՕ, անհամբերութեամբ։

Իժում ի՞նչ ասաւ։

ԳԻՔՕ

Ա՜յ, էս սահաթիս, կարքով գայիս իմ, էլի՜։

ՊԷՊՕ, բռունցքը բարձրացնելով։

Ը՜հ, Գիքօ, էկաւ Աստուծ գիդենայ։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Տօ՛, մի՛ խառնի, է՜։

ՃՈՒՃԱՆ, բոլոր խօսակցութեան ժամանակ անհամբերութեամբ ծնգները տրորում է։

Վա՛, րա՞ դադէմարթա, Պէպօ։

ԳԻՔՕ

Ձեր անգաճը բաղմնչու արաւ, ամա վիրչը կոտրվեցաւ ու իմացածս ղուրթ դուս էկաւ։ Կինաղամ լիզուս փուրը ննգաւ, էսօրվայ անմահ պատարաքը գիդենայ։

ՃՈՒՃԱՆ

Վո՜յ, գեղինը պատռէ ու նրան դէվէր տանէ, վուչ։

ՊԷՊՕ, բարկանալով։

Վա՛, գժվիլ իս, թէ հանաք իս անում։

ԳԻՔՕ

Իմ հոքին գիդենայ։

ՊԷՊՕ

Տօ, խժում նա ի՞նչ ասաւ։

ԳԻՔՕ

Նա էլ էն ասաւ, վուր ’ես ձիր Կէկէլին խիստ իմ ուզում, կօսէ, ամա բանը վուր գլուխ չէ գալի, կօսէ, ’ես ի՞նչ անիմ, կօսէ։

ՇՈՒՇԱՆ, երկու ձեռքը ծնգներին խփելով։

Մտի՛կ էն աննամուսին, է՜։

ՊԷՊՕ, բարկանալով։

Վո՞ւնց թէ գլուխ չէ գալի։

ԳԻՔՕ

Էնէնց, է՛լի. ասում է՝ ինչի՞ ինչ խոստացիլ իք, չիք տալի, կօսէ։ (Առանձին ոգոց է հանում։) Է՜հ, Աստուձ։

ՊԷՊՕ

Վո՞ւնց թէ չինք տալի... Տօ, գանա ինքը չի գիդի բանի զօրութինը՞։

ԳԻՔՕ

’Ես ինչըու վո՞ւր մէ օրը մնամ, կօսէ։

ՇՈՒՇԱՆ

Ո՞ւր է մնում, ո՞վ է ասում նրան վուր մնայ։ Թո՛ղ ուզէ, խոստացածն էնդի չէ՜։ ’Եփոր դուս գու քայ, իրն է ու իրը... Աստուձ անէ քու դիւանն, Ա՛րութին։

ԳԻՔՕ

Նա էլ էտ է ասում, Շուշան, է՜. ’ես, ասում է, ախչիկ իմ ուզի, կօսէ, դաւի դառաբա խօմ չիմ առնում, կօսէ։

Գլուխը շարժում է։

ՊԷՊՕ

Տօ՛, էտունք դիփ մէալ խօ հարուր ջէր խօսիլ ինք, հիմի նուր չար, նուր բարի՞։

ԳԻՔՕ

Բանն էլ էն է, Պէպօ ջան, վուր նա ասում է՝ էտ բանն, ասում է, տարիք կու քաշէ, կօսէ, ու ՚ես էլ չիմ կանա համփիրի, կօսէ. կնիկ ուզիլը խիստ իմ ուզում սրտով, կօսէ։ (Աղաղակում է։) Միղա՜յ Քիզ, Աստուած, միղա՜յ... էս իմ միխկի պատիժն է դիփ...

ՇՈՒՇԱՆ

Մէ խօսկով՝ ասա՛, Գիքօ՛, վուր Կէկէլին թողնում է, էլի՞...

ՊԷՊՕ

Ու՛ բանը մօ՛շլա է ըլում։

ԳԻՔՕ

Թէ էս սահաթիս փուղը չճարեցինք, մօշլա արած է ու մօշլա արած։

ՊԷՊՕ

Իստա՞կ։

ԳԻՔՕ

Իստակ, իստակ։

ՊԷՊՕ, չարացած վեր կենալով եւ ձեռքը ձեռքին խփելով։

Վա՜յ, քու տղիս տղայ։ (Դառնում է դէպի Գիքօն եւ ձեռները առաջ տանում։) Տօ՛, լժում ի՞նչ ասիր։

ԳԻՔՕ, յետ քաշուելով, վեր է կենում տեղից։

Դուն ի՞նձ ասա, էլ ի՞նչ պիտէի ասի։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Տօ՛, ախար չհասկացրիր իրան, վուր չինք խափո՞ւմ։

ԳԻՔՕ, *յետ քաշուելով։*

Վա՜յ, բաս չհասկացըրի՞։

ՊԷՊՕ, *առաջ գնալով։*

Իժո՞ւմ։

ԳԻՔՕ, *յետ քաշուելով։*

Իժում էլի էն ասաւ, է՛լի, վա՜յ։

ՊԷՊՕ, *առաջ գնալով։*

Ու դուն էլ ’ղաբուլ արիր։

ԳԻՔՕ, *յետ քաշուելով։*

Վա՜յ։

ՊԷՊՕ, *առաջ գնալով։*

Չէ՛, մէ ի՞նչ խիլք բանեցրիր, ի՞նչ...

ԳԻՔՕ, *հասնելով բեմի աջ կողմը եւ ճանապարհ չգտնելով։*

Վա՜յ, հէր օրհնած, ’ես ի՞նչ անիմ, թէ կլի էն մարթն էնէնց է ասում։

ՊԷՊՕ

Տó, դուն ի՞նչ ասիր, դո՞ւն։

ԶՈՒԶԱՆ

Պէպան, գժվիլ իս, թէ ինչ խաբար է։ Ախմա՛ր, էտ հանգի խօսիլ կուլի՞։

ԳԻՔՕ

Տó, ’ես էլ էն ասի, ինչոր գիդիս, էլի՛։ Ասի՝ եա մնձ ինչըրու աղա Արութինի փուղը դուս գայ, էն չախն ուզէ, ասի, եա թէ չէ, ասի, հիմիկ էվէտ ուզէ ու Արութինիմէն փուղը դա՛ւն առ, ասի։

ՊԷՊՕ

Իժո՞ւմ։

ԳԻՔՕ

Իժում էն, վուր նա կտրական ասաւ, թէ ’ես

դաւի դառաբի գլուխ չունիմ, կօսէ։ Գուզիք փուղը էս օր բերէք, 'ես էս գիշիր էվէտ պսակվիմ, կօսէ։ 'Ես իմ խօսկէմէն յիդ չիմ կանգնում, կօսէ։

ՊԷՊՕ

Տօ՛, բաս էտ էիր քօվլանում, թէ խելօք մարթ իմ, կօսէ՞. էտ էիր ասում, թէ Խիկար իմաստունը գլխէմէն ինչրու վուռքը դիփ կարթացիլ իմ, կօսէ՞։ Էտ է է՛լի քու շնուքը։

ԳԻՔՕ

Ախար... (Հազում է։) Հո՜ւ, հո՜ւ... 'ես ի՞նչ միղ ունիմ։ (Հազը սաստկանում է։) Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...

ՊԷՊՕ

Ա՛յ, զահրումար ու չօ՛ռ ու ցաւ։

ՇՈՒՇԱՆ

Պէպօ, Պէ՛պօ, գժվիլ ի՞ս։

ՊԷՊՕ, հեռանալով Գիքօից։

Չէ՛, 'ես գնամ մէ էս սհաթիս հիդը խօսիմ, տեսնիմ թէ վո՞ւնց է թողնում։

ՇՈՒՇԱՆ, վեր կենալով տեղից։

Չէ՛, դուն կա՛ց ջեր, Պէպօ, 'ես գնամ մէ էն կապ կտրած Նաթէլին տեսնիմ։ (Շտապով դաթիբան հանում է նահալու տակից եւ գնալով։) Գի՛քօ, մէ հի՛դս արի, թէ քու Աստուձ կու սիրիս, էս քուչէն ա՛նց կացրու։

Դուրս է գնում միջի դռնից։

ԳԻՔՕ, գնալով եւ հազից խեղդուելով։

Քի մօդ բան բռնիլը դաւի դառաբա է դըրուստ։

Դուրս է գնում Շուշանի ետեւից։

ՊԷՊՕ, ետեւից։

Քու մարթ ասողին էլ ի՞նչ ասիմ։

ՏԵՍԻԼ Ե

ՊԷՊՕ, *մենակ, մի փոքր լռութիւնից յետոյ։*

Ուրիշ անչիկ գուզի՞ս. բաս Պէպօն մեռաւ, ճ՞լի... Տեսնիմ վո՞ւնց իս ուզում։ (Նորից լռութիւն։) Չէ, Պէպօ, դուն հալալ տղայ իս, հալալութինը սիրում իս, քո բանումն էլ հա՛լալ կաց։ Ինչո՞վ է սուտ քի մօդ քու փեսէն. խոստացիլ իս, պիտիս կատարի քու խօսկը... Թէ գլխիտ գդակ ունիս, պիտիս տա, թէգուզ կաշիտ պլոկվի, թէգուզ հոքիտ դուս գայ, պիտիս տա... Ամա վո՞ւրդի ճարիմ էն դահրումար փուղը... Ո՞վ կու տայ ինձ էն'ղադա։ (Նայում է պատերին։) Ո՞վ ինչ կու տայ էստուրը. դիփ մէջս վուր գրաւ դնիմ, դիփ մէջտի վուր ծախիմ՝ տուն, տիղ, շուր... ի՞նչ կու տան... կիսի կէսն էլ չի դուս գա... Է՛ս էր վիրջն, ճ՞լի, էս էիր ուզում, ճ՞լի, Արութին. էստու համա էիր չարչրում, ճ՞լի, ինչրու հիմի... Աշխրքումը պիտի խայտառակ ըլիմ, ճ՞լի... Էլ իմ ննգրտերանց էրեսին վո՞ւնց մտիկ անիմ, ի՞նչ կօսին։ (Գլխարկը յատակին է խփում։) Փո՛ւ, քու նամուսին...

ՏԵՍԻԼ Զ

ՆԱ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ, *շփոթուած ներս մտնելով ձախ դռնից։*

Էս ի՞նչ խաբար է, Պէպօ։

ՊԷՊՕ, գլխարկը վերցնելով։

Վունչիշ, ի՞նչ խաբար պիտի ըլի։

ԿԷԿԷԼ

Ի՞նչ ես ինձմէն թախկացնում։ (Կսկիծով։) 'Ես իմացայ, դիփ իմացայ, Պէպօ։

ՊԷՊՕ

Ի՞նչ իմացար, Կէկէլ, ի՞նչ ես լաց ըլում։

ԿԷԿԷԼ, նոյնպէս։

Իմացայ, Պէպօ ջան, իմացայ… էս սհաթիս դէ-դէն ու Գիքօն վուր գնացին… նրանց խօսիլն իմա-ցայ… ինձ թողնում ին։

ՊԷՊՕ

Մո՛ւլափ, մո՛ւլափ, Կէկէլ, ջեր էլի Աստուձ օղոր-մած է…

ԿԷԿԷԼ

Աստուձ շատ վուխտ է խռով է կացի իմ գլխին, էլ ի՞նչ օղորմած է… Խալխումն ինձ պաշ անէ, դի-փունքը շնահաւուրին, իժում ինձ թողնէ ու գնայ ու-րիշին ուզէ՞… Է՛ստու համա ստիղծից ինձ Աստո՞ւձ… Միթամ անմիղ փալաս էի, քուչէն գցեցին… միթամ քուչի ցիխ իմ, թո՛ղ վուտի տակը կոխշըտին։ Վա՜յ իմ Նամուսին…

Լաց է լինում։

ՊԷՊՕ

Ախար, ջեր անմիղ ես լաց ըլում, Կէկէլ, է՞։

ԿԷԿԷԼ, շարունակելով լացը։

Ինչի՞ գեղինը չիմ մանում էս սհաթիս։ Էլ իմ տօլ ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ. դիփունանց խօսելու պիտի դառնամ, դիփունքը մաս-

խարա պիտի գցին ինձ, դիփունքը պիտի վրէս ծիծաղին…

Լաց է լինում։

ՊԷՊՕ, փաթաթուելով։

Կէկէլ ջան, Կէ՜կէլ։

ԿԷԿԷԼ

Կէկէլի շնքին քա՛ր կապէ, Պէպօ ջան, ու տար Քուռը շպրտէ… Էլ 'ես վո՞նց պիտի ապրիմ աշխրքումը։

ՊԷՊՕ

Մէ սիրտդ յի՛դ բի, Կէկէլ, է՜… Փուղի բան չէ՞, վուրդիոր կուլի կու ճարինք… Թէ Արութինը չի տա, դիփ մէտի կու ծախծխիմ, կէհամ ախկատութին կօնիմ, գլուխս գրաւ կու դնիմ ու քիզ էտէնց չիմ Թողնի։

ԿԷԿԷԼ

Չէ, չէ, Պէպօ ջան. 'ես իմացայ, վուր էտ փուղը էսօր էվէտ է հարկաւուր ու մէ օրումը միզ–ո՞վ ինչ կու տայ, ո՞վ ինչ կու սիցնէ։ Գլուխտ առանց էն էլ միզ համա գրաւ իս դրի ու գրաւ։ Վուչ էր էլի էն փուղի անումը, էս բէդնամութինն էլ չէր գա գլուխըս… (Լաց է լինում. կուլիսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը՝ Պէ՜պօ։) Գեդլինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։

Դուրս է վազում ձախ դռնով։

ՊԷՊՕ, ծնգանը խփելով։

Վա՜յ քու Պէպօին։

Վշտացած նստում է տախտի վրայ։

ՏԵՍԻԼ Է

ՊԵՊՕ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, *ներս գալով միջի դռնից, մէկ ձեռքին Թաշկինակում կապած պաշարեղէններ, իսկ միւս ձեռքին կէս-Թունգանոց։*

Մէ գինի իմ բերի, Պէպօ, մէ գինի՜, վուր է, դաւի չունիմ։

ՊԵՊՕ, *դառնացած։*

Քէփ կօնինք, է՜լի։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՜, ի՞նչ է պատահի։

ՊԵՊՕ

Վունչինչ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՜, չիմ տեսնո՞ւմ, էփած էլ կու ճանչնամ քիզ։

ՊԵՊՕ

Է՛հ, մա՜խլաս, կու խօսինք, էլի, իժում։

ԿԱԿՈՒԼԻ

Հը՛, էլի տեսիլ իս նըրանցը՞։ Հե՛ռու կացի, Թէ ախպէր իս։

ՊԵՊՕ

Թողնում իմ վուր հիռու կենա՜մ։

ԿԱԿՈՒԼԻ

Արի՛, մէ-մէ ստաքան գցինք ջեր հալա, Թէ անդիկօրը չին կորչի ու կու տեսնիս... Վաղ ու փաղ ինձ մօդ էլ խիստ չուստ-չուստ էին գալի, ամա

(Խփում է կէս-Թունգանոցին։) գիզը գմթայ... Հանց պուգիրը տեսնում իմ թէ չէ, շարա՜չ... (Վրայ է քաշում կէս-Թունգանոցը, յետոյ երգում է բայաթի։)

«Աղիզմ, Նաչար, աղլամա,
Գիւն դըր գէչար, աղլամա,
Բու 'ղափի թարս բաղլիան»

ՊԷՊՕ, գլուխը շարժելով, կիսաձայն եւ Թիւ։

Բիր գիւն աչար, աղլամա։

ԿԱԿՈՒԼԻ, շարունակելով երգը, վերջացնում է բայաթին։

Բիր գիւն աչար, աղլամա։»*)

Արա՛, (Կէս-Թունգանոցը առաջարկելով Պէպօին։) տե՛ս, թէ թըի պէս չկարէ։

ՊԷՊՕ

Է՛հ։

ԿԱԿՈՒԼԻ

Զիսկո՛ւմ. տեսնում իմ խիստ մինձիրնին էկի, է՛։ Հը՜, վո՞ւնց ին... (Թաշկինակը եւ գինու ամանը դնում է սեղանի վրայ եւ ձեռքերով պոզեր ներկայացնում։) Էս-էս-'ղաղա պուղիրը... հը՜... ջէր արթուրմէքը սարքիլ ին թէ չէ։ Ախար կու ճանչնամ ինչ պտուղ էլ իս, է՛։

ՊԷՊՕ

Հանաքի վուխտը չէ, Կակուլի, թէ Աստուծ կու սիրիս, բօղազներուս դուս է կորվում։

Վեր է կենում տեղից։

---

*) Թուրքերէն է։—Սիրելիս, անճար, մի՛ լար,
Օր է, կանցնի, մի՛ լար.
Այս դուռը թարս կողպողը
Մէկ օր բաց կանի, մի՛ լար։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛հ, ի՞նչ խաբար է։

ՊԷՊՕ

Էլ ի՞նչ խաբար պիտի ըլի, բէդնամ ինք ըլում. քվիրս Թողնում ին։

ԿԱԿՈՒԼԻ

Փեսէ՞ն։

ՊԷՊՕ

Բաս ուրիշ ո՞վ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ

Է՞յ։

ՊԷՊՕ

Աստուձ գիդենայ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛յ, 'ես նրա... Արի՛ գնանք ծեծինք, Պէպօ. մէ ալի'ղուլի ծեփիմ էս սհաթիս, որ սապօկի կրնգի վրայ 'երիք չէր վրայ ու վրայ պտուտ գայ։ Արա՛, 'ես քիզ ասում էի, Պէպօ, է՞, վուր կուպէծը միր բան չէ։

ՊԷՊՕ

Բանը բանէմէն անց է կացի, Կակուլի, էլ էտուըը ի՞նչ փայիդա։ Բանն էն է, վուր Թէ ինչ խոստացիլ ինք, էս սհաթիս չավինք, էս գիշիր ուրիշի վրայ է նշնվում։

ԿԱԿՈՒԼԻ

Դէ՛, քո՛ւԹահ արէք՝ ու պրծէք, էլի՛։ (Քամարը յետ է անում։) Թէ իմքին պակսի, էս էլ վրէն աւելցո՛ւ, մէ հինգ Թուման կու տան։ (Ձախ ձեռքով քամարը բարձրացնում է։) Զարթնի էս, Պէպօ ջան, (Աջ

քռունցքը ցոյց տալով։) ու մէկ էլ՝ է՛ս, էլ ուրիշ վոնչ-չիշ չկայ իմ մէջն, ախպէր։

ԳԷԳՕ

Էտընցութենով բան չի դառնա, Կակուլի ջան. դուն լաւ գիդիս, վուր հարուր թուման փուղ ինք խոստացի, ու էն անիծած Արութինը էսօր էքուցն է գցում։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՛հ, նա՛ ապրա՜նք. 'ես քիզ ասում իմ, ինչրու նրա փուրի վրայ էլ մէ դհօլ չածինք, վունչիշ չի դուս գայ։

ԳԷԳՕ

Է՛հ, Կակուլլի, դուն էլ հէնց գիդիս ամեն բանը մենակ մուշտէ կռվով է շինած։

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ինչի՞ չէ տալի, թէ ղուրթ պարտ է։

ԳԷԳՕ

Վո՛ւնց թէ ղուրթ պարտ է, բաս սուտ իմ խօսում քի մօ՞դ. ամա էն անիծած բարաթը վուր չէ գթնվում, ի՞նչ անիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ, էտ չիմ իմացի։

ԳԷԳՕ

Վա՛, բաս չիմ ասի քի՞զ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ։

ԳԷԳՕ

Վուր բարաթ ունէինք նրանն ու էն բարաթը կորա՜ւ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ́, Պէպօ, չէ́. էն կի իմացիլ իմ, վուր էն բայղուշը փուղ է պարտեցի քու հօրը, ամա բարաթը առչի իմանալս է... Իժում էտ վո̂ւնց կորաւ, տօ́։

ՊԷՊՕ

Աստուձ վուչ գիդէ միր գլուխը։

ԿԱԿՈՒԼԻ

Թէ ախպէր իս։

ՊԷՊՕ

Ասիմ, չասիմ, Կակուլի ջան, էլ ի̂նչ կու օտկըվի։

ԿԱԿՈՒԼԻ

Թէ լօթի իս, տօ̃։

ՊԷՊՕ

Ա՛յ, վունց էր, ախպէր... Իմ հէրը փուղ է ունենում, տալիս է նրան չահով. լաւ չահվեցանք. բարաթն առնում է ու պահում է... Քանի սաղ էր իմ հէրը, թէգուզ քսան ջէր իմ տեսի էն անիծած բարաթը. հէնց մեռնելու մէ չաբաթ առաչ էլ ձեռին ունէր խիղճը... Մահի էդնէն 'ղուլթին բաց անինք, էլ չկայ, չկայ, չկայ ու չկա̃յ։

ԿԱԿՈՒԼԻ

Էէէ́... ա̂յ, թուրմէ ինչ բան է էլի... Տօ́, Պէպօ, ինքն Արուլթինը չըլի գողցի էն բարաթը։

ՊԷՊՕ

Է՜հ, ի̂նչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի, սօ́. միր 'ղուլթումը նա ի̂նչ դաւի ունէր։

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ո̂վ կու գողնէր, Պէպօ։

ՊԷՊՕ

Վուր գիդենամ խօ միզ համա էլ լաւ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ

Կո՞ւլի քու հէրը հիդը տարաւ, տօ՜։

ՊԷՊՕ

Մինք էլ էտէնց ինք ասում. կուլի չուր հաքցնե-լիս հիդը գնաց։

ԿԱԿՈՒԼԻ

Մտիկ, է՜… Աբա էն կլինքումը թամաշա արա, Պէպօ, թէ ի՞նչ կօնին ազա Արութինին։ Չուրս-չուրս սատանէն վուր բարաթն առչիւը կու ձքին, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, դէդի ծծիր, դո՞ւն բարեխօս։ Նէտայի մէ թամաշա անիլ տան, Պէպօ ջան, թէգուզ հէնց էտու խաթիր կէհամ դժուխքը։ (Ծիծաղում են։) Տօ՜, հա-նաքը դէնը, էլի լա՜ւ պտուտեցէք, կուլի գթնվի։

ՊԷՊՕ

Տակն ու վրայ ինք արի տուն ու տիղը, ի՞նչս ասում։

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էն գոմշի գլուխն էլ գիդէ, վուր բարաթը կորիլ է՜։

ՊԷՊՕ

Գիդէ, վուր չէ տալի, է՜։

ԿԱԿՈՒԼԻ

Տօ՜, խօ գի՞դէ վուր պարտ է։

ՊԷՊՕ

Բաս չի գիդի՜։

ԿԱԿՈՒԼԻ

Դէ՜, տայ, է՜։

ՊԷՊՕ

Անկճիտ բմբակը հանէ, տօ. էն մարթն ասում է թէ՝ միտս չէ, կօսէ, դավթրներումս չիմ գըթնում, կօսէ, բմրաթը բի, ասում է, ու փուղը տար, կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ

Աստուծ գիդենայ, Պէպօ, զարթնի դնքսիլը ուրիշ ճար չկայ։ Դուն ինձ թող, էն Օրթաճալէմէն վուր յիդ է գալի, ձեռնիրը էհէնց դարսած, (Ձեռքերը յետեւն է դարսում եւ մի քանի քայլ անցնում Արութինի նման։) հէստիկ շինիմ, հէստիկ շինիմ, վուր սէփիլի բայաթի կանչիլ տամ 'ես նրան։

ՊԷՊՕ

Երանի՜ քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մարթու տալու։

ԿԱԿՈՒԼԻ

Էտու համա էլ դարդ չէի անի. ձիզ պէս կուպէծնրու էդնէն չէի ննգնի։ Վիրչի կինտօին կու փոխիմ նրանց հիդ։ Միզ վուր ստիղծիլ է Աստուծ, թուշունքի հանգն է ստիղծի՝ օր դադինք, օր ուտինք, էլ մեռնելիս անդէրձի գլուխ ո՞վ ունէ, տօ՜։

ՊԷՊՕ

Լա՛ւ է, լա՛ւ, խիլքիտ մի՛ զօռ տա, հէրիք է. գնա՛ էն մուրծէքը մորթոտէ, նստինք մէ-մէ թիքայ չօռլամիշ ըլինք, իժում տեսնինք Աստուծ ինչ է տալի։

ԿԱԿՈՒԼԻ

Հա՛, էտ իմ խիլքի բան է. մէ սուփրէն վուրդի է, (Վերցնելով կապոցը։) էստունք յիդ դարսինք։

ՊԷՊՕ, *Թարեքից վայր բերելով հին ծեփ կապոյտ Նախշուն սփռոց, փայտէ դեղին գդալներ եւ մի քանի ափսէ։*

Ա՛յ, բի՛։

Սփռոցը բաց է անում տախտի վրայ։

ԿԱԿՈՒԼԻ, *Թաշկինակից յետ դարսելով սփռոցի վրայ մի կտոր դօշ, կանանչի, լօշ եւ մօթալ։*

Մտի՛կ էս ալաքալուխին, է՛․ էս էլ կանանչի, էս էլ լօշ, էս էլ մօթալ։

ՊԷՊՕ, *մօթալը տնղղելով եւ տխուր։*

Լաւն է էրեւում։

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էս կանանչուն ի՞նչս ասում... (*Վեր առնելով եւ Թափ տալով։*) Մտի՛կ, է՛․ կօսխ կանանչ մախմուր ըլի։

ՊԷՊՕ, *մուԹաքաները մի կողմը դնելով եւ տխուր։*

'Ղօշաղ խս, Կակուլի, մէ ստաքնիր էլ բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛յ, միխկ չէ՞․ էս հանգի գինին ստաքնով կու խմի՞ն, հոքուտ ի՞նչ իս ասում... (*Կէս-Թունգանոցը տանում դնում է տախտի վրայ։*) Տօ՛, էն քի՛ղանը բի, վուր խմելիս էրեսարքը մէջն էրեւայ քրիստոնի պէս, է՛։

ՊԷՊՕ, *գնալով։*

Գիդիմ, գիդիմ։ (*Թարեքից վայր է բերում մէկ հատ քրեղան, մի քանի գինու բաժակ եւ արծաԹազարդ մէկ փայտէ կուլա։*) Հը՛, էս էլ քու քիղանը. էս էլ վրէն ակել, Թէ գուզիս...

Սփռոցը կարգի է բերում։

ԿԱԿՈՒԼԻ, *վերցնելով կուլան։*

Օ՛հ, քու հոքուն մեռնիմ, Պէպօ ջան... Ի՛նչ լօ-

թին իս էլի, տօ՜... (Բարձրացնելով դատարկ կուլան բերանից փոքր ինչ հեռու, իբր թէ խմում է։) Կը՛լ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ... Ջա՜ն... Հոգիս չիմ խնայի էտ քու բլբուլի ճըկճըկոցին... Ը՜հ... *(Համբուրում է կուլան։)* Չարդ տանիմ 'ես...

ՊԷՊՕ

Ա՛խ, Կակուլի ջան, պիտի դարդ չունենամ, վուր լաւ ըլի։

ԿԱԿՈՒԼԻ

Տօ՛, մարթ էս հանգի հոքէվուրթի ունենայ, էլ դարդը ի՞նչ վուտնիրս է։

Կուլան վայր է դնում տախտի վրայ։

ՊԷՊՕ

Լա՛ւ է, լա՛ւ... Դէ՛, գնա՛, էլ մի՛ ուշացնի, էստունք 'ես կարքի կու բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Մէ ձա՛ւգն էփիմ, մէ ձա՛ւգն էփիմ, Պէպօ ջան, *(Գնալով։)* քէփդ բաց ըլի։

Մտնում են միջի դռնից՝ Շուշանը ղաթիբայով եւ Գիքօն գլխարկով եւ ձեռնափայտով։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԿԱԿՈՒԼԻ

Բա՛րով, դէդի ջան։

Պէպօն անշարժ եւ հետաքրքրութեամբ նայում է Շուշանին։

ՃՈՒՃԱՆ, Կակուլուն։

Ապրիս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՜, աղա Գիքօ́, բարով 'ես ու դուն։ (Առաջ գալով եւ ցածր Պէպօին։) Սրա վրայ լաւ 'ղօնաղ չգթա̂ր, տօ́։

ՊԷՊՕ

Մո́ւլափ... (Շուշանին։) Ի՞նչ իմացաք։

Կակուլին Գիքօի ետեւից նրա նման իբր թէ քթախոտ է քաշում։

ՃՈՒՃԱՆ

Էլ ի́նչ իմացայ. գեղինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Թէ էսօր չճարեցինք, Պէպան ջան, էս գիշիր դիփ մէտի մօշլա է ըլում։ Ա՛յ, 'Երգնքէն առնիս մագիէրն, Ա՛րութին։ (Ղաթիբան վեր առնելով։) Նա խօ էսօր չի տա ու ուրիշ տիղ ո̂վ ինչ կու աւտայ միզ։ Էլի հոգուն վրայ հասայ էն կապ կտրած Նաթէլին, թէ չէ էնի է վիրչի խօսքն էր տանում նուր ախչկայ տիրուշմէն էն միր սիւէրես փեսի մօղ։ Սատանէն անէ նրա դիվանը, հըմ́։

ՊԷՊՕ

Տօ́, փեսիմէն ի́նչ իս ուզում. ինչ խոստացիլ ինք պիտի տա̂նք թէ չէ́։ Նա էլ մարթ է, գլխին պդակ ունէ ծածկած, միզմէն էլ վո̂ւրդի խափվի. աշխարքն ալան թալան խօ չէ՞։ Էն'ղադա աալ, վուր մուլափ, դէդի, ջեր փուղը դուս գայ, իժում էինք նշնի. ամա ձիր օխտէմէն ո̂վ գու գայ... Ի՛նչ հաջաթ ու, ո́ւր կու կորչի ու, Արութինը միր միխկն ի́նչ կօնէ ու, հա́շա խօմ չի ուտի ու. դէ́, գնա́ առ, տեսնիմ վո̂ւնց իս առնում։

ԳԻՔՕ, *նստելով սեղանի մօտ եւ երկար ոգոց հանելով։*

Ա՜խ, իմ գօզալ բաբա՜թ... եարաբ վո՞ւնց կորար։

ՊԷՊՕ

Զէ՛նդ, Գիքօ, թէ չէ, մասաբս գիդենայ, ինչ ջիգ-ըրն ունիմ, դիփ քիզ վրայ կու հանիմ էս սահա-թիս։ Դուն վուր չէիր խառնըվի էս բանումը, էս խայտառակութիննն էլ չէր գա միր գլուխը. ջհանդամը փուղի գլուխը, նրա մօգօնողին էլ ի՛նչ ասիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Մո՛ւլափ, մէ բան ասիմ 'ես, Պէպօ. օքմին վկայ չկա՛յ, վուր վրահասու ըլի էտ պարտքին։

ՊԷՊՕ

Միթա՛մ դուն էլ խիլքիդ զօռ տվիր. էտով վուր բան է՛ր դառի, խօ էս խաթաբալէն էլ չէր ըլի։

ԳԻՔՕ

Ա՛յ, վկայ չի՞մ, բաս ի՛նչ գահրումար իմ... ամա վուր չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛հ, ի՞նչի՞։

ՊԷՊՕ, *Կակուլուն։*

Էս բանումը վկայ մկայ չի ըլի, կօսէ, չիս իմա-նո՞ւմ։

ԿԱԿՈՒԼԻ, *առանձին գլուխը շարժելով։*

Զէ՛, 'ես նրան պիտի հարիմ։

ՃՈՒՃԱՆ

Ախար էն օրը, էն սեւ սըտովն ի՛նչ ջուղաբ էրիտ կարական։

ՊԷՊՕ

Միթամ ջեր չիս իմացի... Ասա՝ 'ես միտս չու-

նիմ, կօսէ, դավթըներումս չէ էրևում, կօսէ, թէ բարաթ իմ տվլի ձիզ, բե՛րէք ու փուղը տարէք, կօսէ։

ՇՈՒՇԱՆ

Բաս մի՛թամ հաշա է ուզում ուտի՞։ Էտ վո՞ւնց կօնէ, Պէպան. աքա քիմէն չիմ արմնո՞ւմ։ Էնէնց հարուստ մարթը լայիղ պիտի անի էտ հանգի բա՞ն։ Նրա համա հարուր թումանն ի՞նչ—մէ գրօշ, վուր ուզենայ բախշելով էլ կու բախշէ։

ՊԷՊՕ

Վո՞ւնց չէ, դէմ է բերում։

ՇՈՒՇԱՆ

Ա՛յ, կու տեսնիս թէ չէ… (Լացի ձայնով։) Կէհամ, առչիւը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վուրթկերանց արիւ սադաղա գուզիմ. օրթում կուտիմ, վուր թէ միր մէչը բարաթ լուս ննգնի, թիքայ-թիքայ անէ միզ, բաթըլնամա կուտամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մէ օր հոքի ունէ տալու, իր հոքէմէն ձեռը վո՞ւնց կու վիկալնէ։

ՊԷՊՕ

Մո՛ւլափ, մո՛ւլափ, դէդի, 'ես կեհամ, էս սհաթիս յիդ գու քամ, ինչրու դուք նստեցէք։

ՇՈՒՇԱՆ

Ջեր մէ թիքայ հա՛ց կի. մէ սահաթ առաջ ըլի, յիդ ըլի, դիփ մէկ է։

ՊԷՊՕ

Չէ՛, ինչրու չտեսնիմ, բօղազումս հաց չի դէվէր գնա. չուրիրս վո՞ւրթէնն է։

ՇՈՒՇԱՆ

Էրէգ զանդուկը դրի։

ԿԱԿՈՒԼԻ

'Ես էլ գամ, Պէպօ։

ՊԷՊՕ

Չէ, դու՛ն գնա, բանդ տես, էս սհաթիս գալիս եմ։

Դուրս է գնում աջ դռնից:

ԿԱԿՈՒԼԻ

Դուն գիդիս... (Խփելով իր կրծքին։) Ա՛խ, Արութի՛ն, 'ես թէ քու օխտէմէն չէկայ ու կու տեսնիս...

Դուրս է գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, նստած, սեղանի մօտ, քթախոտ քաշելով։

Է՛հ, Աստո՛ւծ, օրհնվի Քու դադաստանը։

ՇՈՒՇԱՆ, նստում է տախտի վրայ եւ ձայնը երկարացնելով։

«Ա՛խ, Աստո՜ւծ, վա՜խ Աստո՜ւծ, վուրին կու տա՜ս սէլով փէտ, վուրին չիս տա՜ ցախ, Աստո՛ւծ։»

ԳԻՔՕ

Հա՜, հա՜, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Է՛հ, օրհնվի Նրա դարգահը. վուրին էն'ղադա դօվլաթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մարսի, ու վուրիմէն օրուան թիքէն խլում է ու էն էլ դօվլթավուրին է տալի. փա՛ռք Իրան, Իր կամքն է. հալբաթ միր ճակտին էս էր գրած։

ԳԻՔՕ, *մօտենալով սփռոցին։*

Էլի Աստուած օղորմած է, Շուշան... (Վերցնելով դօշը եւ գլուխը շարժելով։) Ի՞նչ 'ղիամաթ իմքին է։

Դօշը կրկին իր տեղն է դնում։

ՇՈՒՇԱՆ, *առանձին։*

Քու աչկն էլ... (Գիքօին։) Էլ ի՜նչ օղորմած է, ջուրն էկիլ է ու միզ տարիլ է։ Էն անաստուածը վուր էլի մէ բան մօգօնէ ու փուղը չտայ էսօր, եարաբ ի՜նչ կուլի միր չարէն. ճլէրք կու ննգնի խիղճ ախ-չիկս։ Թավաթ օրն օրվան վրայ հալվում է, էլ ի՜նչը կու ապրեցնէ նրան։ (Լացով։) Խի՜ղճ իմ Կէկէլ, նօրչի արիւրդ պիտի փչանայ, էլի՜, Թագի մագիէր սիւ գերեզմանը պիտի մտնիս...

Լաց է լինում։

ԳԻՔՕ, *լացի ձայնով։*

Օ՜հ, օ՜հ, օ՜հ...

Դուրս է գնում ձախ դռնից աչքերը սրբելով. իսկ աջ դռնից մտնում է Պէպօն զարդի հագուս-տով, գլխարկը ծածկած, արխալուխի մի քանի կոճակը բաց, քամարը կապած եւ նրա վրայ գօ-տիկ կապելով։

ՏԵՍԻԼ Ժ

ՇՈՒՇԱՆ, ՊԷՊՕ

ՇՈՒՇԱՆ

Տօ՛, ախար չէր մէ Թիքայ հաց կուտէիր։

ՊԷՊՕ

Հաց չէ, զմհրումար ուտիմ... Ի՞նչ կօնիմ հաց. զանա հացի արժանի ի՞մ... (Գօտիկը կապելով։) Հացը վուր ստիղծած է, զանա ինձ համա է ստեղծմծ. հացը վուր 'ես ուտիմ, Արուլթինը ի՞նչ ուտէ։ Նմ էլ հաց ուտէ, 'ես էլ հաց ուտի՞մ... (Դառը ծիծաղով։) Հըմ, հըմ, հըմ...

ՃՈՒՃԱՆ

Սխւցիլ էր իմ օրը, ահըմ։

Աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՊԷՊՕ, *մենակ, արխալուխի կոճակները մէր զցելով։*

Գնմ, Պէպօ, գ՛ըդին լզէ, խալխի վուտներուն պմշ արա, նրանց վուտի ցխը լկէ... Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարդահէսարումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... 'Եփոր զուզին, վուտի տակը կու զցին քիզ, վրէտ կու ման գան, գեդնի հիդ կու հաւսրին... ի՞նչ հաջաթ, ջիանձվէլի վրայ ինչո՞վ իս աւիլ... Դուն խօ մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստիղծի քիզ Աստուձ... Գ՛իշիր չարչըվի, ցերեկ չարչըրվի, 'երգնքի տմկը լուսացրու, անձրըվի ու քամու հիդ կռիւ տու, ձմեռը ցրտէմէն կօնկօռնա, ամառը արեզակի շուքումն էրվի ու խորվվի... զնմ, էնէնց մէ թիքայ հմց ճարէ ու էն թիքայ հացով դէդիտ ու քվիրդ պահէ... Իս ի՞նչ, ի՞նչ մարթութին... էսէնց շունն էլ է ճարում մէ թիքայ, վուր տունը պահում է... Միթամ դուն էլ շուն իս... քանի

աշխըրքիս էրեսին ման իս գալի, դուն էլ չա՛ն պէս կերակրվի... Էս ի՞նչ մարթութին է... (Դադար։) Մարթ էիր ուզում դառնա՛մ· կէ՞նէիր մարթիք կու թալնէիր, գուղութին կօնէիր, իմ նման խղճերուն կու զընէիր, քսանուհինգ հազար տիղ արէն արտսունք կու թափիլ տէիր, էն արտսունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր... Մէջը փառաւուր ման գու քէիր... դրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէիր, քսանուհինգ ինձպէսին գլխիտ 'ղարավաշ կու կանգնեցնէիր... Ա՜յ, էն չախը կօսէի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ի՞նչ մարթուն պիտի... ի՞նչ քէփդ գուզէր, էն սահաթին կու ճարէիր... Էն չախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեծրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլո՜ւխ կու կոտրէին, վուր քու աչկը նրանց վրայ քաղցր ըլի։

Դուրս է գնում միջի դռնից։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Հարուստ դահլիճ Սրութինի տանը։ Աջ, ձախ և մէջ տեղը դըռներ, ամենաշքեղ դրապրիներով զարդարած։ Ձախ կողմը մեծ հայելի, յետոյ դիւան, որի կողքին ամենաթանկագին սփռոցով ծածկած սեղան եւ նրա վրայ հանգած լապտեր։ Աջ կողմը կուշէտկա. իսկ մնացած տեղերը, ուր հարկն է, բազկաթոռներ եւ աթոռներ։ Դահլիճի մէջ տեղում առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ, հանգած մոմերով։ Բեմի խորքում դէպի ձախ, վառարանի վրայ դրած ժամացոյցի սլաքները ցոյց են տալիս ժամը ճիշդ երկուսից քառորդ պակաս։ Ժամացոյցը բանում է։ Սկզբումը բեմը փոքր ժամանակ դատարկ է։ Ցերեկ է։

ՏԵՍԻԼ Ա

ԳԻԳՕԼԻ, *յետոյ* ՍԱՄՍՈՆ

ԳԻԳՕԼԻ, *երեւում է միջի դռան շեմքում մէկ մշակի հետ, որի ձեռքին մէկ մեծ զամբիւղ զանազան իրեղէններով։ Զամբիւղում կայ՝ շամպանիայի գինի, կասիս, սարդինկայ, զուրգիէլ, թունուքայի արկղիկով խաւեար, վարունկ, մէկ թղթով ընտիր կեռաս, մի ուրիշ թղթում շաքարէ հաց։*

Լա՛ւ, թո՛ղ։ (*Մշակի ձեռքից առնում է զամբիւղը*

մշակը գնում է, իսկ ինքը ներս է բերում զամբիւղը եւ դնելով գետնին, ցածր ձայնով կանչում է։) **Սա՛մսօն, Սա՛մսօն,** *(Մօտենալով աջ դռանը, նորից կանչում է։)* **Սա՛մսօն։** *(Սամսօնը դուրս է գալիս նոյն դռնից արխալուխի կրծքի կոճակները բաց, ձեռքին շամպանիայի գաւաթ, երկար սպիտակ Թաշկինակով սրբելիս։)* **Աբա՛, գէ՛Թա՛դվա, Սամսօն ջան, գնա՛, շուստ ախչիկ պարնին իմաց արա։**

ՍԱՄՍՕՆ

Էկա՛ր. ինչ՞ ուշացար. կրակ է վէր ածում ախչիկ պարոնը։

ԳԻԳՕԼԻ

Վա՛, 'ես ի՞նչ անիմ, հէստի բան ասաւ, վուր սաղ աշխարքը ման էկայ, չճարեցի։

ՍԱՄՍՕՆ

Վա՜։

ԳԻԳՕԼԻ

Ումը հարցրի, վրէս ծիծաղեցան. կակլի տօլ էլ, ասում է, կլուբնիկ կուլի՞, կօսէ։

ՍԱՄՍՕՆ

Հալբաթ կուլի, վուր ասաւ... *(Տնդղելով զամբիւղը։)* Մնացածը դիփ բերի՞ր։

ԳԻԳՕԼԻ

Դի՛փ, դիփ. ամա էն մունդռէկ կլուբնիկը չճարեցի։ ԷքուցուԹին կի մէ տեղ խոստացան, կուլի ճարինք, կօսէ։

ՍԱՄՍՕՆ

Հոքուն կու վրայ հասնի. 'ղօնաղլուղուԹինը էսօր է, էքուց խօ չէ։

ԳԻԳՕԼԻ

Բաս ի՞նչ անիմ, Սամսօն ջան։ Չի ըլի՛, վուր առանց էն եօլա գնայ բանը։ Հէստի բալիք իմ բերի, վուր ամեն մէկը կօսիս գոմշի աճկն ըլի։

ՍԱՄՍՕՆ

Թէ ինձ կու հարցնիս, Գիգօլի, առանց էտ բալին էլ փուրը լաւ կու կշտանայ, ամա ախչիկ պարնի խասիաթը գիդիմ, վուրդիոր ըլի, պիտի ճարիս. Կալօնիումը, նէմէցներու բաղերումը, էնդի հարցրու։

ԳԻԳՕԼԻ

Հոգիս դուս էկաւ, ի՞նչս ասում։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՅ

ԷՓԷՄԻԱՅ, *դուրս գալով ծախ դռնից, ամենաշքեղ հագուստով եւ ակնեղէններով զարդարուած։*

Օ՛հ, չարա էլա՛ւ. էսէնց ուշանալն էլ ի՞նչ է։ Ցօրէս 'ղօնաղնիրը մօդ կուլին. 'եփը պիտի վրայ բերիմ, էլի աշխըրքի բան կայ։

ԳԻԳՕԼԻ

Հէն'ղադա ման իմ էկի, ախչիկ պարուն, Աստուձ գիդենայ, էլ ծնգներումս ջան չկայ։

ԷՓԷՄԻԱՅ

Ջանդ դուս գայ, մա՛ն արի, բաս 'ես ման՝ գա՞մ։ Աքա՛, յի՛դ դարսէ, տեսնիմ ի՞նչ իս առի։

ԳԻԳՕԼԻ, *զամբիւղի իրեղէնները ցոյց տալով։*

Ա՛յ, ախչիկ պարուն՝ էս շանփանսկիքը, տասնութ

աբասէն պակաս չավին բուԹիլկէն. էս էն կարմիր լիկօրը, ֆրանցուզիմէն առայ, չուրս ու տաս շահի առաւ անիծածը. էս սարդինկէքը, էս Դօնու զուր-գիէլ, էս կարօբկերումը ժիտկա, օրԹում հաւատ արաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի, կօսէ. էս նէ-մէնցու բալին, երկու ռանգն է, ա՛յ. ամեն մէկը մէ գրվանքայ զու քայ. էս խիար, ի՛նչ չուչէքն է՛, տի՛ս, ախչիկ պարուն. էս պիրօժնի, կանդիտըրի շինածէմէն վէր չի գա. բուլկիքն էլ յօրէս կու բերին։

ԷՓԷՄԻԱՑ

Վո՞ւնց Թէ վէր չի գա, աբա էստի չա՛նց տու. բաս վո՞ւրդի առար։

ԳԻԳՕԼԻ

Միչի փողոցումը։

ԷՓԷՄԻԱՑ, իր Թշին ձեռք դնելով։

Աբա էտ արարմունք է՞, Գիգօլի. ’ես քիզ չասի Թէ ֆրանցուզի մօդ ա՛ռ։

ԳԻԳՕԼԻ

Դիփ մէկ է, ախչիկ պարուն, Աստուա՛ծ գիդենայ. գրվանքումը մէ աբասի անմիղ աւելի ու՛ր էի տվի։ Տի՛ս, ի՛նչ լաւն է։

ԷՓԷՄԻԱՑ, տնտղելով։

Աբա վի՛ս էկադրէբա, նրանց համն ու կտուրն է. էսէնց բէդասլուԹինն էլ ի՛նչ է։ Տա՛ր, տա՛ր, էս սա-հաԹիս յի՛դ տու։ Ինչ ասում իմ քիզ լսէ, դուն քու գլխէմէն բանիր մի՛ մօգօնի։ Ուրի՛չ... (Մտածելով։) Ուրիչ ի՛նչ ասի, միտս չէ գալի։

ԳԻԳՕԼԻ, կակազելով։

Կլուբ... նի... կա։

ՆԵՓԵՄԻԱՑ

Հա՛, ղուրթ. վո՛ւրդի է։

ԳԻԳՕԼԻ

Չճարեցի, ախչիկ պարուն։

ՆԵՓԵՄԻԱՑ, Թուշը վէր բերելով։

Վո՜յ, քոռանամ 'ես։

ԳԻԳՕԼԻ

Վուր չկայ, ի՞նչ անիմ։

ՆԵՓԵՄԻԱՑ

Գժվիլ ի՛ս, թէ ինչս ասում։ Երէգ իմ աչկով տեսայ ու իմ բերնով կերայ Դանդումանինց տանը։ Ի՞նչ կօսէ խալխը. Նրանց տանն ըլի ու իմ տանը չէ՞։ Գնա՛, գնա՛, էս սահաթիս բաղէ բաղ ննգի, դրօ՛շկա բռնէ ու վուրդիոր ըլի էս սահաթիս ճարէ, թէ չէ էլ հոգով ու մարմնով ինձմէն չիս պրծնի... Ի՞նչ իս կանգնի, չիս իմանո՞ւմ, քիզ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ

Գնում իմ, գնում իմ, ախչիկ պարուն։

Շաքարէ հացը վայր է դնում զամբիւղում եւ կամենում է գնալ։

ՆԵՓԵՄԻԱՑ

Գժվիլ ի՛ս, թէ ինչ Աստուծ է խռովի. էտ պիրօժնին էլ տար, է՜։

ԳԻԳՕԼԻ, շաքարէ հացը վերցնելով։

Տանում իմ, տանում, ախչիկ պարուն... (Փնթփնթալով։) 'Ես էլ չիմ իմանում, ինչ իմ անում։

Շտապով դուրս է գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ԷՓԷՄԻԱՑ, ՍԱՄՍՈՆ

ՍԱՄՍՈՆ

Իստակ չշկլեցրիր, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, *յօնքերը կիտած, այս ամբողջ տեսիլում։*

Քիզ ո՞վ է հարցնում, էրնէկ գիդենամ. դուն տա՛ր էստունք կարքի բի ու չա՛լիչ արի ինձ չամանչեցնիս էսօր, Սամսօն, թէ չէ էլ ինձմէն չիս պրծնի։

ՍԱՄՍՈՆ

Դիփ լաւ կուլի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Ինչ ասիլ իմ, լա՛ւ միտդ պահէ. դիփ լազաթով ըլի, ամեն բանը իր վուխտը մօդ գայ. մէ խօսկով՝ մազը մազէմէն չանց կացնիս։

ՍԱՄՍՈՆ

Դի՛փ, դի՛փ, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիփունանց աճ-կիրը քոռանայ. սօսանի ատլաս ախալուխը, սիպտա չերքէզկէն, մաջէքը կարքով յիդ կու ծալիս...

ՍԱՄՍՈՆ, *խօսքը կտրելով։*

Խանջալն էլ կապի՛մ, ախչիկ պարուն...

ԷՓԷՄԻԱՑ, *շարունակելով։*

Բաս, քա՛, էնդուր խօ չըախչեցի վուր ղանդկումդ պահիս. խանջալն էլ կապէ ու (Ձախ ձեռքը աջ ուսից կրծքի վրայ տանելով մինչեւ ձախ կողքը։) սապիրիս

ծամլէն էլ չինէ։ Մէ խօսկով՝ ղիփունի մօդ լմ́ղաթի էրևա, վուր ղիփունքն ասին, վուր մարթ իս ու մարթու տանն իս 'ղուլուղ անում։

ՍԱՄՍՕՆ

Վո՞ւր օրը լաղաթով չիմ էլի, ախչիկ պարուն։

ՒՓԷՄԻԱՅ

Քու գլխի պատուվիլը գիդենայ, մէկ էլ հիմի իս լաղաթով. արա էտ ի՞նչ կարք է, լէվրէլէլօ ման իս գալի։ Քա́նի ջէր իմ քիզ ասի, վուր էտէնց ինձ մօդ մի́ տուն գա. օքմին տեսնէ, ի՞նչ կօսէ։ Չէիր կանա դօշիտ կոճկնիրը կապի՞։ Լաքիէն պիտի լաքիա ըլի։ Աճկիրդ բա́ց արա, էլի́. տեսնում իս խալխի լաքիէքը վունց ին ժաժ գալի, դուն էլ էնէնց ժաժ արի, էլի́. նրանցմէն պա́կաս մարթու վուրթու մօդ իս, թէ ի՞նչ է։

ՍԱՄՍՕՆ

Ձեռխս բան ունիմ, ախչիկ պարուն, խօ տեսնում իս։

ՒՓԷՄԻԱՅ

Տուսուց-տուտուց մի́ խօսի. 'ես քիզ ինչ ասում իմ, դուն ի́մը լսէ։ Մէ խօսկով՝ իստակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կօնիս. թո́ղ տեսնին ու ճըխկըվին։ Մէկէլ լաքիէրու աբով չթողնիս, փարվընի պէս ման գու քաս սուփրի բոլորքը. մէ տիղ իքմին մաշուր արիր թէ չէ, է́ն սհաթին դըստէ... Բլուղնիրն էլ առչի գամն ինձ մօդ կու բերիլ տաս։

ՍԱՄՍՕՆ

Ի՞նչ կօսին 'ղօնաղնիրն, ախչիկ պարուն։

ՒՓԷՄԻԱՅ

Է՛լի... մօդէն դո՞ւն լաւ գիդիս թէ 'ես. թո́ղ

տեսնին ու սորվին: (Մտածելով:) Էլի ինչ էի ուզում ասի... (Մտաբերում է:) Հա՜... (Գնալով:) Դո՛ւն տար էտունք տիղաուրէ ու տի՞ս՝ մտէդ չգցիս ինչ ասի...

Շտապով դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Դ

ՍԱՄՍՈՆ, *մենակ:*

Էս հանգի էլ ախչիկ պարո՞ւն. դաղդըղանի իմ էկի, էլի՞... Էս կոճակդ կապէ, էս էսէնց հաքի, էս էնէնց ման արի. չիմ գիդի, թէ ինչ է ուզում ինձ-մէն... Փիէ՜, դաւի է դրուստ, էլի՞... Տօ, քիզ ինչ, 'ես խօ իմ բանը չինում իմ: (Լռութիւն:) Օ՛հ, հօ, հօ, չատ ախչիկ պարնիր իմ տեսի, չատ նըրանց բույխւրմիշնիր իմ լսի, ամա սա չափէմէն անց կացաւ: Մէ տէր հարցնող ըլի, թէ ո՞վ է, ո՞ւմ վուրթի է. իր հօրանց տանն, ասում ին, չապիք չունէր հաքնելու... ու հիմի փառասիրութենէմէն տրաքվում է:

Ձեռքը ձեռքին է խփում:

ՏԵՍԻԼ Ե

ԱՐՈՒԹԻՆ, ՍԱՄՍՈՆ

ԱՐՈՒԹԻՆ, *ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած:*

Ի՞նչ խաբար էր, ի՞նչ ձէն էկաւ:

ՍԱՄՍՈՆ

Վունչի՜չ, ա՜ղա:

ԱՐՈՒԹԻՆ

Վո՞ւնց թէ վունչիչ, իմ անգձովս իմացայ. ո՞վ էր էստի։

ՍԱՄՍՕՆ

Օչով, ա՛ղա, ախչիկ պարունն էր։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչիկ պարունը՞... Ի՞նչ էր ասում։

ՍԱՄՍՕՆ

Ա՛յ, ա՛ղա, Գիգօլին էստունք էրի էս սահաթիս, էլի ինչի համա էլ ղրգից նրան ախչիկ պարունն ու ինձ հրամաում էր, վուր էստունք տիղաուրիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՜... Դէ, տիղաուրէ, էլի՜, էլ ի՞նչ իս չինում։ Ինչի՞ր է էտի։

ՍԱՄՍՕՆ

Խմիչկ է, մրքեղէն է, զակուսկէք է։

ԱՐՈՒԹԻՆ, զամբիւղում տնտղելով։

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, օ՛հ, կօսխս շահ զադի վուրթիք ունենանք մեծրած։ Դէ, տա՛ր... (Սամսօնը վերցնում է զամբիւղը եւ կամենում է տանել։) Ինչ իմ ասում. քա՞նի պրիբօր իս պատրաստում։

ՍԱՄՍՕՆ

Ախչիկ պարունը հրամայից, վուր դրուստ քսան ու չուրս պրիբօր ըլի դարած, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչկաս մօդ խօ չղրգի՞ց քիզ։

ՍԱՄՍՕՆ

Չէ, ա՛ղա, վունչիչ չէ ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Բա՛ս էրկու պրիբօր էլ աւելցրո՛ւ ու էս սահաթիս գնա՛ ախչկաս էլ ու փեսիս էլ խնդրէ, վուր շնուրհ բերին, ու իմ մագիէր կօսիս՝ թէ չլին գա, խիստ բէդամաղ կուլիմ, ասա՛… Դէ՛, գնա՛ շուստ, բա՛նդ տիս, մի՛ ուշանա։

ՍԱՄՍՕՆ

Է՛ս սահաթիս, ա՛ղա։

Դուրս է գնում աջ դռնից զամբիւղը ձեռքին։

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՈՒԹԻՆ, *մենակ, գլխարկը վեր առնելով եւ դնելով սեղանի վրայ։*

Սհաթի 'րիքին էլ ճաշ կուլի՛։ Է՛հ, մա՛խլաս։ (*Հայելումը տնտղվում է։*) Չէ՛, ջեր էլի լաւն իմ… Ի՞նչս է պակաս. բօյիս շիմշատ է հէնց գիդենաս, էրեսիս ռանգը, կօսիս, կարմիր վարթ ըլի, մազիրս էլ սիւ սաթ, ի՛նչ անիմ թէ ներկած է. ո՞վ ի՛նչ գիդէ՝ ի՛նչ խաբար է։ (*Նստելով կուշէտկայի վրայ։*) Ջէհէլ կնգայ պէս մարթու ջէհէլացնող վունչի՛չ չի ըլի աշխըքումս. մարթու տարին էլ, քէփն էլ դիփ կնգամէն է։ Օղորմած հոքի իմ առչի կնիկն էլ լաւ աթմորթի էր, ամա բա՛նի լազաթը չէր գիդի։ Ի՞նչի նման էի էն չախը. հիմի մարթ իմ էրեւում, ի՛նչ մարթուն պիտի։ Շա՛տ ջէհէլ փրանտ տղայ էրնէկ կուլի տալի ինձ… (*Շապկի թեւնոցները տնտղելով։*) Փը՛ահ, սիպտա ձուն է՛, վո՞ւրդի էր էստունք… (*Ոգոց հանելով։*) Ամա էս մէ բանը կի լաւ չէ ըլում, վուր էս'ղադա փուղիր

է մխսիլ տալի ինձ... ի՜նձ, վուր մէ գրօշի համա հոքիս տալիս իմ 'ես... Փա՛ռք քիզ, Աստուձ, փա՛ռք... էս էլ հալբաթ Քու դիրք է... Քէ՛փ արա, քէ՛փ արա, Փէփէլ, ու դուշմնի ա՛ճկը հանէ։

ՏԵՍԻԼ Ը

ՆԱ, ԷՓԷՄԻԱՑ

ԷՓԷՄԻԱՑ, տուն գալով ծախ դռնից։

Ա՛բա, էս օրէնք է՜։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է։

ԷՓԷՄԻԱՑ

Միթամ չի՛ս գիդի. ուզում իս մէբաշ թուլանա՛մ, խայտառակ ըլիմ խալխումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է, վա՛յ։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Դիփունքը վրէս ծիծաղի՛ն, մէ մատը միղը դառնամ աշխրքումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ՛, ախար ի՞նչ է, մէ ասա՛, է՜։

ԷՓԷՄԻԱՑ, սուտ լաց լինելով։

Էս է քու օրթում հաւատը, վուր ինձ սիրում ի՜ս։

Աչքերը սրբում է։

ԱՐՈՒԹԻՆ, ծայնը քաղցրացնելով եւ վեր կենալով տեղից։

Ախար սատանայ խօ չիմ, մէ խօսի՛, է՜։

ԷՓԷՄԻԱՅ

Էլ ի՛նչ խօսիմ, մէ բանը մէ չէր կօսին, հազար չէր խօմ չին ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Տէ՛ր օղորմած Աստուձ։

ԷՓԷՄԻԱՅ

Ախար փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս էստի, աբա ըլելու բան է՛։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛, լա՛ւ է քու հօ՛րն օղորմի, Փէփէլ. ախար քինթն էրեսէմէն վէր գու քա՛յ։

ԷՓԷՄԻԱՅ

'Ես ի՛նչ միղ ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛հ, հակառակ իս։

ԷՓԷՄԻԱՅ

'Ես իմ հակառա՛կ. ի՛նչ ասիս էրեսիս ասում է քու ախչիկը, վրէս քինթը վիր է քաշում, մասխարա է գցում, ու հակառակը 'ես ի՛մ... Մէ խօսկին տասը ջուղաբ է տալի, ի՛նչ չաուիր ասիս վրէս է մօգօնում, խուղի հիդ հաւըրիլ է ինձ, ու հակառակը 'ես ի՛մ... Իմ մամէն, ասում է, էլ խիլք չունէ, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛յ։

ԷՓԷՄԻԱՅ, *շարունակելով*։

Միթամ դիղիլ իմ քիզ, խիլքէտ ըրիլ իմ, բուրթու պէս վուրթէնն ուզում իմ, էնթէնն իմ գցում քիզ... վուղչ կայինքդ ուզում իմ զավթի 'ես, ու հա-

կառակը 'ես ի՜մ… Էլ կանամ 'ես նրանց էրեսը տես-նի՜. աթմորթին կու համփիրէ էստո՜ւնք։

ԱՐՈՒԹԻՆ

Էլի դուն պիտի համփիր իս, հէ՛ր օխնած. էս սհաթիս ծնող իս յիշվում նրանցը։

ԷՓԷՄԻԱՅ

'Ես իմ ծնող յիշվո՜ւմ. նրանց համա 'ես ծնող կի չիմ, դո՜ւշման իմ, գէ՛լ իմ, շո՜ւն իմ, կա՛տու իմ… (Լաց լինելով։) Սիվցիլ էր իմ օրը ու էս տուն վուտս տուն չէի դրի։ Ի՞նչ կօնիմ էս փա՛ռքը, էս պա՛տիւը, էս շո՛ւրիրը, էս ա՛կնեղէննիրը. թո՛ղ էլի իմ տանը ննգած էի էլի՝ քա՛ղցած, ծա՛րաւ, հացի հա՛սրաթ ու էս օրը չէի տեսի 'ես…

Լաց է լինում։

ԱՐՈՒԹԻՆ

Ղա՛ւ է, լաւ, Փէփէլ ջան. (Լացի ձայնով։) սիրտս մի՛ պատըռտի… 'ես էլ լաւ գիդիմ ի՛նչ պտուղնիր ին. ամա ասում էի, միթամ խալխի խօսելու չդառնանք։

ԷՓԷՄԻԱՅ

Խալխն ի՛նչ գուզէ ասէ. նրա խօսելու հիդ վուր մարթ ննգնի, ո՞ւր կէհայ. խալխն էն էլ է ասում, վուր հաշաքար իս միթամ, շատ օքմնու իս զընի միթամ. աբա էս աւտալու է՞…

ԱՐՈՒԹԻՆ

Վրէս շառիր ին մօզօնում…

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով։

Վուր միթամ պառաւ իս դուն…

ԱՐՈՒԹԻՆ, նեղանում է եւ հազում։

Հո՜ւ…

ԷՖԷՄԻԱՑ, *շարունակելով։*

Մինչամ մազիրդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՆ, *կրկին հազում է։*

Հո՜ւ, հո՜ւ...

ԷՖԷՄԻԱՑ, *շարունակելով։*

Մինչամ ինձ խափում իս։ Ո՞վ կու ատայ. Թող խալխն ինչ զուզէ ասէ։

ԱՐՈՒԹԻՆ, *հազից խեղդուելով։*

Խալխը տուտուց է, Փէփէլ. դուն չիս գիդի՞ վուր ջէհէլ իմ. վուր ջէհէլը կուլի ինձ վրայ 'ղօչաղ։

ԷՖԷՄԻԱՑ

Աբա՛, վո՞ւր մէկին հասկացնիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ՛, դուն էն սարսաղներուն ասա՛, վուր պառաւ 'ղօչաղը լաւ է, կանց ջէհէլ դամբլէն։ (Իր մազերը բռնելով եւ գլուխը մօտ տանելով։) Աբա՛, էս ներկած է՞։

ԷՖԷՄԻԱՑ, *Արութինի գլուխը բռնելով եւ ժպտալով։*

Դուշմանը շատ բան կօսէ, Արտուշկա ջան։ (Համբուրելով գլուխը։) Մանուշակի հոտ է գալի՜։

ԱՐՈՒԹԻՆ, *փաթաթուելով։*

Ա՜յ, կուդիան, քու մէ պաչը մէ Թաքաւորութին աժէ։ (Փաղաքշելով։) Ղուրթ վուր խիլքէմէս հանում իս. ինչ ասիս վուր քու խօսկը չկատարիմ։

ԷՖԷՄԻԱՑ

Բաս չինք կանչում, էլի՜։

ԱՐՈՒԹԻՆ

Ո՞ւմը։

ԷՖԷՄԻԱՑ

Փեսիտ ու ախչկատ։

ԱՐՈՒԹԻՆ

Է՜...

ԷՓԷՄԻԱՑ, *սուտ լաց լինելով։*

Ա՛փսուս իմ գլուխ։

ԱՐՈՒԹԻՆ, *քաղցր։*

Լա՛ւ է, լաւ, քու քէփն ըլի։

ԷՓԷՄԻԱՑ, *փաթաթուելով։*

Իմ սիրուն, իմ խօ՛խօբ, իմ ջէյրան, իմ ա՛կռաւ...

ԱՐՈՒԹԻՆ

Ակռա՛ւ... վա՜հ, էտ լաւ է՛ր։

ԷՓԷՄԻԱՑ, *ծիծաղելով։*

Վո՛յ, քոռանամ 'ես, ուզում էի ասի, իմ ա՛ղունակ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, աղունակը լաւ է։

ԷՓԷՄԻԱՑ, *փաթաթուելով։*

Բաս ի՛նչ իս, վուր աղունակ չիս։

ԱՐՈՒԹԻՆ

'Երիշս էլ կուլի նման աղունակինը... Աղունակն էլ դուն իս, Փէփէլ, (*Փաթաթուելով։*) վարթն էլ ու մանուշակն էլ։

ԷՓԷՄԻԱՑ

'Ես վարթ իմ ու դուն էլ բըլբուլ, Ա՛րտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՜, գժա՛ր. դուն վարթ իս ու 'ես էլ բըլբուլ. խիստ իմ սազ գալի։ (*Էփէմիայի թշին մատով խփում է եւ թիւ։*) «Կօկօրօ վարդօ, ար դամագդօ, վար մօնա չէնի։»

ԷՓԷՄԻԱՅ, *նոյնպէս Թիւ։*

«Պիրղէդ գաքվս խալի, չաւ չաւի Թվալի, տուր-փաԹ մշվէնի չէն։»

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜հ, հէր օխնած, ասում իս, ասմ՛, վուր ջանումս նստի, է՜։

ԷՓԷՄԻԱՅ

Է՛հ, լա՞ դրօս է, էրնէկ գիդենամ, աշխրքի բան ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Գէթ ա՛ղվա, Փէփէլ ջան։

ԷՓԷՄԻԱՅ

Ո՛ւհ, քիմէն խօմ չիմ պըծնի ու, հըմ՜։ (Երգում է Արութինին շողոքորթելով։)

«Կօկօբօ վարդօ, ար դամագդօ, վար մօնա չէնի,
Պիրզէդ գաքվս խալի, չաւ չաւի Թվալի,
*Նախվա մսուրս չէնի։» *) Եւ այլն։*

ԱՐՈՒԹԻՆ

Օ՜հ, քու հո՞քուն մեռնիմ, Փէփէլ ջան... (Գրկում համբուրում է։) Սաղ աշխարքը շուռ կու տաս դուն...

ԷՓԷՄԻԱՅ

Գիդիս ի՞նչ ասիմ, Արտուշկա ջան... (Ձեռքը դնելով Արութինի ուսի վրայ։) Միր հալիլէքն էլ պէտկ չէ, մօդէն անց է կացի. մէ տիղ տեսիլ իմ, ջուխտը քառասուն ու հինգ Թուման ին ասում... (Արութինը առան-

---

*) Վրացերէն է՝—

Կոկոն իմ վարդիկ, մի՛ Թողնիր ինձ, քո ստրուկն եմ ես։
Երեսիդ ունիս՝ խալ, սև-սև աչեր, տեսիդ կարօտ եմ ես։

ծին դէմքը ծամածռում է։) Ուզում էի բէհը սա, ամա առանց քի հարցնելու գաբէդվա չարի։

ԱՐՈՒԹԻՆ, Էփէմիայի Թշին ծեռը տալով։

Ճա՜տ օյինբազն իս։

ԷՓԷՄԻԱՑ

Գէ՛թա՛ղվա, Արտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ, մտածելով եւ բարձր։

Քառսուն ու հինգ թումա՜ն...

ԷՓԷՄԻԱՑ

Էն չէնքի իքմինը բաս պակաս կուլի՞, քա՛...

ԱՐՈՒԹԻՆ

Էնդու վրայ հիմի քիչ ցածրն ըլի, ինչ հաջաթ։

ԷՓԷՄԻԱՑ

Արա՛, վի՞ս էկաղըէքա. էնդու վրայ ցածրը խօմ միրիրն է... ամա վուր պէտկը չէ... Խաչը գիդենայ, ամանչում իմ, վուր էրեսս մէջը տիսնում իմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ՛, հոքիս հանեցիր խօմ... դիփ սակն ու վրայ արիր էս՚ղանցօբէն։ Ախար՝ էս զալէն պէտկը չէ... էս մէբիլը պէտկը չէ... էս զանավէսկէքն էսէնց չէ... էս գդա՛կդ փոխէ... էս դիմիկիտօնի մագիէր պլա՛տնօ հաքի...

ԷՓԷՄԻԱՑ, փաթաթուելով։

Թէ ինձ կու սիրիս, Ա՛րտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Քիզ վուր չիմ սիրի, բաս ո՞ւմն իմ սիրում. ամա դուն էլ ղուրթ խիստ իս սիրում ինձ, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՑ

Ջարթնի քիզ ո՞վ ունիմ աշխրքումը. իմ հոքին

ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենժանութինը դուն իս։

ԱՐՈՒԹԻՆ

Օչով աչկումդ չէ գալի՞։

ԷՓԷՄԻԱՑ

Արա՛, միխկ չէ՞, Արտուշկա ջան, ի՞նչս ասում. ախչիկը քի պէս մարթ ուննենայ ու նրա աչկումն էլի օքմին գու քայ աշխըրքումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Բէ՛րիլ տու, բէ՛րիլ տու հալիլէքը, (Համբուրելով։) գէնացվալէ սուլչի։

ԷՓԷՄԻԱՑ, փաթաթուելով։

Արա՛, ո՞վ կանայ ասի, վուր դուն գափող ու գժլող իս։

Արութինի փողպատը եւ շապիկը ուղղում է։

ԱՐՈՒԹԻՆ

Խիստ իս ֆրանտացնում, ամա քու կարմիր բանտի պէս չի ըլի, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Մո՛ւլափ։ (Աւարտելով փոքր ինչ հեռանում է։) Արա՛, վո՞ւր ֆրանտը կուլի քի պէս։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ԳԻԳՕԼԻ

ԳԻԳՕԼԻ, ներս մտնելով միջի դռնից՝ մէկ ձեռքին փոքրիկ զամբիւղով ելակ, կանաչ տերեւներով ծածկած, միւս ձեռքին թղթով շաքարէ հաց։

Ա՛յ, ճարեցի, ախչիկ պարուն. ամա էլի կակլի

տօլ չէ կլուբնիկէն։ Թէզուզ սպանէ, էլ էստու վրայ մինձ չի ըլի, կօսէ։

ԷՓԷՄԻԱՅ, տնտղելով եւակը։

Ա՛յ, հէնց էս էի ասում։

ԳԻԳՕԼԻ, ուրախ։

Հէնց էն է դրօշկէն ուզում էի բռնի, տեսնիմ մէ կինտօ վուրդիոր ճարիլ էր։ Ախար առուտեհան էլ օչով չՙթողի, դիփունանցն ասի։

ԷՓԷՄԻԱՅ, չարանալով։

Ա՜խ, Գիգօլի, քու բէդասլուՙթինը խօմ ինձ իստակ սպանում է. աքա վո՞ւր օրն իմ 'ես կինտօիմէն իքմին առի, վուր հիմի էս էլ իս մօզօնի. չէիր կանա դուն ինքդ գնա բազը՞։

ԳԻԳՕԼԻ, շփոթուած։

Ախչի՜կ... պարուն...

ԱՐՈՒԹԻՆ, Էփէմիային։

Վա՛, հէր օխնած, էլի բաղի կուլի. ախար կինտօն ինքը խօ չէ չինում։

ԷՓԷՄԻԱՅ

Աքա՛, վի՛ս էկադրէքա. Նրանց կիխտուտ ձեռնիրը, (Զզուանքով։) Թը՛, Թը՛, Թը՛, Թը՛... Վա՛յ, վուր 'դօնաղնիրը պիտի գան յօրէս, Թէ չէ էս սհաՙթիս պկօչկէն կօծէի դիփ մէտի... (Դիմելով Գիգօլուն։) Ուբի՞չ, էտ ի՞նչ է։

ԳԻԳՕԼԻ

Էս էլ պիրօժնիքն է, փոխեցի։

ԷՓԷՄԻԱՅ

Հա՛։ (Տնտղելով շաքարէ հացը, կանչում է։) Սա՛մսօն, Սա՛մսօն։

ԱՐՈՒԹԻՆ, *Գիգոլու ձեռքում ելսկը տնտղելով։*

Գնա՛ ու գնա, Փէփէլ, խիստ Թազէն է, կօսխ ձեռով չէ քաղած։ (*Մէկ հատ ելակ բերանն է գցում եւ ծամելով։*) Լա՛ւն է. իմ մամա Կիրակուսն էլ առանց էս եօլա չէր գնում։

ԳԻԳՕԼԻ

Էլ խօ բան չո՞ւնիք, ախչիկ պարուն։

Աջ դռնից մտնում է Սամսօնը արխալուխի կոճակները դարձեալ բաց, ինչպէս առաջ։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, *սկզբում նաեւ* ՍԱՄՍՕՆ

ԷՓԷՄԻԱՅ, *Գիգօլուն։*

Բաս բան չունի՞մ... Մուլափ էստի։ (*Սամսօնին։*) Էս կլուբնիկը տա՛ր սարդափն ու էս պիրօժնին էլ վազերումը լա՛ւ բաբաթ չինէ։ (*Սամսօնը վերցնում է։*) Էլի դօշիտ կոճկնիլը բաց տուն էկար ինձ մօ՞դ։ Աստուձ գիդենայ, վիրչի գամն իմ ասում, Թէ մէկ էլ տեսիլ իմ քիզ էսէնց, էլ մէ՛ սահաթ չիմ պահի քիզ։

ԳԻԳՕԼԻ, *առանձին գլուխը շարժելով։*

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, կրակի կտուր է՛։

ՍԱՄՍՕՆ

Բանումն էի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՅ, *բարկանալով։*

Ջուղաբ էլ է տալի։ (*Արութինին։*) Աբա՛, պահելու է՛։

Գիգօլին առանձին Թափ է տալիս օձիքը։

ԱՐՈՒԹԻՆ, *Սամսոնին սպառնալով։*

Հը՞մ, մո՛ւ՚ղայիթ կաց... Դէ, գնա՛ բանիդ, էլ ի՞նչ իս էտի կանգնի։ (Սամսոնը գլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից, զամբիւղը եւ շաքարէ հացը ձեռքին։ Յետոյ Եփէմիային, ցածր։) Ախար ձեռին բան ունէ խիղճը, տեսնում իս քըտնքումը ծըծլում է, ըմ՞ս էմարթլէքի։

ԵՓԷՄԻԱՅ, *շարունակելով։*

Չէ, խիստ է խարաբ ըլում ախար, է՞։ Էսօր դօշը բաց տուն էկաւ, էքուց առանց ախալուխ կու տուն գայ։ Բջի համարցակութինը վի՞ս ՚էկադրէքա։ Մէ-մէ ախչիկ պարուն էլ կայ, իրանց բջի հիդ մասլահաթնիր ին անում. խօ գի՛դիս՝ ՚ես էս հանգի բանիր չիմ սիրի։ Լաքիէն պիտի լաքիա ըլի։

ԱՐՈՒԹԻՆ

Նա՛ւ է, լաւ, էս մէկը բախշէ. ՚ես կու խըրատիմ իրան։ (Գնալով ձեռքերը ետեւը դարսած եւ համրիչը ձեռքին, կէս ճանապարհից կիսաձայն երգում է։)

«Պիրզէդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի,
Նախվա մսուրս չէնի։»

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ժ

ԵՓԷՄԻԱՅ, ԳԻԳՕԼԻ

ԵՓԷՄԻԱՅ

Չէ, մէ հէնց ասլիս, Գիգօլի, հասկացրո՛ւ էնի լպստածին, վուր քաղաքավարի կենայ. իմանում ի՞ս, ի՞նչ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ

Իմանում եմ, իմանում, ախչիկ պարուն, բաս չեմ իմանո՞ւմ. ուրիշ ի՞նչ էիր հրամաում։

ԷՓԷՄԻԱՅ

Ա՛յ, Գիգօլի, էս սհաթիս գնա, Թաղլիթինց մաղազինումը հալիլէք իմ տեսի, ջուխտը քառսուն ու հինգ թուման ին ասում, էս սհաթիս էվէտ վազեցնիլ տու. թէզուղ չո՛ւրս մշակ բռնէ, էգէրա ինչրու 'ղօնաղներու գալը վրայ հասցնինք։

ԳԻԳՕԼԻ

Էս սհաթիս, ախչիկ պարուն. ամա աղէն ասիլ է՞։

ԷՓԷՄԻԱՅ, բարկացած։

Հիմի դո՞ւն. աղէն 'ես իմ, հրամաում իմ, էլի՞։

Դրսից աղմուկ է լսվում։

ԳԻԳՕԼԻ

Է՛ս սհաթիս, էս սհաթիս, ախչիկ պարուն։

Միջի դռան մօտ դրսից լսվում է ՍԱՄՍՕՆԻ ձայնը՝ Կա՛ցի, գնամ ասիմ, է՜... ՊԷՊՕԻ ձայնը՝ Կացի-մացի չիմ գիդի, թո՛ղ թէ չէ, էս սահաթիս...

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած եւ զարդի հագուստով։

Փիէ՜...

Գլուխ է տալիս։

ՆԻՓԻՄԻԱՑ

Ի՞նչ ես ուզում, ո՞վ ես։

ՊԷՊՕ

Ով ե՛մ, 'ղօնաղ իմ, վա՛։

ՆԻՓԻՄԻԱՑ

Դո՛ւն՝ միր 'ղօնա՞ղ։

ՊԷՊՕ

Հէնց 'ես։

ՆԻՓԻՄԻԱՑ, *ծիկայ տալով։*

Օտկեցէք, օտկեցէք, ո՞վ է քրիստոնայ։

Դուրս է վազում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՊԷՊՕ, ԳԻԳՕԼԻ

ՊԷՊՕ, *առաջ գալով, առանձին։*

Ա՛յ, քնթէմէն դուս գայ էն հացը, ե՛նչ մարթ ձեր հացն ուտէ, հըմ՛։

ԳԻԳՕԼԻ

Ի՞նչ ես ուզում, ախպէր, ե՞նչ բան ունես։

ՊԷՊՕ

Հալբաթ բան ունիմ, վուր էկել իմ, էլե՛, վա՛։

ԳԻԳՕԼԻ

Ձի ըլե՞, վուր մենք էլ իմանանք։

ՊԷՊՕ

Ի՞նչ կու աւելնայ քեզ. դուն գնա՛ աղա Արութի-նին իմաց արա, վուր 'ես էստի իմ։

ԳԻԳՕԼԻ.

Ախար դուն ո՞վ իս։

ՊԷՊՕ

'Ե՞ս... (Նստելով կուշէտկայի վրայ։) 'ես իմ։

ԳԻԳՕԼԻ

Վա՜...

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ, ներս վազելով ձախ կողմից։

Ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար։

Տեսնելով Պէպօին, մնում է սառած։

ՊԷՊՕ, վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում եւ գլուխ տալիս։

Բա՜րի աշողում, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ, Գիգօլուն ցածր։

Դուն գնա բա՛նդ տիս։

ԳԻԳՕԼԻ, առանձին։

Ղո՛ւրթ, հալիլէքը։

Դուրս է վազում միջի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՊԷՊՕ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

Հը՜, ո՛ւր իս էկի, ախպէր։

ՊԷՊՕ

Ա՜յ, համեցէք նստի։

Ինքը մօտ քաշելով մի աթոռ, նստում է։

ԱՐՈՒԹԻՆ, նստելով կուշէտկայի վրայ, առանձին։

Իմ տանը սա է մօհրաթ անում ինձ։ (Պէպօին։) Ախար էս չախն ու՞ր իս էկի։

ՊԷՊՕ

Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բօղազս մի՛ դուս կտրի, ա՛ղա Արութին. թէ էս սահաթիս չիս տա, վարցկ կօնիս, վուր ինձ սպանիս էստի էվէտ։

ԱՐՈՒԹԻՆ

Թէ իմքին պարտ իմ, ախպէր, ըմ՞ս գէմարթլէքի։ Ո՞ւմ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ։ Ինչըր բարաթ էիր ասում... Գթա՛ր, բերիլ ի՛ս։

ՊԷՊՕ, առանձին, կրծքին խփելով։

Ը՜մ... (Բարձր։) Բարաթը չկայ, խօ գի՛դիս. դուն քու դաւթրներումը գթա՛ր թէ չէ։

ԱՐՈՒԹԻՆ

Իմ դաւթրներումը շատ պտռտեցի, հա՛խ Աստծու, ամա մէ ասօ էլ չգթայ ձիզ համա։

ՊԷՊՕ

Բաս ի՞նչ անինք հիմի։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, 'ես ինձ համա։

Գրպանից հանում է սաթէ համրիչը եւ գցում։

ՊԷՊՕ

Վո՞ւնց թէ դուն քիզ համա, 'ես ինձ համա։ Բաս քու մտկումը պարտ չիս ի՞նձ։

ԱՐՈՒԹԻՆ

Ախպէր, ի՞նչ պիտի պարտենամ. բարաթ դուն չունիս, դաւթըրումս ’ես վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ:

ՊԷՊՕ

Բաս քու սրտի դաւթըրումն էլ վունչիչ չկայ գրա՞ծ:

ԱՐՈՒԹԻՆ

Սրտի դաւթարը վո՞ւրն է:

ՊԷՊՕ

Բաս քու խղճմտանքը վունչիչ չէ ասում քիզ, էլի՞. խօ գիդիս, վուր պարտ իս:

ԱՐՈՒԹԻՆ

Վուր գիդենամ խօ կու տամ, էլի՞. էլ ո՞ւր իմ խօսեցնում:

ՊԷՊՕ

Բաս Գիքօն ո՞ւր է ասում:

ԱՐՈՒԹԻՆ

Մէլամ, ասում է, Թավլիսի կուդի մօի’ղվանա մօծամէթ:*)

ՊԷՊՕ

Աղա Արութին, վերիւը խօ Աստուած կայ ու քու սիրտն էլ է կարթում, իմ սիրտն էլ, ա՛րի Աստծէմէն ձեռը մի՛ վիկալնի:

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ չառիր իս մօգօնում գլխիս, ախպէր. օքմին յսէ, հէնց կու գիդենայ ղուրթ իս ասում:

---

*) Վրացերէն է:—Աղուէսն իր պոչը վկայ բերեց:

ՊԷՊՕ

Դուն գիդիս վուր ղուրթ իմ ասում։ Քու վուրթ-կերանց արիւ սաղաղա, խղճմ միզ։ Էտ փուղը ’ես ինձ համա չիմ ուզում...

ԱՐՈՒԹԻՆ, *խօսքը կտրելով*։

Տէ՛ր օղորմած Աստուձ։

ՊԷՊՕ, *շարունակելով*։

Մո՛ւլափ, մո՛ւլափ, ինչրու վիրչն ա՛նգաճ դի. էտ փուղով իմ քուրը նշնած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թէ էս սահաթիս չտվինք, քվիրս թողնում ին, ուրիշ ախչիկ լին ուզում էս գիշիր։ Ախար մէ Աստձու այեաղ դադաստանը մի՛տդ բի, է՛... խօ քի՛զ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վ՛ուր չիս տալի։

ԱՐՈՒԹԻՆ

Փի՜է... (*Մտածմունքի մէջ է ընկնում։*) Այեաղ դադաստանը գլիդենայ, վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։

ՊԷՊՕ

՝Ես ասում իմ դրուստն, էլի՜. ինձ չիս աւտո՞ւմ։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛, էտ վո՞ւնց կուլի, Պէպան. ամեն մարթ վուր գայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ, մէ օրումը կու հատնի։ Չէ՛, ախպէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ։

ՊԷՊՕ, *վեր կենալով տեղից եւ գլխարկը ծածկելով*։

Բաս չիս տալի, էլի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպէր. ամա

քուր իս մարթու տալի՜, ջո՛ւխտ աճկիս։ (Ծոցից հանում է պորտմօնէն։) Ըմ՛հա, (Թղթադրամ տալով։) վարցկ բան է, բռնէ՛, ախպէր։

ՊԷՊՕ, գլխարկը վեր առնելով գլուխ է տալիս։

Ա՛յ, Աստուած վուրթիքդ զօրացնէ։

Առնում է փողը եւ գլխարկը ծածկում։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛տ հինգ թուման, համբրէ՛, (Պէպօն գունատվում է։) դրուստ հինգ թուման է. հինգ թուման էլ, դուքնօքս ա՛նց կացի, էնդի կու տան, էս սահաթիս օքմին կու ղրգիմ։ Գնա՛, ախպէր, Աստուած բարի վայելումը տայ։

ՊԷՊՕ, փողին նայելով եւ շփոթուած։

Հինգ թուման ու հինգ թումա՞ն... (Լռութիւն։) Մնա՞ցածը... Ախար իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի։

ԱՐՈՒԹԻՆ

՚Ես ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բէհէսաբ նամաղուլ իք արի, վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լհէբի գօրա կու ձքէ վո՞ւտը թէ չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանում, էլ ուրիշն ի՞նչ անէ։ Էս ի՞նչ խարաբ էլաւ աշխարքն, ախպէր. էլ օչովու համա չափս ու ձիւ չկայ։

ՊԷՊՕ

Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ինք, միր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դաւի։

ԱՐՈՒԹԻՆ

Խոստացիլ իս ու տար ի՛րան տու, էլի՛. էլ ի՞նչ իս ուզում:

ՊԵՊՕ

Ի՛ս տու, վուր տամ, է՞. ախար էս վուր տալիս իս, մասխարա իս գցո՛ւմ, թէ ի՛նչ խաբար է:

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛րի ու սրապէսներուն վա՛րցկ արա: Տօ, ինչո՞վ չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ 'ես ձիզ ու էտ էլ ինչոր տալիս իմ, հոգուս համա բախշում իմ:

ՊԵՊՕ

Բախշում ի՞ս... Գանա 'ես ախկատ իմ, էկիլ իմ օղորմութին իմ ուզում քիմէն. 'ես իմ հա՛խն իմ ուզում, իմ հա՛խը. ի՞նչ կօնիմ 'ես քու բախշիշը:

ԱՐՈՒԹԻՆ

Չիս ուզի ու էստի տու, ինձ պէտկը գու քայ: Ախկատ ու հմպարտ, վուր կօսին, էս է, ա՛յ: Բի՛, էլի՛, բի՛. ի՞նչ իս թամաշա անում:

ՊԵՊՕ

Բաս թամամ չիս տալի, էլի՛:

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, գժվիլ ի՞ս, թէ ի՞նչ խաբար է. ի՞նչ իս ուզում ինձմէն: Ջօռով պա՛րտկ կուլի աշխրքումը՝ չլինքս իս գցո՛ւմ:

ՊԵՊՕ, առաջ գնալով:

Աբա օ՛րթում կի թէ պարտ չիս, օ՛րթում կի, էլի՛. մա՛րթ կուլիս՝ օրթում կուտիս:

ԱՐՈՒԹԻՆ

Օ՛րթում, հա՛ւատ, Ա՛ստուձ, (Պէպօն զարհուրում

է։) ’Երգինք, իմ վնւրթկերանց արիւը գիդենայ, վուր վունչիչ պարտ չիմ...

ՊԷՊՕ, զայրացած։

Ա՜յ, Աստուծ ու ’Երգինք խռով կենայ գլխիտ։ (Խփելով փողը Արութինի երեսին։) Հը՛, բռնէ, աճկդ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու։

ԱՐՈՒԹԻՆ, աղաղակելով եւ տեղից վեր թռչելով։

Օտկեցէք, ’ղարաուլ, սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի...

Ներս են թափվում՝ ձախ դռնից Էփէմիան, աջ դռնից Սամսօնը, հարբուած եւ զարդարուած, ինչպէս պատուիրել էր Էփէմիան երրորդ տեսիլում. իսկ միջի դռնից երկու այլ ծառայ ֆրակով եւ սպիտակ ձեռնոցներով։ Տեսարան։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՅ, ՍԱՄՍՕՆ, ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅ

ՊԷՊՕ, ձախ ձեռքով ցոյց տալով ծառաների վրայ։

Է՛ս է քու մարթութինն, էլի՜... (Երկար լռութիւն։) Ա՛յ, հա՛ռամ ըլի քիզ քու հարստութինը։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած, ծառաներին։

Տօ՛, օտկեցէք է՜, ի՞նչ իք թամաշա անում, տեսնում իք՝ ուզում է սպանի ինձ։

Սամսօնը եւ ծառաները մօտենում են Պէպօին։

ՊԷՊՕ, ծառաներին մղելով։

Մո՜ւլափ, դէ՜նը... (Արութինին։) Էս օսկէ պատիրը, վուր սարքիլ իս, ո՛ւմ փուղով... հազար ինձ պէնե-

րուն թա՛լնիլ իս, գ՛նա, քար ու կիրը միր արնով իս շաղըղի, գ՛նա. դիփունանց աճկիրը աբլանդվա իս արի ու հիմի ծանդը ու բարակ քիզ համա նստած քէփ իս անում, էլի՜։

ԷՓԷՄԻԱՑ

Դո՛ւս արէք, դո՛ւս արէք։

ԱՐՈՒԹԻՆ

Դո՛ւս, դո՛ւս, ասում իմ։ (Ծառաներին։) Դո՛ւս արէք, չիք իմանո՞ւմ։

Ծառաները յարձակվում են Պէպօի վրայ։

ՊԷՊՕ

Դո՜ւս... (Ծառաներին նորից մղելով։) Դէ՛նը, դէ՛նը։ (Ծառաները փոքր ինչ հեռանալով կանգնում են միջի դռան առաջ։ Արութինին։) Փուղիրս հաշա իս ուտում, ու դուս էլ իս անում, էլի՜... Դո՜ւս կէհամ, դո՜ւս կէհամ, չարէս ի՞նչ է, զօռը քունն է. ամա լաւ գիդացի, պարուն Արութին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիւըն Աստուած կայ, քնթէմէտ կու հանէ քու անօրէնութինը։ (Ծառաներին հրելով։) Դէ՛նը, դէ՛նը...

Դուրս է գնում միջի դռնից։

ԱՐՈՒԹԻՆ, Պէպօի ետեւից, ծառաներին։

Գնացէ՛ք, գնացէ՛ք հիդը, վունչիչ չտանէ, վունչիչ չփախցնէ։ (Ծառաները դուրս են վազում Պէպօի ետեւից։) Էսէնց էլ լպստա՜ծ։

Կռանում է եւ փողերը հաւաքում։

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՆ, ԷՓԷՄԻԱՅ

ԷՓԷՄԻԱՅ

Գո՞ժ է էն մարթը, թէ էս ի՞նչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ, *փողերը ծոցը դնելով։*

Ա՛րի ու սրապէսներուն վա՛րցկ արա հիմի։

ԷՓԷՄԻԱՅ

Էս ի՞նչ բան է ախար, չիս ասի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Աստուձ վո՛ւչ գիդէ նրա գլուխը. քուր իմ մարթու տալի, կօսէ. ’ես ի՞նչ անիմ վուր մարթու է տալի։

ԷՓԷՄԻԱՅ

Բաս էն ի՞նչ էր ասում, թէ փուղիրս հաշա իս ուտում, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Աբա՛, քիմէն չիմ արմնո՞ւմ, Էփէմիայ. փուղ հաշա ուտիմ ու էն էլ նրա պէս մարթունը՞, չիս ճանչնում ի՞նձ։

ԷՓԷՄԻԱՅ

Էտ փուղիրը վուր ծուցդ դրի՞ր, նրանը չէր բա՞ս։

ԱՐՈՒԹԻՆ

Նրա հօ՛րն օղորմի. վուխչ իմ կայինքն էլ նրանը կուլի, բա՛ս։ Էկաւ, թէ խիղճ մարթ իմ, կօսէ, քվիրս համա բաժինք չունիմ, կօսէ, քու վուրթկերանց արիւ սադաղա, օտկէ միզ, կօսէ. ’ես էլ ա՛խմախ-ախմախ հա-

նեցի ու բախչեցի։ (Նեղանալով։) Ճնորհակալութենի մագիէրն էր, վիկալաւ ու ճակտիս խփից. քի՛չ է, կօսէ։

ԷՓԷՄԻԱՑ, Թուշը վէր բերելով։

Վո՞յ, քոռանամ ’ես, ղուրթ իս ասո՛ւմ, Արութին ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Բաս սուտ իմ ասո՞ւմ։

ԷՓԷՄԻԱՑ, չարացած։

Քու հա՜խն է, խիստ լաւ էլ է արի. էտ էն գիդենայ, վուր ժամէմէն դուս գալիս, հարուր ախկատ էլ վուր ըլի դռանը, դիփունանց ձեռին՝ (Գործողութիւնը ցոյց տալով։) «բռնէ՛, բռնէ, բռնէ՛»... Իժում էտէնց կու թողնի՞ս էտ անպատութինը։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անիմ։

ԷՓԷՄԻԱՑ

Աշխրքի լափը գլուխտ ածաւ....

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ անիմ։

ԷՓԷՄԻԱՑ

Վո՞յ, քոռանամ ’ես. էլ բան չմնաց, վուր քիզ չասաւ, ու էն’ղադա բէաբռութինը դուն կուտի՞ս։ Ի՞նչ կօսին խալխը։

ԱՐՈՒԹԻՆ

Խալխն ի՞նչ գիդէ, գլուխը քարը տայ. թո՛ղ, խիղճ մարթ է։

ԷՓԷՄԻԱՑ

Վո՛ւնց թէ խալխն ինչ գիդէ. էն’ղադա բջերանց մօդ չէ՞ր, վուր վրէտ բղաւեցաւ ու ճ’ղաւեցա՜ւ։ Աշ-

խարք ու ’երգիր ըս Թալնի, կօսէ, քսան ու հինդ հազար խղճի տուն ըս քանդի, կօսէ, էս արարմունք-ները քիզ չի մնա, կօսէ. ու էստունք պիտի մարսիս դո՞ւն։ Բջերանց բերնումը իքմին կու կանգնի՜. չիս գիդի՞, վուր էքուց ինչկլի էս վախտը վուխչ քաղաքը կու իմանա՜յ։ Մարթ ըլիմ, գլխիս գդակ ունենամ ու ’ղաբուլ անիմ, վուր էս հանգի պաժարնին իմ տանը ինձ անպատիւ անէ՜. ասէ վուր նրա փուղիրը հաշա իմ ուտո՞ւմ. Թաւաթ ի՞նչ ասիս ասում ին քիզ վրայ ու հիմի պակասը Թամամ ըլի՜...

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՕԼԻ

ԳԻԳՕԼԻ, *ներս մտնելով։*

Հալիլէքը բերի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, *յանկարծ փոխուելով եւ ուրախ։*

Հալիլէքը՜... (*Շտապով գնում է. կէս ճանապարհից Արութինին, յափշտակուած։*) **Մէ ա՛րի, մէ ա՛րի, Արտուշ-կա ջան, տե՛ս թէ ի՞նչ հալիլէք է, ի՞նչ հալիլէք...** (*Կանչելով։*) **Սա՛մսօն, Սա՛մսօն...**

Շտապով դուրս է գնում միջի դռնից։ Գիգօլին ու Սամսօնը, որ դուրս է վազում աջ դռնից, հետեւում են նրան։

—∞—

ՏԵՍԻԼ ԺԸ

ԱՐՈՒԹԻՆ, *մենակ։*

Տօ́, ղուրթ, ինչ օյին էկաւ գլխիս էն լօթի պաժարնին... Էլ մինձ ու պստիկ չկայ աշխըքումը... էն հանգի ախկատ ղադօն վրէս էնէնց բղաւի, (Ման գալով։) էն հանգի խօսկիը ասէ... (Հայելումը ուղղվում է։) Բօ́շացաւ, բօ́շացաւ աշխըքի բանը... (Հեռանում է հայելիից։) Պարտ իս, կօսէ... Գժվիլ է... Ի՛նչ պարտք, ինչ փլաւ, ինչ փստան... Ո՞վ ասաւ, վուր պարտ իմ... ո՞վ գիդէ, վուր պարտ իմ... Թէ պարտ իմ, ինչի՞ ինչկլի էսօր յիդ չիմ տվի... Եա նրան վուր տամ, մէկէլներուն ինչ ասիմ... Նրանք ինչ գէթ ին արի... Չէ՛, (Նստում է։) վունչիչ պարտ չիմ... սուտ չառիր ին մօգօնում... Թէ պարտ իմ, ինչի՞ բարաթ չունէ... Վո՞ւրդի է... ո՞վ ունէ... ինչ բարաթ... Բարաթ չկա՛յ... գնացիլ է... ջնջվիլ է... թէ չէ էլ ինչ օրութին է... Ամա էն լօթի պաժարնին պիտի ամեն տիղ բղաւի, վուր փուղ իմ պարտ ու յիդ չիմ տալի... (Վեր է թռչում տեղից։) Չէ՛, չէ՛, Էփէմիէն դըրուստ է ասում... Պիտի ’ես բղաւիմ, ’ես պիտի հարայի տամ, աշխարք ու ’երգիր զարթեցնիմ, վուր ինձ, ինձ պէս աղա մարթուն էսէնց անպատիւ արին, էսէնց չառիր ին գցում վրէս... Մուլափ, ’ես քիզ կու չանց տամ, լօ́թի պաժարնի...

Դուրս է գնում ձախ դռնից։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Առաջին արարուածի սենեակը, միևնոյն ձևով կարգաւորած և դամբը թօկի վրայ փռած: Առաւօտ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԷԿԷԼ, մենակ տախտի վրայ նստած, մի փոքր ժամանակ լուռ կարում է, յետոյ սկսում է երգել:

«Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, Նախատել ես,
Ջիգարըս կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել:»
(Աչքերը սրբում է:)
«Ինձ տեսնելիս տո՛ւր բարով,
Խո՛րհուրդդ ասա գրով:»
(Լացի ձայնով:)
«Ինձ խօ մոռթել չես սրով՝
Անսուր մատաղ ես արել:»
(Լաց է լինում:)

Ա՛խ, Աստուա՛ծ, 'ես էլ կօսիմ թէ աթմորթի իմ... Ինչի՞ ստիղծեցիր ինձ, ինչմ՞ցու իմ աշխըրքումը. անմիղ գեղնի էրեսին տիղ իմ բռնում... Էն ուփըս լաւ չի ըլի՞, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխչըտում ըլի՜ն... Ինչի՞ չես սպանում ինձ,

Աստուծ… Դուն խօ լաւ գիդիս, վուր մահն ուփրօ հիշտ է ինձ համա, կանց չունչ քաշիլը… (Լռութիւն:) Ջուրը ննգնիմ, Թոկով խիխտվիմ, դանակ ցցիմ սըրտումս. ինչ ջուղաբ տամ Քիզ… (Լաց է լինում:) Ա՛ստուծ, Ա՛ստուծ, եա կէծակ վէր գցէ գլխիս, եա կարմնջի վրայ անց կէնալիս կարմունջը փուլածա վուտիս տակը, եա գեդնին ման գալիս, գեդինը պատռէ ու ինձ դէվէր տար…

Լաց է լինում:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱ, ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ, ներս մտնելով ձախ դռնից:

Էլի լաց իս ըլում, Կէկէլ:

ԿԷԿԷԼ, աչքերը սրբելով:

Ջարթնի լացը՝ ինչ է մնացի ինձ, դէդի… Էս արտըսունքն էլ վուր չըլի տվի Աստուծ, սիրտս ինչով հովցնիմ:

ՇՈՒՇԱՆ

Ախար էտ՚ղադա արտըսունք կուլի, վուրթի. խօ քամվեցար իստակ:

ԿԷԿԷԼ

Բաս ինչ անիմ. դօշիս հէնց գիդիմ աղաքար է պառկած… Էս արտըսունքն է ինձ օտկում մէ քիչ, Թէ չէ դարդու խիխտվում իմ:

ՇՈՒՇԱՆ

Դարդ ցաւի գայ ու Աստծու պատիժի էն սիւ-

սրտովը։ Աժէ՞, վուր էտ՚ղաղա դարդ ես անում նրա համա՛։

ԿԷԿԷԼ

Աշխրքումը բէդնամ էլայ, գլուխս դուս կտրվեցաւ, էլ տօլի ու սծօրի էրեսին չիմ կանացի մտիկ տա. էս ապրիլ է՞։

ՇՈՒՇԱՆ

Մի՛ դարդ անի, Կէկէլ ջան, մի՛ դարդ անի. Աստուած օղորմած է, կուլի նրա վրայ լաւ մարթու է ռաստ բերում քիզ։

ԿԷԿԷԼ

Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խճպտանք ունի՛ն, նրանք հոքի ունի՛ն... Ինձ պաչ արաւ ու իմ պաչը տարաւ ուրիշին էրիտ... (Գլխին խփելով։) Գեդինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Էլ ՚ես ՚Երգնքի էրեսը վո՞նց պիտի տեսնիմ։

ՇՈՒՇԱՆ

Արա՛, դուն վուր էտունք ես անում, Կէկէլ, ՚ես ի՞նչ անիմ... (Լաց լինելով։) Միխկը չի՛մ. բաս ՚ես վո՞նց դիմնամ՝ իմ սիւ ու մութ օրին մէ կուռը, քիզ մէկէլին... Էտ հանգի օրինակնիր շատ է էլի, վուրթի, մենակ միզ համա խօ չէ՛ ստիղծած աշխարքը։ Քա՛նի միզպէսնիրը կան, քա՛նի միզ վրայ վա՛տթարն ասա, հացի հասրաթ ածած ին, մէ թիքայ հացին էրնէկ ին տալի, դռնէ դուռը ախկատութին ին անում ու էն թիքայ հացը, թէ հազրէնը մէկը տալիս է, մնացածնիրը կինծումը խփելով դուս ին անում... Միզ խօ Աստուած մէ թիքայ տվիլ է. փա՛ռք Իրան, ի՞նչ անիս, հալբաթ միր ճակտին էս էր գրած։ Էլի փա՛ռք տանք

Իրան, աղանչաք անինք, վուր էստու վրայ վատԹար օրին չռաստ բերէ միզ. իմ Պէպօին ջան տայ, վուր ինչ Թիքայ միզ տալիս է նրա ձեռով, էն Թիքէմէն էլ չզրգէ միզ։

ԿԷԿԷԼ

Էրնէկ Աստուձ ինձ մա՜հ տայ, ուրիշ վունչիչ չիմ ուզում։

ՇՈՒՇԱՆ

Մի՛ ասի, մի՛ ասի, Կէկէլ ջան. (Գրկելով Կէկէլին։) միխկ է Աստձու մօդ, գէնացվալօս դէդէն։

ԿԷԿԷԼ, Շուշանի գրկում։

Ա՛խ, դէդի ջան...

Լուռ լաց են լինում։ Տեսարան։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, ներս մտնելով միջի դռնից գլխարկով եւ ձեռնափայտով։

Վա՜, օխնած հոքիք, զարԹնի էտ՝ բան ու գուրձ չունի՞ք։

ՇՈՒՇԱՆ, Թողնելով Կէկէլին։

Ուրիշ ի՞նչ բան ու գուրձ պիտի ունենանք. Թէ գուզիս՝ դուն ծա՛փ տու, մինք խաղանք։

ԿԷԿԷԼ, վերցնելով կարը։

Ա՜խ...

Շտապով եւ աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ Դ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ

Է՜, լաւ է, ձիր հօրն օղորմի. աժմոլթին էլ մէ քիչ համփիրութին պիտի ունենայ։ Ախար մէ գլուխ դիփ լաց իք ըլում, խան մէկն ու խան մէկելը. էաէնց վո՞ւնց կուլի։

ՇՈՒՇԱՆ, *նստելով տախտի վրայ։*

Ի՞նչ անիս, ի՛նչ միր գլխին բան էկաւ, Աստուձ միր դուշմնին էլ չտայ։

ԳԻՔՕ

Աստձու բանը դուն չիս գիդի, Շուշան, ուրիշ հանգն է սարքի աշխարքը. ուրախութենի հիդ դարդ է տալի մարթու ու դարդի էդնէն՝ ուրախութին... (Նստելով աջ կողմը սեղանի մօտ, քթախոտ է քաշում։) Հը՜մ, է՜... (Երկու ձեռքի ցուցամատները միմեանց կըպցնելով։) Էսէնց է, ա՞յ. քուր ու ախպէր։ Վունցոր քուր ու ախպէր մէկսմէկէմէն չին բաժնվի, էնէնց էլ ուրախութինն ու տխրութինը։

ՇՈՒՇԱՆ, *առանձին։*

Քո՛ւ աճկն էլ։

ԳԻՔՕ

Շատ լաւ է շինի, է՜... Ասում է մարթուն՝ էս քիզ ուրախութին, գնա՛, քէփ արա, ասում է. իժում էն քէփումը մէկ էլ տեհնիս մէ դարդ է լուս գցում միզ

համա, վուր ինչ է՝ հըր՜… Իրան չմտէն գցինք… Գոհանամ Քիզ, Աստուձ։

ՇՈՒՇԱՆ

Էրնէկ գիդենամ՝ ըմ դրօս քարոզի վուխտ է։

ԳԻՔՕ

Մ՛ուլափ, Շուշան, մ՛ուլափ. ախար դուն չիս գիդի թէ խօսկս վուրդի է գալի, է՜։ Ինձի ինձ էրվում իմ, խորվվում իմ, ամա էլ ինչ կանամ օտկի։ Մէկ փիքր իմ անում, վուր կուլի դժուխկը գնամ. ամա մէկէլ ասում իմ, վուր հալբաթ էս Աստձու բան էր։ Հիմի գուզիք ինձ սպանեցէք, գուզիք Աստձուն փառք տվէք, վուր հոքիս բերնումս է ու խօսում իմ։

ՇՈՒՇԱՆ

Վ՛ախտ իս գթի դուն էլ, Գիքօ. առանց էն էլ դարդու տրաքվում իմ։

ԳԻՔՕ

'Նս էլ էտ իմ ասում, Շուշան, է՜։ Տ՛ես հիմի, էտ դարդի հիդ ինչ ուրախութին է գալի։ (Շուշանը զարմացած նայում է։) Արմնում իս, գ՛նա, Շուշան։ Վուրն էն չախը թ՛ամաշա արա, 'եփոր դլփ կօսիմ։ (Գրպանից ծալած թուղթ հանելով եւ աջ ձեռքով բարձրացնելով։) Ա՜յ։

ՇՈՒՇԱՆ

Էտ ինչ է։

ԳԻՔՕ

Ի՛նչ է… Էն է, էն, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Վուր չիմ իմանո՜ւմ։

ԳԻՔՕ

Ա՛յ, կու իմանաս. համփիրութինը բաժնելիս Աս-

տուն քիչ փայլին կնիկարմատին էրիտ։ Հիմի ինչ համփիրութին տվիլ է քիզ Աստուծ, դիփ մէտի մօղ֊արա ու ծանդը ու բարակ ինձ մնգան դի, վուր լի֊զուս չխառնվի։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Նարաք էս հանգի էլ մարդ կուլի՜։

ԳԻՔՕ, շարունակելով։

Գիդիս ինչ է, Շուշան։ Օղորմած հոգի քու մարթը...

ՇՈՒՇԱՆ, երկար ոգոց հանելով։

Ը՜հը՜հը՜հը՜...

ԳԻՔՕ, գրպանից Թաշկինակը հանում է եւ աչքերը սրբում։ Լացի ձայնով։

Աստուծ ողորմի, Աստուծ հոքին լուսաւուրէ. լաւ մարթ էր, անումով մարթ էր խիղճը։ Քանի չէր է ձիով Գանջա գնացի ու էկի օղորմած հոքին։

ՇՈՒՇԱՆ, ոգոց հանելով։

Ա՛խ, ախ, ախ...

ԳԻՔՕ

Է՛հ, փուչ աշխար, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Իժում։

ԳԻՔՕ

Հա... (Դադար։) Մահէմէն մէ քանի օր առաչ, 'ես խոմ դիփ կշտին էի, գիդիս, օթախի դռնիրը կոխպիլ էրիտ, մնացինք 'ես ու օղորմած հոքին...

Աչքերը սրբում է։

ՇՈՒՇԱՆ, տխուր։

Մ՛տս է։

ԳԻՔՕ, *ձեռքով իր բերանը ծածկելով։*

Մո՛ւլափ... Ջիբէմէն բլնքնիրը հանից ու էն ձիր սիւ պստի 'ղուԹլին ուզից, 'ես էլ մօդ տարայ. սա բաց արաւ, էս Թուխտը հանից ու ինձ էրիտ։ Անդէրձ արաւ, վուր ինչըրու վիրչի ժամանակը վունց քիզ իմաց անիմ, վունց Պէպօին։ Պէպօս, ասում է, չէհէլ է, կօսէ, վա՛յ Թէ փչացնէ, կօսէ, ու իմ Ձուշանը կնիկարմատ է, կօսէ, վա՛յ Թէ Պէպօի ճանգը գցէ, կօսէ։ Ինչըրու վուխտը չգայ, կօսէ, վունց մէկին մի՛ ասի, Թէ դուն ունիս, կօսէ։ *(Խփելով Թղթին, լացի ձայնով եւ բարձր։)* Իմ Կէկէլի բա՛ժինքը էստումն է, կօսէ...

ՁՈՒՇԱՆ, *վեր Թռչելով։*

Էտ ի՞նչ Թուխտ է, գանա։

ԳԻՔՕ

Ի՛նչ Թո՞ւխտ... Արութինի բարաթը։

ՁՈՒՇԱՆ, *մօտ վազելով։*

Ի՞նչս ասում, Գիքօ... *(Խլելով Թուղթը ձեռքից։)* Ուզում իս հոքիս հանի՛։ *(Բաց է անում Թուղթը եւ ճանաչում Արութինի պարտամուրհակը։)* Է՛ս է... օտկեցէք... սիրտս գնաց... *(Գնում է, իր տեղը վայր ընկնում։ Զարմացած նայում են միմեանց. երկար լռութիւն։)* Կինաղամ մեռայ... Իժում, ա՛նաստուձ, ինչըրու հիմի ո՞ւր էիր պահում. Կէկէլիս սպանեցիր ու հիմի՞...

ԳԻՔՕ

'Ես միղ չունիմ, Ձուշան, գիդէ Աստուձ, վուր միղ չունիմ։

ՁՈՒՇԱՆ, *շտապով։*

Ա՛յ, Աստուձ անէ քու դիվանն ու դաղաստանը։ Էտէնց կատարեցիր անդէրձը՞։

ԳԻՔՕ

Ախար մէ ա՛նգած դի, է՜…

ՇՈՒՇԱՆ, խօսքը կտրելով։

Անգած ցալի գաս ու Աստծու պատիժի. էս օրէնք է, վուր դուն արի՛ր։

ԳԻՔՕ

Ախա՛ր, Շուշան…

ՇՈՒՇԱՆ, անդադար Գիքօի խօսքը կտրում է մինչեւ նրա վեր կենալը։

Ախար քիզ ու… (Առանձին։) չօռ ու ցաւ։ (Գիքօին։) Լօ՛բի։

ԳԻՔՕ

Փիէ՜…

ՇՈՒՇԱՆ

Ախար, ինչի՞ պահեցիր, ինչի՞ ինչրի էսօր։ Քու Աստծուն ի՞նչ իս ասում, քու հոքուն ի՞նչ ջուղաբ կու տաս։

ԳԻՔՕ

Տօ՛, մէ ա՛նգած դի, է՜…

ՇՈՒՇԱՆ

Աբա՛, ա՛սա, էլի։

ԳԻՔՕ

Ա՜յ, Շուշան…

ՇՈՒՇԱՆ, շարունակելով։

Ա՛սա, ա՛սա։

ԳԻՔՕ

Օ՛վէ…

ՇՈՒՇԱՆ

Տեսնիմ ի՞նչ իս ասում։

ԳԻՔՕ

Ախար…

ՇՈՒՇԱՆ

Մէ տուտուց բան պիտի ասիս, էլի՛։

ԳԻՔՕ

Տօ, խօսքս բերնէմէս մի՛ խլի, է՜…

ՇՈՒՇԱՆ

Աստծու 'ղազաքի գաս, հը՜։

ԳԻՔՕ, վեր կենալով եւ գլխարկը Թափ տալով։

Էլ վունչինչ չիմ գիդի… (Գնալով։) Կնիկարմատի պէս էլ անդնջո՜ւմ։

ՇՈՒՇԱՆ, բարձր։

Մո՛ւլափ, մո՛ւլափ, Գիքօ։

ԳԻՔՕ, յետ դառնալով։

Ախար, օ՛խնած հոքի, մէ քիչ համփիրութին ունեցի, ասում իմ, է՜։ 'Ես խիստ ուրախ ի՛մ, վուր էսէնց էլաւ բանը՜․ ամա Աստծու դարսողութեններին վո՞ւնց հակառակվի մարթ… (Նստում է միեւնոյն տեղը եւ քթախոտ քաշում։) Հը՜մ…

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Կըլի՛մ քու գլուխն, ըահա՜։

ԳԻՔՕ, քիթը սրբում է։

Չիս գիդի, թէ ի՛նչ օյին էկաւ գլուխս։

ՇՈՒՇԱՆ

Էլ մի՛ ծըռծըռեցնի, թէ քու Աստուծը կու սիրիս։

Մուրհակը գցում է տախտի վրայ։

ԳԻՔՕ

Չէ՛, ա՜յ, էս սահաթիս, քիչ է մնացի… Էտ բարաթը վուր տալիս էր օղորմած հոքին, չատ ասի,

թէ իմ բան չէ. էտ հանգի ծանդր բիռն, ասի, վրէս մի՛ շալկի, ասի, էլ դնջութին չիմ կանա ունենա, ասի. ամա չալաւ: Հալալ մարթ իս, Գիքօ, կօսէ, (Լացի ձայնով:) զարթնի քիզ ճար չունիմ, կօսէ: Է՛հ, չարէս ինչ էր, դուն ինձ ասա. վիկալայ բարաթն ու մէ 'երիք-չուրս օրվան էդնէն հոքին էրիտ խիղճը. Աստուձ հոքին լուսաւուրէ: (Աչքերը սրբելով եւ լաց լինելով:) բարեխօս ըլի իր Կէկէլի համա:

ՇՈՒՇԱՆ, աչքերը սրբելով երկար ոգոց է հանում:

Ը՜հ, հը՜, հը՜, հը՜...

ԳԻՔՕ

Է՜հ, մա՛խլաս. դիփ մահի վուրթիք ինք... Վուրդի էի՞:

ՇՈՒՇԱՆ

Վուր բարաթն էրիտ ջրատարը:

ԳԻՔՕ

Հա՛, էրիտ... Առայ, տարայ տուն, պահեցի... Մէ-մէ մարթ կայ խազինա է պահում. եարաբ նրա քունը վո՞ւնց է տանում գիշիրով... Պահեցի... Հին սիգէլնիր ունէի Երէկլէ պարնի վախտվան: 'Ես խօ զարթնի մէ քօխին ուրիշ վունչիչ չունիմ. ամա էնէնց պահում էի էն սիգէլնիրը, մարթու խանդիխան կարթացնիլ էի տալի, դուր էր գալի խօսկիրը: Դուն չիս տեսի, Շուշան: Ջե՜ր Աստձու անումն է գլխին գրած, իժում Քրիստուսինը, իժում Հոքի սուրփը. գալիս է, ա՛ղա ջան, իժում աւետարանիչնիրը, սրփիրը, դի՜փ մէ-մէկ, մէ-մէկ, է՜ն'ղադա օրհնանք, է՜ն'ղադա բանիր... Է՛հ, գնա՜ց դիփ մէտի. հա՜յիփ, հա՜յիփ միր ժամանակ:

ՇՈՒՇԱՆ

Էտ խէստ հիւու գնացիր, Գիքօ։

ԳԻՔՕ

Հիւու կի չէ, խէստ մօդկացայ։ Ախար հէնց էն սիգէյներումը պահեցի էտ բարաթն, է՜։ Կապեցի, դրի զանդկիս քունջը, բայնիքն էլ ջիբէմէս չէի հիռացնում։ Ամիս չէր անց կենայ, վուր մէ էրկու ջէր զանդուկս չէի բաց արի ու կապուցքս չէի անդղի։ Ամանաթի պէս դժար վունչիչ չկայ աշխրքումը։ Աստուծ, Աստուծ էի անում, վուր Կէկէլի բախտը մէ վախտի բաց ըլի, ու բաց էլ արաւ խօմ Աստուծ... Մէ օր էլ բաց անիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուցքը չկայ։ Հա՜յ դէս, հա՜յ դէն, չկա՛յ, չկա՛յ, չկա՜յ... Զարթնի էս՝ մէ քանի հատ էլ հնուց, շատ հնուց, ա՜յ, սի փուղ ունէի, էն սի փուղն էլ հիգը գում ու կլան է էլէ՜. մէկ էլ բանիրը կի զանդկումը իր տիղը անշարժ, սաղ-սալամաթ դարսած է... Ախպէր, թէ գուղ էկաւ, կանց հին գրօշնիրն էր տանում, թազա փուղն էր տարի՜, էրկու թուման աւել դիփ թազա Նիկալաի ղըդղըդան մանէթնիր ունէի. Թէ սատանայ մտաւ զանդուկս, էն վո՞ւնց տուն գնաց ու դուս էկաւ, վուր մէ տիղ ծակ չէթող զանդկումը. թէ չէ՝ զանդուկը կողպած, բայնիքը ջիբումս, վո՞ւնց հանգաւ էնդունք... Ի՛նչ իմ հալն էր, Շուշան, էն Աստուծ գիդէ, մէ օր հոքի ունիմ տալու... Գարի ասիս, 'ես իմ գցիլ տվի, էփէմէրդի ասիս, 'ես իմ բաց անիլ տվի, չոքած էգեղեցու բոլորքն ասիս, 'ես իմ աղօթկ արի... Իշտահս կապվեցաւ, քունս կտրվեցաւ, ջում-ջումի դառայ... Էստի խօ՝ քանի ձիգ տեսնում էի, քանի ձիր լացն

ու սուքը իմանում էի, սիրտս կրակ էր ննգնում... Քանի չէր ուզում էի բաց անիմ էս բանը, ամա իմ աՙու վունչիչ չէի կանացի ասի, լիզուս չէր զօրում, ինչ անիս... Ամա չմսիս, Զուչան, թէ ձիր միխկը կու տանէի. իմ աղանչաքը դիփ էն էր, վուր ինչրու էս պարտքը չպրծնիմ, Աստուձ հոքիս չհանէ... Պարծանքսով չիմ ասում, Զուչան, Աստուձ գիդենայ, քօխիս գրաւ դրի ձիզ համա ու փուղիրը էս էրկու օրումը պիտի տան. ամա ինչ փայիդա վուր իր վուխտը չիրայ հասաւ... հալբաթ էսէնց պիտէր... Փառք Քիզ, Ա՛ստուձ, փառք, մեռնիմ Քու ամենակարող զօրութենին։

ԶՈՒԶԱՆ

Իժում վունց գթար ախար էս բարաթը։

ԳԻՔՕ

Վունց գթայ... Ես խօ չգթայ, Զուչան, իրան իրան էկաւ... Հիմի ասմ թէ վունց։

ԶՈՒԶԱՆ, առանձին։

Հալից ու մաչից։

ԳԻՔՕ, շարունակելով։

Էս իմ սատանի սրուց քվիր տղէն...

ԶՈՒԶԱՆ

Հիմի վուր Ռուսէթ է։

ԳԻՔՕ

Հա, հէնց էն աղա-ղադէս։ Մէ օր, քանի չէր էստի էր, շատ աղանչաք արաւ, վուր էտ սիգէլնիրն, ասում է, ինձ տու, կօսէ, իմ ուսումին պէտկը գու քայ, կօսէ, չունքի հին բանիր է, կօսէ։ Քիզ դրուստն ասիմ, չավի. ասի չպատռտէ, դէն չածէ, ասի։ Ախար,

թէ թազա ուսում ին ստանում, հին բանիրը ինչի՞ն է պէտկ։ Անց կացաւ, գնա՜ց։ Գնալու վուխտը՜...

ՇՈՒՇԱՆ

Նրա գնալը մէ 'երիք ամիս կուլի, գնա՜նա։

ԳԻՔՕ

Հա՛, էտէնց է։ Սա, մի՛ ասի, բալնիքս ջիբէմէս կու հանէ, 'ես ո՞վ գիդէ՝ ինչ էրազումն էի էն չախը, աղավարի զանդուկս բաց կօնէ, կապուցքն ու հին փուղիրը կու ծալրպէ, զանդուկը յիդ կու կոխպէ, բալնիքը ջիբս կու դնէ ու հայդէ՜։ Ա՛րի ու հիմի դուն ինձ լօ՛քի ասա, տեսնիմ թէ ինձ վրայ 'ղօչաղի ձեռնէմէն ինչ կու դուս գէր... Ախար մարթու խօսկը կու իմանան ջեր, Շուշան, իժում 'ղնամիշ կօնին, թէ 'ղնամիշ անելու է. թէ չէ լօ՛քին ինչ անէ, վուր ինձ լօքի իս ասում, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Իժո՞ւմ։

ԳԻՔՕ

Իժում էլ էն, վուր էս բարաթը էս օր փօշտով ղրգել է ու մէ կարաբաղին էլ մասխարութիննիր է գրի վրէս։ Քու սիգէլնիրը, կօսէ, Փռանգստուն ղրգեցի, կօսէ, ու սի փուղերու համա, ասում է, թէ գուզիս՝ մէ մէնդալ կու ղրգին քիզ համա, կօսէ, ու էս բարաթն էլ, ասում է, յիդ քիզ փէշքաշ, ասում է։

ՇՈՒՇԱՆ

Գեդինը պատռվի ու նրա սատանին դէ՛վէր տանէ, ըհը՜րա։

ԳԻՔՕ

Աբա՛, Շուշան, 'ես ի՞նչ միղ ունիմ։

ՃՈՒՃԱՆ

Կէկէլս կի մեռնում է ու ի՛նչ անիմ թէ միղ չունիս։

ԳԻՔՕ

Աստուծ օղորմած է, Ճուշան, Աստուծ օղորմած է։

ՃՈՒՃԱՆ

Աստուծ միր աճկը հանից ու պրծաւ, էլ ի՞նչ օղորմած է։

ԳԻՔՕ

Մի՛ ասի, Ճուշան, մի՛ ասի. Նրա դարսողութի՛նը օչով չի կանա իմանա։ Հայրաթ Նրա կամքն էսէնց էր։

ՃՈՒՃԱՆ

Փա՛ռք Իրան, ի՞նչ անինք։

ԳԻՔՕ

Լաւ մարթ վուր էլիլ էր, խօ փուղի համա չէր թողնի Կէկէլին։

ՃՈՒՃԱՆ

’Ես էլ միթամ էտ իմ ասում դիփ, ամա էլ ի՞նչ փայիդա. Նամուսներուս կտրվեցաւ, սիրաթներուս գնաց, աշխրքի համա ’ղէնօ ու՞ մասխարա ինք դառի։ Էլ ո՞վ գուզէ իմ Կէկէլին... Խի՜ղճ իմ Կէկէլ... (Լաց լինելով։) Նորչի արիւը փչանում է...

ԳԻՔՕ

Է՜, հէ՛րիք արա, քու հօրն օղորմի, Ճուշան։

ՃՈՒՃԱՆ, *լացով։*

Ա՛խ, Կէ՛կէլ ջան, Կէ՛կէլ...

ԳԻՔՕ, *աչքերը սրբելով եւ լացի ձայնով։*

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, օ՛հ...

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, *ներս մտնելով միջի դռնից։*

Է՛ստի մտիկ. քու պտուտելէմէն ջանս գնաց, դուն կի էստի ծանդր ու բարակ նստած իս։

ԳԻՔՕ

Հը՜, ի՞նչ խաբար է։

ԿԱԿՈՒԼԻ, *Գիքօի կուռը բռնելով։*

Վի՛կաց, վի՛կաց, չո՛ւստ արա։

ՇՈՒՇԱՆ

Ի՞նչ է պատահի։

ԿԱԿՈՒԼԻ

Աստուած վուչ գիդէ խիղճ մարթու գլուխը։

ՇՈՒՇԱՆ, *վախեցած։*

Ի՞նչ է։

ԿԱԿՈՒԼԻ

Պէպօին տարան էս օր առուտեհան։

ՇՈՒՇԱՆ

Ո՞ւր տարան, ի՞նչ իս ասում։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն դժուխկի մաշխալէն ինչոր գանգատ է տուն տարի։

ՇՈՒՇԱՆ

Ո՞վ, ի՞նչ գանգատ։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն չէյթան Արութինը, ձիգ վուր փուղ պարտ

է. (Կրծքին խփելով։) Թէ մէ ճանգս կու ննգնի՜, 'ես գիդլիմ նրանը։

ԶՈՒԶԱՆ

Վո՜յ, քոռանամ ու կուրանամ իս. իժում ի՞նչ կօ-նին Պէպօիս։

ԿԱԿՈՒԼԻ

Ո՞վ գիդէ, դէդի, ինչոր չանին միզ, արմնելուն էն է։ (Գիքօին։) Դէ՛, մի՛ ուշացնի, Գիքօ, է՜, առուսվան դէսն է քիզ իմ պտուտում. աւտաս չվրայ հասնինք էլ։

ԶՈՒԶԱՆ

Փուղը նա՛ է պարտ ու էլի նա է գանգատ անո՜ւմ։ Ա՛յ, Հախմիան Տէ՛րն անէ քու դադաստանը, Ա՛րութին։ (Գիքօին։) Վի՛կաց, էլի՜, ա՛ մարթ, չիս իմանո՜ւմ։ Տա՛ր, տա՛ր էս բարաթը, սի՛ւցրու նրա էրեսը։

Գիքօն առնում է մուրհակը եւ գրպանը դնում։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ։

ԶՈՒԶԱՆ

Էն սի՛ւէրես ու սիւսրտով Արութինի բարաթը։

ԿԱԿՈՒԼԻ, *ուրախ։*

Ղո՞ւրթ... Գթա՞ք... (Վեր թռչելով։) Վա՛, 'ես ձիր հոքուն մեռնիմ... Իժում էտ վո՞ւնց էլաւ, վո՞ւնց գթնվեցաւ։

ԶՈՒԶԱՆ

Ա՛յ, ճամփին կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ

Սա գթա՞ւ, սա՞...

ԶՈՒԶԱՆ

Հա՛, հա՛...

ԿԱԿՈՒԼԻ, *փաթաթուելով Գիքօին։*

Չմ՛րդ տանիմ 'ես, Գիքօ ջան, աբա լօթին դուն ես հիմի, ա՛յ. հոքումս կու նստեցնիմ քիզ յօրէսի դէնը, իմ հէրն ես դուն հիմի... Դէ՛, վի՛կաց, էլ մի՛ ուշացնի... Հ՛ըմ, Արութին, (*Կրծքին խփելով։*) տես-նինք հիմի՝ ինչ ես ասում, ի՛նչ ես էլի մօգօնում... (*Գիքօի թեւից բռնելով*) Արա՛, Գիքօ ջան, հը՛մ...

ՇՈՒՇԱՆ

Ա՛խ, Ա՛ստուձ, Ա՛ստուձ։

ԿԱԿՈՒԼԻ, *Շուշանին։*

Դարդ մի՛ անի, դէդի ջան, Աստուձ օղորմած է։

ՇՈՒՇԱՆ

Գնա՛ցէք, շտա՛պեցէք, վունչիչ չանին Պէպօիս։

ԿԱԿՈՒԼԻ, *վեր քաշելով Գիքօին։*

Վա՜, հէ՛ր օխնած, միխած ես էտի՛։

ԳԻՔՕ, *վեր կենալով։*

Ա՛յ, գնա՛նք, գնա՛նք... (*Պատրաստվում է քթախոտ քաշելու։*) Տեսնիմ թէ վո՞ւնց է հաշա ուտում հիմի։

ԿԱԿՈՒԼԻ, *ձեռքից խլելով քթախոտի տուփը։*

Տօ՛, արի ճա՛մփին քաշէ, է՛լի, վա՛։

Թեւից բռնած շտապով տանում է։

ԳԻՔՕ, *գնալով։*

Ո՛ւհ, ո՛ւհ, ո՛ւհ...

ԿԱԿՈՒԼԻ, *փաթաթուելով։*

Էլ զահրու'ղըթի չիմ ասի, քի մատաղ, Գիքօ ջան։

Դուրս են գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ Զ

ՇՈՒՇԱՆ, *մենակ, կանգնած:*

Եարաբ ի՞նչ ես ուզում միզմէն, Աստուա՛, ի՞նչ գէթ ունիմ քո մօտ: Ջեր աճկս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի էլ ի՞նչ ես պատրաստում իմ սեւ ու մութ օրի համա: Խղճա՛, Ա՛ստուա՛, խղճա՛. վունչիչ չիմ ուզում քիմէն՝ վո՛ւնց փառք, վո՛ւնց դովլաթ, վո՛ւնց պատիւ, օղօնդ էս դառն օրվան վրայ ուփրօ դառն օր չչանց տաս միզ: Դո՛ւն փրկէ ու ազատէ իմ Պէպօին: (Նահալու տակից հանում է ղաթիբան եւ բաց անելով մօտենում է ձախ դռանն ու կանչում:) Կէկէլ...

Շտապով դուրս է գնում:

ՏԵՍԻԼ Է

ՊԷՊՕ, *մենակ: Ներս է մտնում միջի դռնից գլխարկով եւ զարդի հագուստով:*

Էսէնց էլ աշխա՜րք... (Գլխարկը վերցնում է, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում եւ գլխարկը կրկին ծածկում:) Մարթ գլխէմէն ինչըու վուտը ղուրթ ըլի ու էլի ինքը սուտ դուս գա՛յ... Պատժելու մագիէր ինքը պատժվի՜... Գնա՛, գնա՛ հիմի, Պէպօ, նստի՛ բիրթումն ու լաւ բաբաթ փի՛քր արա աշխրքի բանիրը... Դուն հալալութենի էդնէն մա՛ն արի, տեսնիմ ի՞նչ է տալի քիզ քու հալալութինը... Մտիկ իս անում՝ սաղ քաղաքը գիյանրով լքցվիլ է.

ո՞վ է ասում քեզ, վուր օխչըի 'երիչով ման գաս... Չիս գիդի՞, վուր բուրթ՜ա կու գզի՜ն...Քեզ ո՞վ էր ասում ձէնդ բացրացնիս. ո՞ւմ վրայ իս ձէնդ բացրացնում, ինչո՞վ... ի՞նչ կայ ձեռիդ... Փուղ ունիս ջիբումը՞դ, խիլք ունիս գլխումը՞դ, 'ղալամ ունիս ձեռումը՞դ. ի՞նչ ունիս, ի՞նչ, տօ, օղորմելի, վուր գառնի պէս բռնչում իս... Չիս գիդի՞, վուր գառնի վիրչը 'ղասաբխանէն է՞... Է՞ն է քու բինէն, Պէպօ, էն... Գնա՛ պառկի, վուր բօղազդ դուս՝ կտրին... Մի՛ վախենա, մէ դանկի մազիէր տասը դանակ կու լուս Ննգնի քեզ համա։

Նստում է սեղանի մօտ աթոռի վրայ եւ մտածում։

ՏԵՍԻԼ Ը

ՆԱ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ, *ներս գալով ձախ դռնից։*

Էկա՞ր, Պէպօ։

ՊԷՊՕ

Էկայ ու գնում իմ. մէ քանի վուխտ մնաս բարով։

ԿԷԿԷԼ

Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում։

ՊԷՊՕ, *հեգնօրէն եւ ժպիտն նրեսին։*

Տաք տեղ, մայրնց մինք փէտ չունինք ո՞ւ...

ԿԷԿԷԼ

Չիմ իմանում՝ ի՞նչս ասում։

ՊԷՊՕ, *վեր կենալով։*

Բիրթն ին տանում ինձ, Կէկէլ։

ԿԵԿԵԼ, *վախեցած։*

Ինչի՞։

ՊԵՊՕ

Ե՛նենց, խաթրիշուն։

ԿԵԿԵԼ

Վա՜, Պեպօ ջան, ի՞նչ ես ասում։

ՊԵՊՕ

Հանաք չեմ անում, Կեկել. մի՛ վախենա, վունցոր ըլի եօլա կենաք։ Ո՞ւր է դեդեն, տանը չէ՞։

ԿԵԿԵԼ

Էս սահաթիս գու քայ. համբուրելու գնաց էստի մօտիկ։

ՊԵՊՕ

Խի՛ղճ դեդա...

ԿԵԿԵԼ

Ախար մէ դրուստ խօսի, Պեպօ, է՛. բիրթումն ի՞նչ բան ունիս։

ՊԵՊՕ

Վունչիչ... (Դառը ժպիտով։) Ձատ դամը գցելէն կուռդ դաթրեցաւ, կօսէ, գնա՛ հիմի մէ քիչ դնջացի, կօսէ։

ԿԵԿԵԼ

Ա՛խ, Պէպօ ջան, ջիգարս մի՛ պատուտի, թաւաթ էրած իմ ու խորված։

ՊԵՊՕ

Հինգ հազար էլ էրվիս ու խորվվիս, ո՞վ է հարցնում։ Վճռած բան է, պիտի գնամ բիրթը։

ԿԵԿԵԼ

Ինչի՞, ո՞ւմ խաթիր. ի՞նչ ես արի։

ՊԷՊՕ, *դառնօրէն։*

Գո՛ւղութի՛ն։

ԿԷԿԷԼ

Դո՛ւն, գուղութի՛ն։ Չէ՛, չէ՛, Պէպօ, ասա՛՝ ի՞նչ բան է, խօ հոգիս դուս էկաւ։

ՊԷՊՕ

Թո՛ղ դուս գայ, իմն էլ հիդը, ումն ի՞նչ կու պակսի. շատ հարկաւուր է՞ խալխին քու հոգին, եա իմը՞։

ԿԷԿԷԼ, *աչքերը սրբելով եւ լացի ծայնով։*

Ա՛խ, Պէպօ ջան, խօ սպանեցիր ինձ։

ՊԷՊՕ

Սպանողը սպանից, ’ես ի՞նչ անիմ։

ԿԷԿԷԼ

Ո՞վ, ախպէր։

ՊԷՊՕ

Ո՞վ... Ա՛դա Արութինը... (Դառը ծիծաղում է։) հը՜, հը՜, հը՜...

ԿԷԿԷԼ

Ինչի՞։

ՊԷՊՕ

Աստուծ վուչ գիդէ նրա գլուխը... Իմ տանն ինձ անպատիւ արաւ, կօսէ. փուղ բախշեցի ու էրեսիս խփից, կօսէ։ Պստի բան չգիդենիմա, Կէկէլ, մինձ մարթու զէհին դիբչիլը։ Ինձ պէս խիղճ օղորմելին համարցակվի էն հանգի աղա մարթու ճակտին իմքին խփէ՜... Հանաք բան է՞... (Դառը ծիծաղով։) հը՜, հը՜, հը՜... (Ձեռքերը քարծրացնելով։) Ա՛ստուծ, Ա՛ստուծ...

ԿԷԿԷԼ, *մօտենալով եւ փաթաթուելով։*

Էտ խօ իմ խաթիր, իմ խաթիր, Պէպօ ջան. սիւ-

ցիլ էր իմ օրն ու ինձ պէս բայի՛ղուշ քուր չէիր ունեցի։ Ի՞նչ էիր ուզում ինձմէն. քիզ ո՞վ էր ասում, վուր էնէնց մինձ մարթուն բէդամաղ անիս։ Մայինց էսէնց էր ու էսէնց իմ բանը, էլ ցաւիս վրայ ցաւ ո՞ւր էիր աւելցնում։ Ի՞նչ անինք հիմի... դէդէն վուր իմանայ, ի՞նչ կօնէ. դամբլա կու ննգնի խօմ։

Լաց է լինում։

ՊԷՊՕ

Դէդէն չատ ցաւի է դիմցի, էստուրն էլ կու դիմնայ։

ԿԷԿԷԼ, լալով։

Ա՜խ, Ա՛ստուձ, ինչի՞ բան-հոքի չիս անում ինձ էստի էւէտ։

Լաց է լինում։

ՊԷՊՕ

Հէ՛րիք է, թէ քու Աստուձը կու սիրիս։ Խօ տեսար, վուր լացն էլ վունչիչ չօտկից... (Աղաղակելով։) Է՛ս է Քու դադաստանն, էլի՜, Աստուձ... Արութինը թալնէ, Արութինը զընէ, Արութինը հաշա ուտէ ու մինք տանջվի՞նք... Նա խրխնջայ ու մինք ա՛խ քաշի՞նք... Նա քէփ անէ ու զօղ անէ ու մինք դա՛ռը-դառը լաց ըլի՞նք...

Դուրս է գնում աջ դռնից։

ԿԷԿԷԼ, լաց լինելով։

Պէ՛պօ ջան, Պէ՛պօ ջան...

Դուրս է գնում Պէպօի ետեւից։

—○—

ՏԵՍԻԼ Թ

ԱՐՈՒԹԻՆ, ԳԻՔՕ, *երկուսն էլ գլխարկով։*

ԳԻՔՕ, *ներս գալով միջի դռնից։*

Ա՛յ, թէ սուտ իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, *հետեւելով։*

Աքա՛, աքա՛։

ԳԻՔՕ, *առաջ գալով։*

Մո՛ւլափ, համեցէք նստի, մէ տէրն էլ գայ։

ԱՐՈՒԹԻՆ

Դիփ մէկ է, Գիքօ, մէ տեսնիմ թէ էտ ինչ թուխտ է։

ԳԻՔՕ

Ա՛յ, ինչ թուխտ է, ա՛ղա Արութին։ (*Ձեռքը գըրպանն է տանում եւ հանում քթախոտի տուփը։*) Չէ՞, էս չէր. ամա դիփ մէկ է. (*Քաշում է։*) հը՜մ... Ա՜յ, (*Պահում է քթախոտի տուփը եւ մուրհակը հանում։*) դուն մէ քիչ հեռու կանգնի, ա՛ղա Արութին։

Ինքը հեռանում է դէպի տախտը։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛, վախենում իս, վուր չխլիմ. աշխարքն ալան թալան խօ չէ՞։

ԳԻՔՕ

Չէ՛, չէ՛, ա՛ղա Արութին, էտ վո՞ւնց կօնիս, գանա դուն էտ հանգի մարթ իս. ամա էս թուխտը խիստ փաթէրակաւուր իմքին է։ Ասում իմ ձեռդ չդիպչի։ (*Բաց անելով մուրհակը։*) Ա՜յ, տիս։ (*Հեռուից ցոյց տալով։*) Էս է՞։

ԱՐՈՒԹԻՆ, *գլուխը մօտեցնելով:*

Արա՛, արա՛։

ԳԻՔՕ, *մատնացոյց անելով:*

Վա՜, մյ. չեմի վալլա,*) Արութին Ջիմզիմովի։

Զարմանք: Տեսարան։

ԱՐՈՒԹԻՆ, *շփոթուելով եւ կակազելով:*

Է՛ս... էս... (*Ձեռքը մեկնելով:*) իմ... իմ... ձեռքն է՜:

ԳԻՔՕ, *մօտեցնելով մուրհակը:*

Բաս իմն է՜:

ԱՐՈՒԹԻՆ, *ճանաչելով մուրհակը, առանձին:*

Էս ի՞նչ 'Երգնուց պատիժ էր... (*Ձեռքերը առաջ տանելով:*) Մէ լաւ տեսնիմ...

ԳԻՔՕ, *մուրհակը հեռացնելով:*

Մո՛ւլափ, աղա ջան, է՜: Ախար էն'ղադա վուր ասում էի թէ 'ես վկայ իմ, վուր պարտ իս, սուտ էի ասո՞ւմ. ամա վուր քու օխտէմէնի չէկայ, 'ես ի՞նչ անիմ: (*Աղաղակելով:*) Գոհանա՜մ Քու դադաստանին, Ա՛ստուա՛ծ:

ԱՐՈՒԹԻՆ, *կամենալով մուրհակը խլել:*

Մէ տեսնիմ, ասում իմ...

ԳԻՔՕ, *գրպանը դնելով մուրհակը:*

Է՜, ա՛ղա Արութին, ձե՛ռը վի կալ, քու հօրն օղորմի: Ասում իմ վուր փաթէրակի թուխտ է, է՜: Էս սահաթիս գու քայ Պէպօն, Կակուլին մէ նմուտումը կու գթնէ նրան: Դուն էստի մո՛ւլափ տու, մէ գնամ Ճուշանին իմաց անիմ:

Ճանապարհից յետ նայելով Արութինին, դուրս է գնում ձախ դռնից:

---

*) Վրացերէն է՝ — Իմ պարտքն է:

ՏԵՍԻԼ Ժ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, երկար ժամանակ սառած կանգնած է, յետոյ ուշքի գալով։

Էս հանգի էլ օյի՜ն... Շատ բան է էկի գլուխս, ամա էս թահարը չէ էլի... Վօ՞ւր'ղանց լուս ննգաւ էս անիծած բարաթը... վօ՞ւնց լուս ննգաւ... Էրազ է՞... Չէ՛, վօ՞ւր'ղանցի էրազ է... Թէ էրազ է, (Շուրջը նայելով։) էստի ի՞նչ իմ շինում... Էս... Պէպօի տունը ու 'ե՜ս... (Շօշափում է իրան։) Արութին Զիմզիմովս էստի՞... Չէ՛, դըրուստ Աստծու պատիժ է... Չէլաւ, էլի՜... Էն'ղադա բանիրը մարսեցի ու կուժը էս մէկի վրայ է կոտրվում, էլի՜. Էս էր վիրշն, էլի՜... Խալխը վուր իմանայ, ի՞նչ կօսին... էլ ո՞վ կու աւտայ ինձ... Ագահութինը աճկիրս կապից, էլ սիւ ու սիպտակ չը ջոգեցի... Հէնց էս սահաթիս էլ էն'ղադա խալխումն ասի... վուր 'ես վունչիչ պարտ չիմ, ասի... Հիմի գնա՛, սիւցաւ էրեսդ... Ա՛մութ քիզ, Արութին, ա՛մութ քիզ. էս վօ՞ւնց բերիր բանդ, վո՜ւնց... (Երկար լռութիւն։) Չէ՛, ուրիշ չարա չկայ, վունցոր ըլի պիտի էստի էւէտ ազատիմ բարաթս... Թէգուզ տաս թուման էլ գլուխ գնամ... Թէգուզ քսան, Թէգուզ եարսուն, Թէգուզ մէկն էրկու... Իմ հա՛խն է, թո՛ղ ջանս դուս գայ։

Վայր է ընկնում աջ կողմը սեղանի մօտ աթոռի վրայ։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆԱ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, ներս է գալիս աջ դռնից, առաջին արարուածի հասարակ հագուստով եւ գլխարկը ծածկած։ Տեսնելով Արութինին, զարմանում է։

Վա՜, դուն էստե՞։

ԱՐՈՒԹԻՆ, գլխարկը վերցնելով դնում է սեղանի վրայ։

Հա՛, հէնց ’ես, ի՞նչ իս արմնում։

ՊԷՊՕ

Գանա դուն ինքդ չիս արմնո՞ւմ, վուր էստի ի՞ս, ’ես վո՞ւնց չարմնամ։ Մէ ասա՛, ի՞նչ քամին է բերի քիզ էսթէնը, եա ի՞նչ բարի հրիշտակ է մտի սըրտումտ, եա ի՞նչ չար սատանայ բոթի քիզ դէսը։

ԱՐՈՒԹԻՆ

’Ղօնաղի մօհբաթ չիս գիդացի, Պէպօ։

ՊԷՊՕ

Դո՛ւն՝ իմ ’ղօնա՜ղ. էրեսդ խէչը հանէ։ Քիզ վրայ մինձ դուշման չունիմ ’ես աշխըրքումը, ու դուն իմ ’ղօնա՜ղ։

ԱՐՈՒԹԻՆ

Նստե՛, հալա հէնց ապըրիս։

ՊԷՊՕ

Դուն նստած իս, էլի՜. ’ես էսէնց էլ լաւ իմ։ Մէ ասա՛՝ ի՞նչ իս ուզում... Թէ ձուգն առնելու իս էկի, եանղլիշ իս, (Դառը ժպիտով։) ’ղադաղա է։

ԱՐՈՒԹԻՆ

Պէպան... ա՛րի, ախպէր, բարիշինք։

ՊԷՊՕ, *ծաղրելով։*

Օմքին խօ չէ՞ աղօթի քիզ, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ

Աղօթիլ ին թէ չին աղօթի, ’ես քիզ ասում իմ, ա՛րի բարիշինք։

ՊԷՊՕ

Իմ բարիշիլը ինչի՞տ է հարկաւոր, ա՛ղա Արութին. դուն մինձ մարթ, ’ես մէ խիղճ օղորմելի, դուն հարուստ, ’ես ախկատ... (Հեգնօրէն։) Վա՛խենում իս, վուր իմ մագիէր քիզ չղրգին բիրթը՞, թէ՞ ճռնիրդ դողում է ինձմէն։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ՛, ’ես ուզում իմ քիզ լաւութին անի։

ՊԷՊՕ

Ի՞նչ ձեռնէմէտ էկաւ, խօ ա՛րիր. փուղ էիր պարտ, հաշա կերար, էկայ տունդ՝ խնդրելու, տանէտ դուս արիր, վիրչը բիրթն էլ իս ղրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լաւութին պիտի դուս գայ ձեռնէմէտ, ա՛ղա Արութին։ Էկիլ իս վուր մասխարա գցիս ի՞նձ։ Հէ՛րիք է, հէ՛րիք, պարուն. գնա՛, գնա՛, Աստծուն փա՛ռք տու, վուր իմ տանն իս ու իմ օճըլքի տակն իս գթնվում, թէ չէ էս էրած սրտիս վրայ էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնէմէն։ Միտդ է... խօ մի՛տդ է՝ ի՛նչ հանգի դուս արիր ինձ քու տանէմէն... Էն արարմունքը քի՛զ կու սազ գէր, քի՞զ, ա՛ղա Արութին։ ’Ես քիզ խընդրում իմ, հա՛մեցէք, գնա՛, ջա՛փա քաշէ, վի՛կաց, յօրէս կու տանին ինձ, էլ վուխտ չկայ, ուզում իմ մօրս ու քվիրս բարովիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, էտ բանը իմ ձեռին չէ՛։ Էլ չըրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։

Պէպօն զարմացած նայում է. իսկ դրսից լսվում է
ԿԱԿՈՒԼՈՒ *ձայնը՝ Էկմ՛ւ։*

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՕ, *միջի դռանը, Կակուլուն։*

Կորիլ ին, կորիլ. օշով չկան։

ԿԱԿՈՒԼԻ, *ներս գալով, Գիքօին։*

Տօ, ա՜յ Պէպօն, ի՞նչ իս ասում։

ԱՐՈՒԹԻՆ, *տեսնելով Կակուլուն, առանձին։*

Է՛լի էս պաժարնին։

ԳԻՔՕ, *ներս գալով։*

Էս վո՞ւնց էկար, Պէպան, վուր չտեսայ։ (*Արութինին։*) *Ա՛յ, ա՛ղա Արութին, հիմի կու տամ,* (*Մատնացոյց անելով Պէպօին։*) *թէ կօսէ։ Է՛տ դուն, էս սա։*

ՊԷՊՕ

Էս ի՞նչ խաբար է, չիմ իմանում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛յ, աղա Արութինի մօդ դուն իս խօսում ու միզ իս հարցնո՞ւմ։

ՊԷՊՕ

Սրա ասածը խօ ուփրօ չիմ իմանում։ (*Հեգնօրէն։*) *Էկիլ է՝ բժիշկինք, կօսէ։*

ԿԱԿՈՒԼԻ, *ծաղրելով։*

Հա՜... (*Գլուխ տալով Արութինին։*) *Բաս մէ լաւ շնորհակալութին անինք։*

ԱՐՈՒԹԻՆ, *առանձին, շփոթուած։*

Մտի՛կ էս լրփին։

ԿԱԿՈՒԼԻ, *Պէպօին։*

Տօ, թէ՞ ասում էիր, թէ լաւ մարթ չէ, կօսէ, աղա Արութինը։

ԱՐՈՒԹԻՆ, *առանձին։*

Անսկա՜մ։

ՊԷՊՕ, *ժպտալով։*

Ի՞նչ գիդիմ, խճպտանքը զարթիլ է։

ԿԱԿՈՒԼԻ, *Պէպօին։*

Իժում վո՞ւնց է բարիշում. կէսը տալիս է՞։ (*Մօտենալով Արութինին։*) *'Ե՞ս քու մարթ ասողին...* (*Բռունցքը բարձրացնելով։*) *Դէ, հոքիտ պա՜հ տու ու սէրթուկթ հանէ։*

ՊԷՊՕ

Կա՛կուլի, Կա՛կուլի։

ԳԻՔՕ, *Պէպօին։*

Տօ, բան-հոքի չանէ։

ԿԱԿՈՒԼԻ, *Արութինին, մէկ ձեռքով բռնելով նրա օձիքից։*

Ը՜, քու... (*Միւս ձեռքով բռունցքը ցոյց տալով։*) *Դէ՜, գնա՜ հիմի գա՛նգատ արա...*

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, գժվիլ ե՞ս, է՜յ։

ՊԷՊՕ, *հեռացնելով Կակուլուն Արութինից։*

Մո՛ւլափ, Կակուլի, էտ մարթութին չէ։

ԱՐՈՒԹԻՆ, *շորերը ուղղելով։*

Սրի՛ ու ձիզպէսներուն լաւութին արա։

ԿԱԿՈՒԼԻ

Լաւութի՛ն... Ի՛նչ պտուղ է՛, դիփ հոգու էգնէն է ման գալի, ա՛յ. գանա չիմ գիդի։ Աբա բարաթը չէր լուս ննգի, տեսնիմ թէ վո՛ւնց էր լաւութին անում։

ՊԷՊՕ

Ի՞նչ բարաթ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, բաս ջեր չիս գիդի՞. ա՛յ, էս աղա պարնի բարաթը։ (Գիքօին։) Տօ՛, բի՛ է՛. (Պէպօին։) Էս սհաթիս ճամփին վուր իմացաւ, ռանդ ու ռունդը գնաց խղճինը... Ուզում էի էնդի էւէա սրա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քիզ էի ուզում ուրախացնի ջեր... (Գիքօին։) Դէ, չո՛ւստ արա, Գիքօ ջան, է՛։

ԳԻՔՕ, *գրպանից հանելով մուրհակը։*

Մո՛ւլափ, մո՛ւլափ, տիրուչը տամ։

Մուրհակը մօտեցնում է Պէպօին։

ԿԱԿՈՒԼԻ, *խլելով Գիքօի ձեռքից եւ տալով Պէպօին։*

Վո՛ւնց է, վո՛ւնց, լօթի՛ն։

ՊԷՊՕ, *տնտղելով մուրհակը, հետզհետէ զարմանում է։*

Տեսարան։

Էս էրազ է՛...

ԿԱԿՈՒԼԻ

Էրազ ու կէս է։

ԳԻՔՕ

Ղուրթ վուր էրազ, Պէպօ ջան։ Չիս գիդի թէ...

ԱՐՈՒԹԻՆ, *առանձին։*

Էս'ղադա էլ խայտառակութի՛ն։

ԿԱԿՈՒԼԻ, մատնացոյց անելով Գիքօին։

Սրան թէ խօսեցրիր, Պէպօ, օխտը դիվի հէքիաթի վրայ էրգար է էտ բարաթի աւակը։

ՊԷՊՕ

Ախար էս վո՞ւր'ղանց լուս ննգաւ։

ԳԻՔՕ, նստելով տախտի վրայ եւ պատրաստուելով պատմելու։

Ա՛յ, Պէպան ջան, վունց էր...

ԿԱԿՈՒԼԻ, Գիքօի բերանը ձեռքով ծածկում է։

Սո՛ւ, սո՛ւ, դուն սուս, Գիքօ ջան... (*Պէպօին։*) Էտ վունցոր լուս ննգաւ, իժում կօսինք, ամա դուն էտ անաստծուն թամաշա արա։

ՊԷՊՕ

Սիրտս իմանում էր ախար, է՜...

Տնտղում է մուրհակը։

ԳԻՔՕ

Գիդէ Աստուծ, վուր 'ես միդ չունիմ, Պէպօ ջան...

Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով, յորդորում է Գիքօին լռել։

ՊԷՊՕ, նայում է Արութինին եւ մուրհակին, յետոյ գլխարկը վերցնում եւ աղաղակում։

Գոհանամ Քեզ, Տէ՜ր. դիփունի դադաստանի վրայ Քու դադաստանն է էլի ղուրթ... (*Գլխարկը ծածկում է եւ կրկին նայում Արութինին։ Երկար լռութիւն։ Տեսարան։ Ծանր մօտենում է Արութինին եւ մուրհակը ցոյց տալիս։*) Էս կու ճանչնա՞ս, ա՛ղա Արութին... (*Երկար եւ լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է։*) Հիմի իմ իմանում քու էստի գալը... Լաւ արիր, հա՜... Թե՛ կօսէ վունչիչ պարտ չիմ, թե՛ վուր օրթում հաւատ արիր, թէ՛

վուր վուրթկերանցով օրթում կերար… Է՛ս է քու օրթումն, էլի՜, էտէնց իս ամեն օր օրթում ուտում, էլի՜. էտով իս աշխըրքին խափում, էլի՜, էտ օրթումներով իս մօդ արի էա՛ղադա փուղն, էլի՜… Ա՛յ, խու՞վ կենայ քիզ քու օրթումնիրը… Ամեն մէ քու օրթումը օ՛րթունք կտրվի ջանումա ու ջանդ ծակծըկվի, վուր հոքիտ էգէրա 'Երգնքի լուս տեսնէ… (Մօտենալով։) Չէ՛, չիս ամանչո՞ւմ. խճպանքը խօ դարդակ քամի է քիզ համա. (Մուրհակը նորից ցոյց տալով։) Էս ի՞նչ է, ի՞նչ, էստուրն ի՞նչ կօսիս։ Էստումէն էլ չիս ամանչո՞ւմ, էս քու կտրած ձեռով չիս գրի՞։ Ասա՛ չէ, էլի՜, ասա՛. քիզ համա խօ հաշա ուտիլը հիշտ է… Ա՛յ, գետի՞նը մտնիս էս քու պատվական շուրերով։

ԿԱԿՈՒԼԻ, *գլխարկը վեր առնելով եւ բացականչելով։*

Հա՛-ջան, հա՛-ջան, աղա Արութին… (*Գլխարկը նորից ծածկելով եւ ձայնը փոխելով։*) Թօբա՛, ՝թէ 'ես ուզենամ քու տիղն ըլիմ։

ԳԻՔՕ

Էս Ձուշանն ի՞նչ էլաւ։

Գլուխը շարժելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, *առանց* ԳԻՔՕԻ

ԱՐՈՒԹԻՆ, *սաստիկ շուարուած։*

Տօ՛, ի՞նչ իք սարսաղ-սարսաղ դուս տալի, վուր միտս էր էլի, խօ կու տէլի, էլի՜…

ԿԱԿԿՈՒԼԻ

Հը՜մ...

ՊԷՊՕ

Միտդ չէ՞ր... խի՜ղճ օղորմելի։ Նարաբ վո՞նց իս մէ Թիքայ հաց ճարում ուտելու։ Ո՞ւմն իս խափում, ո՜ւմը... էս սահաթիս դատամէքրի մօդ հաշա կերար, վուր քու օրումն էլ ինձ վունչինչ չիս պարտեցի, վուր սուտ չառիր իմ մօգօնում 'ես քիզ վրայ, էս սահաթիս ձեռք քաշեցիր էստու Թխտիրը ու հիմի միտդ չէ՜ր... ու հիմի բարիշի՜նք... էս'ղադա վուխտ չարչըրեցիր, էս'ղադա գլուխտ անիծիլ տվիր ու հիմի լաւ մարթացար մէբա՞շ։ Վախենում իս, հա՞. վախենում իս վուր աշխարքը չիմանայ քու 'ղալթաբանդութինը, հա՞. վախենում իս, վուր դատամէքրի մօդ էրեսդ չսիւնայ, հա՞... Քու մտկումը, թո՛ղ միզ մօդ սիւնայ մենակ, ինչ հաջաթ, մինք անմիղ օմքնիր ինք, ո՛վ ինչ կու իմանայ. օղօնդ խալխը չիմանայ, օղօնդ քու նիգրտիքը չիմանան... (Ձայնը փոխելով։) Գնա՛, գնա՛, ասում իմ։

Կակուլին սպառնալի կերպով շարժում է գլուխը։

ԱՐՈՒԹԻՆ

Խօ պրծա՞ր, ախպէր, ինչ ասելու ունէիր, խօ ա՞սիր, սիրտդ խօ յի՞դ էկաւ։ Հիմի մէ ինձ լսէ. 'ես քիզ ասում իմ՝ փուղիրտ ա՛ռ, բարաթս ի՛ս տու ու քու բիրթը մօշլա անիմ էս սհաթիս։

ՊԷՊՕ

Կէհամ բիրթը, կէհամ, 'ես քու օ՛ղորմութինը չիմ ուզի ու էս փուղիրը առանց քու ասելու էլ կու առնիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Գժութին մի՛ անի, Պէպան։ (Ձեռքը ծոցը տանե-

լով։) Ա՛ռ էս փուղիրտ, ասում իմ։ (Պէպօն գլուխը շարժում է։) Ա՛ռ, մէ իմքին էլ աւելցնիմ. հը՞, ի՛նչ ՚ղադա... մէ հինգ թուման աւելցնի՛մ... տա՜ս... քսա՜ն...

ՊԷՊՕ, *որ արհամարհանքով նայում էր Արութինին, դիմում է Կակուլուն։*

Մտիկ իս անո՞ւմ, Կակուլլի, մտիկ իս անում սրա՜ն. ինչրու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հիմի աւելցնում էլ է... Է՛սէնց ին, ա՛յ, դի՞փ էսէնց ին. քանի օչով չի գիդի, հախն էլ ին կտրում ու ՚եփոր վախենում ին՝ բանն աշքարանայ, է՛սէնց ին ժաժ գալի, ա՛յ, էսէնց, վուր անուններուն չկոտրվի միթամ։

ԿԱԿՈՒԼԻ, *ցածր, Պէպօին։*

Տօ՛, ա՛ռ, ա՛ճկը հանէ, ու դրա ջիգրը (*Բռունցքը ցոյց տալով։*) ՚ես գիդիմ։

ՊԷՊՕ, *շարունակելով, Արութինին։*

՚Ես քու բախշիշը չիմ ուզում, ա՛ղա Արութին, տար ա՛ճկդ դի. ամա աճկդ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, էնդի կու առնիմ, էնդի. թո՛ղ դիփունքը ճանչնենան՝ ի՛նչ մարթ էլ իս, թո՛ղ դիփունքն իմանան քու արարմունքը։ Էստու համա բիրթը կի չէ, թէգուզ հո՛ւրումը կու նստիմ, հո՛ւրումը։

ԿԱԿՈՒԼԻ, *Պէպօին։*

Ը՞, ՚ես քու խիլքին ի՛նչ ասիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Բռնէ՛, իսուն թուման աւելցնիմ։

ԿԱԿՈՒԼԻ, *մօտենալով Արութինին։*

Բի՛, ՚ես բարիշեցնիմ։

ՊԷՊՕ, *Կակուլուն յետ մղելով:*

Քու բան չէ, Կակուլի:

ԿԱԿՈՒԼԻ, *յետ գնալով:*

Ա՛յ, սարսաղ:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ՃՈՒՃԱՆ, *ղաթիքայով միջի դռան շեմքում, Գիքօին, որ հետեւում է նրան:*

Վո՛յ, քոռանամ 'ես, ղուրթ իս տսո՞ւմ, Գիքօ... (Առաջ գալով եւ ղաթիքան վերցնելով:) Վո՞ւրդի է, վո՞ւրդի, միր հոքէհանը... Սա է...

ՊԷՊՕ

Սա՛, սա դէդի, ա՛յ, միր բախտաւուրողը:

ՃՈՒՃԱՆ, *Արութինին, շտապով:*

Ա՛յ, գեդինը պատռվի ու քիզ դէվէր տանէ: Ի՞նչ իս ուզում միզմէն, ի՞նչ... Փուղէներուս հաշա կերար, ախչկաս բօղազը դուս կտրեցիր ու հիմի Պէպօիս էլ բիրթն իս ղրգիլ տալի՞. ջիգր իս մաի միզ հի՞դ, ուզում իս վիր ջնջի մի՞զ...

ԱՐՈՒԹԻՆ, *առանձին:*

Կարկուտ է անիծածը:

ՃՈՒՃԱՆ, *շարունակելով:*

Ա՛յ, վիր ջնջվի քու անումը, քանդվի ու բրիշակ ըլի տուն ու տիղդ. քու անամութ կնգայ սրտումը ննգնի էն կրակը, ի՞նչ կրակ միր սիրտը գցեցիր:

ԿԱԿՈՒԼԻ, *առանձին եւ կիսաձայն։*

Ամէ՜ն։

ԳԷԳՕ

Դէդի, դէդի...

Կէկէլը ներս մտնելով աջ դռնից, անկիւնումը լուռ լաց է լինում։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԿԷԿԷԼ

ԱՐՈՒԹԻՆ, *Շուշանին։*

Խէ՛լքի արի, խէ՛լքի, ինչե՞ր ես ասում, դէդի։

ՇՈՒՇԱՆ, *շարունակելով։*

Ո՞ւր է. սիւցրիք էրեսը՞. ո՞ւր է էն սեւ ու մութ բարաթը։ Հիմի էլ կօսես, վուր վունչինչ պարտ չես միզ։

ԱՐՈՒԹԻՆ

Պա՛րտ իմ, պա՛րտ իմ ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ իք ուզում։

ՇՈՒՇԱՆ

Բաս բիրթն էլ ո՞ւր ես ղրգիլ տալի։

ԱՐՈՒԹԻՆ

Բիրթն էլ չղրգիլ տամ, փուղն էլ տամ, մէ իմ-քին էլ աւելցնիմ. ամա վուր չէ բարիշում, ’ես ի՞նչ անիմ։

Շուշանը զարմացած նայում է։

ԳԷԳՕ

Հիմի բարիշի՛նք, հիմի՛... (Մօտենալով Կէկէլին։)

Իժում սրան ի՞նչ իս ասում... (Բռնում է Կէկէլի ձեռ-քը եւ առաջ բերում։) սրա մօղ վո՞ւնց իս բաժնում։ Սաղ-սաղ գերեզմանը դրիր, օրն ու ումրը խաւրե-ցրիր, կինքը հառամ արիր, վո՞ւնց իս բաժնում սրա հիտ, վո՜ւնց... Վո՞ւնց իս յիդ տալի սրան, ինչոր խլե-ցիր սրամէն, վո՜ւնց։ Քու վուխչ հարստութիննն էլ չի կանա լաւցնի էն եարէն, ի՞նչ եարա բաց արիր դուն սրա սրտումը... Գնա՛, գնա՛. էլ մինք բաժնելու վունչիչ չունինք։ Գնա՛, քանի սաղ իս աշխըքումը, սրա արտըսունքնիրը միտդ բի, վուր էգէրա էլ մէ-կէլներուն չանիս, ի՞նչ սրան արիր։

ԿԷԿԷԼ, աշխատելով ազատել ձեռքը։

Թո՛ղ, Պէպօ ջան, թո՛ղ... ի՞րան սիւցու իր բա-րաթը։

Պէպօն թողնում է նրան։

ԳԻՔՕ

Տօ՛, հադիր բաժնի՜ս։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին։

Ասա՛, դէդի, վուր բաժնի, հադիր աւել է տալի։

ՇՈՒՇԱՆ

Իր մ՛ձկը դնէ աւելին, թաք Պէպօիս ձեռը չտայ։

ԿԷԿԷԼ

Բա՛ժնի, Պէպօ ջան, բա՛ժնի։

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛րի կոտրվի, Պէպան, բա՛ժնինք։

ՊԷՊՕ

Ա՛րի բաժնինք, ա՛րի. ա՛րի գնանք, վուրդիօր ինձ էս սահաթիս ստեցիր, ա՛րի մէկ էնդի էս բարաթը շանց տամ, մէ էրեւայ վուր սուտը 'ես չիմ, թէ-

գուզ գլխկէմէն էլ մէ իմքին քիզ փէշքաշ։ Ա՛րի, էլի, ա՛րի։

ԺՈՒԺԱՆ

Գնա՛, գնա՛, փունցոր միր էրեսը սևցրիլ իս, թո՛ղ հիմի քու էրեսը սևնայ։

ՊԷՊՕ

Ա՛րի, էլի։

ԱՐՈՒԹԻՆ

Էս փուլը ուզենամ, խօ էս՚ղայա էլ ազանչաք չիմ անի։

ՊԷՊՕ

Ըը՜, գո՛ւղ աւազակ։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին, կիսաձայն եւ կրծքին խփելով։

Վա՛յ մէ՜... (Միջի դուռը դրսից թաղխում են։ Լռութիւն։ Մօտենալով դռանը եւ փոքր ինչ բաց անելով, որպէս թէ մէկի հետ խօսում է։) Հա՛, էստի է։ (Առաջ գալով, Պէպօին։) Տօ՛, գժվիլ ի՞ս, քո՛ւթահ արա, պրիստավն է։

ԿԷԿԷԼ, ՊԷՊՕ, ԺՈՒԺԱՆ, միասին։

Պրիստավը՜։

ԳԻՔՕ

Պրիստավը՜։

Տեսարան։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՛ս տու բարաթս, Պէպան, թէ չէ բիրթն ին տանում։

ՊԷՊՕ

Հաջաթ չէ, կէհամ բիրթը, կու նստիմ. էնդի խօ չիմ մեռնի, մէ օր կու ազատվիմ ախար, էլի՜,

վաղէն հիւու չէ։ Ճամերն իս խափի էսէնց, չամի գլխին իս օյին էկի էսէնց, չամի բօղազն իս դուս կտրի էսէնց, ու 'ես Պէպօն չիմ ըլի, թէ դիփունանց ջիգրը չիմ հանի։ Սաղ աշխըրքումը էրեսդ մուր կու չինիմ։ Մնաս բարով, դէդի.— մի՛ լաց ըլի, Կէկէլ, Աստուծ օղորմած է, խղճի ճակտին էսէնց է գրած։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած։

Ի՞նչ անիմ հիմի։

ԿԷԿԷԼ, փաթաթուելով Պէպօին։

Մի՛ գնա, Պէպօ ջան, մի՛ գնա։

ՃՈՒՃԱՆ, Պէպօին միւս կողմից։

Ի՞նչ իս անում, Պէպօ, ի՛րան սիւցրու էտ սեւ ու մութ բարաթը։

ՊԷՊՕ

Իրան տամ, վուր սրա մասխարէն դառնիմ... վուր խալխի աճկումը սուտը 'ես էրևամ, ղուրթը սա՛... բիրթի ահու գլուխս ծախի՞մ... Չէ՛, դէդի, էս բարաթը Աստուծ թուր է դէվէր ղրգի ինձ համա... էստով պիտի կտրիմ 'ես սրա գլուխը... Քա՛նի քի պէսնիրն ին էրվում սրա ձեռնէմէն, քա՛նի (Մատնացոյց անելով Կէկէլին։) սրա պէսնիրն ին լաց ըլում, քա՛նի ինձ պէսնիրն ին տանջվում... Մէկն էլ է չիմաց անէ աշխըրքին սրա արարմունքը՞, մէկն էլ է հարայի չկանենայ տա՞, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը յարգում ին ու պատվում ին, դիփունքը մինձացնում ու 'Երգինք բացրացնում... սա էն մարթն է, վուրի համա վունչիչ բան սուրփ չկայ աշխըրքումը... Հիմի լա՛ց ըլէք, ինչ'ղադա գուզիք... Խղճի լացը հալբաթ էնդուր է սիրղծի Աս-

տուն, վուր հարուստի արարմունքը լվացվի։ (Դուռը կրկին բաղխում են։) Մնաք բարով... (Գնալով, Գիքօին ու Կակուլուն։) Սրանցը մտիկ տուէք։

Դուրս է գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԶ

ՆՐԱՆՔ, *առանց* **ՊԷՊՕԻ**

ՇՈՒՇԱՆ, *լաց լինելով Պէպօի ետեւից։*

Պէ՛պօ, Պէ՛պօ...

ԿԻԿԻԼ, *նոյնպէս եւ նոյն միջոցին։*

Պէ՛պօ ջան, Պէ՛պօ ջա՜ն...

Վայր է ընկնում տախտի վրայ, գլուխը ժողովրդի կողմը, եւ երեսը ծածկելով մուշտաքայի մէջ, լաց է լինում. մնում է անշարժ մինչեւ վերջը։

ԱՐՈՒԹԻՆ, *սեղանի մօտ կանգնած, երկու ձեռքով գլխին խփելով։*

Էս ի՞նչ բան էկաւ գլխիս։

Նոյնպէս մնում է անշարժ։

ՇՈՒՇԱՆ, *լալով, Արութինին։*

՚Երգնային Թաքաւուրն անէ քու դադաստանը...

Դուրս է վազում Պէպօի ետեւից։

—∞—

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, *առանց* ՇՈՒՇԱՆԻ

ԳԻՔՕ, *Արութինին։*

Էս էիր ուզում, էլի՜, հէ՞լ օխնած։ (Մօտենալով Կէկէլին։) Մի՛ լաց ըլի, Կէկէլ ջան, մի՛ լաց ըլի, Աստուձ ողորմած է։

Գլուխը քարշ գցած դէպի Կէկէլը, նմանապէս մնում է անշարժ։

ԿԱԿՈՒԼԻ, *մօտենալով Արութինին, ձախ ձեռքը կողքին դրած, իսկ աջը վայր թողած։*

Հիմի, ա՛ղա Արութին, մնացինք 'ես ու դ՞ուն...

Մնում են անշարժ։ Տեսարան։

ՎԵՐՋ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

[Երես 43]
առաւ անիծածը. էս սարդինկէքը. էս Դօնու զուրգիէլ. էս կարօրկումը ժիտկա, խիստ թազէն է, նուր բաց արին. օրթում հաւատ արաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի, կօսէ. էս նէմէնցու բալին, էրկու ռանգն է, ա՛յ.

[Ե. տպ.]

[Երես 45]

ԷՓԷՄԻԱՅ

Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիփունանց աճկը վրէն մնայ. սօսանի ատլաս ախալուխը, սիպտա չերքէզկէն, մաչէքը կարքով յիդ կու ծալիս, էրծըթէ քամարը…

ՍԱՄՍՕՆ, *խօսքը կտրելով։*

Խանջալն էլ կապիմ, ախչիկ պարուն…

[Ե. տպ.]

[Երես 46]

ԷՓԷՄԻԱՅ

Տուտուց-տուտուց մի՛ խօսի, 'ես քիզ ինչ ասում իմ, դուն իմը լսէ։ Մէ խօսկով՝ իստակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կօնիս… Մէկէլ լաքիէրու աբով չթողնիս, փարվընի պէս ման գու քաս սուփրի

[Ե. տպ.]

[Երե․ 60]

ԱՐՈՒԹԻՆ

Լա՛ւ է, լաւ, էս մէկը բախշէ՛, 'ես կու խրատիմ իրան։ (Առանձին։) Բախտաւոր մարթ իմ, 'ես ու իմ Աստուածը… (Գնալով ձեռքերը ետեւը դարսած եւ համրիչը ձեռքին, կէս ճանապարհից կիսաձայն երգում է։)

[Ե– տող։]

[Երե․ 71]

ԷՓԷՄԻԱՅ

Գի՞ժ է էն մարթը, թէ էս ի՞նչ խաբար է… Էլախտ էլ էնէնց վախեցրուց։

ԱՐՈՒԹԻՆ, փողերը ծոցը դնելով։

[Ե– տող։]

[Երե․ 73]

Մէ ա՛րի, մէ ա՛րի, Ա՛րտուշկա ջան, տե՛ս թէ՝ ի՞նչ հալիլէք է, ինչ ա՜նտիկա, նէ՛ժնի հալիլէք…

[Ե– տող։]

[Երե․ 87]

ու սուքը իմանում էի, սիրտս կլակ էր ննգնում…

ՃՈՒՃԱՆ

Ախար էն'ղադա վուր հարց ու փուրց էինք անում, մէ օր վո՞ւնց չկոտրվեցար, օ՛խնած հոքի… Փարագի ասինք՝ անդէրձը կապում էր քիղ էն գլխէն, իժում էլ է մէ խօսկ մայինց կօսէիր, է՜։

ԳԻՔՕ

Քա՛նի չէր ուզում էի բաց անիմ էս բանը, ամա

իմ ահու վունչիչ չէի կանացի ասի. լիզուս չէր զօրում, ի՛նչ անիս...

[Ն․ տպ․]

[Երե․ 92]

հոգումս կու նստեցնիմ քիզ յօրէսի դէնը, իմ հէրն իս դուն հիմի...

ԳԻՔՕ

Իմ տալսը դառնաս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ

Դէ՛, վի՛կաց, էլ մի ուշացնի...

[Ն․ տպ․]

[Երե․ 93]

...Դո՛ւն փրկէ ու ազատէ իմ Պէպօին։ (Յանկարծ նահալու տակից հանում է դաթիքան եւ բաց անելով գնում է ու կանչում։) Կէկէլ... (Կէկէլը ներս է մտնում աջ դըռնից։) Մէ՛ արի, հէնց ապրիս, էսթի դռնիրը կոխպէ, համբուրելու իմ գնում դէմուդէմը. չուստ գու քամ...

Շտապով դուրս է գնում ձախ դռնից. Կէկէլը մի վայրկեան կանգ առնելով, հետեւում է Շուշանին։ ՏԵՍԻԼ Է

[Ն․ տպ․]

[Երե․ 105]

...Ուզում էի էնդի էւէտ սըա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քու կուռն էի շտապում... (Գիքօին։) Դէ, չո՛ւստ արա, Գիքօ ջան, է՜։

[Ն․ տպ․]

[Երես 106]

ԳԻՔՕ

Գիդէ Աստուած, վուր 'ես միղ չունիմ, Պէպօ ջան...

Կակուղին ձեռքով իր բերանը ծածկելով, յորդորում է Գիքօին լռել։

ՊԷՊՕ

Իմ բարի հրեշտակն իս դուն էս սահաթիս, Գիքօ ջան, ինչ ասում...

Նայում է Արութինին, որ գտնվում է սարսափելի դրութեան մէջ։

ԳԻՔՕ, նոյն միջոցին։

Բարի հրեշտակն ըլի քու քօմագը, վուրթի։

ՊԷՊՕ, դարձնելով հայեացքը Արութինից մուրհակի վրայ, վերցնում է գլխարկը եւ աղաղակում։

Գոհանամ Քի, Տէ՛ր. դիփունի դադաստանի վրայ Քու դադաստանն է էլի դուրթ...

[Եւ այլն։]

[Երես 114]

դիփունքը մի՛նձացնում, փա՛ռաւորում ու 'Երգի՛նք բացրացնում...

[Եւ այլն։]

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես։	Տող։		Տպուած է։	Պէտք է։
III	7	վերևից	անուանում՝ են	անուանում են՝
3	2	«	էս օր	էսօր
7	11	ներքևից	ըա, հըմ...	ըա հըմ...
8	7	վերևից	Ցնղղելով	Ցնտղելով
«	16	«	«	«
11	6	ներքևից	«	«
12	«	«	«	«
13	7	վերևից	(Գցում է	(Հեռուից գցում է
20	2	«	էս օր	էսօր
25	6	«	բաղլիան»	բաղլիան
27	«	ներքևից	քե՛վ	քե՞վ
28	3	վերևից	ղուշը	՚ղուշը
30	9	«	յե-	ե-
31	6	«	կանանչի ·	կանաչի
«	9	«	տնղղելով	տնտղելով
34	4	ներքևից	սիւ սրտովն	սիւսրտովն
39	5	վերևից	արտսունք	արտըսունք
«	6	«	«	«
40	1	ներքևից	զամբիւղը	զամբիւղը,
«	9	«	ՏԵՍԻԼ Ա	ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ
41	«	«	Ցնղղելով	Ցնտղելով
43	4	վերևից	կարօբկերումը	կարօբկումը
«	6	«	երկու	էրկու

Երես։	Տող։		Տպուած է։	Պէտք է։
56	16	վերեւից	տխնում	տեսնում
59	7	ներքեւից	առանձին	առանձին,
60	12	վերեւից	էս	էտ
77	3	ներքեւից	կինծումը	կ՛ինծումը
78	2	«	ձախ	աջ
81	6	վերեւից	մարգ	մարթ
«	11	«	Ը՜հը՜հը՜հը՜...	Ը՜հ...
86	14	«	սի փուղ	սիփուղ
«	15	«	սի փուղն	սիփուղն
88	8	ներքեւից	սի փուղերու	սիփուղերու
94	4	վերեւից	ձեռիդ	ձեռիտ
95	12.	«	մօտիկ	մօդիկ
105	11	ներքեւից	խլելով	մուրհակը խլելով
108	3	«	էս	էտ

UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
AA 000 197 418 7

University of California
SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
305 De Neve Drive - Parking Lot 17 • Box 951388
LOS ANGELES, CALIFORNIA 90095-1388
Return this material to the library from which it was borrowed.

Univ
S